

ԴԱՆԻԵԼՅԱՆ Ֆ.Դ., ԱՌԱՔԵԼՅԱՆ Ս.Ս.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ
ԼԵՌՆԱՅԻՆ ԴԱՐԱԲԱԴԻ
ԵՐԿԿԵՆՑԱԴՆԵՐՆ ՈՒ ՍՈՂՈՒՆՆԵՐԸ**

ԵՐԵՎԱՆ
2016

**Երաշխավորված է տպագրության ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի գիտական
խորհրդի կողմից**

**Գրախոսներ՝ Աղասյան Ա.Լ. ԶԶ բնապահպանության նախարարության հատուկ
պահպանվող տարածքների վարչության պետ, կ.գ.թ.**

**Մարգարյան Ն.Գ. Խ.Արվյանի անվան պետական մանկավարժական
համալսարանի էկոլոգիայի ու բնության պահպանության ամբիոնի
դոցենտ, կ.գ.թ.**

Գրքում տրվում է Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղում հանդիպող
երկկենցաղների և սողունների բոլոր տեսակների որոշման աղյուսակները, ընտանիքների,
ցեղերի և տեսակների նկարագրությունը, տարածվածության, կենսակերպի, էկոլոգիայի ու
բազմացման առանձնահատկությունները:

Գրքում տեղադրված երկկենցաղների և սողունների որոշման աղյուսակները հնարա-
վորություն կտան ընթերցողին որոշել բնության մեջ իրեն հանդիպող երկկենցաղներին և
սողուններին, հասկանալ ինչ պայմաններում են նրանք հանդիպում, տարբերել օծերի թունավոր
և ոչ թունավոր տեսակներին: Գրքում լուսաբանված հարցերը թույլ կտան ընթերցողին
հասկանալ թունավոր օծերի կծոցներից պաշտպանվելու միջոցները և տուժածներին առաջին
օգնություն ցույց տալու եղանակները:

Գիրքը նախատեսվում է կենսաբանական ուղղվածություն ունեցող ուսումնական
հաստատությունների ուսանողների, դպրոցների կենսաբանության ուսուցիչների, պատանի
բնասերների, ինչպես նաև հանրապետության ընթերցողների լայն շրջանների համար:

ISBN 978-9939-750-99-6

© Դանիելյան Ֆ., 2016

© Առաքելյան Մ., 2016

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Յուրահատուկ է Հայաստանի կենսաբազմազանությունը, նրա աշխարհագրական դիրքը, երկրաբանական բարդ կառուցվածքը, բարձունքային գոտիականությունը, բուսա-կենդանական տարբեր մարզերի սահմանագծում գտնվելը նպաստել են հարուստ կենսաբազմազանության և տարբեր տիպի բնական էկոհամակարգերի ձևավորմանը:

Հայաստանի հանրապետության փոքր տարածքում (մոտ 41,13 հազար կմ²) հայտնաբերված են բարձրակարգ ծաղկավոր բույսերի ավելի քան 3500, կենդանիների մոտավորապես 17500 տեսակներ, որոնցից 536-ը ողնաշարավոր կենդանիներ են: Այդ ողնաշարավոր կենդանիներից 60 տեսակներ պատկանում են երկկենցաղների և սողունների դասերին:

Ապրելով քաղաքային պայմաններում մեզանից յուրաքանչյուրն անհրաժեշտություն է զգում լինելու բնության գրկում, հանդիպելու նրա հրաշալիքներ հանդիսացող բույսերին և կենդանիներին, որոնցով հարուստ է Հայաստանի բնաշխարհը: Հանդիպելով այս կամ այն տեսակի երկկենցաղին կամ սողունին, բնության գրկում գտնվող անձը ցանկություն է ունենում իմանալ ի՞նչ կենդանու է հանդիպել նա իր ճանապարհին, արդյոք այդ կենդանին մարդու համար վտանգավոր է, թե՞ օգտակար, որտե՞ղ և ինչպե՞ս է նա ապրում, ինչո՞վ է սնվում: Չճանաչելով այդ կենդանիների մեծ մասին նրանք գրեթե բոլորին համարում են թունավոր ու վտանգավոր: Երկկենցաղները և սողունները մեր հանրապետության ֆաունայի հարստությունն ու գեղեցկությունն են հանդիսանում: Այդ պատճառով նրանց պետք է առաջին հերթին ճանաչել, իմանալ ինչ նշանակություն ունեն և պաշտպանել:

Առաջարկվող գիրքը հնարավորություն է տալիս բնության մեջ երկկենցաղներին ու սողուններին հանդիպելիս որոշել յուրաքանչյուր տեսակին:

Գրքում ընդհանուր գծերով նկարագրված են Հայաստանում և Լեռնային Ղարաբաղի հանրապետություններում տարածված երկկենցաղներն ու սողունները, տրված են յուրաքանչյուր տեսակի հատկանիշները, տարածման, ապրելավայրերի, կենսաբանության առանձնահատկությունները, ներկա կարգավիճակը:

Որոշիչը կարելի է օգտագործել բարձրագույն ուսումնական հաստատություններում կենդանաբանության գծով անցկացվող ուսումնական պրակտիկ աշխատանքների, դպրոցներում կենդանաբանության գծով անցկացվող աշխատանքների ընթացքում:

ԻՆՉՊԵՍ ՕԳՏԿԵԼ ՈՐՈՇԻՉԻՑ

Ներկայացվող որոշիչում կենդանի օրգանիզմների տարբեր կարգաբանական խմբերի բնութագրման և որոշման նպատակով օգտագործվում են տվյալ տեսակին կամ խմբին բնորոշ ձևաբանական հատկանիշներ, որոնք խմբավորվում են ամբողջական համակարգում և գործածվում որոշիչ աղյուսակների տեսքով: Սովորաբար որոշման համար օգտագործվում է ոչ թե մեկ հատկանիշ, այլ մի քանի հատկանիշների համադրություն, ինչը, գրեթե միշտ, հնարավորություն է տալիս հստակորեն որոշել կենդանու տեսակը, ցեղը, ընտանիքը և այլն:

Որոշիչ աղյուսակներում որպես բնութագրող հատկանիշ հիմնականում, ընդգրկվում են հասուն առանձնյակների հատկանիշները: Որոշիչի հիմքը կազմում են աղյուսակները, որոնք համախմբվում են ըստ հերթականության՝ բարձր կարգաբանական միավորներից (տվյալ դեպքում դասից) մինչև տեսակ:

Որոշման աղյուսակները կազմված են ըստ շվեդական համակարգի, ըստ որի որոշիչ աղյուսակը բաժանված է դրույթների թեզերի և հակաթեզերի: Հատկանիշների յուրաքանչյուր խումբ համարակալված է: Յուրաքանչյուր համարի հարևանությամբ գտնվում է փակագծի մեջ ներառված թիվ: Փակագծերից դուրս գտնվող թվերն իրար հաջորդում են ըստ հերթականության և արտահայտում են հատկանիշների որոշակի խումբ, որն այլ կերպ կոչվում է թեզ: Փակագծի մեջ գտնվող թվերը համարվում են թեզին հակադիր հատկանիշների խումբ և կոչվում են հակաթեզ:

Որևէ կենդանու որոշելիս կարդում ենք որոշիչ աղյուսակի առաջին կետը: Տվյալ կետում նկարագրված ձևաբանական հատկանիշները համեմատում ենք որոշվող կենդանու համապատասխան հատկանիշների հետ: Եթե որոշվող կենդանու հատկանիշները համապատասխանում են թեզում նկարագրված հատկանիշներին, անցնում ենք հաջորդ թեզին՝ ըստ հերթականության: Այն դեպքում, եթե որոշվող կենդանու հատկանիշները չեն համապատասխանում թեզում նկարագրված հատկանիշներին, կարդում ենք փակագծում նշված հակաթեզը և շարունակում ենք որոշումը՝ կարդալով հակաթեզից անմիջապես հետո նշված թեզը: Որոշման գործընթացը շարունակվում է այնքան, մինչև հասնում ենք հատկանիշների այնպիսի խմբի, որի տակ հայերեն և լատիներեն լեզուներով նշված է որևէ կարգաբանական միավորի՝ (կարգ, ընտանիք, ցեղ, տեսակ) անվանումը:

Որպես օրինակ դիտարկենք իսկական մողեսների ընտանիքի (Lacertidae) որոշումը՝ ըստ որոշիչ աղյուսակի:

- 1 (2) Ոտքեր չունեն:
Այս հատկանիշը չի համապատասխանում որոշվող կենդանուն, հետևաբար կարդում ենք փակագծում նշված հակաթեզը:
- 2 (1) Ոտքեր ունեն:..... 3
(Սա համընկնում է, կարդում ենք հաջորդ 3 –րդ թեզը):
- 3 (6) Գլուխը վերևից պատված է բազմաթիվ անկանոն դասավորված, մանր թեփուկներով կամ վահանիկներով:
Այս հատկանիշը չի համապատասխանում որոշվող առանձնյակին, այդ պատճառով բաց ենքթողնում 4-րդ և 5-րդ թեզերը և անցնում ենք փակագծում նշվաշ հակաթեզին՝ այսինքն կետ 6-ին:
- 4 (5)բաց ենք թողնում:
- 5 (10) բաց ենք թողնում:
- 6 (3) Գլուխը պատված է խոշոր համաչափ դասավորված վահանիկներերով. (Սա համապատասխանում է, անցնում ենք հաջորդ թեզին)..... 7
- 7 (8) Մարմինը պատված է մանր թեփուկներով, որոնք խիստ տարբերվում են փորոք պատող թեփուկներից:

Ընտանիք՝ Իսկական մողեսներ – Lacertidae (էջ. 75):

Այսպիսով, մենք որոշեցինք, թե որ ընտանիքին է պատկանում տվյալ կենդանին: Որպեսզի համոզվենք որոշման ճշտության մեջ, պետք է կարդալ կարգաբանական միավորի (տվյալ օրինակում՝ Lacertidae ընտանիքի) հակիրճ նկարագրությունը և համեմատել այն որոշման ընթացքում օգտագործված հատկանիշների հետ: Նկարագրության էջը նշվում է կարգաբանական միավորի անվանումից անմիջապես հետո:

Որոշման ընթացքում մենք հանդիպում ենք մի շարք տերմինների և չափումների: Դրանց նկարագրությունը և համապատասխան բացատրությունները բերված են տեքստում՝ կարգերի որոշման աղյուսակներից առաջ:

Որոշման համար անհրաժեշտ է ունենալ մինչև 10 անգամ մեծացնող խոշորացույց, քանոն, միկրոմետր, գնդասեղ, մկրատ և անատոմիական ունելի:

ԵՐԿԿԵՆՑԱՂՆԵՐԻ ԵՎ ՍՈՂՈՒՆՆԵՐԻ ՀԱՎԱՔԻ, ԱՆՇԱԶՐԺԱՑՄԱՆ ՈՒ ՊԱՅՊԱՆՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ


Կարգաբանական, էկոլոգիական և այլ հետազոտությունների ընթացքում հաճախ անհրաժեշտ է լինում ուսումնասիրել երկկենցաղների և սողունների որոշակի քանակությամբ առանձնյակներ, որոնց պետք է որսալ նրանց բնական ապրելավայրերից: Հայաստանում դրանց ուսումնասիրելու և հավաքելու ամենահարմար ժամանակը ապրիլ, մայիս և հունիս ամիսներն են: Գարնան սկզբում այս կենդանիները դուրս են գալիս իրենց ձմեռային թաքստոցներից և բավական երկար մնում են ձմեռման վայրերում, որտեղ առաջացնում են մեծ կուտակումներ: Երկկենցաղներն առաջացնում են մեծ կուտակումներ ձմեռավայրերի հարևանությամբ տեղավորված ջրամբարներում, որտեղ նրանք պատրաստվում են ձվադրման:

Երկկենցաղների և սողունների մեծ մասին կարելի է բռնել ձեռքով, մյուսներին որսում են տարբեր հարմարանքների օգնությամբ: Կենդանուն դիտարկելու կամ բռնելու համար, անհրաժեշտ է նրան մոտենալ զգուշորեն, սովորաբար թիկունքից՝ խուսափելով կտրուկ շարժումներից և աղմուկից: Անհրաժեշտ է հիշել նաև սեփական ստվերի մասին՝ կենդանին կզգուշանա եթե ձեր ստվերն ընկնի նրա վրա: Երկկենցաղներին հարմար է որսալ 1-2 մ երկարություն ունեցող ձողին ամրացված ցանցի միջոցով՝ ջրամբարների ափերին: Դողոշներին, սխտորագորտերին, ծառագորտերին և մի շարք այլ տեսակների ավելի հեշտ է որսալ գիշերը՝ լապտերի օգնությամբ փնտրելով նրանց ցամաքում կամ ձվադրավայրերում:

Սողուններին, եթե նրանք անշարժ տեղավորված են քարերի, պատերի կամ ճյուղերի վրա, կարելի է որսալ օգտագործելով բարակ ձողի վրա ամրացված ձկնորսական կարթաթելից պատրաստված սահող օղակ: Այդ օղակը պետք է զգուշորեն անցկացնել մողեսի գլխին և կտրուկ շարժումով ձգել օղակը: Որոշ մողեսների, որոնք ապրում են անապատներում և կիսաանապատներում, կարելի է որսալ ձեռքով կամ թիթեռացանցի օգնությամբ:


Օձերի հավաքի ժամանակ անհրաժեշտ է խուսափել դժբախտ պատահարներից, ինչի համար պետք է նախնական զննման միջոցով որոշել թունավոր է օձը, թե ոչ: Օձերի որսի ժամանակ օգտագործվում են հատուկ բռնիչներ, որոնց օգնությամբ օձին պետք է սեղմել գետնին՝ պարանոցի շրջանում (Նկ.1): Գետնից կենդանուն պետք է վերցնել զգուշորեն երկար ունելիով կամ ձեռքով՝ բռնելով պարանոցից և գլխի հետևի մասից: Որսած կենդանիներին անհրաժեշտ է պահել կտորից կարված 50 սմ և ավելի երկարություն ունեցող տոպրակի մեջ, ընդ որում սկզբում տոպրակի մեջ պետք է մտցնել պոչը, այնուհետև գլուխը և արագ կապել տոպրակը: Օրվա շոգ ժամերին օձերին կարելի է գտնել քարերի տակ՝ շրջելով քարերը, ինչպես նաև կրծողների բներում: Քարերը շրջելիս դժբախտ պատահարներից խուսափելու համար կարելի է օգտագործել ձող կամ բռնիչ: Հավաքված կենդանիներին լաբորատոր պայմաններում

անհրաժեշտ է անշարժացնել քլորոֆորմի կամ եթերի լուծույթում թրջած բանբակի միջոցով՝ տուարակը տեղավորելով հերմետիկ փակվող տարայի մեջ: Մի քանի րոպե հետո կենդանին քնում է, որից հետո երկարատև պահպանելու համար նրա մարմնին ու վերջույթներին անհրաժեշտ է տալ բնական դիրք: Այնուհետև մարմնի խոռոչի ու մարտողության համակարգի մեջ անհրաժեշտ է ներարկել 700 էթիլ սպիրտ: Այս գործողությունները կատարելուց հետո կենդանուն պետք է պիտակավորել ուսումնական կամ գիտական հավաքածուներում ընդգրկելու համար:



Նկ. 1. Օձեր որսալու բռնիչներ և թույնի ստացումը:

Պիտակը գրվում է մատիտով կամ տուշով: Պիտակի վրա նշվում է կենդանու անվանումը, հավաքի ճշգրիտ վայրը, ամսաթիվը և հավաքողի անունը: Պիտակը կապվում է կենդանու ոտքից, կամ վզից: Անհրաժեշտ է հիշել, որ չպիտակավորված կամ սխալ պիտակավորված կենդանիները կորցնում են իրենց գիտական արժեքը, հետևաբար պիտակավորումը պետք է կատարել շատ ուշադիր և խնամքով:



ԵՐԿԿԵՆՑԱՂՆԵՐ



ՂԱՍ - ԵՐԿԿԵՆՑԱՂՆԵՐ - AMPHIBIA

Երկկենցաղների դասը ցամաքային ողնաշարավոր կենդանիների (*Tetrapoda*) հնագույն խումբն է: Այս կենդանիները պահպանում են կապը ջրային միջավայրի հետ՝ ամբողջ կյանքի ընթացքում: Երկկենցաղների ճնշող մեծամասնության բազմացումն ընթանում է ջրում, ջրում են զարգանում նաև նրանց թրթուրները: Երկկենցաղները տարածված են բոլոր աշխարհամասերում՝ բացի Անտարկտիդայից: Նրանք ապրում են լճերի, լճակների, գետերի ափերին, ստվերոտ ու խոնավ անտառներում, ճահիճների մոտակայքում: Այս կենդանիները երկկենցաղ են կոչվում ոչ միայն այն պատճառով, որ տեսակների մեծ մասը հասուն վիճակում մշտապես փոխում են իրենց ապրելավայրը (ցամաք-ջուր), այլև նրա համար, որ բազմանում են ջրում: Դրանց շերտիուկներն իսկական ջրային կենդանիներ են և շնչում են խռիկներով: Նույնիսկ ցամաքային կենսակերպին առավել լավ հարմարված անպոչ երկկենցաղների թրթուրները իսկական ջրային կենդանիներ են՝ զուրկ են վերջույթներից, լողում են պոչի օգնությամբ և շնչում են խռիկներով: Թրթուրների զարգացումն ավարտվում է կերպարանափոխությամբ, ինչի շնորհիվ վերջիններս ձեռք են բերում վերջույթներ, թոքեր, կորցնում են պոչը և անցնում ցամաքային կենսակերպին՝ չկորցնելով կապը ջրային միջավայրի հետ:

Երկկենցաղներն ակտիվ են միայն տարվա տաք եղանակներին: Նրանք ծնեռում են կամ ջրամբարի հատակին (լճագորտերը), կամ ցամաքի վրա, տարբեր թաքստոցներում (դողոշները):

Երկկենցաղների մարմինը մեջքափորային ուղղությամբ տափակացած է, կազմված է գլխից, իրանից, պոչից և երկու զույգ հողավորված վերջույթներից: Վերջավորությունները քառամատ կամ հնգամատ են: Դաստակի վրա ունեն 4 մատ: Թաթը կրում է լողաթաղանթներով միմյանց միացած 5 մատ: Գորտի կողերը զարգացած չեն: Երկկենցաղները կրծքավանդակ չունեն:

Երկկենցաղների մաշկը մերկ է, հարուստ է լորձ արտադրող գեղձերով և արյան մազանոթներով: Լորձի շնորհիվ երկկենցաղների մաշկի մակերեսին առաջանում է հեղուկ թաղանթ, որի մեջ լուծվում է մթնոլորտային թթվածինը: Մաշկը չորանալիս գորտը շնչահեղձ է լինում թթվածնի պակասից: Ահա թե ինչու երկկենցաղները խուսափում են արևից: Չնայած երկկենցաղները շնչում են թոքերով, սակայն մաշկային շնչառությունը չափազանց կարևոր է նրանց համար: Գորտերը ջուր չեն խմում: Ջուրը միջավայրից կլանում են մաշկի միջոցով: Մաշկը կարևոր դեր է կատարում նաև օրգանիզմում ջուր պաշարելու գործում: Գորտի մաշկը մարմնին միանում է միայն իր առանձին մասերով, որոնց միջև կան ավիշով լցված խոռոչներ: Դրանցում էլ կուտակվում է ներծծված ջուրը:

Երկկենցաղների մաշկում, բացի լորձ արտադրող գեղձերից, կան նաև թույն արտադրող գեղձեր: Այդ գեղձերի արտազատուկը պաշտպանում է մաշկը տարբեր հիվանդաբեր բակտերիաներից: Երկկենցաղների մեջ կան բազմաթիվ տեսակներ, որոնց մաշկի արտադրած լորձը խիստ թունավոր է, այդ պատճառով շատ գիշատիչներ նրանց չեն որսում: Այդպիսի երկկենցաղներն ունեն մարմնի վառ գունավորում, որը նախազգուշացնում է թշնամիներից: Հարավային Ամերիկայում բնակվող փոքրիկ ծառագորտի մեկ առանձնյակի լորձը բավական է միանգամից 150 մարդ սպանելու համար: Այդ թույնը 35 անգամ ուժեղ է կորբայի թույնից:

Երկկենցաղների գլուխը կիսաշարժուն ձևով, միացած է իրանի հետ: Գլխի վրա՝ վերին մասում գտնվում են քթանցքերը, դուրս ընկած աչքերը, իսկ գլխի կողքերին՝ յուրաքանչյուր աչքի հետևում թմբկաթաղանթները: Աչքերն ունեն վերին և ստորին կոպեր, որոնք խոնավ են պահում աչքերի մակերեսն ու պաշտպանում են աղտոտվելուց: Լավ զարգացած են անպոչ երկկենցաղների վերջույթների, իսկ պոչավորների՝ պոչի մկանները:



Երկկենցաղները գիշատիչ կենդանիներ են: Սնվում են միջատներով, սարդակերպերով, ցամաքային փափկամարմիններով: Որսին բռնում են բերանում տեղավորված կաշուն երկար լեզուն դուրս նետելով: Բերանում գտնվում են նաև կոնաձև ատամներ, որոնք նույնպես ծառայում են որսը բռնելու համար: Կերի կլմանը որոշ չափով օգնում են նաև ակնագնդերը, որոնք մասամբ կարող են հրվել բերանային խոռոչի մեջ:

Երկկենցաղների սիրտը կազմված է երկու նախասրտից և մեկ փորոքից: Թոքային շնչառության հետ կապված երկկենցաղների մոտ ձևավորվել է արյան շրջանառության երկու մեծ և փոքր շրջաններ: Արյան շրջանառության մեծ շրջանը սկսում է փորոքից, որտեղ զարկերակային և երակային արյունները խառնվել են: Փորոքից դուրս եկող խառը արյունը մատակարարվում է բոլոր օրգաններին ու հյուսվածքներին, հագեցնում է ածխաթթու գազով և վերադառնում է աջ նախասիրտ: Փոքր շրջանով արյունը գնում է դեպի թոքեր, հարստանում թթվածնով և վերադառնում է ձախ նախասիրտ:

Հնագույն երկկենցաղների 11 կարգերից մեզ են հասել միայն երեքը՝ *անոտների*, *պոչավորների* և *անպոչների* կարգերը, որոնք իրենց մեջ ներառում են մոտ 6630 տեսակներ: Դրանք համախմբված են երեք կարգերում՝ անոտներ (*Apoda*) - 180 տեսակ, պոչավորներ (*Urodela* կամ *Caudata*) - 600 տեսակ, և անպոչներ (*Anura* կամ *Ecaudata*) 5850 տեսակ:

Հայաստանի հանրապետության տարածքում հանդիպում են երկկենցաղների 7 տեսակներ: Դրանք են՝ պոչավորների կարգին (*Caudata*) պատկանող փոքրասիական տրիտոնը (*Ommatotriton vittatus*) և անպոչների (*Anura*) կարգին պատկանող 6 տեսակներ, որոնք ընդգրկված են սխտորագորտերի (*Pelobatidae*), դողոչների (*Bufo*), ծառագորտերի (*Hylidae*) և իսկական գորտերի (*Ranidae*) ընտանիքներում:

Երկկենցաղների կարգերի որոշման աղյուսյակ

1 (2) Մարմինը ձգված է: Ինչպես թրթուրներն, այնպես էլ հասուն առանձնյակներն ունեն պոչ: Հասուն առանձնյակների հետին վերջույթները քիչ երկար են առջևի վերջույթներից: Թրթուրների իրանի երկարությունը ավելի քան 3 անգամ գերազանցում է մարմնի լայնությանը՝ նրա ամենալայն մասում:

Պոչավոր երկկենցաղներ - Urodela կամ Caudata (տշ 9)

2 (1) Մարմինը ձգված չէ: Պոչ ունեն միայն թրթուրային (չերեփուկ) փուլում, հասուն անհատները պոչ չունեն: Հասուն առանձնյակների հետին վերջույթները չափերով զգալիորեն գերազանցում են առջևի վերջույթներին: Շերեփուկների իրանի երկարությունը ամենալայն մասում, գերազանցում է նրա լայնությանը 3 անգամից պակաս:

Անպոչ երկկենցաղներ - Anura կամ Ecaudata (տշ 12)

ԿԱՐԳ - ՊՈՉԱՎՈՐ ԵՐԿԿԵՆՑԱՐՆԵՐ - CAUDATA (URODELA)

Պոչավոր երկկենցաղների կարգի բոլոր ներկայացուցիչներն ունեն լավ արտահայտված պոչ և երկու զույգ վերջույթներ: Թրթուրների կերպարանափոխության ժամանակ սկզբում ձևավորվում են առջևի զույգ վերջույթները: Պոչավորների որոշման ընթացքում մեծ դեր են խաղում, այսպես կոչված քիմքային ատամները: Բացելով կենդանու բերանը քիմքի վրա կարելի է տեսնել ներքին քթանցքները՝ խոանները, որոնց հարևանությամբ մի քանի շարքերով տեղավորված են մանր ատամիկներ:



Այս կարգը բաժանվում է 8 ընտանիքների, 53 ցեղերի, որոնց մեջ ընդգրկված են 600-ից ավել տեսակներ: Հայաստանում տարածված է միայն մեկ տեսակ, որը պատկանում է սալամանդների (*Salamandridae*) ընտանիքի (*Ommatotriton*) ցեղին:

Ընտանիք - Սալամանդրներ - *Salamandridae* Goldfuss, 1820

Մոդեսանման մարմին ունեցող կենդանիներ են: Ունեն երկար, հիմքում կլորավուն, կողքերից սեղմվածադչ: Վերջույթները զարգացած են: Առջևի վերջույթն ունի 4, իսկ հետևի վերջույթը 5 մատ: Թոքերը զարգացած են: Տեսակների մեծամասնությունը բազմանում են ներքին բեղմնավորմամբ: Կան կենդանածին տեսակներ: Թրթուրները մինչև կերպարանափոխության վերջը շնչում են արտաքին խռիկներով: Ընտանիքն ընդգրկում է մոտ 90 տեսակներ: Հայաստանի տարածքում հանդիպում է մեկ տեսակ:

Փոքրասիական տրիտոն - Малоазиатский тритон - *Ommatotriton ophryticus* (Berthold, 1846)

Տիպային տարածքը հայտնի չէ

Ommatotriton ophryticus ophryticus (Berthold, 1846)

Triton ophryticus Berthold 1846:189.

Triturus vittatus ophryticus, Terentjev and Chernov 1936:13.

Ommatotriton ophryticus ophryticus, Litvinchuk, Zuiderwijk, Borkin, and Rosanov 2005

L.73 մմ; L/L.c. 0.93-1.12; L.o/L.tym. 3-2.8; Sp.oc./D.r.o. 0.84-1.25; L/T. 53-2.1; D.P/C.int.1.4-3.6

Չևարանական հատկանիշները: Փոքր տրիտոն է, մարմնի երկարությունը՝ 56-105 մմ: Մեջքը և կողքերը դեղնականաչամոխրագույն, երբեմն մոխրագույն կամ շագանակամոխրագույն է: Մարմնի կողքերով անցնում է արծաթագույն շերտ, որը վերևից և ներքևից շրջապատված է մուգ կետերով կամ բծերով: Փորը բաց դեղինից մինչև նարնջագույն է առանց շերտերի: Արուի մեջքի երկարությամբ մինչև պոչի ծայրը անցնում է ատամնավոր կատար, որը բազմացման շրջանում առավել լավ է արտահայտված: Բացի այդ արուների մեջքի և փորի վրա կան խոշոր մուգ բծեր, որոնցից զուրկ են էգերը (Նկ. 2): Հետին վերջույթների մատների միջև կա լավ արտահայտված լողաթաղանթ:



Նկ. 2. Փոքրասիական տրիտոն. 1-արու, 2-էգ:

Տարածվածությունը: Տարածված է Իսրայելում, Լիբանանում, Սիրիայում, Փոքր Ասիայում, Արևմտյան Կովկասում:

Հայաստանում հանդիպում է Ալավերդի, Ստեփանավան քաղաքների շրջակայքում գտնվող 400–600 մ² մակերեսով ոչ մեծ ջրամբարներում, որոնք տեղավորված են անտառային, մարգագետինային գոտիների ստորին եզրին մոտ՝ ծ.մ. 900–1200 մ



բարձրության վրա: 2001թ-ին Դիլիջանի շրջանի Պարզ լճում բաց են թողնվել լաբորատոր պայմաններում ստացված 70 առանձնյակներ (քարտեզ 1):

Ապրելավայրերը: Փոքրասիական տրիտոնը բնակեցնում է հիմնականում անտառային ապրելավայրերը: Բնակվում է լայնատերև և խառն անտառներում, որոնց կազմի մեջ մտնում են կեչի, բարդի, կաղնի, եղևնի և այլ ծառատեսակներ: Որպես ապրելավայր կարող է օգտագործել նաև մարգագետինները: Այդպիսի լանդշաֆտներում տրիտոնը ցուցաբերում է էկոլոգիական ճկունություն՝ բնակվելով մարգագետիններում, երկրորդային թփուտային գոյացություններում և մարդածին ցենոզներում: Որպես կանոն, տրիտոնները հանդիպում են լավ լուսավորված, 50 սմ-ից ոչ պակաս խորություն ունեցող բուսականությամբ հարուստ ջրամբարներում և չեն բնակվում ու բազմանում ճահճացած ջրամբարներում, որտեղ թթվածնի պարունակությունը ցածր է:



Քարտեզ 1. Փոքրասիական տրիտոնի տարածվածությունը Հայաստանում:

Կենսաբանության առանձնահատկությունները: Չմեռային քնից դուրս են գալիս մարտ-ապրիլ ամիսներին և մինչև հունիսի սկիզբը մնում են բուսականությամբ հարուստ մաքուր, հոսող և կանգուն անտառային ջրավազաններում: Հասուն տրիտոններն ակտիվ են հիմնականում երեկոյան և գիշերվա առաջին կեսում, ինչպես նաև անձրևոտ եղանակին: Ցերեկը տրիտոնները թաքնվում են կոճղերի և քարերի տակ, ինչպես նաև կրծողների բներում: Այդտեղ էլ ձմեռում են մի քանի տասնյակից կազմված խմբերով: Չմեռելու են անցնում հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին: Բազմացումը սկսվում է ձմեռային քնից դուրս գալուց քիչ անց: Այս շրջանում ձևավորվում է արուների մեջքի կատարը և նրանք ձեռք են բերում վառ գունավորում: Ձուգավորմանը նախորդում են ամուսնական պարերը. արուն մոտենում է էգին ցուցադրելով մարմնի կողքերի վառ գունավորումը, պոչով կատարում է կտրուկ շարժումներ, ինչի հետևանքով ջրի հոսքն ուղղվում է դեպի էգը (Նկ. 3):



Նկ. 3. Փոքրասիական տրիտոնի զուգավորման խաղերը:



Ամուսնական պարի վերջում արուն դնում է սպերմատոֆոր՝ սերմնաբջիջներով լցված պարկ, որը էզը բռնում է իր կոյանոցով: Կոյանոցում պարկը պատռվում է և պարկից դուրս եկող սպերմատոզոիդները բեղմնավորում են ձվաբջիջները:

Բազմացումը, սաղմնային և հետսաղմնային զարգացումը տեղի է ունենում ոչ մեծ ջրավազաններում, լճերում, ջրափոսերում: Չվաղրում են ջրում՝ 5-35 սմ խորության վրա: Չվերի թիվը տատանվում է 60-220, դրանք համախմբված են լորձային շղթաներում, յուրաքանչյուրում 2-5 ձու: Էզը ձվերը սոսնձում է ջրային բույսերի տերևների ստորին մակերեսին: Սաղմնային զարգացումը տևում է 14-20 օր: Հետսաղմնային զարգացման ընթացքում դիտվում է թրթուրների չափերի և աճի ինտենսիվության վառ արտահայտված տարածություն: Չվից դուրս գալուց հետո թրթուրները սնվում են սաղմնային դեղնուցի հաշվին, որից հետո՝ մանր ջրային օրգանիզմներով: Կերպարանափոխությունը սովորաբար ավարտվում է ձվադրությունից 75-150 օր հետո՝ հուլիս-սեպտեմբեր ամիսներին:

Բուսականությամբ հարուստ ջրավազաններում թրթուրներն ավելի արագ են զարգանում և ավելի մանր են: Կերպարանափոխությունից անմիջապես հետո երիտասարդ տրիտոնների մարմնի երկարությունը հասնում է 20-36 մմ: Հետագա սննդառության և աճի գործընթացներում դիտվում են միջսեռական տարբերություններ՝ որպես կանոն, էգերն ավելի ակտիվ են սնվում և արագ աճում, քան արուները, ինչը պայմանավորված է բազմացման գործընթացում ավելի մեծ էներգետիկ ծախսով: Տրիտոնները սեռահասուն են դառնում 3-4 տարեկան հասակում: Կյանքի տևողությունը 12-15 տարի է:

Կարգավիճակը: Հանրապետության տարածքում սահմանափակ տարածում ունեցող, վտանգված տեսակ է: Տեսակը գրանցված է նախկին ԽՍՀՄ-ի, Ռուսաստանի, Վրաստանի և Հայաստանի Հանրապետության Կարմիր գրքերում: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Կրիտիկական վիճակում գտնվող» CR B2ab (iii,v) տեսակ:

ԿԱՐԳ - ԱՆՊՈՉ ԵՐԿԿԵՆՑԱՂՆԵՐ - ANURA

Անպոչ երկկենցաղները կարճ, լայնացած մարմնով կենդանիներ են: Հասուն շրջանում պոչ չունեն, այն լինում է միայն թրթուրային փուլում: Պարանոց չունեն: Գլուխը պարզ չի սահմանազատված մարմնից: Գլխի վրա երևում են զույգ քթանցքները, աչքերը, թմբկաթաղանթները: Թմբկաթաղանթները գտնվում են աչքերից հետ և ունեն սև գույնի օղակների տեսք: Որոշ տեսակների արուներն ունեն ռեզոնատորներ: Դրանք տեղադրված են բաց պարկերի ձևով, բերանի հետին անկյան մոտ, կամ ծածկված են կոկորդի մաշկի տակ և երևում են միայն կռկռալու ժամանակ (նկ. 4):



Նկ. 4. Լճագորտի կողքային ռեզոնատորները (1) և ծառագորտերի կոկորդային պարկը (2):



Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի հանրապետությունների տարածքում անպոչ երկկենցաղները լայն տարածում ունեն: Դրանց մի շարք տեսակներ հանդիպում են գրեթե բոլոր կենսամիջավայրերում: Ջրամբարներին ավելի մոտ են ապրում լճագորտերը, իսկ փոքրասիական գորտը, կանաչ դողոշը, սովորական և փոքրասիական ծառագորտերը ապրում են մեծ մասամբ ջրամբարներից հեռու: Ցերեկը նրանք թաքնվում են կրծողների բներում, թափված տերևների տակ և այլ թաքստոցներում, իսկ մթնշաղին դուրս են գալիս որսի: Միայն բազմացման շրջանում է, որ նրանց կարելի է հանդիպել լճակների և ջրամբարների շրջակայքում:

Բազմացման շրջանում երկկենցաղների որոշ տեսակների արունների առջևի վերջույթների առաջին մասին առաջանում է կոշտուկ, որի օգնությամբ, զուգավորման ժամանակ, արուն ամուր գրկում է էգին (Նկ. 5):



Նկ. 5. Ջուգավորման կոշտուկները կանաչ կանաչ դողոշի և փոքրասիական գորտի մոտ:

Լեզուն հետին մասով ամրացած է բերանի խոռոչի առջևի եզրին և բերանում տեղադրված է դեպի հետ ծալված վիճակում: Որսը բռնելու դեպքում այն դուրս է շարտվում: Լեզուն մեծ նշանակություն ունի որոշման համար: Անպոչ երկկենցաղների բերանի խոռոչում լավ երևում են ներքին քթանցքները՝ խոանները և ատամները: Դողոշների գլխի և մարմնի սահմանի միջև դասավորված են խոշոր հարականջային գեղձերը կամ պարոտիտները (Նկ. 13):


Որոշման ժամանակ կարևոր նշանակություն ունեն նաև վերջույթները, հատկապես հետինը: Այն երկար է, մկանուտ, որի շնորհիվ անպոչ երկկենցաղները տեղաշարժվում են ցատկումներով:

Անպոչ երկկենցաղները, ունեն մոտ 5850 տեսակներ, որոնք ընդգրկված են 46 ընտանիքներում: Հայաստանում տարածված են 4 ընտանիքների պատկանող 6 տեսակներ:

Երկկենցաղների տեսակների որոշման ընթացքում կատարվում են որոշվող առանձնյակի մարմնի տարբեր մասերի չափումներ: Նկար 6 պատկերված է անպոչ երկկենցաղների որոշման ժամանակ օգտագործվող և կարգաբանական հետազոտություններում կիրառվող չափումներն ու պայմանական նշանները:

Երկկենցաղների մարմնի տարբեր մասերի չափումների պայմանական նշանները

- L. (Long it udo corporis) Մարմնի երկարությունը: Դնչի ծայրից մինչև հետանցքը
- L.c. (Longitudo capitis) Գլխի երկարությունը: Դնչի ծայրից մինչև ծոծրակային անցքի վերին կետը
- Sp. c. r (Spatium cantirostrales) Դնչի լայնությունը: Աչքի առջևում գտնվող քթային մուգ շերտերի ներսի եզրերի միջև եղած տարածությունը
- D. r. o. (Distantia rostri oculi) Աչքի առջևի եզրից մինչև դնչի ծայրը ընկած տարածությունը
- F. (Long it udo femoris) Ազդրի երկարությունը
- T. (Long it udo tibiae) Միունքի երկարությունը
- D. p. (Primus digitus) Հետին վերջավորության առաջին մատը
- C. int. (Callus internus) Կրմկի ներսի-թմբիկի երկարությունը



Նկ. 6. Գորտի գլխի և մարմնի գծապատկերը:

- 1-քթանցք, 2-աչք, 3-թմբկաթաղանթ, 4-քթային շերտ, 5-վերին կոպ, 6-կոպի լայնությունը, 7-կոպերի միջև եղած տարածությունը, 8-քթանցքների միջև եղած տարածությունը, 9-քթային շերտերի միջև եղած տարածությունը, 10-դնչի և քթանցքների միջև եղած հեռավորությունը, 11-դնչի ծայրի և աչքի առջևի մասի միջև եղած հեռավորությունը, 12-մեջքա-կողքային ծայրը, 13-ագոյր, 14-սրունք, 15-նախաթաթ, 16-մարմնի երկարությունը, 17-թաթի երկարությունը, 18-ագոյրի երկարությունը, 19-սրունքի երկարությունը, 20-կոյանցք:

Անպաշտների կարգի ընտանիքների և տեսակների որոշման աղյուսյակ

1 (10) Վերին ծնոտի վրա ունեն ատամներ:

2 (5) Լեզվի հետևի ազատ ծայրը ճեղքված է և կարծես թե բաժանվում է 2 մասի: Առջևի և հետևի վերջույթների մատների ծայրերը չեն կրում սկավառակաձև լայնացած ծծիչներ (Նկ. 7):.....3

Ընտանիք - Իսկական գորտեր - Ranidae (էջ 24)

3 (4) Աչքերից մինչև ուսը, իր մեջ ընդգրկելով նաև թմբկաթաղանթը անցնում է մուգ գույնի լայն քունքային շերտ, որը հետին մասում նեղանում է (Նկ. 8): Արուններն ունեն ներքին ռեզոնատորներ, որոնք տեղավորված են կոկորդային մասում մաշկի տակ: Փորը սպիտակավուն է առանց բծերի: Գարնանը եզերի մոտ այն դառնում է վարդագույն կամ կարմրավուն: Չվաղրումը վերջացնելուց հետո փորի գունավորումը աստիճանաբար մարում է:

4 (3) Բունքային շերտ չունեն: Եթե ունեն, ապա մեջքը կանաչ գույնի է: Փորը սպիտակ է և չունի վարդագույն գունավորում: Բերանի անկյունից քիչ հետ արուններն ունեն սև կամ մոխրագույն ռեզոնատորներ (Նկ. 8):

Լճագորտ - Pelophylax ridibundus (էջ 26)

5 (2) Լեզվի հետին ազատ ծայրը ճեղքված չէ: Եթե ճեղքված է, ապա մատների ծայրերը կրում են սկավառակաձև ծծիչներ (Նկ. 7):.....6



Նկ. 7. Ծառագորտի առջևի (a), հետևի (b), և փոքրասիական գորտի հետին (c) վերջույթների մատները:

6. (9) Առջևի և հետևի վերջույթների մատների ծայրերը կրում են սկավառակաձև լայնացած ծոփչներ (Նկ. 7): Մարմինը վերևից հիմնականում վառ կանաչ է, երբեմն բաց մոխրագույն, չափանկագույն կամ համարյա սև է, ինչը կախված է միջավայրից և օդի ջերմաստիճանից: Մաշկը հարթ է:

Ընտանիք - Ծառագորտեր - Hylidae (էջ 21)



Նկ. 8. Գորտերի քունքային մասը: 1 - *Rana macrocnemis*, 2 - *Pelophylax ridibundus*:

7 (8) Քթանցքներից սկսած, ընդգրկելով աչքը և աստիճանաբար լայնանալով, մարմնի կողքերով անցնում է մուգ գույնի շերտ, ինչը սահմանազատում է մարմնի վերին մասը փորից և ազդրի շրջանում առաջացնում է օղակ (Նկ. 9):

Շելկովնիկովի ծառագորտ - Hyla orientalis (էջ 21)

8. (7) Քթանցքներից սկսվող և մարմնի կողքերով դեպի ազդր հասնող մուգ շերտը, աստիճանաբար չի լայնանում և ազդրերի շրջանում օղակ չի առաջացնում (Նկ. 9):

Փոքրասիական ծառագորտ - Hyla savignyi (էջ 23)

9 (6) Առջևի և հետևի վերջույթների մատների ծայրերը սկավառակաձև ծոփչներ չեն կրում (Նկ. 7): Թմրկաթաղանթ չունեն: Մաշկը հարթ է (Նկ. 10): Մարմնի մեջքային մասը



բաց մոխրագույն կամ դեղնավուն է, մուգ գույնի շերտերով: Աչքի բիթը ուղղահայաց տեսք ունի: Հետին թաթի վրա ունեն լայն բահանման եղջերային կոշտացում: Ճակատը հարթ է: Առջևի ոտքի առաջին մատը երկրորդից երկար է:

Ընտանիք - Սխտորագորտեր - Pelobatidae (էջ 17)

Տեսակ - Սիրիական սխտորագորտ - Pelobates syriacus (էջ 17)



Նկ. 9. Շելկրվմիկովի (1) և փոքրասիական ծառագորտերի (2) մարմինը կողքից:

10 (1) Վերին ծնոտի վրա ատամներ չունեն: Առջևի և հետևի վերջույթների երկարությունները մոտավորապես հավասար են: Մարմինը պատված է բշտիկներով:

Ընտանիք - Դողդռներ-Bufonida: Տեսակ - Կանաչ դողդռ - Bufo variabilis (էջ 19)



Նկ. 10. Սիրիական սխտորագորտի (1) և լճագորտի (2) գլուխը կողքից:



Ընտանիք - Սխտորագորտեր - Чесночницы - Pelobatidae Bonaparte, 1838

Ընտանիքի ներկայացուցիչների մարմինը կարճ է և լայնացած, պատված է հարթ մաշկով: Թմբկաթաղանթը բացակայում է, աչքի բիբը ուղղահայաց դիրք ունի: Հետին վերջույթների մատները կրում են լողաթաղանթ: Հետին թաթի վրա ունեն լայն բահանման եղջերային կոշտացում, որն օգտագործում են հողը փորելու համար: Շատ տեսակներ ներքին ծնոտների վրա ատամներ չունեն:

Ընտանիքն ունի մի ցեղ 4 տեսակներով: Հայաստանում տարածված է մեկ տեսակ:

2. Սիրիական սխտորագորտ - Сирийская чесночница - Pelobates syriacus Boettger. 1889

Տիպային տարածքն է Խալֆա (Իսրայել)

Pelobates syriacus Boettger 1889
Pelobates transcasicus Delwig 1928
Pseudopelobates transcasicus, Pasteur 1958

L.78 մմ; *UL.c.* 2.8-3.09; *L.o/L.tym* 1.3-2.8; *Sp.oc./D.r.o.* 0.84-1.25; *L/T.* 1.53-2.1; *D.P/C/int.* 0.81-1.317


Ձևարանական հատկանիշները: Մարմնի երկարությունը հասնում է 65-79մմ-ի: ճակատը հարթ է: Մարմնի վերին մասը բաց մոխրագույն է, հաճախ դեղնավուն և ունի մուգ կանաչավուն երբեմն կարմրավուն անկանոն բծեր: Մարմնի կողքերին և գլխի վրա բծերն ավելի մանր են: Փորը սպիտակավուն է, առանց բծերի: Մաշկը հարթ է: Կրնկի ներսի թմբիկը բաց դեղնավուն է: Առջևի վերջույթի առաջին մատը երկար է երկրորդից: Հետին ոտների մատների արանքի լողաթաղանթն ունի կտրվածք: Արունները փոքր են էգերից: Բազմացման ժամանակ նրանց ուսերին երևում է օվալաձև գեղծը (նկ. 11):



Նկ.11. Սիրիական սխտորագորտ:

Տարածվածությունը: Տարածված է Սիրիայում, Իսրայելում, Փոքր Ասիայում, Պաղեստինում, Բալկանյան թերակղզում, Իրանում, Թուրքիայում, Անդրկովկասում: Հայաստանում հանդիպում է հարավային շրջաններում՝ Ջրվեժ, Առինջ, Ողջաբերդ (Կոտայքի մարզ), Ռինդ (Վայոց Ձորի մարզ), Սիսիանի (Սյունիքի մարզ) Ռանչպար գյուղի տարածաշրջաններում:

1985-1986 թթ-ին Ազատի ջրամբարում (Արարատի մարզ) բաց է թողնվել լաբորատոր պայմաններում աճեցված 1500 առանձնյակ, որտեղ այժմ այդ պոպուլյացիան գտնվում է բարվոք վիճակում (քարտեզ 2):



Քարտեզ 2. Սիհիական սխտորագորտի տարածվածությունը Հայաստանում:

Ապրելավայրերը: Ապրում է կավային հողերում: Քարքարոտ վայրերում չի հանդիպում: Վարում է բացառապես փորող, գիշերային կենսակերպ: Չորային պայմաններն անցկացնում է հողի մեջ թաղված վիճակում: Պտուտակածն շարժելով թաթերը, հետին վերջույթների վրա գտնվող բահանման կոշտացումների օգնությամբ փորում է հողը 10-25 սմ խորությամբ և աստիճանաբար թաղվում հողի տակ: Այդ իսկ պատճառով նրան դժվար է հայտնաբերել: Մշտական ապաստարան չունի, յուրաքանչյուր անգամ փորում է նոր բույն: Կարող է օգտագործել նաև կրծողների բները և քարերի տակ եղած խորությունները:

Կենսաբանության առանձնահատկությունները: Սնվում է միջատներով, խխուճներով, փափկամարմիններով, երբեմն նաև միջատների թրթուրներով, անձրևորդերով, այլ անողնաշար կենդանիներով: Ակտիվ է հիմնականում գիշերը: Բավականին կայուն է օդի բարձր ջերմաստիճանի նկատմամբ: Բազմանում է մարտի վերջից մինչև մայիսի սկիզբը: Չվաղորում է կանգնած ջրերում, բուսականությամբ հարուստ բնական և արհեստական ջրավազաններում: Էզը ձվադրում է ջրասուզված բույսերի տերևների վրա, իսկ դրա բացակայության դեպքում՝ ջրավազանի հատակին: Չվակույտն իրենից ներկայացնում է 5500–6500 ձվերով երկու հաստ պարան, որտեղ ձվերը դասավորված են լինում անկանոն շարքերով: Հասուն առանձնյակները կարճ ժամանակ մնում են ջրում ձվադրելու համար, որից հետո դուրս են գալիս ցամաք: Մեկ էզը դնում է 1800–2500 ձու: Մետամորֆոզը տևում է 70–85 օր: Հասուն սխտորագորտերը մնում են ջրում միայն գորտնկիթ դնելու ժամանակ, որից հետո դուրս են գալիս ցամաք: Սաղմնային զարգացումը տևում է՝ 5-7 օր, թրթուրների զարգացումը տևում է 65-85 օր: Շերեփուկները մինչև 143 մմ են: Կերպարանափոխվելուց հետո փոքր գորտերը ջրավազանից շատ չեն հեռանում: Որոշ դեպքերում շերեփուկները ծմեռում են և կերպարանափոխությունն ավարտում են հաջորդ տարի: Շերեփուկները սնվում են ջրիմուռներով և օրգանական մնացորդներով, իսկ հասուն սխտորագորտերը՝ ցամաքային անողնաշար կենդանիներով:

Մարդածին գործոնների ազդեցության հետևանքով այս տեսակը շատ վայրերից անհետացել է: Ըստ երևույթին, բազմացման համար անհրաժեշտ ջրավազանների չորացումը և դրանց շուրջ շինությունների կառուցումը բացասական ազդեցություն են ունենում այս տեսակի վրա:

Կարգավիճակը: Հազվադեպ հանդիպող, քանակապես կրճատվող տեսակ է: Գրանցված է Հայաստանի Հանրապետության Կարմիր գրքում որպես «խոցելի»՝ VUB2ab (ii, iii) տեսակ: Տեսակն ընդգրկված է Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակում (ver.3.1) «LeastConcern» կարգավիճակով: ԲՊՍՍ Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես խոցելի տեսակ:



Ընտանիք - Դողդռներ - Bufonidae Gray 1825

Դողդռների տեսքը շատ բազմազան է: Մարմինը ծածկված է բշտիկավոր մաշկով, որը հարուստ է թունավոր գատուցք արտադրող գեղձերով: Գլուխը բավականին լայն է և առջևից կլորավուն է: Առջևի և հետևի վերջույթները գրեթե հավասար երկարության են: Հետին վերջույթների մատների միջև լողաթաղանթները թույլ են զարգացած և ընտանիքի ոչ բոլոր տեսակներն ունեն լողաթաղանթներ: Վերին և ստորին ծնոտները զուրկ են ատամներից: Աչքի բիբը հորիզոնական տեսք ունի: Աչքերի հետևում ունի լավ զարգացած հարականջային գեղձ:

Բոլոր անպոչ երկկենցաղներից դողդռներն ամենաքիչ չափով են կապված ջրային միջավայրի հետ: Հիմնականում ցամաքային կյանք են վարում և ջրին մոտենում են բազմացման շրջանում:

Ընտանիքն ունի մոտ 550 տեսակներ, որոնցից Հայաստանում և Լեռնային Ղարաբաղում հանդիպում է միայն մի տեսակ:

3. Կանաչ դողդռ - Зеленая жаба - *Bufo variabilis* Pallas, 1769

Տիպային տարածքը՝ Վիեննա (Ավստրիա)

Bufo viridis Laurenti 1768

Rana variabilis Pallas 1769

Bufo variabilis, Merrem 1820

Pseudepidalea viridis, Frost et al. 2006

L.140 մմ; L/L.c.3,03-4,23; L.o./L.tym1.3-2.8; Sp.o./D.r.o.0.84-1.25; L/T 1.53-2.1; D.P./C 1.10-2.12

Չևարանական հատկանիշները: Մարմնի երկարությունը 48-99 մմ է: Արունները ավելի փոքր են քան էգերը: Մարմնի մեջքային մասը մոխրագույն կամ կանաչավուն է և կրում է հստակ արտահայտված, տարբեր չափերի, մուգ կանաչավուն շերտեր, որոնց միջև հաճախ հանդիպում են նաև դարչնագույն պտեր: Փորը մոխրագույն կամ սպիտակավուն է: Մաշկը հարուստ է թունավոր արտազատուկ արտադրող գեղձերով: Աչքերի հետևում ունի լավ զարգացած հարականջային գեղձեր, բիբը հորիզոնական է: Ունի թմբկաթաղանթ (Ուկ. 12, 13): Արուններն ունեն կոկորդային ծայնային պարկեր: Հետին վերջույթների մատները մասամբ միացած են լողաթաղանթներով:



Սկ.12. Կանաչ դողդռ: 1-էգ, 2-արու առանձնյակներ:

Տարածվածությունը: Տարածված է Հյուսիսային Աֆրիկայից և Եվրոպայից մինչև Պամիր և Ալթայի երկրամաս: Հայաստանում և Լեռնային Ղարաբաղում հանդիպում է մի տեսակ, որը լայնորեն տարածված է հանրապետության գրեթե բոլոր շրջաններում (քարտեզ 3):



Նկ. 13. Լճագորտի (a) և կանաչ դողոշի (b) գլուխը կողքից: 1-քնրկաթաղանթ, 2-հարականջային գեղձ:

Ապրելավայրերը: Երկկենցաղների մյուս տեսակների համեմատ ապրելավայրերի առավել լայն սպեկտր ունի՝ հանդիպում է ալպիական գոտիներում, անտառներում, անտառատափաստաններում, տափաստաններում և կիսաանապատներում: Այս տեսակն ավելի կայուն է չորային պայմանների նկատմամբ և կարող է ապրել ինչպես գերխոնավ ճահճային վայրերում, այնպես էլ անապատներում:



Քարտեզ 3. Կանաչ դողոշի տարածվածությունը Հայաստանում և Լեռնային Ղարաբաղում:

Կենսաբանության առանձնահատկությունները: Կանաչ դողոշն ակտիվ է հիմնականում գիշերը և մթնշաղին, իսկ ցերեկը թեև հանդիպում է, սակայն հիմնականում թաքնվում է քարերի տակ կամ կրծողների բներում: Ցածր ջերմաստիճանի պայմաններում ակտիվությունը խիստ նվազում է: Չվաղորման շրջանում ակտիվ է մաև ցերեկը: Սակայն բազմացումից հետո հասուն առանձնյակները հաճախ ցուցաբերում են ցերեկային ակտիվություն՝ նույնիսկ բաց տեղերում և արևոտ եղանակին:

Կանաչ դողոշը ձվադրում է մարտ-մայիս ամիսներին ինչպես աղի, այնպես էլ քաղցրահամ ջրերում: Արուներն էգերից շուտ են հայտնվում ջրավազաններում և, բարձր ծայներ արձակելով, գրավվում են էգերին: Չվակույտում սովորաբար լինում է 2000-3000 ձու: Չվերը տեղադրված են 1-2 շարքով՝ 2-7մ երկարությամբ պարանի ձևով: Չվում սաղմը սկզբից սնվում է ձվում գտնվող դեղնուցով, իսկ ձվից դուրս գալուց հետո, շերտիուկ վիճակում, դետրիտով և ջրիմուռներով:

Շերտիուկների կերպարանափոխությունը տևում է 15-20 օր: Սննդառությունն ավարտվում է կերպարանափոխությունից առաջ և վերսկսվում կերպարանափոխությունից հետո: Առաջին տարվա ծագերը սնվում են միջատներով:

Կանաչ դողոշների կերպարանափոխությունը Հայաստանի հարավային շրջաններում ավարտվում է մայիսի վերջերին, իսկ հյուսիսային շրջաններում հուլիս-



օգոստոս ամիսներին: Սևանա լճի ավազանում հուլիս-օգոստոս ամիսներին հաճախ կարելի է հանդիպել կանաչ դողոշի ձագերի զանգվածային ջրից դուրս գալուն: Այդ դեպքում ջրավազանի ափերը կարող են ծածկվել հազարավոր փոքրիկ դողոշներով, որոնք ցամաք են դուրս գալիս ջրավազանից երբեմն առաջացնելով երկար ու լայն շարժվող շերտեր:

Դողոշների պոպուլյացիաների վրա բացասաբար է ազդում միջավայրի աղտոտումը՝ թունանյութերի օգտագործման հետևանքով: Բացի այդ, դողոշները մեծ քանակությամբ ոչնչացվում են նաև մարդկանց կողմից:

Կարգավիճակը: Կանաչ դողոշը լայնորեն տարածված տեսակ է և նրա պահպանման համար հատուկ միջոցառումներ չեն կիրառվում:

Ընտանիք - Ծառագորտեր - Hylidae Rafinesque - Schmaltz, 1815

Ծառագորտերի ընտանիքը անպոչ երկկենցաղների տեսակներով ամենամեծաթիվ ընտանիքներից մեկն է: Տեսակների մեծամասնությունը հարմարվել են ծառաբնակ կենսակերպին: Ծառագորտերի վերջույթների մատների ծայրերը վերածվել են սկավառակաձև ծծիչների, ինչը հմարավորություն է տալիս նրան մագլցել ծառերի, թփերի, տերևների վրա: Հետին վերջույթների մատները կրում են լողաթաղանթներ: Մարմնի վերին մասը պատված է հարթ մաշկով, իսկ փորային մասը հատիկավոր է: Բոլոր ծառագորտերն ունեն ատամներ, որոնք նստած են վերին ծնոտների վրա: Բիբերը հորիզոնական տեսք ունեն: Ունեն թմբկաթաղանթ և զարգացած կոկորդային ռեզոնատորներ: Բազմանում են ձվադրությամբ, ձվերը դնելով ջրի մեջ, որտեղ էլ շերտփուկները զարգանում են: Կան նաև տեսակներ, որոնք հոգ են տանում սերնդի նկատմամբ:

Ընտանիքն ունի 44 ցեղեր, որտեղ ընդգկված են մոտ 890 տեսակներ: Հայաստանում և Լեռնային Ղարաբաղում հանդիպում են ծառագորտերի 2 տեսակներ:

4. Ենկովնիկովի ծառագորտ - Квакша Шелковникова - *Hyla orientalis* Bedriaga, 1890

Տիպային տարածքը՝ Եվրոպա

Rana arborea Linnaeus 1758

Hyla arborea, Cuvier 1817

Hyla arborea Chernov 1926.

Hyla arborea var. *orientalis* Bedriaga 1890

L.52 մմ; L/L.c.2,6-3,5; L.o./L.tym1,35-3,30.; D.P./C 1,87-3,3

Չևարանական հատկանիշները: Մանր չափեր ունեցող ծառագորտ է: Մարմնի վերին մասը կանաչ, մոխրագույն, դեղնավուն կամ գորշ է, երբեմն ունի ոչ մեծ մուգ բծեր: Մարմնի կողքերով անցնում է մուգ շերտ՝ բաժանելով մարմնի վերին մասը փորայինից: Այն սկսում է քթանցքերից և իր մեջ ընդգրկելով թմբկաթաղանթը, հետզհետե լայնանում է ազդրային շրջանում և առաջացնում օղակ (նկ. 15): Ներքևից մարմինը սպիտակ է կամ դեղնավուն: Արտաքին միջավայրի պայմաններից կախված մարմնի գունավորումը կարող է արագ փոխվել: Արուի կոկորդային ռեզոնատորները լավ զարգացած են: Մատների ծայրերին գտնվող սկավառակաձև ծծիչների օգնությամբ լավ մագլցում է ծառերի, թփերի, տերևների վրա (նկ. 14):

Տարածվածությունը: Տարածված են Միջերկրական ծովի շրջակա երկրներում, արևմտյան Եվրոպայում, Կովկասում և Միջին Ասիայում: Հայաստանում հանդիպում են հյուսիսային շրջանների անտառներում: Լեռնային Ղարաբաղում հայտնաբերվել է հարավի անտառային և սուբալպիական գոտում (քարտեզ 4):


Ապրելավայրերը: Բնակվում է լավ լուսավորված լայնատերև և խառը անտառներում: Հարմար ապրելավայրերում պոպուլյացիաները բավականին խիտ են: Ծառագորտերը բավականին կայուն են չորային պայմանների նկատմամբ: Գիշերը ջրի



կորուստը լրացնելուց հետո, սրանց մարմնի զանգվածը կարող է մեծանալ 21-43%-ով: Հիմնականում ակտիվ է մթնշաղին: Սնվում է միջատներով, թրթուրներով և այլն: Կյանքի մեծ մասն անց են կացնում ծառերի, տերևների, թփերի և լայնատերև բույսերի վրա:



Նկ.14. Շելկովնիկովի ծառագորտ:



Քարտեզ 4. Շելկովնիկովի ծառագորտի տարածվածությունը Հայաստանում և Լեռնային Ղարաբաղում:

Կենսաբանության առանձնահատկությունները: Չմեռում է սեպտեմբեր-նոյեմբերից մինչև մարտի սկիզբը ծառերի փչակներում, քարակույտերում, կրծողների բներում: Չմեռելու վայրերը միշտ չէ, որ պաշտպանում են ծառագորտերին և չոր, անձյուն ձմեռների դեպքում դիտվում է ծառագորտերի զանգվածային ոչնչացում: Ծառագորտերը ջրում լինում են միայն ծվադրման ժամանակ: Բազմացման ժամանակ արուների առջևի թաթի առաջին մատի վրա առաջանում է անգույն կոշտուկ, որը նպաստում է զուգավորման ժամանակ էգին գրկելուն: Արուները ուժեղ կռկռում են, գրավելով էգերին: Բեղմնավորումը կատարվում է ջրում: Սեկ էգը դնում է 800-1000 ծու, որոնք մի քանի կույտ են կազմում: Չվերի տրամագիծը 1-1,5 մմ է: Սաղմնային զարգացումը տևում է 8-14 օր: Մետամորֆոզը 90 օր: Կերպարանափոխությունից անմիջապես հետո երիտասարդ առանձնյակները մնում են ջրավազանի ափին՝ բարձրանալով խոտերի կամ թփերի վրա: Աշնան սկզբին դրանք պատրաստվում են ձմեռելու համար: Շելկովնիկովի ծառագորտը չի խուսափում մարդածին լանդշաֆտներից, որտեղ բնակվելու պայման է ջրամբարների և լայնատերև անտառների առկայությունը:

Կարգավիճակը: Հանրապետության հյուսիսային անտառային շրջաններում լայն տարածում ունեցող տեսակ է: Պահպանության հատուկ միջոցառումներ չեն կիրառվում:



5. Փոքրասիական ծառագորտ - Малоазиатская квакша - *Hyla savignyi* Auduin, 1827

Տիպային տարածքը Սիրիա /Եգիպտոս/

Hyla savignyi Auduin, 1827
Hyla arborea savignyi, Nikolsky, 1913

L.48-50 մմ; L/L.c. 2,7-2,9; L.o./L.tym 1,3-2,9; D.P./C 1,85-3,28

Մարմնի վերին մասը փորից սահմանազատվում է սև շերտով: Այն սկսում է քթանցքերից և իր մեջ ընդգրկելով թմբկաթաղանթը, հետզհետե բարակում է բաժանելով մարմնի վերին մասը փորայինից և ազդրերի մոտ օղակ չի առաջացնում: Փորը սպիտակավուն կամ դեղնագույն է: Կախված տեղանքից, միջավայրի պայմաններից կարող է փոփոխել մարմնի գույնը (նկ. 15):



Նկ. 15. Փոքրասիական ծառագորտ:

Տարածվածությունը: Տարածված են արևելյան Սիրիայում, Հորդանանում, Իսրայելում, Թուրքիայում, Ադրբեջանում:

Հայաստանում և Լեռնային Ղարաբաղում հանդիպում է հարավային շրջաններում, հատկապես Արաքս գետի հովտում, որտեղ ապրում է կիսաանապատային և տափաստանային վայրերում (քարտեզ 5):



Քարտեզ 5. Փոքրասիական ծառագորտերի տարածվածությունը Հայաստանում և Լեռնային Ղարաբաղում:

Ապրելավայրերը: Այս տեսակը ի տարբերություն Շելկովնիկովի ծառագորտի ապրում է բավականին չոր ապրելավայրերում: Հաճախ հանդիպում է անտառազուրկ քփուտներում, խաղողի այգիներում: Երբեմն հանդիպում է ջրից բավականին հեռու վայրերում: Ծառագորտերի մեջ համարվում է ամենաշերմասեր տեսակներից մեկը:



Կենսաբանության առանձնահատկությունները: Չմեռումից դուրս են գալիս ապրիլ ամսին և ակտիվ են մինչև հոկտեմբեր: Ցերեկը թաքնվում են կրծողների բներում, ճեղքերի մեջ, թափված տերևների տակ: Ակտիվ են **գիշեր** ժամանակ, **մանավանդ երբ** եղանակը անձրևային է: Բազմացումը **սովորաբար տեղի է** ունենում կանգնած ջրերում, ապրիլի վերջին-մայիսի սկզբին, ձմեռումից դուրս գալուց հետո: Դնում են մի քանի փոքրիկ ձվակույտեր, յուրաքանչյուրը կազմված 200-300 ձվից: Ձվադրումից հետո եզը հեռանում է ջրափոսից: Մետամորֆոզը վերջանում է հունիսի կեսին:

Կարգավիճակը: Ծառագորտերը լայնորեն տարածված են հանրապետության հարավային անտառներում: Ասկայն նրանք շատ զգայուն են ապրելավայրերի, մասնավորապես անտառների, մացառուտների, մարգագետինների ոչնչացման, ջրավազանների չորացման և դրանց արդյունաբերական թափոններով, հանքային պարարտանյութերով, թունանյութերով և գոմաղբով աղտոտվածության նկատմամբ:

Ընտանիք - Իսկական գորտեր - *Ranidae Rafinesque, 1814*

Միջին և խոշոր (մինչև 30 սմ) չափեր ունեցող երկկենցաղներ են: Հիմնականում հանդիպում են ջրամբարների և գետերի շրջակայքում: Ունեն թմբկաթաղանթ, լավ արտահայտված գլխի կողքերին ռեզոնատորներ: Վերին ծնոտների և խոփոսկրերի վրա ունեն ատամներ: Աչքի քիթտ հորիզոնական տեղը ունի: Առջևի վերջույթները ունեն 4 մատ, հետևինը 5: Հետին վերջույթների մատների միջև լավ արտահայտված են լողաթաղանթները:

Ընտանիքն ունի մոտ 342 տեսակներ, որոնք ընդգրկված են 16 ցեղերում: Հայաստանի տարածքում հանդիպում են 2 տեսակներ:

6. Փոքրասիական գորտ - *Малоазиатская лягушка - Rana macrocnemis Boulenger, 1885*

Տիպային տարածքը Թրիխսիի շրջակայք

Rana macrocnemis Boulenger 1885:22.
Rana camerani Boulenger 1886:597
Rana cameranoi Boettger 1892:8.

L.86 մմ; U/L.c.2,9-3,8; L.o./L.tym1.1,3-2,8; Sp.o./D.r.o.0,84-1,25; L/T 1,,53-2,10; D.P/C 1,4-3,6

Չևարանական հատկանիշները: Մարմնի չափերը հասնում են **41-86** մմ: Մեջքին կան տարբեր տրամագծով, մուգ բծեր: Աչքերից մինչև ուսը, իր մեջ ընդգրկելով նաև թմբկաթաղանթը, անցնում է մուգ գույնի, լայն քունքային շերտ, որը հետին մասում նեղանում է: Փորի գունավորումը միշտ միատարր է՝ նարնջակարմրավուն, վարդագույն, սպիտակավուն: Գարնանը բազմացման շրջանում արուների մոտ այն դառնում է վարդագույն կամ կարմրավուն (**նկ. 16**):

Բազմացումից հետո փորի գունավորումը աստիճանաբար մարում է: Արուն տարբերվում է էգից առջևի թաթերի առաջին մատի վրա գուգավորման կոշտուկների, կոկորդային մասում մաշկի տակ տեղավորված ձայնապարկերի առկայությամբ, երբեմն նաև գունավորման առանձնահատկություններով:

Տարածվածությունը: Տարածված են Փոքր Ասիայում, Կովկասում, Անդրկովկասում: Հայաստանում ունեն լայն տարածում: Հանդիպում են լայնատերև, խառը, և փշատերև անտառներում, նախալեռնային անտառներում, մերձալպիական և ալպիական մարգագետիններում (**քարտեզ 6**):

Ապրելավայրերը: Չորային շրջաններում բնակվում է ջրավազանների մոտ, որոնք շրջապատված են խիտ բուսածածկույթով:



Նկ. 16. Փոքրասիական գորտի էգը բազմացման շրջանում:

Կենսաբանության առանձնահատկությունները: Չմեռում է ինչպես ցամաքում այնպես էլ ջրում: Չմեռումից դուրս է գալիս վաղ գարնանը: Չվաղրման տևողությունը կախված է ծովի մակերևույթի բարձրությունից: Չվակույտերը առաջացնում են մեծ կուտակումներ: Գորտնկիթը և սաղմերը չորացումից հաճախ ոչնչանում են:

Սաղմնային զարգացումը տևում է 7-40 օր, իսկ թրթուրային զարգացումը 45-100 օր: Ջերմաստիճանը, որի պայմաններում զարգանում են թրթուրները, կերպարանափոխությունից հետո, ազդում է առանձնյակների գունավորման վրա: Բարձր ջերմաստիճանի պայմաններում մեծանում է բժավոր գունավորում ունեցող և փոքրանում բաց գույնի ու մեջքային գծով առանձնյակների թիվը: Առաջին տարվա ծագերը կերպարանափոխությունից հետո հանդիպում են սովորաբար հունիս-հուլիս ամիսներին: Կարելի է ենթադրել, որ բարձրադիր գոտիներում սառը և խորը ջրավազաններում թրթուրները ձմեռում են: Որոշ պոպուլյացիաներում էգերի միայն չնչին մասն է բազմանում հարմար ջրավազաններում, որոնք սակայն ապահովում են նոր սերնդի 80-90%-ը: Շերեփուկները կենդանական կեր հազվադեպ են օգտագործում, հիմնականում սնվում են ջրիմուռներով: Հասուն առանձնյակները սնվում են ցամաքային անողնաշարավորներով, մանր ողնաշարավորներով:



Քարտեզ 6. Փոքրասիական գորտի տարածվածությունը Հայաստանում և Լեռնային Ղարաբաղում:

Կարգավիճակը: Հանրապետության գրեթե բոլոր բարձրադիր շրջաններում լայն տարածում ունեցող տեսակ է: Չնայած փոքրասիական գորտը հաճախ է հանդիպում մարդածին լանդշաֆտներում, այնուամենայնիվ չի համարվում այդտեղ մշտապես բնակվող տեսակ:



7. Լճագորտ - Озерная лягушка - *Pelophylax ridibundus* (Pallas, 1771)

Տիպային տարածքը Հարավային Շվեդիա

Pelophylax ridibundus (Pallas, 1771)

Rana ridibunda Pallas 1771

Rana esculenta var. *ridibunda*, Boettger 1880

Pelophylax ridibunda, Fei, Ye and Huang 1990

L.80մմ: L/L.c. 2,5-3,8; L.o./L.tym 1,4-2,5; Sp.o./D.r.o. 1,1-2,2;

Ձևարանական հատկանիշները: Խոշոր գորտ է, որի չափերը հասնում են 48-70 մմ: Մարմնի վերին մասը կանաչավուն, դեղնականաչ կամ մուգ դարչնագույն է և ունի քիչ թե շատ մանր սև կամ մուգ կանաչավուն շերտ: Կողքամեջքային ծալքերը լավ արտահայտված են: Մարմինը ներքևից սպիտակ, կեղտոտ սպիտակ կամ դեղնավուն է և ունի մուգ բծեր կամ կետիկներ: Արունների բերանի անկյուններին կան սև կամ մոխրագույն արտաքին ռեզոնատորներ: Արունների կռկռալու ժամանակ այդ ռեզոնատորները ուռչում են ուժեղացնելով ձայնը: Դա առավել ցայտուն է լինում բազմացման շրջանում (Նկ. 17): Բազմացման շրջանում արունների առջևի վերջույթի առաջին մատին կոշտուկ է առաջանում, որը հնարավորություն է տալիս արունին զուգավորման ժամանակ հեշտ գրկել էգին (Նկ. 5):



Նկ. 17. Լճագորտի արտաքին տեսքը:

Տարածվածությունը: Լճագորտը լայնորեն տարածված և բազմաքանակ տեսակ է, որի տարածման արեալը շարունակում է մեծանալ: Հանդիպում է է հյուսիսային Ալժիրում, Եգիպտոսում, Փոքր Ասիայում, Պաղեստինում, Իրանում, Միջին Ասիայում, Խարավային և հյուսիսային Եվրոպայում, Դրինում, Կովկասում, Անդրկովկասում: Հայաստանում այն լայնորեն հանդիպում է գրեթե բոլոր լանդշաֆտներում գտնվող կանգնած ջրավազաններում, գետերում և լճերում սկսած 550մ-ից մինչև 2438մ. բարձրության վրա (քարտեզ 7):

Ապրելավայրերը: Ամբողջ կյանքը անց է կացնում ջրում կամ նրա մոտակայքում:

Կենսաբանության առանձնահատկությունները: Լճագորտը ակտիվ է հիմնականում ցերեկը, և երեկոյան: Չմեռում են մեծ խմբերով ջրամբարների հատակում շնչելով մաշկի միջոցով: Չմեռելու ժամանակ ջրում թթվածնի քանակի պակասից պոպուլյացիայի մի մասը կարող է ոչնչանալ: Բազմացումը սկսվում է ձմեռումից դուրս գալուց մի քանի օր հետո և կարող է տևել 1.5-2 ամիս: Վաղ գարնանը



արունները բարձր կոկոռալով գրավում են ջրավազանում գտնվող էգերի ուշադրությունը: Արուն գրկում է էգին և առջևի վերջույթներով սեղմելով փորին, օգնում է նրան ծվադրել, որից հետո սերմնահեղուկը լցնում է ծվակույտի վրա, բեղմնավորելով այն (Նկ. 18):



Քարտեզ 7. Լճագորտի տարածվածությունը Հայաստանում և Լեռնային Ղարաբաղում:

Ծվադրությունը կատարվում է ջրավազաններում ապրիլ-մայիս ամիսներին: Գորտնկիթը դնում են ջրամբարների մեջտեղում 5000-10000 ծու պարունակող կույտերով: Ծվի տրամագիծը 1,5-2մմ է: Մի քանի օրից հետո բեղմնավորված ծվերից դուրս են գալիս շերեփուկները, որոնք սկսում են սնվել դեմտրիտով, ջրիմուռներով և բարձրակարգ բույսերով: Մետամորֆոզը տևում է 70-85 օր:



Նկ. 18. Լճագորտի արուն և էգը զուգավորման պահին:


Հասուն լճագորտերը հիմնականում սնվում են ցամաքային և ջրային միջատներով, չեն խորշում մահ մանր ողնաշարավոր կենդանիներից: Հասուն լճագորտերը, երկկենցաղների մյուս տեսակներից ավելի հաճախ, որսում են մահ իրենց և երկկենցաղների այլ տեսակների թրթուրներին և մեկ տարեկան ծագերին:



Լճագորտերի միգրացիայի ունակությունը բավականին բարձր է: Որոշ առանձնյակներ կարող են ցամաքով անցնել 5-12 կմ: Հայաստանում ձկնարդյունաբերությանը վնաս չեն տալիս: Լճագորտը երկկենցաղների այն տեսակներից է, որը կայուն է միջավայրի աղտոտվածության նկատմամբ: Նա ապրում է ոչ միայն կենցաղային թափոններով կամ պարարտանյութերով աղտոտված ջրավազաններում, այլև քիմիական և արդյունաբերական գործարանների շրջակայքում, որտեղ երկկենցաղների այլ տեսակներ գոյատևել չեն կարող: Այնուհանդերձ խիստ անբարենպաստ ապրելավայրում լճագորտի պոպուլյացիաների թվաքանակը շատ է փոքրանում, և դա կապված է թրթուրային շրջանում բարձր մահացության, ինչպես նաև էգերի սակավաբեղունության և սաղմնային այլանդակությունների մեծ թվի հետ: Լճագորտերը մեծ քանակությամբ օգտագործվում են ուսումնագիտական և բժշկական նպատակներով:

Կարգավիճակը: Չնայած լճագորտերի անխնա օգտագործմանը, դրանց թվաքանակը առանձնապես չի կրճատվել: Վերջինս, հավանաբար, կապված է պոպուլյացիաների մեծ խտության հետ:

ՄՈՂՈՒՆՆԵՐ





ՂԱՍ ՍՈՂՈՒՆՆԵՐ - REPTILIA

Ժամանակակից սողունները ներկայացնում են մեզոզոյան դարաշրջանում երկրի վրա լայն տարածում ունեցող հնադարյան սողունների հսկայական բազմազանության աննշան մասը, որոնց ներկայացուցիչները այսօր գրավում են երկրագնդի գրեթե բոլոր տարածքները: Ձեռք բերելով կառուցվածքային տարբեր առանձնահատկություններ, սողունները հարմարվել են տափաստանների, անապատների, կիսաանապատների, քարքարոտ և այլ վայրերի բազմազան պայմաններին: Անապատներում ապրող սողունների մարմինը մեծ մասամբ տափակացած է, մատներին ունեն լայնացումներ: Ուղղահայաց սալաքարերի, քփերի և ծառերի վրա ապրող սողունների մատների ստորին մակերեսին, նույնիսկ պոչի և մարմնի կողքերին կան տերևանման ծծիչներ, քիթեղիկներ՝ կազմված մանրադիտակային չափերի եղջերային խոզաններից: Դաշվել են, որ տափաստանային գեկկոնի ոտքերի յուրաքանչյուր մատի վրա կան ավելի քան 200 մլն այդպիսի խոզաններ: Ծառաբնակ սողունների մեծ մասի մարմինն ունի կանաչ գունավորում և տափակացած է կողքերից: Դրանց մի մասն ունի ծոված մագիլներով մատներ և երկար պոչ, որով կարող է կախվել ծառերի ճյուղերից: Ծառաբնակ կյանքին շատ լավ են հարմարված քամելեոնները: Նրանց առջևի և հետևի ոտքերի մատները բաժանվել են երկու իրար հակադիր խմբերի, և կենդանին նրանցով արքցանների նման բռնվում է ճյուղերից: Մագլցող տեսակներ կան նաև օձերի թվում:

Ծառաբնակ կենսակերպի հետ կապված՝ արևադարձային մի շարք տեսակներ ծեռք են բերել սավառնող թռչչի ունակություն: Մալայան արշիպելագի անտառներում ապրող թռչող վիշապիկ մողեսը մարմնի կողքերին ունի մաշկի լայն ծալք: Ծառից ծառ թռչելու ժամանակ այդ ծալքը մի քանի երկարացած կողերի միջոցով ձգվում լայնանում է և հնարավորություն է տալիս կենդանուն 20-30 մետր տարածությունն անցնել սավառնելով: Սողունների թվում կան նաև կիսաջրային և ծովային կենսակերպ վարող տեսակներ: Դրանցից են ծովային օձերը, կոկորդիլոսները, ջրային լորտուները, ծովային կրիաները և այլն: Զրային կենսակերպ վարող և վերջույթներ ունեցող տեսակների ոտքերի մատներն ունեն լողաթաղանթներ, որոնք հնարավորություն են տալիս նրանց տեղաշարժվելու ջրաշերտերում: Դրանցից են մեր հանրապետությունում ապրող կասպիական և ճահճային կրիաները: Ծովային կենսակերպ վարող կրիաների, օրինակ՝ ծովային կրիայի մատները միացել և առաջացրել են թիակներ, իսկ ծովային օձերի մարմինը կողքերից տափակել է, և դա հնարավորություն է տալիս թիավարելով շարժվել: Սողունների մի մեծ խումբ հարմարված է խիտ քփերի, խոտերի, մացառների մեջ ապրելուն: Այդ պայմաններում տեղաշարժվելու համար նրանց մարմինը երկարել է, վերջույթները կարճացել են, իսկ օձերի և որոշ մողեսների վերջույթները լրիվ անհետացել են:

Սողունների մաշկը չոր է, կազմված է թեփուկներից, վահանիկներից և գրեթե զուրկ է գեղձերից: Միայն մի շարք ընտանիքների ներկայացուցիչները՝ ազամաները, իսկական մողեսները, ունեն թույլ զարգացած կոշտուկային կամ ազդրային գեղձեր: Օրինակ, իսկական մողեսների ընտանիքի ներկայացուցիչները, ազդրերի ներքին մակերեսին ունեն անցքերի շարք՝ **ազդրային ծակոտիներ**, որոնք առավել զարգացած են լինում արուների մոտ: Ենթադրվում է, որ դրանց արտազատուկը հոտավետ հետք է թողնում և նպաստում է բազմացման շրջանում տարբեր սեռերին իրար գտնելու:

Սողունների մարմնի եղջերային ծածկույթը խանգարում է կենդանու աճին, այդ պատճառով սողունները ամառվա ընթացքում մի քանի անգամ մաշկափոխվում են: Սողեսների մաշկի վերին եղջերային շերտը ճաքճքում է և կտորներով թափվում՝ փոխարինվելով նորով, իսկ օձերի մաշկն ամբողջությամբ է փոխվում: Մաշկափոխությունից առաջ օձը դադարում է սնվել, մաշկը դառնում է խամրած, աչքերը պատող եղջերային թաղանթը փոխում է իր գույնը, ստանում կապտավուն երանգ: Մի քանի օրից աչքը պատող թաղանթը պարզվում է, մաշկը պատռվում է դնչի ծայրից և գալարվելով օձը աստիճանաբար դուրս է սողում հին շապիկի միջից: Օձերի «շապիկներ» շատ հաճախ կարելի է հանդիպել մեր շրջապատի դաշտերում: Ազատվելով հին



մաշկից՝ կենդանին որոշ ժամանակ ազատվում է նաև էկտոմակարույծներից՝ հիմնականում տզերից, որոնք հեռանում են հին մաշկի հետ: Հասուն առանձնյակները մաշկը փոխում են տարին մեկ երկու անգամ, իսկ երիտասարդները ավելի հաճախ (նկ. 19):



Նկ. 19. Սողունների մաշկափոխությունը:

Շատ սողունների մարմնի վրա եղջերային թեփուկներից առաջացել են տարօրինակ ցցվածքներ, ծալքեր, խթաններ: Բացի եղջերային գոյացություններից՝ որոշ սողունների մաշկում կան ոսկրային թիթեղիկներ, օրինակ, կրիաների զրահի մեջքային և փորային վահանների կազմության մեջ մտնում են նաև ոսկրային թիթեղիկներ: Թեփուկներից կամ վահանիկներից կազմված եղջերային ծածկույթը պաշտպանում է նրանց մարմինը վնասվելուց, արևի ճառագայթներից, ինչպես նաև ջրի կորստից: Մարմինը պատող եղջերային թեփուկների ու վահանիկների դասավորության բնույթը, քանակությունը կոչվում է **ֆուլիդոզ**: Ֆուլիդոզը կարևոր նշանակություն ունի սողունների տեսակների որոշման համար:



Նկ. 20. Զուգավորումը սողունների տարբեր տեսակների մոտ:

Սողունները լինում են տարբեր մեծության, մի քանի սմ-ից մինչև 10 մետր: Օրինակ՝ գեկոնների ընտանիքում կան 3-3,5 սմ երկարություն ունեցող տեսակներ: Դրանք ամենափոքր մողեսներն են, իսկ ամենախոշոր մողեսը Ինդոնեզիայի Կոմոդո և Ֆիջի կղզիներում հանդիպող կոմոդյան վարանն է, որն ունի մինչև 4 մետր երկարություն և 180 կգ քաշ: Միջինասիական վարանն ավելի փոքր է (1,5 մ): Ամենափոքր օձերն Անդրկովկասում և Հայաստանում հանդիպող կույրօձուկներն են (20-25 սմ):



Ամենամեծ օձը Հարավային Ամերիկայի անտառներում ապրող և մինչև 10 մետր երկարություն ունեցող անակոնդան է: Խոշոր չափեր ունի նաև ցանցավոր պիթոնը (6-7մ): Մեքսիկայի տափաստաններում ապրում է միակ թունավոր մողեսը՝ թունատամը:

Սողունները որպես օրենք ունեն երկու զույգ զարգացած վերջավորություններ, որոնք հնգամատ են: Սակայն շատ ձևերի մոտ դրանք կարող են բացակայել (օձեր, որոշ մողեսներ) կամ լինել թերի զարգացած (որոշ մողեսներ), իսկ ջրային կենսակերպ վարող տեսակների՝ ծովային կրիաների վերջույթները վերածվել են թիակների: Վերջույթները կորցրած սողունները ձեռք են բերել երկար օձանման մարմին և շարժվում են մարմինը օձանման ծռելով: Այդ պատճառով ողնաշարում ողների հողավորումը բարդացել է: Ողերը միմյանց միացել են մի քանի կետում, ինչը մեծացրել է ողնաշարի ծռումը տեղաշարժման ժամանակ:

Սողունների կմախքը լրիվ ոսկրային է: Ողնաշարը ավելի շարժուն է, քան երկկենցաղներինը: Այն բաղկացած է հինգ բաժիններից՝ պարանոցային, կրծքային, գոտկային, գավակային և պոչային: Պարանոցային ողերից երկուսը ունեն յուրահատուկ կառուվածք: Առաջին պարանոցային ողը կոչվում է *ատլաս (atlas)*, ներկայացնում է կապանով վերին և ստորին կեսերի բաժանված ոսկրային օղակ: Վերին անցքը ծառայում է գլխուղեղը ողնուղեղի հետ միացնելու համար, իսկ ստորին անցքի մեջ մտնում է պարանոցային երկրորդ ողի *էպիստրոֆեուսի (epistropheus)* ատամնանման ելուստը: Պարանոցային ողերի այդպիսի հողավորումը մեծ շարժունակություն է տալիս գլխին: Սողունների գանգը լրիվ ոսկրացած է: Կրծիկային է մնացել միայն հոտառական բաժինը: Գանգը շարժուն միացած է ողնաշարին ծոծրակային ոսկրի ելունի միջոցով:

Բացառությամբ օձերի և անոտ մողեսների՝ բոլոր սողուններն ունեն մարմնի կողքերին տեղավորված երկու զույգ լավ զարգացած եղջերային սուր ճանկերով հնգամատ վերջույթներ, որոնք օգնում են նրանց արագ շարժվել, մագլցել թեք ժայռերի ու ծառերի վրա, արագ փախչել, թաքնվել թշնամիներից: Ոտքերը կենդանու մարմինը գետնից շատ չեն բարձրացնում և քայլելիս թվում է, թե կենդանին սողում է գետնի վրա: Ոտքերի բացակայությունը օձերի և մի շարք մողեսների մոտ երկրորդային երևույթ է: Այն, որ նրանց նախնիներն ունեցել են ոտքեր, ապացուցում են, մի շարք տեսակների կմախքում առկա, վերջույթների մնացորդները, օրինակ կույրօձերի ու վիշապների կմախքում դեռևս պահպանվել են կոնքի կամ ոտքերի մնացորդները:

Սողեսների մեծ մասի աչքերը կրում են կոպեր, իսկ օձերի աչքերը զուրկ են կոպերից: Օձերի, ինչպես նաև մի շարք մողեսների կոպերը ծուլվել, ծածկվել են անշարժ, թափանցիկ թաղանթով և աչքերը պաշտպանում են վնասվածքներից:


Չորային լանդշաֆտներում տարածվելով, այս խմբի ներկայացուցիչների մոտ վերացավ հնադարյան երկկենցաղներին հատուկ մաշկային շնչառությունը և փոխառինված թոքային շնչառությամբ:

Սողեսների մոտ լավ զարգացած է լսողական զգայարանի արտաքին անցքը՝ թմբկաթաղանթը, հետևաբար նաև՝ լսողությունը: Օձերը թմբկաթաղանթ չունեն: Անհրաժեշտ է նշել, որ մողեսներից կան մի շարք տեսակներ, որոնք կորցրել են իրենց վերջույթները, և մարդիկ դրանց հաճախ շփոթում են օձերի հետ: Մեր հանրապետությունում այդ մողեսներից են դեղնափորիկը, իլիկամողեսը: Այդպիսի մողեսներին կարելի է տարբերել օձերից կոպերի և թմբկաթաղանթի առկայությամբ: Սողեսների մեծ մասը վտանգի դեպքում թողնում է պոչը և փախչում: Կտրված և շարժվող պոչը գրավում է թշնամու ուշադրությունը, այդ ընթացքում մողեսը հասցնում է թաքնվել: Օձերը չունեն այդ հատկանիշը: Սողեսի կտրված պոչը որոշ ժամանակից հետո նորից աճում է, սակայն նոր պոչը զույնով տարբերվում է հիմնականից: Ինչպես երկկենցաղները, այնպես էլ սողունները սառնարյուն կենդանիներ են: Նրանց ակտիվությունը սերտ կերպով կախված է արտաքին միջավայրի ջերմաստիճանից: Վաղ զարմանը, երբ արևի ճառագայթները մի փոքր տաքացնում են շրջակայքը, սողունները դուրս են գալիս ծնեռունից, և սկսվում է նրանց ակտիվ կենսակերպը: Այդ ժամանակ առավել ակտիվ են արու առանձնյակները, որոնք փորձում են գտնել և գրավել էգերին՝ սերունդը շարունակելու համար: Գտնելով էգին, արուն փորձում է գրավել կամ բռնել նրան, դա տարբեր տեսակների մոտ ընթանում է տարբեր ձևերով: Օձերի արուն և էգը



հիմնականում փաթաթվում են իրար, և այդ փաթաթված պարը ընթանում է բավական երկար, մինչև որ էզը չի թույլ տալիս իրեն զուգավորել: Մողեսների զուգավորումն ընթանում է այլ կերպ: Արուն հետապնդում և ատամներով բռնում է էզին՝ ազդրերի շրջանում, փորի կողքերից կամ գլխից և դրանից հետո փորձում սերմնավորել նրան (նկ. 20):

Քանի որ սողունների մաշկը պատված է եղջերային թեփուկներով ապա, արուի ատամների հետքերը կարելի է տեսնել էզի մարմնի վրա, որը մնում է զուգավորումից հետո (նկ. 21): Ի տարբերություն երկկենցաղների, սողունները բազմանում են ներքին բեղմնավորմամբ: Սողունների մեծ մասը դնում են ձվեր: Ձվերը դնում են ավազի կամ հողի մեջ, քարերի արանքում, փտած տերևների կույտերի տակ: Մողեսների մեծ մասի և օձերի ձվերը պատված են մաշկային փափուկ թաղանթով, իսկ կոկորդիլոսներինը և կրիաներինը՝ կրային կճեպով (նկ. 22):



Նկ. 21. Չուգավորումից հետո էզ մողեսների մարմնի վրա մնացած արու առանձնյակների ատամների հետքերը-1:

Սողունների մի շարք տեսակների սաղմերի զարգացումը ձվի մեջ տեղի է ունենում նաև էզի օրգանիզմում, օրինակ՝ **երևանյան լեռնատափաստանային իժի**, երկարատու սցինկի: Ձագերը ձվից դուրս են գալիս անմիջապես ձվադրման պահին: Բազմացման այդպիսի հատկությունը կոչվում է **ձվակենդանածնություն**: Որոշ տեսակների բեղմնավորված սաղմը զարգանում է մոր ձվատարին ամրացած, որտեղից և ստանում է սննդանյութերը: Բազմացման այդ ձևը կոչվում է **կենդանածնություն՝ (սովորական իժ, կենդանածին մողես)**: Հայաստանի հյուսիսային շրջաններում հանդիպող որոշ ժայռային մողեսներ չունեն արուներ և բազմանում են առանց բեղմնավորման՝ **կուսածնությամբ (պարթենոգենեզ)**:

Վերջին տարիներին շատ կենդանաբաններ սողուններին սկսեցին բաժանել երկու ինքնուրույն դասերի՝ **Պարառեպտիլիաներ - Parareptilia** և **Իսկական ռեպտիլիաներ - Eureptilia**:

Առաջին խմբի մեջ դասում են **Անապսիդների - Anapsida** ենթադասին պատկանող հնադարյան անհետացած սողունների մի քանի կարգեր և **ժամանակակից Կրիաների - Testudines** կարգը: Երկրորդ խմբի մեջ մտնում են **Արխոզավրների - Archosauria** ենթադասը՝ **Կոկորդիլոսներ - Crocodilia** կարգով և **Լեպիդոզավրների - Lepidosauria** ենթադասը՝ **Կոցազուխներ-Rynchocephalia**, **Մողեսներ - Sauria = Lacertilia**, **Օձեր - Serpentes = Ophidia** և **Ամֆիսպեններ - Amphisbaenia** կարգերով:



Դասակարգման այս ձևը մոտ 20 տարի է ինչ ընդունված է շատ հնեաբան կենդանաբանների կողմից և հաճախ օգտագործում են սողունաբանները՝ հերպետոլոգները: Անհրաժեշտ է նաև նշել, որ շատ կենդանաբաններ մողեսներին և օձերին շարունակում են համարել որպես թեփուկավորների կարգի ենթակարգեր: Երկրագնդի վրա այժմ հանդիպում են սողունների մոտ 8734 տեսակներ, որոնցից տեսակներով ամենահարուստը մողեսների կարգն է՝ 5247 տեսակ, օձերը՝ 3149, իսկ մյուս կարգերը ներառում են՝ կրիաները 313, կոկորդիլոսները 23, կնճիթազուլուխները 2 տեսակներ:



Նկ. 22. Սողունների ծվից ծագերի դուրս գալը:

Սողունները լայն տարածում ունեն մեր Հանրապետությունում և Լեռնային Ղարաբաղում: Նրաց կարելի է հանդիպել գրեթե բոլոր լանդշաֆտային գոտիներում: Այս կենդանիների մի շարք տեսակներ տարածված են միայն Հայկական լեռնաշխարհում և համարվում են նեղ արեալ ունեցող էնդեմ՝ տեսակներ: Հայաստանում հանդիպում են սողունների 52 տեսակներ, դրանցից 3-ը կրիաներ են, 27-ը՝ մողեսներ և 22-ը՝ օձեր:

Վերջին տարիներին մարդածին գործոնը լուրջ ազդեցություն է ունեցել նրանց քանակական կազմի վրա և շատ շրջաններում այս կենդանիները գրեթե անհետացել են կամ գտնվում են վտանգված վիճակում: Դրանցից 29 տեսակներ ներառվել են Հայաստանի Հանրապետության կենդանիների Կարմիր գրքում՝ որպես վտանգված, անհետացման եզրին կանգնած և պահպանության կարիք ունեցող տեսակներ:

Ինչպես նշվեց, Հայաստանում հանդիպում են մողեսների 27 տեսակներ, որոնք շատ վայրերում մեծ քանակություն են կազմում: Առավել մեծաթիվ պոպուլյացիաներ են առաջացնում ժայռային մողեսները, ագամաները, ճարպիկ և շերտավոր մողեսները: Հայաստանում տարածված են օձերի 22 տեսակներ: Կիսաանապատներում, լեռնային տափաստաններում ու անտառներում հանդիպում են պղնձօձը, անդրկովկասյան սահնօձը, գյուրզան, փոքրասիական իժը, կարմրափոր սահնօձը և այլն: Գետերի և ջրամբարների ափերին, լճակներում և լճերում ապրում են սովորական և ջրային լորտուկները: Մերձալպիական գոտիներում, լեռնային տափաստաններում, մարգագետիններում և չորադիմացկուն բուսականությամբ ծածկված քարքարոտ լանջերին ապրում են լեռնատափաստանային իժը, փոքրասիական կամ հայկական իժը, անդրկովկասյան գյուրզան: Դրանք շատ թունավոր օձեր են: Անդրկովկասյան գյուրզան մեր հանրապետության ամենավտանգավոր և ամենամեծ իժն է, նրա երկարությունն ավելի քան 1,5 մ է:

Սողունների կարգերը որոշելու աղյուսակ


1 (2) Կենդանու մարմինը շրջապատված է լայն ոսկրային զրահով, որը վերևից պատված է մեծ եղջերային թիթեղիկներով:

Կրիաներ - Chelonia (էջ 36)

2 (1) Սյդպիսի զրահ չունեն, մարմինը պատված է թեփուկներով:

Թեփուկավորներ - Squamata (էջ 47)

ԿՐԻԱՆԵՐ





ԿԱՐԳ - ԿՐԻԱՆԵՐ - TESTUDINES

Մարմինը շրջապատված է լայն ոսկրային զրահով, որը կազմված է վերին մեջքային մասից՝ կարապաքսից և ստորին փորային մասից՝ պլաստրոնից: Ջրափի վերին և ստորին մասերը կողքերից իրար միացած են անշարժ ոսկրային կապով կամ շարժուն կապանների միջոցով: Ջրափի մեջքային մասը կազմված է մաշկային ծաղման ոսկրային թիթեղներից, որոնք սերտաճել են ողերի վերին ելունների և կողերի հետ: Ջրափի փորային մասը կազմված է 9 ոսկրային մասերից, որոնցից մեկը հիմնականում կենտ է, իսկ մյուս չորսը զույգ են ու խոշոր (նկ. 23):



Նկ. 23. Ճահճային կրիայի կարապաքսի վահանիկները:
1-կողային; 2-եզրային; 3-ողնաշարային; 4-ծոծրակային; 5-պարանոցային:

Կրիաների մեծամասնության ոսկրային զրահը՝ բացառությամբ, փափկամաշկ և մաշկային կրիաների, վերևից պատված է եղջերային վահանիկներով: Դրանք կենդանու աճի հետ նույնպես աճում են ինքնուրույն առաջացնելով զրափի վերին մասի՝ կարապաքսի վրա օղակներ, որոնց միջոցով մոտավորապես կարելի է որոշել կենդանու հասակը: Ատամներ չունեն, ծնոտները պատված են եղջերային պատյանով: Ձուգավորման օրգանը կենտ է: Ժամանակակից կրիաների ավելի քան 313 տեսակները բաժանվում են 2 ենթակարգերի և 13 ընտանիքների: Կովկասում հանդիպող կրիաները պատկանում են ծածկապարանոց կրիաներ (*Cryptodira*) ենթակարգին և ցամաքային կրիաներ (*Testudinidae*) ընտանիքին:

Հայաստանում և Լեռնային Ղարաբաղում տարածված են *Testudo*, *Mauremys* և *Emys* ցեղերը: Դրանցից յուրաքանչյուրը ներկայացված է մեկ տեսակով:



Կրիաների տեսակները որոշելու համար օգտագործում են հետևյալ չափումներն ու պայմանական նշանները:

- L. car. - Langitudo carapaxi - Կարապաքսի երկարությունը
- Lt.car. - Lat itudo carapaxi - Կարապաքսի լայնությունը
- L.cd - Langitudo caudalis - Պոչի երկարությունը

Կրիաների տեսակները որոշելու արյուսակ

1(2) Հետին վերջույթները հաստ են և սյունաձև տեսք ունեն (նկ. 24): Առջևի վերջույթները լայնությամբ քիչ տափակացած են: Ուղքերի մատների արանքում լողաթաղանթ չկա: Գլուխը վերևից պատված է հավասարաչափ դասավորված եղջերային վահանիկներով: Կարապաքսը բավականին ուռուցիկ է և վրայի վերպոչային վահանիկը կենտ է:

Միջերկրածովային կրիա - Testudo graeca L. (տչ 39)



Նկ. 24. Միջերկրածովային կրիա և նրա սյունաձև տեսք ունեցող հետին վերջույթը:

2 (1) Հետին վերջույթները սյունաձև տեսք չունեն: Մատների արանքում կա լողաթաղանթ (նկ. 25): Վերպոչային վահանիկները երկուսն են: Գլուխը վերևից պատված է հարթ մաշկով:.....3

3 (4) Պլաստրոնը կարապաքսի հետ միացած է անշարժ ձևով՝ երկար կարի միջոցով (նկ. 27): Հետանցքային վահանիկների միջև գտնվող կարը բավականին կարճ է ազդրային վահանիկների կարից: Պարանոցին կան բաց գույնի լայնական շերտեր, բաժանված մուգ շերտերով (նկ. 26):

Կասպիական կրիա - Mauremys caspica (տչ 42)



Նկ. 25. Կասպիական կրիա և նրա լողաթաղանթով վերջույթները 1-էգ, 2-արու:

4 (3) Պլաստրոնը կարապաքսի հետ միացած է շարժուն ձևով՝ կապանների միջոցով: Զետանցքային վահանիկների միջև գտնվող կարը բավականին երկար է ազդրային վահանիկների կարից (Նկ. 27): Պարանոցին չունեն բաց գույնի լայնական շերտեր, որոնք բաժանված են իրարից մուգ շերտերով, այլ ունեն բաց դեղնավուն կետանման բծեր (Նկ. 26): Այդպիսի բծեր կան նաև կարապաքսի վրա:

Ճահճային կրիա - *Emys orbicularis* L. (էջ 44)



Նկ. 26. Կասպիական (1) և ճահճային (2) կրիաների պարանոցային մասը:



Նկ. 27. Պլաստրոնի միացումը կարապաքսին: a- *Mauremys caspica*; b- *Emys orbicularis*: 1-պլաստրոնի միացումը կարապաքսին անշարժ կերպով; 2-պլաստրոնի միացումը կարապաքսին շարժուն կապանների միջոցով:



Ընտանիք - Ցամաքային կրիաներ - Testudinidae Batsch, 1788

Լրիվ ցամաքային կենսակերպ վարող կրիաներ են: Ունեն ուռուցիկ զրահ: Ոսկրային զրահը պատված է հաստ եղջերային վահանիկներով: Պլաստրոնն անշարժ կարող ամուր միացած է կարապաքսին: Գլուխը պատված է խոշոր համաչափ դասավորված վահանիկներով: Վտանգի դեպքում կենդանին կարողանում է գլուխն ու պարանոցը լիովին ներս քաշել զրահի մեջ: Հետին վերջույթները հաստ են ու սյունածև:

Տարածված է հարավային Եվրոպայում, Ասիայում, Աֆրիկայում, Հյուսիսային և Հարավային Ամերիկայում և բազմաթիվ արևադարձային և մերձարևադարձային կղզիներում: Հայտնի են ավելի քան 40 տեսակներ, որոնք ընդրկված են 14-15 ցեղերում:

Ցեղ - Միջերկրածովային կրիաներ - Testudo Linnaeus, 1758

Միջին չափի, բարձր կարապաքսով կրիաներ են: Կարապաքսի հետին մասում եզրերը սովորաբար ատամնավոր են: Ունեն կարճ պոչ: Առջևի վերջույթներն ունեն 5 մատ: Ազդրի հետին մասում կա սովորաբար լավ երևացող եղջերային թմբիկ:

Տարածված են Միջերկրական ծովի հարակից երկրներում, Իրանում, Կովկասում:

1. Միջերկրածովային կրիա - Средиземноморская черепаха - *Testudo graeca* Linnaeus, 1758

Տիպային տարածքը՝ Սանտա Կրուս (Օրան)

Testudo graeca armeniaca Chkhikvadze and Bakradze, 1991

Testudo graeca iberica Pallas, 1814

Testudo graeca Linnaeus, 1758

Testudo iberica Pallas, 1814:18; Zugmayer 1906:477; Chantre 1883

Tstudo armeniaca Chkhikvadze and Bakradze 1991

L.car. 290մմ; L.car./Lt.car 1,02-1,45

Չևաբանական հատկանիշները: Կարապաքսը բավականին բարձր է և հետին մասում եզրերը սովորաբար ատամնավոր են: Պոչը շատ կարճ է, նրա երկարությունը 2,5 անգամ կարճ է կարապաքսից: Արուների պոչը համեմատաբար երկար է քան էգերինը: Մեջքային զրահի առջևի մասում ունեն կտրվածք, որը կազմված է պարանոցային կողային վահանիկներից: Ծոծրակային վահանիկը նեղ է և սրված է առջևից: Առջևի վերջույթներն ունեն 5 մատ: Նախաբազկի առջևի մակերեսն ունի 4-5 շարք իրար վրա նստող խոշոր թեփուկներ: Ազդրի հետին մասում գտնվում է սովորաբար լավ երևացող եղջերային թմբիկը, որը շրջապատված է մանր թեփուկներով: Ենթապոչային վահանիկը կենտ է: Չրահը դեղնամոխրագույն է և վրան ունի մուգ բծեր: Կարապաքսի եզրերին այդ բծերը սովորաբար ուղղանկյուն եռանկյունիների տեսքով են և տեղավորված են յուրաքանչյուր վահանիկի առջևի արտաքին անկյունում: Երիտասարդ առանձնյակները դեղնավուն կամ բաց դեղնականաչ գույնի են և կարապաքսի վրա ունեն սև բծեր:

Տարածվածությունը: Տարածված են Հյուսիս-արևելյան Աֆրիկայում, հարավային Իսպանիայում, Բալկանյան թերակղզում, Միջին Ասիայում, Սիրիայում, Իրաքում: Հայաստանում հանդիպում են Արարատի, Թումանյանի, Նոյեմբերյանի, Թալինի, Արմավիրի, Մեղրու, Իջևանի շրջաններում: Հայաստանում այս կրիայի տարածման



գոտին բաժանվում է երկու մասի, հարավում՝ Արաքս գետի հովիտը և հյուսիսում՝ Քուռ գետի հովիտը: Հանրապետության տարածքում հանդիպում են միջերկրածովային կրիայի երկու ենթատեսակներ (նկ. 28):



Նկ. 28. 1-*T.g.iberica* և 2-*T. g.armeniaca* ենթատեսակները:

Հայաստանի հյուսիս–արևելյան մասում տարածված են *Testudo graeca iberica*, իսկ հարավային մասում՝ Արաքս գետի հովտում և Լեռնային Ղարաբաղում՝ *Testudo graeca armeniaca* ենթատեսակները: *T.g.armeniaca* ենթատեսակի արեալը տարանջատված է մի քանի պոպուլյացիաների, որոնք գտնվում են Արարատյան հարթավայրում և Հայաստանի ծայր հարավում՝ Մեղրու շրջանում (քարտեզ 8):



Քարտեզ 8. 1-*Testudo graeca iberica* և 2-*Testudo graeca armeniaca* ենթատեսակների տարածվածությունը Հայաստանում և Լեռնային Ղարաբաղում:

Ապրելավայրերը: Միջերկրածովային կրիաները հիմնականում ապրում են կիսաանապատային վայրերում: Բնակեցնում են տարբեր ապրելավայրեր՝ չոր տափաստաններ, սարալանջեր՝ ծածկված աղքատ խոտածածկով, թփուտներով, նոսր կամ լեռնային անտառով, ինչպես նաև ցածրադիր անտառներ և այգիներ: Հյուսիսային Հայաստանում հանդիպում են նաև կաղնու ոչ խիտ անտառներում:

Կենսաբանության առանձնահատկությունները: Չմեռումից դուրս են գալիս մարտի վերջին: Ակտիվ են ապրիլ ամսից մինչև նոյեմբերի կեսերը: Սնվում են բուսական կերով, բայց երբեմն օգտագործում են կենդանի կեր՝ փափկամարմիններ և մանր անողնաշար կենդանիներ: Ամուսնական խաղերը և զուգավորումը տեղի է ունենում ապրիլ-մայիս ամիսներին (նկ. 29):



Չվաղրունը սկսվում է հունիսի սկզբներին, հուլիսին և օգոստոսին: Հունիսից սկսած, մեկ սեզոնի ընթացքում, ձվադրում են երկու անգամ՝ ձվերը թաքցնելով հողում փորած փոսի մեջ (2–8 ծու): Չվերի ինկուբացիան տևում է 2–3 ամիս: Սեռահասուն են դառնում կյանքի 12–14 տարում: Չմեռման են գնում նոյեմբերի կեսին: Սովորաբար ծմբռում են կենդանիների չօգտագործվող բներում:

Հայաստանում այս տեսակի մոտավոր քանակությունը կազմում է 900–1000 առանձնյակ: 10 հա մակերեսին հանդիպում է 1–5 առանձնյակ:



Նկ. 29. Միջերկրածովային կրիայի ամուսնական խաղերը:

Կարգավիճակը: Միջերկրածովային կրիան ընդգրկված է Հայաստանի Հանրապետության, ինչպես նաև նախկին ԽՍՀՄ-ի Կարմիր գրքերում: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով B1a+2ab (iii), գնահատվում է VU A2cd կարգավիճակով՝ որպես «խոցելի» տեսակ: Թվաքանակի պակասելու հիմնական պատճառն է բնորոշ ապրելավայրերի յուրացումը և ապօրինի որսը: Առաջարկվել է պահպանվող տարածքներից դուրս գտնվող հիմնական ապրելավայրերը վերցնել պահպանության տակ և ուժեղացնել հսկողությունը կրիաների ապօրինի որսի նկատմամբ: Անհրաժեշտ է կազմակերպել կրիաների վերարտադրություն՝ քայքայված պոպուլյացիաները վերականգնելու նպատակով: Պահպանվում է «խոսրովի անտառ» և «Շիկահող» արգելոցներում:

**Ընտանիք - Ասիական քաղցրահամ ջրային կրիաներ - Geomydidae
Theobald, 1868**

Մանր և միջին չափերի ջրային կրիաներ են: Այս ընտանիքի կրիաները շատ մոտ են ամերիկյան քաղցրահամ ջրերի կրիաներին և նրանցից տարբերվում են գանգի կառուցվածքային մի շարք հատկանիշներով ու պարանոցային ողերով: Ընտանիքն ընդգրկում է ավելի քան 20 ցեղեր, մոտ 60 տեսակներով, որոնք հիմնականում



տարածված են Ասիական աշխարհամասում, բացառությամբ 2-3 ցեղի, որոնք հանդիպում են Կենտրոնական և Հարավային Ամերիկայում: Հայաստանում տարածված է *Mauremys* ցեղին պատկանող մեկ տեսակ:

Ցեղ - Ջրային կրիաներ - *Mauremys* Gray, 1869

Քիչ ուռուցիկ, գրեթե տափակացած զրահով, միջին չափերի կրիաներ են, որոնց պլաստրոնը կարապաքսի հետ երկար կարով միացած է անշարժ ձևով:

Տարածված են հարավային Եվրոպայում, հյուսիս-արևմտյան Աֆրիկայում, Փոքր Ասիայում, ճապոնիայում, հարավային Չինաստանում, հյուսիսային Վիետնամում, Կովկասում: Ցեղն ունի 6-7 տեսակներ, որոնցից մեկ տեսակ հանդիպում է Հայաստանում և Լեռնային Ղարաբաղում:

2. Կասպիական կրիա - Каспийская черепаха - *Mauremys caspica* (Gmelin, 1774)

Տիպային տարածքը՝ Պիրսագատ (Արևելյան Անդրկովկաս)

Testudo caspica Gmelin 1774

Clemmys caspica, Mehely 1894

Clemmys caspica caspica, Chernov 1939

L.car. 240 մմ; L.car./Lt.car 1,06-1,65; L.L.car./Al.t. 2,19-3,16; L.car./L.cd. 1,7-4,32.

Չևարանական առանձնահատկությունները: Պլաստրոնը կարապաքսի հետ միացած է անշարժ ձևով, երկար կարի միջոցով: Հետանցքային վահանիկների միջև գտնվող կարը բավականին կարճ է ազդրային վահանիկների միջև եղած կարից: Վերջինիս կարը հավասար է կամ մի քիչ փոքր է փորային վահանիկները միացնող կարից: Հետանցքային վահանիկների միջև պլաստրոնի հետին մասում կա խորը եռանկյուն կտրվածք (նկ. 26, 30):



Նկ.30. Կասպիական կրիայի պլաստրոնի վահանիկները: 1-կոկորդային; 2-բազկային; 3-կրծքային; 4-փորային; 5-ազդրային; 6-հետանցքային; 7-աճուկային; 8-ենթամկանային:



Ծոծրակային վահանիկի լայնությունը սովորաբար փոքր կամ հավասար է նրա երկարությանը: Երկրորդ և երրորդ ողնաշարային վահանիկները իրենց լայնությամբ հավասար են կամ մեծ են երկրորդ և երրորդ կողային վահանիկներից: Կարապաքսը դեղնականաչավուն կամ կանաչամոխրագույն է և կողքերին ունի դեղին բծեր, որոնք լավ երևում են երիտասարդ անհատների վրա:

Պլաստրոնը և կողային վահանիկների ներքևի մասը դեղնակարմիր է և ունի մուգ բծեր: Երբեմն պլաստրոնը լրիվ մուգ գույնի է: Վզի և գլխի կողքերին կան երկայնակի դեղին շերտեր, որոնք երբեմն շրջապատված են լինում սև գույնի շերտերով (նկ. 30, 31): Այդպիսի շերտեր կան հետին վերջույթների և պոչի վրա: Կասպիական կրիայի վերջույթների մատների միջև կան լողաթաղանթներ, որոնք հնարավորություն են տալիս ջրում տեղաշարժվելու: Ատամներ չունեն, ծնոտները պատված են եղջերային պատյանով:




Նկ. 31. Կասպիական կրիա:

Տարածվածությունը: Տարածված են հարավային Եվրոպայում, հյուսիս արևմտյան Աֆրիկայում, Հարավարևմտյան և արևելյան Թուրքիայում, Իրանում, Թուրքմենիայում, Անդրկովկասում: Այս տեսակի տարածման գոտին *Mauremys caspica rivulate* ենթատեսակով ընդգրկում է նաև Ալբանիան, հարավային Հարավսլավիա, հարավային Բուլղարիան, Հունաստանը, Սիրիան, Պաղեստինը և հյուսիսային Իրաքը: Հայաստանում *Mauremys caspica caspica* ենթատեսակը տարածված է Արաքս գետի հովտում և նրա ամբողջ երկարությամբ (քարտեզ 9):

Ապրելավայրերը: Ապրում են տարբեր տիպի հոսող և կանգնած ջրամբարներում:

Կենսաբանության առանձնահատկությունները: Սնվում են հիմնականում միջատներով, ձկներով, գորտերով, որպես կեր օգտագործում են նաև բույսերը, դրանց արմատները և հատիկները: Չվաղորում սկսում է հունիսի կեսերից: Տարվա ընթացքում հնարավոր է 2-3 ձվադրում: Դնում են 8 ծու: Չափերը ձվից դուրս են գալիս ձվադրումից 80-90 օր հետո:



Քարտեզ 9. Կասպիական կրիայի տարածվածությունը Հայաստանում և Լեռնային Ղարաբաղում:

Կարգավիճակը: Այս տեսակը տարածման վայրերում հաճախ մեծ կուտակումներ է առաջացնում:

Ընտանիք - Ամերիկյան քաղցրահամ ջրային կրիաներ - Emydidae Rafinesque, 1815

Սանր և միջին չափերի՝ ասիական ջրային կրիաներին շատ մոտ կրիաներ են: Ունեն 39 տեսակներ, որոնք ընդգրկված են 11 ցեղերում: Դրանց մեծ մասը տարածված է արևմտյան աշխարհամասում: Հայաստանում հանդիպում է *Emys* ցեղին պատկանող մեկ տեսակ:

Ցեղ - ճահճային կրիաներ - *Emys* Dumeril, 1806

Ջրային կենսակերպ վարող միջին չափի կրիաներ են: Կարապաքսը քիչ ուռուցիկ է և բավականին հարթ: Պլաստրոնը կարապաքսի հետ միացած է շարժուն ձևով, կապանների միջոցով: Պլաստրոնի հետին եզրը կլորացած է և հետանցքային վահանիկների սահմանի միջև չկա խորը ճեղք: Ցեղն ունի մեկ տեսակ, որը տարածված է Հարավ-արևմտյան Եվրոպայում:

3. Սովորական կամ ճահճային կրիա - Болотная черепаха- *Emys orbicularis* (Linnaeus, 1758)

Տիպային տարածքը՝ Հարավային Եվրոպա

Testudo orbicularis Linnaeus 1758
Emys orbicularis, Blanford 1876

L.car. 200 մմ; L.car./Lt.car 1,15-1,35; L.L.car./Al.t 2,28-2,67; L.car./L.cd. 1,87-2,48.

Չևաբանական հատկանիշները: Պլաստրոնը կարապաքսի հետ միացած է շարժուն ձևով, կապանների միջոցով: Հետանցքային վահանիկների միջև եղած կարը մի քիչ մեծ է ազդրային վահանիկների կարից: Պլաստրոնի հետին եզրը հարթ է և հետանցքային վահանիկների սահմանի միջև չկա խորը ճեղք: Ծոծրակային վահանիկը մեղ է և նրա լայնությունը միշտ կարճ է երկարությունից: Երկրորդ ողնաշարային վահանիկի լայնությունը փոքր է երկրորդ կողային վահանիկի լայնությունից: Կարապաքսը վերևից մուգ գորշագույն կամ համարյա սև է և ծածկված է բազմաթիվ դեղնավուն կետերով ու գծերով, որոնք երբեմն առաջացնում են հավասար շարքեր: Պլաստրոնը դեղնավուն, կարմրադեղնավուն կամ գորշագույն է: Պարանոցի և պոչի



վրա երևում են մեծ քանակությամբ երկայնական դեղնավուն շերտեր: Գլուխը նույնպես պատված է մանր դեղնավուն շերտով (նկ. 32):



Նկ.32. Ճահճային կրիա:

Տարածվածությունը: Տարածված են Հարավային Եվրոպայում, Կենտրոնական Եվրոպայի արևելյան մասում, Յուլիս արևմտյան Աֆրիկայում, Փոքր Ասիայում, Յուլիսիային Իրաքում, Թուրքմենիայում, Կովկասում, Ղազախստանում, Անդրկովկասում:

Հայաստանում այս տեսակն ունի սահմանափակ տարածվածություն: Հանդիպում են Աղստեֆ գետի հովտում, Նոյեմբերյանի, Տավուշի մարզերում, Կապանի մարզում: Իսկ 1971թ 1 անհատ բռնվել է Արմավիրի շրջանի Սև ջուր գետի շրջակայքից: Լայն տարածում ունի Լեռնային Ղարաբաղի հանրապետությունում՝ Արաքս գետի հովտում (քարտեզ 10):



Քարտեզ 10. Ճահճային կրիայի տարածվածությունը Հայաստանում և Լեռնային Ղարաբաղում:

Ապրելավայրերը: Ապրում է ճահիճներում, լճերում, գետերում 647-800 մ. բարձրության վրա: Արաքսի հովտում հանդիպում է *Mauremys caspica* հետ միասին:

Կենսաբանության առանձնահատկությունները: Լավ լողում են: Երկար ժամանակ կարող են մնալ սուզված վիճակում: Ցերեկը արևոտ եղանակին երկար մնում են ցամաքում տաքանալով արևի տակ: Գիշերում են հիմնականում ջրավազանի հատակում: Չմեռումից դուրս են գալիս ապրիլի սկզբներին և ակտիվ են մինչև նոեմբերի կեսը: Չուզավորումը սկսում է մայիս ամսին: Էգը կարող է ծվադրել տարին 1-3 անգամ, դնելով 3-12 ծու: Չվերը դնում է հողի մեջ փորած 10-15 սմ խորության



փոսերում: Չագերը ծվից դուրս են գալիս օգոստոսի սկզբից միջև սեպտեմբեր: Սնվում են կենդանական կերով, ջրում որսում են երկկենցաղների շերտիուկներ, ջրային միջատներ, փափկամարմիններ, մանր հողվածոտանիներ: Ցամաքում հիմնական կեր հանդիսանում են ուղղաթևավորները, բզեզները:

Կարգավիճակը: Հանրապետության տարածքում հազվադեպ հանդիպող տեսակ է: Տեսակը գրանցված է Միջազգային Կարմիր գրքում, ինչպես նաև Բերնի II կոնվենցիայի հավելվածում: Անհրաժեշտ է ապահովել նրա պահպանությունը:

ԵՆԹԱՂԱՍ - ԼԵՊԻԴՊՉԱՎՐԵՐ - LEPIDOSAURIA

Ըստ ժամանակակից դասակարգման Լեպիդոզավրերի ենթադասը բաժանվում է 4 կարգերի, որոնցից Հայաստանում հանդիպում են մողեսների և օձերի կարգերը: Մողեսներին ու օձերին երկար ժամանակ որպես ենթակարգ դասակարգում էին թեփուկավորների կարգում, որը տարբերվում է սողունների մյուս կարգերից մի շարք հատկանիշներով:

Թեփուկավորների մարմինը վերևից և ներքևից պատված է տարբեր չափի և ձևի եղջերային թեփուկներով կամ վահանիկներով: Ատամները սերտաճած են ծնոտների արտաքին կամ ներքին մակերեսներին: Ի տարբերություն բոլոր սողունների քառակուսային ոսկրը չարժուս միացած է զանգատուփին: Քունքային աղեղներից պահպանվել է միայն վերին աղեղը, որը շատ տեսակների մոտ նույնպես անհետացել է: Թևածև ոսկրերը խոփոսկրերի հետ միացած չեն: Փորային կողերը մնացորդային են կամ բացակայում են: Երկրորդային ոսկրային քիմք չունեն: Կոյանոցը վերջանում է լայնական ճեղքի տեսքով: Չուգավորման օրգանը զույգ է:

Թեփուկավորները ժամանակակից սողունների ամենամեծաթիվ խումբն է: Նա ներառում է մոտ 7800 տեսակներ, որոնք տարածված են բոլոր աշխարհամասերում: Դրանցից Հայաստանում և Լեռնային Ղարաբաղի հանրապետություններում հանդիպում են միայն երկուսը՝ մողեսները և օձերը:

Թեփուկավորների կարգերի որոշման աղյուսայակ


1 (2) Ունեն ուտքեր, եթե դրանք բացակայում են, ապա ունեն շարժուն կոպեր:

Կարգ - Մողեսներ - Sauria (էջ 48)

2 (1) Ուտքեր չունեն, շարժուն կոպեր չունեն: Աչքը ծածկված է անշարժ թափանցիկ թաղանթով:

Կարգ - Օձեր - Serpentes (էջ 120)

ՄՈՂԵՄՆԵՐ





ԿԱՐԳ - ՄՈՂԵՍՆԵՐ - LACERTILIA = SAURIA

Մողեսները թեփուկավոր սողունների ամենատարածված և բնության մեջ հաճախակի հանդիպող խումբն են հանդիսանում: Դրանք օձերի հետ միասին համարվում են ինքնուրույն կարգեր կամ, ըստ հին դասակարգման, թեփուկավորների կարգի ենթակարգեր: Մողեսներին կարելի է հանդիպել ամենուրեք՝ մարգագետիններում, անտառներում, լեռնատափաստաններում, անապատներում և այլն: Մողեսների արտաքին տեսքը խիստ բազմազան է: Մեծամասնությունն ունի երկարածոված մարմին, երկար շարժուն պոչ և լավ արտահայտված պարանոց: Մեծ մասի մոտ լավ զարգացած են առջևի և հետևի հնգամատ վերջույթները: Կան նաև տեսակներ մնացորդային վերջույթներով կամ բոլորովին զուրկ վերջույթներից: Այդպիսի մողեսները արտաքուստ նման են օձերին, սակայն ի տարբերություն օձերի, այս անոտ մողեսների մոտ պահպանվել են կրծոսկրի, ինչպես նաև առջևի ու հետևի վերջույթների գոտիները և շարժուն կոպերը: Մողեսների մեծամասնությունն ունի լավ զարգացած շարժուն կոպեր: Սակայն կան նաև տեսակներ, որոնց կոպերը սերտաձել և վերածվել են անշարժ թափանցիկ թաղանթի, ինչպես օձերի մոտ: Շատ տեսակներ ունեն նկատելի թմբկաթաղանթ, որը տեղավորված է գլխի կողքերին լսողական անցքի վրա: Որոշ տեսակների մոտ այն տեղավորված է լսողական խողովակի խորքում և երբեմն ծածկված է մաշկային ծալքով: Շատ տեսակների մոտ լավ նկատելի է զագաթնային աչքը: Մողեսների ստորին ծնոտի աջ և ձախ մասերը իրար անշարժ միացած են և կրում են ատամներ: Ատամները նստած են ծնոտների արտաքին՝ (ակրոդոնտ ատամներ), կամ ներքին եզրին՝ (պլեվրոդոնտ ատամներ): Հաճախ ատամներ կան նաև թևածև և քիմքային ոսկրերի վրա: Ջարգացած է միայն վերին քունքային աղեղը՝ կազմված թեփուկային և հետաչքային ոսկրերից: Թևածև ոսկրերն առջևի մասում միացած են քիմքային ոսկրերին: Քառակուսային ոսկրը շարժուն է: Շատ տեսակներին հատուկ է վտանգի դեպքում պոչի մի մասի պոկելու ընդունակությունը: Կտրվելուց հետո պոչը վերածում է, սակայն նրա կմախքը չի վերականգնվում: Բոլոր մողեսների մարմինը պատված է թեփուկներով, որոնք տարբեր ընտանիքների, ցեղերի, ինչպես նաև տեսակների մոտ ունեն տարբեր կառուցվածք, ձև և դասավորություն:




Նկ. 32. Մողեսի մարմնի վերին և ստորին մասերի թեփուկային ծածկույթի կազմությանը: 1-փորային վահանիկների շարքը:



Մարմնի թեփուկային ծածկույթը՝ (թեփուկների դասավորությունը-*Pholidosis*), կարևոր կարգաբանական նշանակություն ունի կենդանու որոշման համար: Շատ տեսակների մարմինը պատող թեփուկները տարբերվում են իրենց ձևով, չափերով, կազմությամբ, դասավորությամբ և քանակով: Ընդհանրապես շատ փոփոխական են մեջքային թեփուկները (*squamae*), որոնք կարող են լինել հարթ, կոնաձև, կամ կողիկներով: Շատ մանր թեփուկները կոչվում են հատիկավոր (*granulae*), խոշորները՝ վահանիկներ (*squatae*) (նկ. 32):

Գլուխը պատող թեփուկները կամ վահանիկները ունենում են տարբեր չափեր և տարբեր դասավորություն: Խոշոր վահանիկները հիմնականում դասավորված են լինում գլխի վրա: Որոշ տեսակների մոտ նրանք դասավորված են հավասարաչափ: Կան տեսակներ, որոնց գլխի վրա, աջ և ձախ մասում, միաժամանակ լինում են իրար նման համաչափ կամ անհամաչափ դասավորված վահանիկներ: Շատ մողեսներ գլխի խոշոր վահանիկների հետ, ունեն նաև մանր թեփուկներ՝ դասավորված խոշոր վահանիկների միջև: Մի շարք տեսակների գլուխը պատված է մանր անհամաչափ դասավորված թեփուկներով և այլն:

Գլխի վերին մասը կոչվում է պիլեուս (*pileus*): Այդ մասում կարելի է տարբերել միջծնոտային (*rostrale*), քթային (*nasalia*), ճակատային (*frontale*), ճակատաքթային (*frontonasale*), միջճակատային (*praefrontalia*), վերաչքային (*supraocularia*), վերթարթիչային (*supraciliaria*), ճակատագագաքթային (*frontoparietalia*), միջգագաքթային (*interparietale*), գագաքթային (*parietalia*) և ծոծրակային (*occipitale*) վահանիկները: Միջգագաքթային կամ գագաքթային վահանիկի մեջտեղում գտնվող անցքը կոչվում է գագաթնային աչք: Կողքից գլխի վրա երևում են հետքթային (*postnasalia*), առջևի այտային (*frenale*), հետինի այտային (*postloreae*), նախաաչքային (*praeocularia*), վերշրթնային (*supralabialia*), ներաչքային (*suboculare*), հետաչքային (*postocularia*) վահանիկները (նկ. 33):




Նկ. 33. Մողեսի գլուխը վերևից և կողքից:

Ա-Գլուխը վերևից: 1-քթային, 2-ճակատաքթային, 3-նախաճակատային, 4-ճակատային, 5-ճակատագագաքթային, 6-միջգագաքթային, 7-գագաքթային, 8-ծոծրակային, 9-վերաչքային, 10-վերթարթիչային:

Բ-Գլուխը կողքից: 1-միջծնոտային, 2-քթային, 3-ստորքթային, 4-հետքթային, 5-քթայտային, 6-այտային, 7-ենթաաչքային, 8-կենտրոնական քունքային, 9-վերքունքային, 10-վերշրթնային, 11-ստորշրթնային վահանիկներ:

Կան տեսակներ, որոնք բացի խոշոր վահանիկներից ունեն նաև մանր հատիկավոր թեփուկներ տեղավորված վերթարթիչային, ճակատային և վերաչքային վահանիկների միջև: Որոշ տեսակների գլուխը վերևից պատված է մեծ քանակությամբ մանր թեփուկներով:

Գլխի ստորին մակերեսում երևում են կզակային (*mentale*) և ստործնոտային (*inframaxilaria*) վահանիկները: Ստորին ծնոտի կողքերին երևում են ներշրթային (*sublabialia*) վահանիկները: Մի շարք տեսակների պարանոցը մարմնից անջատում են խոշորացած թեփուկներ, որոնք կոչվում են օձիքային (*collare*) (նկ. 34):



Նկ. 34. Սողեսի գլխի ստորին մաշի թեփուկային ծածկույթը: 1-ստորձնոտային, 2-ստորղնչային, 3-ստորշրթնային, 4-օձիքային վահանիկներ, 5-կոկորդային թեփուկներ:

Շատերի կոյանոցից առաջ կա հետանցքային կամ անալ վահանիկ (anale), որն առջևում շրջապատված է լինում մանր նախահետանցքային՝ նախաանալային (praeanalial) վահանիկներով: Մի շարք տեսակներ ազդրերի ներքին մակերեսին ունեն ազդրային անցքեր (pori femorales) (նկ. 35):



Նկ. 35. Սողեսների մարմնի թեփուկային ծածկույթը հետանցքի և հետին վերջույթների ստորին մակերեսի շրջանում: 1-ազդրային անցքերի շարքը, 2-կենտրոնական նախահետանցքային, 3-հետանցքային, 4-նախահետանցքային վահանիկներ, 5-սրունքի ստորին մասը պատող վահանիկներ:

Ազդրային անցքերի զարգացման աստիճանից ելնելով կարելի է որոշել մի շարք մողեսների սեռը: Արուների ազդրային անցքերը ավելի ցայտուն են արտահայտված քան էգերինը, մասնավորապես բազմացման շրջանում: Ազամաները ազդրային անցքեր չունեն, սակայն այդ ցեղի որոշ տեսակների արուներն ունեն նախահետանցքային կամ փորային կոշտուկատիպ էպիդերմալին ծագման գեղձային գոյացություններ (նկ. 36):

Սողեսների սեռը որոշելու համար գոյություն ունեն նաև այլ երկրորդական սեռական հատկանիշներ: Որոշ մողեսների արուների պոչի հիմքը լինում է բավականին լայնացած և դա ևս սեռական դիմորֆիզմի կարևոր հատկանիշ է հանդիսանում: Սեռական տարբերության կարևոր հատկանիշ է նաև մարմնի գունավորումը:



Նկ. 36. Կովկասյան ազամայի մարմնի ստորին մասը՝ 1-նախահետանցքային կամ փորային կոշտուկատիպ գոյացությունները:

Մոլդեսների որոշման համար պետք է օգտվել նաև հետևյալ չափումներից՝

- L. - Մարմնի երկարությունը (longitude corporis)-չափվում է մեջքի վրա շրջված կենդանու դնչի ծայրից մինչև նրա կոյանցքը:
- L.cd. - Պոչի երկարությունը (longitude caudalis)-չափվում է կոյանցքի առջևի եզրից մինչև պոչի ծայրը:
- Sq. - Մեջքային թեփուկները (Squamae dorsalis) – դրանք մարմնի միջին մասի շուրջը գտնվող, մեկ զուգահեռ շարքում դասավորված թեփուկների քանակն է՝ առանց փորային վահանիկների:
- P.fm. - Ազդրային անցքեր (Pori femoralis) – հետին վերջույթի ազդրի վրա գտնվող ազդրային անցքերի շարքի քանակն է: Այս բոլոր հատկանիշերը կարևոր են և անհրաժեշտ է հաշվի առնել ընտանիքի, ցեղի, տեսակի որոշման համար:

Մոլդեսները լայն տարածում ունեն բոլոր մայր ցամաքներում, բացառությամբ Արևտիկայի և Ամտարկտիդայի: Ունեն ավելի քան 5247 ժամանակակից տեսակներ, որոնք ընդգրկված են մոտ 20 ընտանիքներում և 400 ցեղերում: Հայաստանում և Լեռնային Ղարաբաղի Հանրապետություններում հանդիպում են մոլդեսների 4 ընտանիքներ՝ 27 տեսակներով:

Մոլդեսների ընտանիքները որոշելու աղյուսակ

1 (2) Ոտքեր չունեն:

Ընտանիք - Իլիկամոլդեսներ- Anguidae (ըջ 55)

- 2 (1) Ոտքեր ունեն 3
- 3 (8) Գլուխը վերևից պատված է բազմաթիվ անկանոն դասավորված մանր թեփուկներով կամ վահանիկներով (Նկ. 37):..... 4



Նկ. 37. Մողեսների գլուխը պատող թեփուկները: 1-ազամայիններ, 2-խկական մողեսներ:

4 (5) Կոպերը շարժուն են, բիրը՝ կլոր է (Նկ. 38):

Ընտանիք - Ազամայիններ - Agamidae (էջ 59)

5 (4) Կոպերը սերտանել են անշարժ թափանցիկ թաղանթի մեջ: Բիրը՝ ուղղահայաց է (Նկ. 38):.....6

Ընտանիք - Գեկկոնայիններ-Gekkonidae (էջ 53)

6 (3) Գլուխը վերևից պատված է խոշոր, համաչափ դասավորված վահանիկներով (Նկ. 37):.....7

7 (8) Մարմինը պատված է մանր թեփուկներով, որոնք խիտ տարբերվում են փորը պատող թեփուկներից (Նկ. 39): Ունեն ազդրային անցքեր (Նկ. 35):

Ընտանիք - Խկական մողեսներ - Lacertidae (էջ 75)



Նկ. 38. Ազամաների (1) և գեկկոնների (2) գլուխը կողքից:

8 (7) Մեջքը և փորը պատված են մեծությամբ միանման թեփուկներով, որոնք իրենց դասավորությամբ և ձևով նմանվում են ձկան թեփուկներին (Նկ. 39): Ազդրային անցքեր չունեն:

Ընտանիք - Սցինկայիններ - Scincidae (էջ 66)



Նկ.39. Իսկական մողեսների (1) և սցինկայինների (2) ընտանիքների առանձնյակների մեջքային և փորային թեփուկները:

Ընտանիք - Գեկկոնայիններ - Gekkonidae Gray, 1825

Ընտանիքը ներառում է մանր և միջին չափի, հիմնականում գիշերային կենսակերպ վարող մողեսների: Գեկկոնների գլուխը վերևից պատված է բազմաթիվ մանր թեփուկներով և բազմանկյուն վահանիկներով: Կոպերը սերտաճել են անշարժ թափանցիկ թաղանթի մեջ: Բիբը ուղղահայաց տեսք ունի: Լեզուն լայն է և պատված է մանր ծօիչներով: Մի շարք տեսակներ ունեն զարգացած ազդրային անցքեր: Գեկկոնները լավ մագլցող կենդանիներ են: Կարճ, բայց լայն մատները մի շարք տեսակների մոտ ունեն ծօիչներ, որոնց օգնությամբ գեկկոնները մագլցում են ծառերի, ժայռերի, տների պատերի վրայով: Ցերեկը գեկկոնների մեծամասնությունը թաքնվում են պատերի ճեղքերում, քարերի, ծառերի արմատների տակ: Գեկկոնների ընտանիքը ունի 90 ցեղեր և մոտ 900 տեսակներ, որոնք հիմնականում լայն տարածում ունեն արևադարձային և մերձարևադարձային երկրներում: Հայաստանում հանդիպում է մեկ տեսակ:

Ցեղ - Մերկամատ գեկկոններ - Cyrtopodion

Ցեղն ունի 16 տեսակներ՝ տարածված Հարավային Եվրոպայում, Կենտրոնական և Միջին Ասիայում: Հայաստանում հանդիպում է մեկ տեսակ:

4. Կասպիական գեկկոն - Каспийский геккон - Cyrtopodion caspium (Eichwald, 1831)

Տիպային տարածքը՝ Բաքու

Gymnodactylus caspius Eichwald 1831.

Cyrtodactylus caspius, Underwood 1954

Tenuidactylus (Tenuidactylus) caspius, Szczerbak and Golubev, 1984

Gymnodactylus (Cyrtodactylus) caspius, Szczerbak and Golubev, 1984

Cyrtopodion caspius, Bohme 1985

L.75; L./L.cd.0,73-0,99; P.am.+ P.fm.23-31

Չևարանական հատկանիշները: Կենդանու մարմնի երկարությունը 7,5 սմ է, իսկ պոչի երկարությունը՝ 10 սմ: Պոչը ներքևի մասում ունի երկարությամբ ձգվող լայն վահանիկներ: Մարմնի վերին մասը մոխրագույն է դեղնավուն երանգով, որի վրա կան լայնակի 5-6 մուգ գծեր: Մարմնի ներքևի հատվածը սպիտակ է՝ առանց գծերի (Նկ.40):



Նկ. 40. Կասպիական գեկկոն:

Տարածվածությունը: Հայաստանում կասպիական գեկկոնն առաջին անգամ հայտնաբերվել է Մեղրու շրջանի Ագարակ գյուղի շրջակայքում 1993 թվականին: Հետագա տարիների ընթացքում, ըստ երևույթին, Իրանից Մեղրիի տարածքով, հանրապետություն բերվող բեռների հետ այս տեսակը հասել է մինչև Երևան և լայն տարածում է գտել Երևանում և Նրա շրջակայքում, ինչպես նաև Լեռնային Ղարաբաղում (քարտեզ 11):

Ապրելավայրերը: Կասպիական գեկկոնը բնակվում է ժայռերի ճեղքերում, ավերակներում, կրծողների բներում, մարդկանց բնակավայրերի շրջակայքում: Բարձրանում է մինչև ծ.մ. 800մ: Հեշտությամբ տեղաշարժվում է ինչպես հորիզոնական այնպես էլ ուղղահայաց հարթություններով:



Քարտեզ 11. Կասպիական գեկկոնի տարածվածությունը Հայաստանում և Լեռնային Ղարաբաղում:

Կենսաբանության առանձնահատկությունները: Կասպիական գեկկոնը գիշերային կենսակերպ վարող կենդանի է և ակտիվանում է մութն ընկնելուն պես: Չմեռումից հիմնականում դուրս է գալիս մարտ-ապրիլ ամիսներին: Սեռահասուն է դառնում, երբ մարմնի երկարությունը հասնում է 4 սմ-ի, որին կենդանին հասնում է ծվից դուրս գալու հաջորդ տարում: Բազմացման շրջանը սկսվում է անմիջապես ձմեռելուց հետո: Այդ շրջանում արունները ձեռք են բերում առավել ագրեսիվ պահվածք: Էգը դնում է 1-2 ծու: Չվաղրում է հունիս-հուլիս ամիսներին: Չվերը հասունանում են 68-80 օրում: Սնվում է միջատներով և սարդակերպերով:



Կարգավիճակը: Վերջին տարիներին, սկսած Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի հարավային շրջաններից մինչև Երևան և նրա շրջակա տարածքները, կասպիական գեկկոնը լայն տարածում է ստացել՝ գրավելով նոր ապրելավայրեր: Աստիճանաբար թվաքանակով ավելացող տեսակ է:

Ընտանիք - Իլիկամողեսներ - Anguidae Gray, 1825

Մարմինը օձանման է: Գլուխը վերևից պատված է մեծ, համաչափ դասավորված վահանիկներով, որոնցից առավել ցայտուն արտահայտված է մեծ ծոծրակային վահանիկը: Կոպերն իրարից բաժանված են ու շարժուն են: Քիթը կլոր է: Լեզուն կարճ է և կազմված է 2 մասից՝ հաստ հետին և ավելի բարակ առջևի:


Լեզուն ծածկված է թեփուկանման ծծիչներով: Փորային վահանիկները ձևով և մեծությամբ քիչ են տարբերվում մեջքայինից: Ազդրային անցքեր չունեն: Վերջույթները բացակայում են: Պոչը դյուրաբեկ է: Ատամները նստած են ծնոտի ներսի եզրին (պլակոդոնտ են): Հայաստանում իլիկամողեսները ներկայացած են երկու տեսակով:

Իլիկամողեսների ընտանիքի ցեղերը որոշելու աղյուսյակ

1 (2) Մարմնի կողքերով մինչև պոչի հիմքը անցնում է մանր թեփուկներով ծածկված խորը ծալք: Կոյանոցի կողքերին ունեն ծծիչանման փոքրիկ ելուստներ, որոնք հետին վերջույթների մնացորդներ են (նկ. 41): Պոչի թեփուկները հարթ չեն և ունեն պարզ երևացող կողիկներ:

Ցեղ - Ջրահապատ իլիկամողես-Ophisaurus

Տեսակ - Դեղնափորիկ - Желтопузик - *Pseudopus apodus* (էջ 56)



Նկ.41. Դեղնափորիկի մարմնի կողքով անցնող երկայնական ծալքը և վերջույթների մնացորդները:

2 (1) Մարմնի կողքով մաշկային ծալք չի անցնում, թեփուկները հարթ են (նկ. 42):

Ցեղ - Իլիկամողես -Anguis,

Տեսակ - Դյուրաբեկ իլիկամողես - Веретеница ломкая - *Anguis colchica* (էջ 58)



Նկ. 42. Դեղնափորիկի և իլիկամողեսի մարմնի կողքը. ա-մաշկային ծալք:

Ցեղ - Ջրահապատ իլիկամողես - *Pseudopus Mœerrem*, 1820

Մարմինը օձանման է: Վերջույթներ չունեն: Մարմնի կողքերով պարանոցից մինչև հետանցք անցնում է բավականին խոր, մանր թեփուկներով պատված մաշկային ծալք: Հետանցքի կողքերին արուններն ունեն ծծիչանման հետին վերջույթների մնացորդներ: Մինչև վերջերս ցեղի միակ ներկայացուցչին մտցնում էին լայն տարածուն ունեցող կառուցվածքով մոտիկ *Ophisaurus* Daudin, 1803 ցեղի մեջ:

5. Դեղնափորիկ - *Желтопузик - Pseudopus apodus* (Pallas, 1775)

Տիպային տարածքը՝ Նարինյան տափաստան (Հյուսիսային Կովկաս)

Lacerta apoda Pallas 1775
Pseudopus apoda, Blanford 1876
Ophisaurus apus, Boettger 1892:137; *Nikolsky*, 1897
Ophisaurus apodus, Mertens and Muller, 1982

L.500-515; L./L.cd.-0,50-0,62


Ձևաբանական հատկանիշները: Առանց վերջույթների, օձանման մարմնով, բավականին խոշոր մողես է: Ունի 45-75սմ երկարություն, որտեղ պոչը կազմում է մոտ 25 սմ: Վերջույթների բացակայության պատճառով հաճախ այս մողեսին շփոթում են օձի հետ՝ անվանելով լորտու: Հետանցքի կողքերին երևում են ծծիչանման հետին վերջույթների մնացորդները: Մարմնի կողքերով, պարանոցից մինչև հետանցք անցնում է բավականին խոր մաշկային ծալք (նկ.42): Փորային թեփուկները նման են մեջքայիններին: Հասուն առանձնյակների փորային թեփուկները հարթ են, իսկ երիտասարդներինը՝ ունեն կողիկներ: Պոչային թեփուկները ինչպես վերևից, այնպես էլ ներքևից կրում են կողիկներ: Կոպերը զարգացած են: Գունավորումը դեղնավուն է, երբեմն մուգ բծերով պատված: Երիտասարդ առանձնյակները իրենց գույնով խիստ տարբերվում են հասուններից: Նրանք բաց մոխրագույն են, որոնց մարմնի և պոչի երկարությամբ անցնում են 16-22 զիզգագածն մուգ դարչնագույն շերտեր: Հասունանալուց հետո այդ շերտերը աստիճանաբար անհետանում են (նկ.43):

Ապրելավայրերը: Ապրում են հիմնականում գետերի հովիտներում, նախալեռնային հարթություններում, բուսականությամբ հարուստ վայրերում և այգիներում: Թաքնվում են կրծողների բներում, քարերի և թփերի արմատների տակ:



Նկ. 43. Դեղնափորիկի 1-երևտասարդ, 2-հասուն առանձնյակները:

Տարածվածությունը: Տարածված են Հյուսիսային Աֆրիկայում, հարավ արևելյան Եվրոպայում և հարավ-արևմտյան Ասիայում: Հայաստանում և Լեռնային Ղարաբաղում հանդիպում են կիսաանապատային, լեռնատափաստանային չոր տարածքներում, այգիներում (քարտեզ 12):



Քարտեզ 12. Դեղնափորիկի տարածվածությունը Հայաստանում և Լեռնային Ղարաբաղում:



Նկ. 44. Դեղնափորիկի էգը փաթաթված ձվերի շուրջը: (Նկ. 4. Միլյոի)



Կենսաբանության առանձնահատկությունները: Չմեռումից դուրս է գալիս մարտ-ապրիլ ամիսներին: Ամռան շոգերին չի երևում, քանի որ անցնում է ամառային քնի: Հունիս-հուլիս ամիսներին սկսում է ձվադրումը, որի ընթացքում էզը դնում է 6-10 ծու: Դնելով ձվերը՝ էզը հաճախ մնում է ձվերի մոտ՝ փաթաթվելով դրանց շուրջը (նկ.44): Սեպտեմբեր ամսին ձվից դուրս են գալիս 10-12 սմ չափերով ծագեր: Սեռահասուն են դառնում 4 տարեկանում, երբ մարմնի չափերը հասնում են 31-32 սմ-ի: Սնվում է միջատներով, սարդերով, նաև փոքր կրծողներով, մողեսներով, օձերով և թռչունների ծագերով:

Կարգավիճակը: Հաճախակի հանդիպող տեսակ է: Թեև վտանգված վիճակում չի գտնվում, սակայն ապրելավայրերի օգտագործման հետևանքով, թվաքանակը շատ վայրերում կտրուկ կրճատվել է:

Ցեղ - Իլիկամողես - *Anguis Linnatus, 1758*

Մարմինը օձանման է և զուրկ է վերջույթներից: Թեփուկները հարթ են և հետին եզրում կլորացած: Պոչը դյուրաբեկ է: Ցեղն ունի երկու տեսակ, որոնք տարածված են Եվրոպայում և արևմտյան Ասիայում:

6. Տեսակ - *Դյուրաբեկ իլիկամողես - Веретеница ломкая - Anguis colchica Nordman, 1840*

Տիպային տարածքը՝ Շվեդիա

Anguis fragilis Linnaeus 1758
Otophis eryx var. colchica Nordmann 1840
Anguis fragilis colchicus, Stepanek 1937
L.230-265; L./L.cd.-0,76-1,30

Չևարանական հատկանիշները: Մարմինը օձանման է: Մնացորդների տեսքով հետին վերջույթներ չունեն: Մարմինը ծածկող թեփուկների հետին եզրը կլորացած է և նրանք դասավորված են երկայնական ու լայնական շարքերով: Թեփուկները հարթ են, առանց կողիկների: Հասուն առանձնյակների մեջքի մասը մուգ դարչնագույն կամ բրոնզագույն է, մարմնի կողքերը ավելի բաց գույնի են: Որոշ առանձնյակների մեջքը ունի մանր երկնագույն բծեր: Երիտասարդ անհատների մեջքային մասը բաց արծաթագույն է, հաճախ մեջքի երկարությամբ անցնում է բարակ սև շերտ: Կողքերը և փորային մասը մուգ սրճագույն են (նկ. 45):



Նկ. 45. Դյուրաբեկ իլիկամողես:



Տարածվածությունը: Տարածված են Կենտրոնական և Հարավային Եվրոպայում, Հունական արշիպելագի կղզիներում, Կիպրոսում, Փոքր Ասիայում, Հյուսիսային Իրանում, Կովկասում, Հարավարևմտյան Թուրքմենիայում: Հայաստանում հանդիպում է հյուսիսային շրջանների անտառներում, ինչպես նաև Լեռնային Ղարաբաղի հանրապետության անտառներում: ՀՀ ԳԱ կենդանաբանության ինստիտուտի հավաքածուի մեջ կան մի քանի սռանձնյակներ, «Խոսրովի անտառ» արգելոցից (քարտեզ 13):



Քարտեզ 13. Դյուրաբեկ իլիկամողեսի տարածվածությունը Հայաստանում և Լեռնային Ղարաբաղում:

Ապրելավայրերը: Հիմնականում ապրում են խոնավ անտառային վայրերում: Լեռնային շրջաններում երբեմն հանդիպում են ծովի մակերևույթից 2200 մետր բարձրության վրա: Թաքնվում են ծառերի, փտած փչակների, քարերի, արմատների տակ, որտեղ էլ ձմեռում են:

Կենսաբանության առանձնահատկությունները: Չմեռումից դուրս են գալիս վաղ գարնանը՝ մարտի սկզբին: Բազմացումը սկսվում է ապրիլի վերջին-մայիսի սկզբին: Չուգավորման ժամանակ արուն բռնում է էգի գլխից և երկար ժամանակ բաց չի թողնում: Կենդանածվածին են: Հղիությունը տևում է մոտ 90 օր: Չագերը ծնվում են հունիսի վերջին-հուլիսի սկզբին: Հղի էգեր երբեմն հանդիպում են մինչև սեպտեմբերի սկիզբը: Սեկ էգը ծնում է 5-26 ծագ: Սնվում են հիմնականում փափկամարմիններով, անձրևորդերով, միջատներով:

Կարգավիճակը: Կայուն կարգավիճակով, խոնավ անտառներում հաճախակի հանդիպող տեսակ է:

Ընտանիք - Ագամայիններ - Agamidae Gray, 1827

Կախված միջավայրի պայմաններից, կառուցվածքային տարբեր առանձնահատկություններ ունեցող ընտանիք է: Գլուխը վերևից ծածկված է բազմաթիվ մանր՝ անկանոն դասավորված բազմանկյուն վահանիկներով կամ թեփուկներով: Մարմինը պատող թեփուկները հաճախ կրում են ատամիկներ կամ փշանման ելուստներ: Կերջույթները լավ զարգացած են և ունեն երկար մատներ: Մողեսների տարբեր ընտանիքներին բնորոշ ազդրային անցքերը այս ընտանիքի ներկայացուցիչների մեծ մասի մոտ բացակայում են: Ընտանիքի որոշ ներկայացուցիչներ փորի վրա ունեն կոշտուկային գեղձեր, որոնք առանձնապես նկատելի են հասուն արու առանձնյակների մոտ (Նկ. 36): Պոչը դժվարությամբ է կտրվում: Բիբը կլոր է: Ատամները ակրոդոնտ տիպի են՝ դասավորված են ծնոտի արտաքին եզրին և հասուն առանձնյակների մոտ որոշ չափով դիֆերենցված են: Այս հատկանիշը կարևոր է, դրանով ազամաները տարբերվում են մողեսների շատ ընտանիքներից: Ազամաները ցամաքային փորող կամ ծառաբնակ կենսակերպ վարող կենդանիներ են:



Տարածված են Կենտրոնական և Հարավային Ասիայում, Ավստրալիայում, հարավարևելյան Եվրոպայում, Աֆրիկայում /բացառությամբ Մադագասկար կղզուց/ և Խաղաղ օվկիանոսի մի քանի կղզիներում:

Ընտանիքն ընդգրկում է 55 ցեղեր, ավելի քան 412 փոքր և միջին՝ /մինչև 80 սմ/ չափեր ունեցող տեսակներով: Հայաստանում հանդիպում է 2, Լեռնային Ղարաբաղում հանդիպում են 6 տեսակներ:

Ազամայիների ընտանիքի ցեղերը որոշելու աղյուսակ

1 (2) Գլուխը շատ թե քիչ եռանկյունի ձև ունի: Թմբկաթաղանթը բաց է և լավ երևում է (նկ. 46):

Ցեղ - Ասիական լեռնային ազամա - *Laudakia Gray, 1845* (էջ 60)

2 (1) Գլուխը շատ թե քիչ կլորավուն է, թմբկաթաղանթը չի երևում (նկ. 46):

Ցեղ - Կլորագլուխներ - *Phrynocephalus* (էջ 64)



Նկ. 46. Ազամայիների ընտանիքի ցեղերի առանձնյակների գլուխը կողքից: 1-կլորագլուխ, 2-ազամա:

Ցեղ - Ասիական լեռնային ազամա - *Laudakia Gray, 1845*

Ցերեկային կենսակերպ վարող միջին չափի մողեսներ են: Ունեն տափակացած մարմին, շատ քիչ եռանկյունաձև գլուխ, բաց ականջային անցք: Պոչի և մեջքի երկարությամբ անցնում է խոշորացած թեփուկների շարք: Ազդրային անցքեր չունեն: Հասուն արու առանձնյակները փորին և նախահետանցքային շրջանում ունեն կոշտուկային գեղձեր (նկ. 36): Պոչային թեփուկները դասավորված են ճիշտ լայնական շարքերով և պոչի վրա առաջացնում են օղակներ:

Իսկական լեռնային ազամաների ցեղն ընդգրկում է 16 տեսակներ, որոնք տարածված են Հունաստանում, Աֆրիկայի հյուսիսում, Հյուսիս արևելյան Թուրքիայում, Աֆղանստանում, Հյուսիս-արևմտյան Հնդկաստանում, Միջին Ասիայում հասնելով մինչև Մոնղոլիա: Հայաստանում և Լեռնային Ղարաբաղի հանրապետությունում հանդիպում է 2 տեսակ:



Ասիական լեռնային ագամա ցեղի տեսակները որոշելու աղյուսակ:

1 (2) Պոչի թեփուկները կազմում են հավասար զուգահեռ օղակներ: Գլխի լայնությամբ մի աչքից մյուս աչքը ունեն 20-ից ավելի թեփուկներ:

Տեսակ - Կովկասյան ագամա - *Laudakia caucasica* (տջ 61)

2 (1) Պոչի թեփուկները դասավորված են թեք շարքերով և չեն կազմում զուգահեռ օղակներ: Գլխի լայնությամբ մի աչքից մյուս աչքը ունեն 20-ից ոչ ավել թեփուկներ:

Տեսակ - Փլատակային ագամա - *Trapelus lessonae* (տջ 63)

7. Կովկասյան ագամա - Кавказская агама - *Laudakia caucasica* Eichwald, 1831

Տիպային տարածքը՝ Բաքու, Թիֆլիս

Laudakia caucasica caucasica (Eichwald, 1831)

Stellio caucasius Eichwald 1831

Stellio causicus De Filippi 1865

Agama caucasica, Boulenger 1885:367; Mertens and Wermuth 1960

Stellio caucasius caucasius, Anan'jeva and Ataev 1984:5.

Laudakia caucasica caucasica, Leviton et al. 1992:12.

L.-143-150; L./L.cd.-0,42-0,45

Չևարանական հատկանիշները: Մարմինը և գլուխը տափակացած և պատված են մանր թեփուկներով: Պոչի հիմքը նույնպես տափակացած է, իսկ նրա մյուս մասը լայնական հատելիս կլոր է: Միջծնոտային վահանիկի ձևն ու մեծությունը խիստ տատանվում է: Նրա լայնությունը 1.5-2 անգամ ավելի է բարձրությունից: Մարմնի երկարությամբ անցնում է մի շերտ կազմված 5 կամ 6 անկյունանի հարթ, փոքր կողիկներով թեփուկներից: Այդ թեփուկները բավականին խոշոր են մեջքակողքային, և մի քանի անգամ փոքր վերադային թեփուկներից: Փորային թեփուկները քառանկյունի են և հարթ: Կոկորդային թեփուկները նույնպես հարթ են: Պոչը ծածկված է խոշոր, փշոտ թեփուկներով, որոնք դասավորված են օղակներով: Մեծահասակ արունները հետանցքից առաջ ունեն 3-5 շարք կոշտուկավոր թեփուկներ, այդպիսի թեփուկներ կան նաև փորի մեջտեղում: Մեջքային մասը մուգ գորշ, երբեմն մուգ դեղնականաչ գույնի է, սև կամ դեղին շերտերով, որոնք բարդ խճանկարային տեսք են առաջացնում: Գլխի թեփուկները սովորաբար ավելի բաց են, քան մեջքակողքային թեփուկները: Գունավորումը հիմնականում համապատասխանում է բնակության վայրին: Բաց գույնի քարերի վրա բնակվողների գույնը բաց է, իսկ մուգ բազալտային քարերի վրա ապրողների գույնը գրեթե սև է: Մարմնի ներքևի հատվածը մոխրագույն է: Հասուն ձևերի մարմնի երկարությունը պոչի հետ միասին կազմում է մոտ 36 սմ (նկ. 47):

Տարածվածությունը: Տարածված են Հյուսիս արևելյան Թուրքիայում, Աֆղանստանում, Հյուսիս-արևմտյան Հնդկաստանում, Անդրկովկասում, Թուրքմենիայի լեռնային շրջաններում, հարավային Ուզբեկստանում և Տաջիկստանում:

Հայաստանում հանդիպում է ինչպես հարավային, այնպես էլ հյուսիսային լեռնային չոր, քարքարոտ շրջաններում և Լեռնային Ղարաբաղում: Հարթավայրերում այս տեսակը բացակայում է (քարտեզ 14):



Նկ. 47. Կովկասյան ագամա:



Քարտեզ 14. Կովկասյան ագամայի տարածվածությունը Հայաստանում և Լեռնային Ղարաբաղում:

Ապրելավայրերը: Բնակվում է հիմնականում ժայռերի վրա: Կովկասյան ագաման թաքնվում է ժայռերի ճեղքերի, քարերի արանքում և հազվադեպ հեռանում է դրանցից՝ ընդամենը մի քանի մետրով:

Կենսաբանության առանձնահատկությունները: Ագաման շատ շարժուն մողես է: Կտանգը նկատում է 25-30 մետրից: Եթե թշնամին մոտենում է 2-3 մետր, նա արագ մտնում է քարերի արանքը և փրվելով կառչում է քարերից: Այդ ժամանակ նրան շատ դժվար է հանել: Բռնվելու դեպքում չի շարժվում, ինչ էլ որ լինի, նույնիսկ գետնին դնելուց: Միայն կտրուկ ծայնից ագաման դուրս կգա այդ վիճակից: Առավոտյան ագամաները դուրս են գալիս իրենց թաքստոցից ու երկար ժամանակ մնում են արևի տակ:

Սնվում են միջատներով, սարդերով, փոքր մողեսներով, ինչպես նաև բուսականությամբ՝ ծաղիկներով, տերևներով, պտուղներով:

Բազմացման շրջանը սկսվում է ապրիլ ամսին և տևում է մինչև հուլիս: Այս շրջանում արուները բարձրանում են քարերի վրա և մարմինը իջեցնելով ու բարձրացնելով՝ ցույց են տալիս, որ տարածքը զբաղված է: Արուի հետ մի տարածքում ապրում են 1-3 էգ: Դուրսի-հուլիս ամիսներին էգերը ձվադրում են՝ դնելով 4-14 բավականին մեծ ձվեր: Երկու ամիս հետո ձվերից դուրս են գալիս ծագերը՝ մոտավորապես 10 սմ երկարությամբ: Սկզբում նրանք հասուն առանձնյակներից հեռու են լինում՝ հավաքվելով մի վայրում: Սեպտեմբեր ամսից ագամաները պատրաստվում են ծնեռելուն: Այդ շրջանում ժայռերի, կուտակված քարերի ճեղքերում հավաքվում են մի քանի տասնյակ կամ ավելի շատ առանձնյակներ: Այդ վիճակում էլ անցկացնում են ծնեռը: Հայտնի են դեպքեր, երբ դաժան ծնռանից հետո այդպիսի խմբում ագամաները սառել և ոչնչացել են:



Կարգավիճակը: Տարածման վայրերում ատանձնյակների քանակությունը բավականին շատ է:

8. Փլատակային ագամա - Руминная агама - *Trapelus lessonae* De Filippi, 1865

Տիպային տարածքը Արարական թերակղզին

Agama (Eremioplanis Fitz.)Lessonae De Filippi 1865.

Agama ruderata Olivier 1804,

Trapelus ruderatus, Anderson 1872, *Agama ruderata*, Alekperov 1978

Չևարանական հատկանիշները: Մարմինը լայնացած է և պատված է մանր թեփուկներով, որոնք կողքերում մի փոքր լայնանում են և իրենց վրա կրում են կողիկներ: Այդ թեփուկների մեջ կան նաև քիչ խոշոր, նույնպես կողիկներով թեփուկներ: Միջձնոտային վահանիկը սովորաբար երկու անգամ մեծ է առաջին վերձնոտային վահանիկից: Վերձնոտային վահանիկների ազատ եզրը որոշ չափով սղոցածն են: Պոչի թեփուկները մեջքային թեփուկների համեմատ մանր են և կրում են լավ զարգացած կողիկներ, որոնք չեն վերածվում փշերի: Պոչը սկզբից կտրուկ, ապա աստիճանաբար բարակում է: Պոչի հիմքը վերևից ներքև տափակացած է: Կենդանու երկարությունը մինչև պոչը 18-19 սմ է (նկ.48):



Նկ. 48. Փլատակային ագամա:

Տարածվածությունը: Տարածված է Իրանում, Սիրիայում, Իրաքում, արևելյան Թուրքիայում: Հանդիպում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հարավ արևմտյան մասում, Արաքս գետի հովտում: Հայաստանում դեռ չի հայտնաբերվել: Սակայն ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի կենդանաբանության ինստիտուտի հավաքածուի մեջ կա այդ տեսակի մեկ առանձնյակ նո. 9344, որը պիտակավորված է «Մեղրի գյուղի շրջակայք, Արաքս, Սատունին 1890»: Հնարավոր է որ *A. ruderata* տեսակը կարելի է հայտնաբերել Հայաստանի հարավային շրջաններում (քարտեզ 15):

Ապրելավայրերը: Ապրում են ժայռոտ վայրերում, որտեղ նրանց համար թաքստոց են հանդիսանում ժայռերի ճեղքերը, քարերի միջև եղած դատարկ տարածությունները:

Կենսաբանության առանձնահատկությունները: Այս տեսակի էկոլոգիայի վերաբերյալ տվյալները շատ սուղ են: Բազմանում են ձվադրությամբ, դնում են 8-14 ձու: Ինկուբացիոն շրջանը տևում է մոտ 2 ամիս: Սնվում են միջատներով և բույսերի հյութալի մասերով:

Կարգավիճակը: Սահմանափակ տարածվածություն ունեցող տեսակ է:



Քարտեզ 15. Փլատակային ազանայի տարածվածությունը Լեռնային Ղարաբաղում:

Ցեղ - Կլորագլուխներ - *Phrynocephalu* Kaup, 1825

Փոքր և միջին չափերի, տափակացած մարմնով մողեսներ են: Գլուխը առջևի մասում կլորացած է: Պոչը նույնպես կլորացած է: Այն առջևի մասում քիչ լայնացած, իսկ ծայրում բարակացած է: Ականջային անցքերը գտնվում են մաշկի տակ: Նախահետանցքային և ազդրային անցքեր չունեն:

Ցեղը ընդգրկում է մոտ 40 տեսակներ, որոնք տարածված են հարավ-արևելյան Եվրոպայում, Միջին Ասիայում, Իրանում, Աֆղվանստանում, Պակիստանում, հյուսիս-արևելյան Չինաստանում, Արաբական թերակղզում, հյուսիսային Աֆրիկայում: Հայաստանում այս ցեղը ներկայացված է մեկ տեսակով:

9. Անդրկովկասյան տակիրային կլորագլուխը - *Phrynocephalus persicus* De Filippi 1863

Տիպային տարածքը Արաքս գետի հովիտ

Phrynocephalus persicus De Filippi 1863

Phrynocephalus helioscopus (Pall.) var. *Horvathi* Mehely 1894.

Phrynocephalus helioscopus persicus, *Wermuth* 1967:81.

Phrynocephalus persicus, *Ananjeva, Myasnikova and Aghasyan* 2006:18.

Phrynocephalus helioscopus horvathi, *Melnikov, Ananjeva, Aghasyan, and Rajabizadeh* 2008:286.

L. 59-70մմ; L./L.cd.0,60-1,10;

Չևարանական հատկանիշները: Մարմինը ուժեղ տափակացած է ու լայնացած: Մեջքը ծածկող թեփուկներից մի քանիսը հաստացել են և ունեն թմբիկների տեսք, որոնք իրենց հաստությամբ տարբերվում են մյուսներից: Պարանոցի վերին մասում կա ոչ մեծ, բայց լավ երևացող մաշկային ծալք: Փորի և գլխի թեփուկները առանց կողիկների են: Ազդրային անցքեր չունեն: Պոչը հիմքի մոտ տափակացած ու լայնացած է, այն իր ծայրում կտրուկ նեղանում և դառնում է կլորավուն:

Մարմնի գունավորումը շատ է տատանվում: Սովորաբար մարմնի վերին մասը բաց մոխրագույնից մուգ մոխրագույն կամ դարչնամոխրագույն է, որի լայնությամբ տեղավորված են սև կամ դարչնագույն շերտեր: Պարանոցի վերին մասն ունի 2 ոչ շատ մեծ, օվալաձև դասավորված, կարմիր կամ վարդագույն շերտեր, որոնք շրջապատված են կապույտ կամ բաց երկնագույն շերտերով (նկ. 49):

Տարածվածությունը: Տարածված են Հյուսիսային Իրանում, Հյուսիս-արևելյան Թուրքիայում, Ադրբեջանում, արևելյան Անդրկովկասում: Հայաստանում առանձին պոպուլյացիաների տեսքով հանդիպում է Արաքս գետի հովտում: Համաձայն գրական



աղբյուրների տարածված է եղել Արարատյան հարթավայրի մեծ մասում՝ տակիրային կիսաանապատներում և կիսաանապատային ավազուտների ռելիեֆային կղզյակներում:



Նկ.49. Անդրկովկասյան տակիրային կլորագլուխ:


Բոլոր այդ լանդշաֆտները ներկայումս ենթարկվում են ուժեղ մարդածին գործոնի ազդեցության, որը տարեց–տարի ավելի է ուժեղանում: Դրա հետևանքով կլորագլխի բնական ապրելավայրերի տարածքն ամենուրեք կրճատվում է: Այսօր հայտնի են Արաքս գետի հովտում պահպանված միայն մի քանի պոպուլյացիաներ, որտեղ կլորագլուխների թվաքանակը խիստ փոքր է: Արարատյան հարթավայրի կիսաանապատների լայնածավալ մշակումը գյուղատնտեսական մշակաբույսեր ցանելու նպատակով, հողերի ոռոգումը, գյուղերի ընդլայնումը, ճանապարհների և արհեստական ջրավազանների ստեղծումը հանգեցրին այս տեսակի հայտնի պոպուլյացիաների մեծ մասի քայքայմանը և անհետացմանը (քարտեզ 13):



Քարտեզ 16. Անդրկովկասյան տակիրային կլորագլուխի տարածվածությունը Հայաստանում:

Ապրելավայրերը: Բնակվում է նոսր չորասեր բուսածածկով ավազուտային և աղուտային կիսաանապատներում՝ տեղ-տեղ օշինդրային և աղուտային բուսականության առկայությամբ՝ ծ.մ. 800–1050 մ բարձրության վրա: Թաքնվում է կրծողների բներում:

Կենսաբանության առանձնահատկությունները: Չմեռումից դուրս է գալիս մարտի սկզբին: Ակտիվությունը շարունակվում է մինչև նոյեմբեր: Սնվում է մանր հողվածոտանիներով (սրբյուններ, մանր բզեզներ, նեպուկներ, ճանճերի թրթուրներ, սարդեր և այլն): Էգերը գնում են ձմեռման արդեն բեղմնավորված: Գարնանը ձմեռումից դուրս գալուց հետո, նորից բազմացումը շարունակվում է մինչև ամռան



Քարտեզ 15. Փլատակային ազանայի տարածվածությունը Լեռնային Ղարաբաղում:

Ցեղ - Կլորագլուխներ - *Phrynocephalus* Kaup, 1825

Փոքր և միջին չափերի, տափակացած մարմնով մողեսներ են: Գլուխը առջևի մասում կլորացած է: Պոչը նույնպես կլորացած է: Այն առջևի մասում քիչ լայնացած, իսկ ծայրում բարակացած է: Ականջային անցքերը գտնվում են մաշկի տակ: Նախահետանցքային և ազդրային անցքեր չունեն:

Ցեղը ընդգրկում է մոտ 40 տեսակներ, որոնք տարածված են հարավ-արևելյան Եվրոպայում, Միջին Ասիայում, Իրանում, Աֆղվանստանում, Պակիստանում, հյուսիս-արևելյան Չինաստանում, Արաբական թերակղզում, հյուսիսային Աֆրիկայում: Հայաստանում այս ցեղը ներկայացված է մեկ տեսակով:

9. Անդրկովկասյան տակիրային կլորագլուխը - *Phrynocephalus persicus* De Filippi 1863

Տիպային տարածքը Արաքս գետի հովիտ

Phrynocephalus persicus De Filippi 1863

Phrynocephalus helioscopus (Pall.) var. *Horvathi* Mehely 1894.

Phrynocephalus helioscopus persicus, *Wermuth* 1967:81.

Phrynocephalus persicus, *Ananjeva, Myasnikova and Aghasyan* 2006:18.

Phrynocephalus helioscopus horvathi, *Melnikov, Ananjeva, Aghasyan, and Rajabizadeh* 2008:286.

L. 59-70մմ; L./L.cd.0,60-1,10;

Չևարանական հատկանիշները: Մարմինը ուժեղ տափակացած է ու լայնացած: Մեջքը ծածկող թեփուկներից մի քանիսը հաստացել են և ունեն թմբիկների տեսք, որոնք իրենց հաստությամբ տարբերվում են մյուսներից: Պարանոցի վերին մասում կա ոչ մեծ, բայց լավ երևացող մաշկային ծալք: Փորի և գլխի թեփուկները առանց կողիկների են: Ազդրային անցքեր չունեն: Պոչը հիմքի մոտ տափակացած ու լայնացած է, այն իր ծայրում կտրուկ նեղանում և դառնում է կլորավուն:

Մարմնի գունավորումը շատ է տատանվում: Սովորաբար մարմնի վերին մասը բաց մոխրագույնից մուգ մոխրագույն կամ դարչնամոխրագույն է, որի լայնությամբ տեղավորված են սև կամ դարչնագույն շերտեր: Պարանոցի վերին մասն ունի 2 ոչ շատ մեծ, օվալաձև դասավորված, կարմիր կամ վարդագույն շերտեր, որոնք շրջապատված են կապույտ կամ բաց երկնագույն շերտերով (նկ. 49):

Տարածվածությունը: Տարածված են Հյուսիսային Իրանում, Հյուսիս-արևելյան Թուրքիայում, Ադրբեջանում, արևելյան Անդրկովկասում: Հայաստանում առանձին պոպուլյացիաների տեսքով հանդիպում է Արաքս գետի հովտում: Համաձայն գրական



աղբյուրների տարածված է եղել Արարատյան հարթավայրի մեծ մասում՝ տակիրային կիսաանապատներում և կիսաանապատային ավազուտների ռելիեֆային կղզյակներում:



Նկ.49. Անդրկովկասյան տակիրային կլորագլուխ:

Բոլոր այդ լանդշաֆտները ներկայումս ենթարկվում են ուժեղ մարդածին գործոնի ազդեցության, որը տարեց–տարի ավելի է ուժեղանում: Դրա հետևանքով կլորագլխի բնական ապրելավայրերի տարածքն ամենուրեք կրճատվում է: Այսօր հայտնի են Արաքս գետի հովտում պահպանված միայն մի քանի պոպուլյացիաներ, որտեղ կլորագլուխների թվաքանակը խիստ փոքր է: Արարատյան հարթավայրի կիսաանապատների լայնածավալ մշակումը գյուղատնտեսական մշակաբույսեր ցանելու նպատակով, հողերի ոռոգումը, գյուղերի ընդլայնումը, ճանապարհների և արհեստական ջրավազանների ստեղծումը հանգեցրին այս տեսակի հայտնի պոպուլյացիաների մեծ մասի քայքայմանը և անհետացմանը (քարտեզ 13):



Քարտեզ 16. Անդրկովկասյան տակիրային կլորագլուխի տարածվածությունը Հայաստանում:

Ապրելավայրերը: Բնակվում է նոսր չորասեր բուսածածկով ավազուտային և աղուտային կիսաանապատներում՝ տեղ-տեղ օշինդրային և աղուտային բուսականության առկայությամբ՝ ծ.մ. 800–1050 մ բարձրության վրա: Թաքնվում է կրծողների բներում:

Կենսաբանության առանձնահատկությունները: Չմեռումից դուրս է գալիս մարտի սկզբին: Ակտիվությունը շարունակվում է մինչև նոյեմբեր: Սնվում է մանր հողվածոտանիներով (մրջյուններ, մանր բզեզներ, նեպուկներ, ճանճերի թրթուրներ, սարդեր և այլն): Էգերը զնում են ձմեռման արդեն բեղմնավորված: Գարնանը ձմեռումից դուրս գալուց հետո, նորից բազմացումը շարունակվում է մինչև ամռան



կեսերը: Այս շրջանում հաճախ կարելի է տեսնել քարերի վրա բարձրացած արունների, որոնք պոչերը ուղղահայաց դեպի վեր են բարձրացրել և ցուցադրում են պոչի վառ գունավորումը՝ գրավելով էգի ուշադրությունը: Տեսնելով էգին՝ արուն արագ մոտենում է նրան, գլխով հարվածում և այնուհետև բերանով բռնում է էգին: Ապրիլի կեսերին էգերը սկսում են ձվադրել: Ամբողջ սեզոնի ընթացքում միևնույն էզը ձվադրում է մի քանի անգամ: Յուրաքանչյուր անգամ դնում է 2-7 ծու: 40-45 օրից հետո ծագերը ձվից դուրս են գալիս: Զագերը մեծանում են շատ արագ և հասնում են հասուն առանձնյակների չափերին արդեն առաջին տարում: Բնության մեջ կյանքի տևողությունը՝ մինչև 3 տարի է:

Պահպանվում է «Գորավանի ավազուտներ» և «Որդան կարմիր» արգելավայրերում: Որոշակի պայմաններ ստեղծելու դեպքում հնարավոր է բազմացումը տերարիումներում: Անհրաժեշտ է ցանկապատել արգելավայրերի տարածքներն անասունների արածեցումը կանխելու համար և անցկացնել միջոցառումներ՝ քայքայված պոպուլյացիաների վերականգնման ուղղությամբ:

Կարգավիճակը: Նախկինում դիտարկվել է որպես *P. helioscopus*-ի ենթատեսակ: Գրանցված է Հայաստանի Հանրապետության Կարմիր գրքերում: Խիստ սակավաթիվ, անհետացող տեսակ է: Բնության Պահպանության Միջազգային Միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Կրիտիկական վիճակում գտնվող»՝ CR A2c; B2ab (i, ii, iii) տեսակ: Տեսակն ընդգրկված է ԲՊՄՍ Կարմիր ցուցակում (ver. 3.1) «Critically Endangered A2c» կարգավիճակով:

ԸՆՏԱՆԻՔ - ՍՑԻՆԿԱՅԻՆՆԵՐ - SCINCIDAE Gray, 1825

Գլուխը կոնաձև տեսք ունի և վերևից ծածկված է խոշոր հավասարաչափ դասավորված վահանիկներով: Մարմինը պատված է կլորավուն կամ կլորաշեղանկյուն թեփուկներով, որոնք նման են ձկան թեփուկներին: Փորային վահանիկներն իրենց տեսքով գրեթե չեն տարբերվում կողային թեփուկներից: Բիբը կլոր է: Կոպերը առանձնացած են կամ էլ ստորին թափանցիկ կոպը սերտաճել է վերին կոպի հետ: Ազդրային անցքեր չունեն: Վերջույթների զարգացման աստիճանը տարբեր է: Որոշ տեսակների մոտ վերջույթները կամ բացակայում են կամ գտնվում են մնացորդների վիճակում:

Սցինկայինների ընտանիքն, ընդգրկում է մոտ 131 ցեղեր, ավելի քան 1500 տեսակներ, որոնք տարածված են հիմնականում արևելյան կիսագնդի մերձարևադարձային գոտիներում և բարեխառն գոտու հարավային մասերում: Հայաստանում հանդիպում է 3 ցեղ 4 տեսակներով:

Սցինկայինների ընտանիքի ցեղերը որոշելու աղյուսակ

1 (2) Շարժում կոպեր չունեն: Ստորին և վերին կոպերը սերտաճել են և վերածվել աչքը պատող անշարժ թափանցիկ թաղանթի: Առջևի և հետևի վերջույթները կարճացած են: Վերաչքային վահանակները 3-ից ավել չեն:

Ցեղ - Մերկաչք - *Ablepharus* (տչ 67)

2 (1) Ունեն շարժուն կոպեր: Վերաչքային վահանիկները 4-ից պակաս չեն:3

3 (4) Ներքին կոպն ունի թափանցիկ օվալաձև թաղանթ (նկ. 50): Մարմնի միջին մասի շուրջն ունեն 34 և ավելի թեփուկներ: Հետանցքից առաջ կան մի քանի թեփուկներ:

Ցեղ - Աֆրիկյան մարույաներ - *Trachylepis Fitzinger*, 1843 (տչ 71)



Նկ. 50. Մարմնային և երկարատու սցինկի աչքի ստորին կոպը: 1-սկեզույն մարմնային, 2-երկարատու սցինկ:

4 (3) Ներքին կոպը պատված է անթափանց թիթեղիկներով (նկ. 50): Մարմնի միջին մասի շուրջն ունեն 30-ից ոչ ավել թեփուկներ: Հետանցքի առջևում կան 2 մեծ նախահետանցքային վահանիկներ:

Ցեղ - երկարոտ սցինկներ - Eumeses (էջ 73)

Ցեղ - Մերկաչքեր - *Ablepharus* Fitzinger in Eversman, 1823

Վերջույթները թույլ են զարգացած, հնգամատ են, կան հաճախ ռեդուկցվել են 4,3 և 2 մատի: Վերին և ստորին կոպերը սերտաճել և վերածվել են աչքը պատող անշարժ թափանցիկ թաղանթի: Ականջի անցքը փոքր է և հաճախ փակված է մաշկով կամ թեփուկով: Քթանցքերը բացվում են վահանիկի վրա: Ճակատագագաթային կամ միջգագաթային վահանիկները կարող են ծուլված լինել մեկ խոշոր վահանիկի մեջ:

Ցեղը իր մեջ է համախմբում ավելի քան 30 տեսակների, որոնք հիմնականում տարածված են Ասիայում, Ավստրալիայում և Հնդկ-Ավստրալական կղզիներում: Նախկին ԽՍՀՄ-ի ֆաունայում հանդիպում է 6 տեսակ, որոնցից 2-ը` Հայաստանում:

Մերկաչքերի ցեղի տեսակների որոշման աղյուսակ:

1 (2) Վերկուպային վահանիկները 3-ից ավել են, դրանք լրիվ շարք են կազմում անջատելով վերաչքային վահանիկները աչքից: Ենթաաչքային վահանիկից առաջ կան 4 վերշրթնային վահանիկներ (նկ. 50):

Շերտավոր մերկաչք - *Ablepharus bivittatus* (էջ 68)

2 (1) Վերկուպային վահանիկները 2 են: Դրանք լրիվ շարք չեն կազմում և տեղ-տեղ վերաչքային վահանիկները կապում են աչքին: Ենթաաչքային վահանիկից առաջ կա 3 վերշրթնային վահանիկ:

Չերնովի մերկաչք - *Abiepharus chemovi* Darevsky, 1953 (էջ 69)




10. Ենրտավոր մերկաչք - Полосатый гологлаз - *Ablepharus bivittatus* (Menetries, 1832

Տիպային տարածքը՝ Թալիշի լեռներ՝ Ադրբեջան

Scincus bivittatus Menetries 1832
Ablepharus bivittatus, Gray 1845

L.56-60 մմ; L./L.cd. 0,54-10,80; Sq.22-26

Ձևաբանական հատկանիշները: Նախաճակատային վահանիկները մեծ մասամբ կաչում են իրար և անջատում ճակատային վահանիկը ճակատաքթայինից: Վերքթային վահանիկ չունեն: ճակատագագաթային վահանիկները երկուսն են: Աչքերը շրջապատված են մանր հատիկավոր թեփուկներով, որոնցից 3 (երբեմն 4 կամ 2) թեփուկները ավելի խոշոր են մյուսներից և տեղադրված են վերին մասում: Ենթաաչքային վահանիկից առաջ գտնվում են 4 վերշրթնային վահանիկներ: Քունքային վահանիկները մեկ շարքում 3 են: Ստորոճոտային վահանիկները 4 գույզ են: Մարմինը շրջապատող թեփուկները հարթ են և կազմում են 22 կամ 24 երկայնական շարքեր: Ծնոտային վահանիկից առաջ կան 2 խոշոր վահանիկներ (նկ. 51):



Նկ.51. Ենրտավոր մերկաչքի գլուխը կողքից: 1-վերկոպային վահանիկներ, 2- առաջին շարքի քունքային վահանիկներ:

Երիտասարդ առանձնյակների մարմնի վերին մասը բաց սրճագույն կամ բաց դարչնագույն է, առանց որևէ պատկերի: Հասուն առանձնյակների մարմնի կողքերով քթանցքերից սկսած, անցնում են լայն սև շերտեր, որոնք կողքերից շրջապատված են սպիտակ գծերով: Պոչի վերին մակերեսին հաճախ երևում են մանր բաց գծիկներ: Պոչի ստորին մասը գորշ կապտավուն է (նկ. 52):

Տարածվածությունը: Տարածված են հյուսիս և հյուսիս արևմտյան Իրանում, նրան հարակից Թուրքիայում, հարավային Ադրբեջանում և Հայաստանում: Հայաստանում տարածված են հիմնականում Մեղրու, Կապանի, Սիսիանի, Գորիսի, Վայոցձորի մարզերում, «Խոսրովի անտառ» արգելոցում: Ոչ մեծ պոպուլյացիաներ կան նաև Վանաձորի և Սպիտակի շրջաններում (քարտեզ 17):

Կենսաբանության առանձնահատկությունները: Մերկաչքերն ապրում են չոր քսերոֆիտ բուսականություն ունեցող լանջերում: Ձմեռունից դուրս են գալիս մարտի վերջին: Շոգ, չոր ամիսներին թաքնվում են խորը թաքստոցներում և հողի մակերես են դուրս գալիս սեպտեմբերին: Սնվում են մանր թաղանթաթևավորներով, մրջյուններով, երկթևավորներով, բզեզներով և սարդերով: Չվաղումը սկսվում է հունիսի վերջերին և շարունակվում է մինչև հուլիսի վերջը: Դնում է 3-5 ծու:

Կարգավիճակը: Մարդածին գործոնի ազդեցության պատճառով թվաքանակը խիստ նվազել է: Պահպանվում է «Խոսրովի անտառ» արգելոցում:



Նկ. 52.Շերտավոր մերկաչք:

Քարտեզ 17. Շերտավոր մերկաչքի տարածվածությունը Հայաստանում:



11. Չերնովի մերաչք - Гологлаз Чернова - *Ablepharus chemovi* Darevsky, 1953

Տիպային տարածքը՝ Պիլոս կղզի Հունաստան

Ablepharus chemovi chemovi Darevsky 1953

L.48-52 մմ; L./L.cd. 0,50-0,85; Sq.18-22

Չևարանական հատկանիշները: Արունները մի քիչ կարծ են էգերից: Նախաճակատային վահանիկները բաժանվում են միմյանցից ճակատային վահանիկի միջոցով: Ճակատագագաթային վահանիկները երկուսն են: Վերքթային վահանիկը բացակայում է: Վերթարթիչային վահանիկը, ինչպես նաև աչքը շրջապատող հատիկավոր թեփուկները բաժանված են 2 ոչ հավասար մեծության խմբերի և տեղադրված են աչքի առջևից և հետևից: Առաջին ենթաչքային վահանիկը կաչում է աչքին, որտեղ նրանց շարքը վերջանում է: Ամենամեծ վերթարթիչային վահանիկը գտնվում է աչքի առջևում առաջին վերաչքային վահանիկի մոտ: Ենթաաչքային վահանիկի առջևում կան երեք վերջրթնային վահանիկներ: Առաջին շարքում կա երկու քունքային թեփուկ: Ստոր-



ծնոտային թեփուկները 4 զույգ են, որոնցից առաջին զույգը կաշույն են միմյանց: Ստորշրթնային վահանիկները 5 կամ 6 են: Արտաքին ականջային անցքը լրիվ ծածկված է մարմնի թեփուկների տակ: Մարմինը ծածկող թեփուկները հարթ են և դասավորված են 18 երկայնական շարքերով: Հետանցքից առաջ կա 2 խոշոր վահանիկ: Պոչի ստորին մակերեսի թեփուկները որոշ չափով լայնացած են:

Մարմինը վերևից բաց կամ մուգ բրոնզագույն է և իր վրա է կրում 6 բաց գույնի, մուգ կետիկներով երկայնական գծեր: Բազմացման ժամանակ արունների փորը վառ աղյուսանարնջագույն է, իսկ էգերինը՝ բաց նարնջագույն (նկ. 53):



Նկ. 53. Չերնովի մերկաչք:

Տարածվածությունը: Տարածված են կենտրոնական Հայաստանում՝ Հրազդան գետի հովտում: Այս տեսակը նկարագրվել է 1953 թ. Աշտարակի շրջանի Թղիտ գյուղի շրջակայքից: Նրանց տարածման գոտին դուրս չի գալիս Ծաղկունյաց լեռնաշղթայի և Հրազդան գետի աջափնյա մասի շրջակայքից: Հայտնի են տարանջատված պոպուլյացիաներ Քարաշամբ, Բջնի և Թեղենիք գյուղերի շրջակայքում: Պոպուլյացիաների ընդհանուր մակերեսը կազմում է մոտ 2–4 կմ² (քարտեզ 18):



Քարտեզ 18. Չերնովի մերկաչքի տարածվածությունը Հայաստանում:



Ապրելավայրերը: Ապրում են քարքարոտ լեռնաքսերոֆիտային տափաստաններում: Հանդիպում են նաև բուսածածկից գրեթե զուրկ լեռնային ապարների քարոլվածքներում, մանր քարերի արանքում, որոնց տակ անց են կացնում ժամանակի մեծ մասը:

Կենսաբանության առանձնահատկությունները: Չմեռումից դուրս են գալիս մարտի վերջին: Շոգ, չոր ամիսներին թաքնվում են խորը թաքստոցներում և հողի մակերես դուրս գալիս սեպտեմբերին: Սնվում են մանր միջատներով, մրջյուններով, սարդերով և այլն: Չվաղում են հունիսի վերջին: Չվերի քանակը 3-4: Վերջին տարիներին տեսակի տարածման մի շարք տեղամասեր յուրացված են շինարարական նպատակներով: Տեսակի բազմաթիվ որոնումներն այս շրջանում արդյունք չեն տվել:

Կարգավիճակը: Խիստ սակավաթիվ, նեղ արեալ ունեցող անհետացող տեսակ է: Գրանցված է Հայաստանի Կարմիր գրքում: Տեսակն ընդգրկված է Բնության Պահպանության Միջազգային Միության Կարմիր ցուցակում «Least Concern» կարգավիճակով և գնահատվում է որպես «Կրիտիկական վիճակում գտնվող» տեսակ:

Ցեղ - Աֆրիկյան մաբույա - *Trachylepis Fitzinger, 1843*

Այս ցեղն ընդգրկում է մոտ 90 տեսակներ, որոնք տարածված են Աֆրիկայում, Մադագասկարում, հարավ-արևմտյան Ասիայում, հարավային Ամերիկայում: Հայաստանում հանդիպում է 1 տեսակ:

12. Ոսկեգույն մաբույա - *Золотистая мабуя - Trachylepis septemtaeniata Reus, 1834*

Տիպային տարածքը հայտնի չէ

**Trachylepis septemtaeniata transcaucasica* (Chernov, 1926)
Lacerta aurata (partim) Linnaeus 1758
Euprepis affinis De Filippi 1863
Euprepis septemtaeniatus Reuss 1834
Mabuya aurata transcaucasica Chernov 1926

L. 105 ; L./L.cd. 0,53-0,90; Sq.34-38

Չևարանական հատկանիշները: Միջին չափերի մողես է: Մարմնի երկարությունը առանց պոչի կազմում է 10,5 սմ: Պոչը 1.5 անգամ երկար է մարմնից: Վերջույթները լավ զարգացած են: Ունեն 5 մատ, որոնք բոլորն էլ ճանկերով են: Կոպերը լավ զարգացած և շարժուն են: Ստորին կոպն ունի ամբողջական թափանցիկ օվալաձև թաղանթ (նկ. 50):

Քթանցքերը տեղավորված են մեկ վահանիկի վրա: Միջծնոտային վահանիկը մեծ մասամբ չի կաչում ճակատաքայինին և նրանից բաժանված է վերքթային վահանիկի միջոցով: Ճակատային վահանիկը կաչում է ճակատաքթայինին: Վերաչքային վահանիկները 4-ն են: Նրանցից երկրորդ և չորրորդ վահանիկները կաչում են ճակատագագաթայինին: Ենթաչքային վահանիկից առաջ գտնվում են 4 հազվադեպ՝ 5 վերշրթնային վահանիկներ: Ստործնոտային վահանիկները 2 զույգ են: Ականջային անցքը բաց է, բայց թմբկաթաղանթը տեղավորված է լսողական անցքի հատակում: Լսողական անցքի առջև կա 2-3 երկարացած թեփուկներից կազմված կատարիկ: Մարմինը պատված է խոշոր թեփուկներով, որոնք ձևով նման են ձկան թեփուկներին: Դրանք հարթ են կամ ունեն 3 թույլ զարգացած կողիկներ: Մեջքային թեփուկները որոշ չափով խոշոր են կողայիններից:

Մարմնի վերին մասը մոխրագույն, գորշամոխրագույն կամ մուգ գորշագույն է: Գլխի վերևում կան սև կամ մոխրագույն կետեր: Մարմնի ներքևի մասը դեղնավուն կամ




մոխրագույն է: Պարանոցի և մարմնի առջևի մասի երկարությամբ անցնում են 4 մուգ շերտեր, որոնք դառնում են կամ առանձին բծեր կամ 4 շարք երկայնական բծեր (նկ. 54):



Նկ. 54. Ոսկեգույն մարույա:

Տարածվածությունը: Տարածված են Եգիպտոսում, Իրաքում, Իրանում, Հյուսիս-արևմտյան Հնդկաստանում, Թուրքմենստանում, Անդրկովկասում: Արեալի հյուսիսային սահմանն անցնում է Հայաստանի և Թուրքմենիայի հարավով: Հայաստանում հանդիպում է Արաքս գետի հովտում, Երևանի շրջակայքում, Արարատի, Մեղրու մարզերում և Ուրծի լեռնաշղթայում (քարտեզ 19):



Քարտեզ 19. Ոսկեգույն մարուայի տարածվածությունը Հայաստանում:

Ապրելավայրերը: Ապրում են ինչպես լեռնային վայրերում, այնպես էլ հարթավայրերում: Լեռներում բարձրանում է ծ.մ.1200-1300 մ: Բնակեցնում է լեռների և նախալեռների նոսր, չորասեր բուսականությամբ ծածկված քիչ թե շատ թեք լանջերը: Բնորոշ ապրելավայրեր են հանդիսանում կիրճերի քարքարոտ լանջերի վրա գտնվող մայրական ապարների ելքերը, մեծ քարերի կույտերը և քանդվող ճեղքերը: Տեղ-տեղ հանդիպում են այգիներում, լքված և կիսաքան շինություններում: Որպես թաքստոցներ, սովորաբար, օգտագործում են ժայռերի ճեղքերը, քարերի տակ եղած դատարկությունները, հազվադեպ՝ կրճողների բները: Հանդիպում է նաև մարդկանց բնակավայրերի շրջակայքում, ֆերմաներում, պատերի մեջ: Շատ ճարպիկ և արագավազ մողես է:

Կենսաբանության առանձնահատկությունները: Չմեռումից դուրս է գալիս մարտի վերջին կամ ապրիլի սկզբին: Հուլիս-օգոստոս ամիսներին մտնում է ամառային քուն: Ձուգավորումը դիտվում է մայիսի սկզբին-կեսերին: Ոսկեգույն մարուան ձվակենդանածին մողես է և հունիս-հուլիս ամիսներին էզը դնում է 4-8 ծու, որոնցից



մի քանի բույս հետո դուրս են գալիս 3-3,2 սմ մեծության ծագերը: Ցերեկային կյանք վարող, շատ շարժուն մողես է: Սնվում է մորեխներով, մրջյուններով, սարդերով և այլ միջատներով:

Հայաստանում՝ իր հանդիպման շատ տարածքներում, ոսկեգույն մաքուր պտույտային պոպուլյացիաների թվաքանակը և խտությունը անհավասարաչափ է և տարեց-տարի ենթարկվում է զգալի տատանումների: Առավել բազմաքանակ են Մեղրիի հարավային շրջանների պոպուլյացիաները: Այս պոպուլյացիաներում մեղմ ծմեռվա շնորհիվ, առանձնյակների թվաքանակը կայուն է և քիչ է ենթարկվում տատանումների: Ոսկեգույն մաքուր տարածման շատ վայրերում, գյուղատնտեսական նպատակներով ապրելավայրերի յուրացումը բերում է լանդշաֆտների ձևափոխման, արդյունքում փոխվում են այս կենդանիների ապրելավայրերը, ինչը պատճառ է հանդիսանում դրանց թվաքանակի կրճատման և անհետացման:

Կարգավիճակը: Տեսակն ընդգրկված է Հայաստանի Հանրապետության Կարմիր Գրքում, ինչպես նաև Բնության Պահպանության Միջազգային Միության Կարմիր ցուցակում «Data Deficient» կարգավիճակով և գնահատվում է որպես «խցելի» տեսակ:

Ցեղ - Երկարատու Սցինկեր - *Eumeces Wiegman*, 1834

Այս ցեղը իր մեջ ընդգրկում է 4-5 տեսակներ, որոնք տարածված են Հյուսիսային Աֆրիկայից մինչև Անդրկովկաս, Միջին Ասիա, Աֆղանստան, Պակիստան և հյուսիս արևմտյան Հնդկաստան: Հայաստանում հանդիպում է 1 տեսակ:

13. Երկարատու սցինկ - *Длинноногий сцинк - Eumeces schneideri Daudin*, 1802

Տիպային տարածքը՝ Ճապոնիա

Scincus schneideri Daudin 1802

Euprepis princeps Eichwald 1839

Eumeces schneideri princeps, Mertens 1920

Novoeumeces schneideri, Griffith, Ngo and Murphy 2000


Լ. մինչև 80մմ; Լ./Լ. cd. 0,50-1,34; Sq.24-28

Ձևաբանական հատկանիշները: Վերջույթները լավ զարգացած են, ունեն 5 մատ, բոլոր մատներն էլ ճանկերով են: Կուպերը լավ զարգացած և շարժուն են: Միջոնոտային վահանիկը չի կաչում ճակատաքթայինին և նրանից անջատվում է վերքթային վահանիկներով: Նախաճակատային վահանիկները կաչում են իրար: Վերաչքային վահանիկները 4-ն են, որոնցից 2-ը ամենախոշորներն են: Գազաթային վահանիկները իրարից լրիվ բաժանվում են միջգազաթայինների միջոցով: Գազաթայիններից հետո գտնվում են 4-6 զույգ, լայնական ծոծրակային վահանիկները: Ստորոնոտային վահանիկները 3 զույգ են: Նրանցից առաջին զույգը, կարճ կարով կաչում են միմյանց կամ չեն կաչում ընդհանրապես: Ականջի անցք, առնվազն 3 անգամ մեծ է քթանցքերից: Լսողական անցքի առջև կա 3-6 եռանկյուն թեփուկներից կազմված կատարիկ, որոնք ծածկում են ականջի անցքի կեսը (նկ. 55): Հետանցքի առջև գտնվում են 2 խոշորացած վահանիկներ: Պոչի ներքևի մակերեսով անցնում է 1 շարք խոշորացած վահանիկներ: Մարմինը ծածկված է խոշոր, հարթ թեփուկներով, որոնք իրենց ձևով նման են ձկան թեփուկներին: Կենդանի մողեսների մարմինը վերևից շականակագույն կամ ձիթապտղամոխրագույն է, ծածկված դեղնանարնջագույն, նարնջագույն, վարդագույն կամ կարմրավարդագույն բծերով: Նույն գույնի մեկական շերտ անցնում է մարմնի կողքերով հասնելով մինչև պոչը: Մարմնի ներքևի մասը դեղնավուն է:



Նկ. 55. Երկարատտ սցինկ: 1-ականջի անցքը ծածկող թեփուկները:

Տարածվածությունը: Տարածված են Հյուսիսային Աֆրիկայում, Փոքր Ասիայում, Հյուսիս-արևմտյան Հնդկաստանում և Աֆղանստանում, կենտրոնական և հարավային Տաջիկստանում, Միջին Ասիայի հարավային շրջաններում, կենտրոնական և արևելյան Անդրկովկասում: Հայաստանում տարածված է Արաքս գետի հովտում, Երևանի շրջակայքում, Էջմիածնի, Արարատի, Եղեգնաձորի, Մեղրու, Կոտայքի, Նոյեմբերյանի շրջաններում: Հանդիպում է նաև Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում (քարտեզ 20):



Քարտեզ 20. Երկարատտ սցինկի տարածվածությունը Հայաստանում և Լեռնային Ղարաբաղում:

Ապրելավայրերը: Ապրում է խիստ քարքարոտ, չորասեր բուսականությամբ կիսաանապատային տեղանքում՝ ծ.մ. 400–1500 մ բարձրության վրա: Որպես թաքստոց օգտագործում է ժայռերի ճեղքերը, քարերի տակ գտնվող խորշերը, կրծողների բները: Տեղ-տեղ հանդիպում է գետամերձ մացառուտներում: Հաճախ բնակվում է այգիներում և հարակից տարածքներում՝ քարե ցանկապատերի վրա, և կիսաքանդված շինություններում:

Կենսաբանության առանձնահատկությունները: Չմեռումից դուրս են գալիս վաղ գարնանը: Գարնանը ակտիվ են առավելապես ցերեկը, ամռանը՝ առավոտյան կամ երեկոյան ժամերին: Ամռան կեսերին շոգ եղանակին ընդհանրապես հողի մակերես դուրս չեն գալիս, ենթադրվում է, որ ամռանը քուն են մտնում: Սնվում են տարբեր անողնաշար կենդանիներով, առավելապես՝ միջատներով, սարդերով: Մեծ առանձնյակները հաճախ ուտում են նաև փոքր մողեսներին: Հուլիսի կեսերին էգերը ծվադրում են՝ դնելով 5-9 ծու:

Կարգավիճակը: Տեսակը գրանցված է Հայաստանի Հանրապետության Կանխորդ գրքում: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Least Concern» կարգավիճակով «խոցելի» տեսակ:



Ընտանիք - Իսկական մողեսներ - Lacertidae Oppel, 1811

Արևելյան աշխարհամասում լայն տարածում ունեցող, փոքր չափերի մողեսներ են, որոնց ամենախոշոր ներկայացուցիչների մարմինը պոչի հետ միասին հասնում է 50 սմ: Գլուխը վերևից պատած է խոշոր, համաչափ դասավորված վահանիկներով: Վերաչքային և վերթարթիչային վահանիկների միջև տեղավորված են լրիվ կամ կիսատ շարքով հատիկավոր թեփուկներ: Շատ տեսակների մոտ լավ արտահայտված է գլխի ստորին՝ օձիքային բաժինը, որը կրում է շարքով դասավորված խոշոր վահանիկներ: Մարմինը պատված է մանր, շարքերով դասավորված հատիկավոր կամ կղմինդրաձև թեփուկներով: Փորային վահանիկները դասավորված են երկայնական կամ լայնական շարքերով և իրենց ձևով տարբերվում են մեջքային թեփուկներից: Տեսակների մեծամասնությունն ունեն ազդրային կամ ածուկային անցքեր: Վերջույթները հնգամատ են և լավ զարգացած: Աչքերն ունեն վերին և ստորին շարժուն կոպեր: Որոշ տեսակների աչքի ստորին կոպը կրում է թեփուկներ կամ թափանցիկ է ու ծուլվել է վերին կոպի հետ: Շատերի պոչը երկար է և հեշտությամբ պոկվում է: Լեզուն առջևից բաժանված է 2 ճյուղի: Մարմնի գունավորումը տարբեր է և հիմնականում կախված է միջավայրի պայմաններից:


Իսկական մողեսների մեծ մասը բազմանում են ձվադրությամբ: Մի շարք տեսակներ ձվակենդանածին են: Դրանց սաղմը զարգանում է մոր ձվատարում: Եզր դնում է բարակ թափանցիկ թաղանթով պատված «ծու», որից մի քանի ժամվա ընթացքում, պատռելով թաղանթը դուրս է գալիս մատղաշ մողեսը:

Իսկական մողեսները տարածված են Եվրոպայում, Աֆրիկայում (բացառությամբ Մադագասկարի), Ասիայում: Ընտանիքը բաղկացած է 30 ցեղերից և ավելի քան 300 տեսակներից: Հայաստանում հանդիպում են իսկական մողեսների 5 ցեղեր, 17 տեսակներով:


Իսկական մողեսների ընտանիքի ցեղերը որոշելու աղյուսակ

1 (2) Շարժուն կոպեր չունեն: Նրանք սերտաձել են թեփուկային ծածկոցի հետ և առաջացրել թափանցիկ «պատուհան» (նկ. 56): Օձիքը նկատելի է միայն վզի կողքերին: Մեջքային թեփուկները կղմինդրաձև ծածկում են մեկը մյուսին:

Ցեղ - Օձազլուխներ - Ophisops (էջ 78)



Նկ. 56. Մողեսների աչքի կառուցվածքը: 1-առանց կոպերի, 2-շարժուն կոպերով:



Նկ. 57. Կոկորդային մազը պատող վահանիկները: 1-ստործնոտային, 2-կոկորդային, 3-օձիքային վահանիկների շարքերը:

2 (1) Ունեն վերին և ստորին կոպեր (Նկ. 56): Մարմնի կողքի թեփուկները քիչ են տարբերվում մեջքային թեփուկներից: Օձիքային վահանիկների շարքը լավ արտահայտված է (Նկ. 57): Ազդրերի ստորին մակերեսին ունեն ազդրային անցքեր, որոնց թիվը 5-ից պակաս չէ (Նկ. 58):.....3



Նկ. 58. Ազդրային անցքերի շարքը: 1-ազդրային անցքեր:

3 (8) Փորային վահանիկները դասավորված են ուղիղ երկայնական և լայնական շարքերով (Նկ. 59): Քթանցքերը կաչում են առաջին վերջուրնային վահանիկին կամ անջատված են նրանից նեղ կապով (Նկ. 62):.....4

4 (5) Ենթաաչքային վահանիկի առջևի վերին անկյունը հասնում է աչքի առջևի եզրին (Նկ. 60):

Ցեղ Պարվիլացերտա - Parvilacerta (եղ 103)


5 (4) Ենթաաչքային վահանիկի առջևի վերին անկյունը չի հասնում աչքի առջևի եզրին:.....6




Նկ.59. Իսկական և ավազային մողեսների փորի վահանիկների դասավորությունը:
1-իսկական մողեսներ, 2-ավազային մողեսիկեր:

6 (7) Գլուխը հիմնականում վերևից ներքև տափակացած է: Մեջքային թեփուկները կշորավուն, հարթ՝ հատիկավոր են, կամ ունեն քիչ երևացող կողիկներ (Նկ. 61):

Ցեղ ժայռային մողեսներ- Darevskia (էջ 79)



Նկ.60. Պարզիլացերտա ցեղի մողեսի գլուխը կողքից: a-ենթաաչքային վահանիկ:



Նկ. 61. Իսկական մողեսների մարմնի մեջքային թեփուկները: 1-հարթ թեփուկներ, 2-վեցանկյուն կողիկներով թեփուկներ:



7 (8) Գլուխը վերևից ներքև հաստացած է, մարմնի մեջքային թեփուկները ձգված են երկարությամբ, վեցանկյունի են և ունեն կողիկներ (Նկ. 61):

Ցեղ - Կանաչ մողեսներ - Lacerta (էջ 106)

8 (3) Փորային վահանիկները փոքրի միջին զծի նկատմամբ, դասավորված են անկյան տակ թեք շարքերով (Նկ. 59): Քթանցքերը չեն կաշույն առաջին վերջրթնային վահանիկներին (Նկ. 62):

Ցեղ - Ավազային մողեսիկներ - Eremias (էջ 111)



Նկ.62. Իսկական և ավազային մողեսների քթային բաժինը:
1-առաջին վերջրթնային վահանիկ:

Ցեղ - Օձազուխներ - Ophisops Menetries, 1832

Օձազուխների ցեղն ունի 5 տեսակներ, որոնք տարածված են Հյուսիսային Աֆրիկայում, Հյուսիս-արևելյան Եվրոպայում, Միջերկրական ծովի որոշ կղզիներում, Փոքր և Կենտրոնական Ասիայում, Կենտրոնական Հնդկաստանում: Հայաստանում հանդիպում է միայն մեկ տեսակ:


14. Գեղիրան օձազուխ - Стройная змееголовка - Ophisops elegans Menetries, 1832

Զևարանական հատկանիշները: ճակատային վահանիկը նեղ է: Նրա լայնությունը ճակատագագաթնային վահանիկների սահմանում մոտավորապես 2 անգամ կարծ է մեծ վերնաջքային վահանիկների միջև եղած կարից: Քթանցքները գտնվում են 2 քթային վահանիկների միջև, որոնց հետևում տեղավորված են 1-2 բավական մանր հետքթային վահանիկներ: Ունեն ծոծրակային վահանիկներ: Օձիքը թույլ է արտա-հայտված և նկատելի է միայն վզի կողքերին: Բաժանված կոպեր չունեն: Վերին կոպը սերտաճել է ներքինի հետ և առաջացրել թափանցիկ պատուհան: Մարմինը պատված է համեմատաբար խոշոր թեփուկներով: Մեջքային թեփուկները կղմինդրածն ծածկում են մեկը մյուսին և իրենց վրա ունեն կողիկներ: Փորային վահանիկները խոշոր են ու հարթ և դասավորված են ուղիղ երկայնական և լայնական շարքերով: Հետանցքային վահանիկից առաջ կան մի խումբ խոշորացած վահանիկներ, որոնցից մեկը տարբերվում է մյուսներից: Ունեն ազդրային անցքեր: Մարմնի վերին մասը կանաչամոխրագույն, ձիթապողամոխրագույն է: Այդ ֆոնի վրա երևում են մեծ քանակի սև կամ կարմրանարնջագույն շերտեր, որոնք կազմում են երկայնական խմբեր (Նկ. 63):



Նկ. 63. Գեղիրան օձագլուխ:

Տարածվածությունը: Տարածված են հյուսիս արևելյան Թուրքիայում, Իրանում, որտեղից հասնում են մինչև հյուսիս-արևմտյան Հնդկաստան, Անդրկովկասում: Հայաստանում հանդիպում են Արմավիրի, Թալինի, Աշտարակի, Կոտայքի, Արարատի, Եղեգնաձորի, Նոյեմբերյանի, Կապանի, Մեղրու մարզերում, որտեղից թափանցում են նաև Լեռնային Ղարաբաղ (քարտեզ 21):



Քարտեզ 21. Գեղիրան օձագլխի տարածվածությունը Հայաստանում և Լեռնային Ղարաբաղում:

Ապրելավայրերը: Նրանց համար որպես թաքստոց հանդիսանում են կրճողների բները և քարերի միջև եղած տարածությունները:

Կենսաբանության առանձնահատկությունները: Սնվում են սարդերով, բզեզներով, միջատներով և այլն: Չվաղրում են տարին մի քանի անգամ: Առաջին ծվադրումը մայիսի կեսերին է, երկրորդը՝ հունիսի կեսերին: Երբեմն ծվադրում են նաև օգոստոսին: Չվերի քանակը 3-6 է:

Կարգավիճակը: Տարածման վայրերում առանձնյակների քանակությունը բավականին շատ է:

Ցեղ - Ժայռային մողեսներ - Скальные ящерицы - *Darevskia Arribas*, 1997

Կովկասում լայն տարածում ունեցող մողեսների բավական մեծ խումբ է, որոնք իրենց լավ են զգում քարերի, ժայռերի, պատերի վրա և ձեռք են բերել այդ տեղամասերում ապրելու հարմարանքներ՝ վերևից ներքև տափակացած գլուխ, կառչուն ճանկերով վերջույթներ և ժայռերին համապատասխանող մուգ գունավորում: Նրանք լավ մազլցում են ժայռերի, քարերի վրա, մտնում են ճեղքերի մեջ և այդ



պատճառով հաճախ նրանց անվանում են պատի վրա ապրող մողեսներ կամ ժայռային մողեսներ:

Ժայռային մողեսների մեջքային թեփուկները կլորավուն, հարթ հատիկավոր են կամ ունեն քիչ երևացող կողիկներ: Փորային վահանիկները խոշոր են, տարբերվում են մեջքային թեփուկներից և դասավորված են 6 երկայնական շարքերով: Հիմնականում ունեն մեկ կամ երկու հետքային վահանիկ: Գլխի քունքային մասում սովորաբար լավ արտահայտված է խոշոր կենտրոնական քունքային վահանիկը (հազվադեպ է այն բացակայում) և թմբկային վահանիկը: Դրանց միջև ամենանեղ տեղում դասավորված են խոշորացած թեփուկներ, որոնց քանակը կարևոր նշանակություն ունի այս ցեղի տեսակների որոշման համար (նկ. 64): Գրեթե բոլոր տեսակների ճակատաքթային վահանիկը չի դիպչում միջծնոտային վահանիկին: *Darevskia* ցեղի ժայռային մողեսները տարածված են ամբողջ Կովկասում, Դրինում, Թուրքիայի հյուսիսային և արևելյան շրջաններում, Փոքր Ասիայում և Հյուսիսային Իրանում: Այդ խմբի մեջ են մտնում նաև ժայռային մողեսներին ազգակից մի քանի տեսակներ, որոնցից է Հայաստանում հանդիպող մարգագետնային մողեսը՝ *Darevskia praticola*: Մարգագետնային մողեսը ի տարբերություն ժայռային մողեսների ունի հաստ գլուխ, վարում է անտառային կենսակերպ և չի հանդիպում ժայռերի վրա և (նկ. 64): Ժայռային մողեսները բազմանում են ձվադրությամբ:

Ուսումնասիրելով Հայաստանում տարածված ժայռային մողեսների մի շարք պոպուլյացիաներ՝ ռուս գիտնական Ի.Ս. Դարևսկին 1957 թվականին նկատեց, որ այդ պոպուլյացիաներից շատերը կազմված են միայն էգերից և ենթադրեց, որ այդպիսի մողեսները ընդունակ են դնելու չբեղմնավորված ձվեր, որոնք կենսունակ են: Այդ ենթադրության ճշմարտացիությունն ապացուցելու համար նշված մողեսների չբեղմնավորված ձվերը լաբորատոր պայմաններում դրվեցին ինկուբացման: Դրանցից դուրս եկած մատղաշները բացառապես էգեր էին, ու երբ լաբորատոր պայմաններում այդ երիտասարդ էգերը հասունացան և նորից ձվադրեցին, սերնդում արու առանձնյակներ կրկին չհայտնաբերվեցին: Ավելին՝ պարզվեց, որ այդ մողեսների ձվերում երբեմն սկսում են զարգանալ արական սեռին պատկանող քիչ քանակությամբ սաղմեր, որոնց զարգացումը, սակայն, վաղ փուլերում կանգ է առնում: Կարծես թե բնությունն ինքն է տվյալ տեսակի պոպուլյացիայից վերացնում արուներին: Այսպիսով, Դարևսկին փորձարարական ճանապարհով ապացուցեց ժայռային մողեսների կուսածնությամբ բազմանալու մասին իր ենթադրությունը: Հայաստանում հանդիպող 8 տեսակի ժայռային մողեսներից չորսը բազմանում են կուսածնությամբ:

Ժայռային մողեսների շատ տեսակների տարածման գոտիները համընկնում են, որի հետևանքով նրանց միջև հաճախ առաջանում են միջանկյալ հիբրիդային ձևեր, այդ պատճառով բավականին դժվարանում է առանձին առանձնյակների որոշումը մինչև տեսակ: Այդ պատճառով որոշման ժամանակ անհրաժեշտ է յուրաքանչյուր պոպուլյացիայից ունենալ մի քանի առանձնյակ:

Darevskia ցեղի ժայռային մողեսների տեսակները որոշելու աղյուսակ

1 (18) Գլուխը վերևից ներքև տափակացած է: Մեջքային թեփուկները կլորավուն, հարթ հատիկավոր են կամ ունեն քիչ երևացող կողիկներ (նկ. 64)2

2 (14) Վերաջքային և վերթարթիչային վահանիկների միջև, բաժանելով նրանց, տեղավորված են 1 լրիվ շարք հատիկավոր թեփուկներ:.....3

3 (6) Հետանցքային վահանիկից առաջ գտնվում է մեկ, համեմատաբար խոշոր, նախահետանցքային վահանիկ (նկ. 65):.....4




Նկ. 64. *Darevskia* ցեղի մողեսների գլուխը կողքից: 1-ժայռային, 2-մարգագետնային:

4 (5) Մարմնի միջին մասի շուրջը, մեկ շարքում, չհաշված փորային վահանիկները, ունեն 49-62 թփուկներ: Հետանցքային վահանիկից առաջ գտնվում է 1 լայնացած նախահետանցքային վահանիկ (Նկ. 65): Մարմնի վերին մասը մոխրագույն, մկնամոխրագույն, դարչնագույն կամ գորշ-մոխրագույն է: Կենդանի առանձնյակների փորը դեղնավուն կամ դեղնա-նարնջագույն է:

Քուռի ժայռային մողես - *Darevskia portschinskii* (էջ 84)

5 (4) Մարմնի միջին մասի շուրջը, 1 շարքում, առանց փորային վահանիկների ունեն 41-52 թփուկներ: Հետանցքային վահանիկից առաջ ունեն մեկ խոշոր կամ երբեմն 2 նախահետանցքային վահանիկներ: Մարմնի վերին մասը կանաչավուն է և պատված է մեծ քանակի անկանոն դասավորված սև բծերով: Կենդանի առանձնյակների փորը վառ դեղնանարնջագույն է, երբեմն նաև սպիտակ:

Վալենտինի ժայռային մողես - *Darevskia valentine* (էջ 86)



Նկ. 65. ժայռային մողեսների հետանցքային շրջանում գտնվող վահանիկները: 1-նաիրյան, 2-ռուստոմբեկովի, 3-քուռի մողեսներ: ա-հետանցքային, բ-նախահետանցքային վահանիկներ:



6 (3) Հետանցքային վահանիկից առաջ մեկ խոշոր նախահետանցքային վահանիկ չունեն:.....7

7 (13) Հետանցքային վահանիկից առաջ ունեն 2 խոշորացած նախահետանցքային վահանիկներ:.....8

8 (12) Կենտրոնական քունքային և թմբկային վահանիկների միջև (նրա ամենամեղ տեղում) դասավորված են 3-5, երբեմն 2 (միայն այդ դեպքում ավելի խոշոր) թեփուկներ:.....9

9 (17) Միջծնոտային վահանիկը որպես օրենք չի կաշում ճակատաքթայինին: 10

10 (11) Հետանցքային վահանիկից առաջ գտնվող 2 նախահետանցքային վահանիկների միջև տեղավորված է ոչ մեծ երրորդը կամ բուրդ 3 նախահետանցքայինները իրենց մեծությամբ հավասար են: Մարմնի շուրջը 1 շարքում ունեն 48-62 թեփուկներ: Փորային մասը սպիտակավուն, կապտավուն կամ կանաչասպիտակավուն է:

Ռադդեի ժայռային մողես - Darevskia raddei Boettger (էջ 89)

11 (10) Հետանցքային վահանիկից առաջ հիմնականում ունեն 2 խոշոր նախահետանցքային վահանիկներ (նկ. 65): Մարմնի շուրջը մի շարքում գտնվում են 50-60 թեփուկներ: Կոկորդային շրջանի միջին մասում մինչև օձիքը ունեն 23-31 թեփուկներ: Մարմնի վերին մասը բաց գորշագույն, մուգ մոխրագույն է: Մեջքը իր ամբողջ երկարությամբ ծածկված է սևագույն կամ մուգ գորշագույն բծերից կազմված նախշով: Փորային մասը կանաչադեղնավուն է:

Նաիրյան ժայռային մողես - Darevskia nairensis (էջ 91)

12 (8) Կենտրոնական քունքային և թմբկային վահանիկների միջև (նրա ամենամեղ տեղում) դասավորված են 2, երբեմն՝ 3 խոշորացած թեփուկներ (նկ. 66): Հետին քթային և ճակատաքթային վահանիկների միջև եղած կարը բավականին կարծ է առաջնային և հետին քթային վահանիկների միջև եղած կարից (նկ. 67): Դաճախ այդ 2 վահանիկների միջև գտնվում է վերքթային փոքրիկ վահանիկ:

Ղալի ժայռային մողես - Darevskia dahli (էջ 93).....13

13 (7) Հետանցքային վահանիկներից առաջ հավասարաչափ դասավորված են 3 չափերով ոչ մեծ, շատ թե քիչ իրար հավասար նախահետանցքային վահանիկներ, որոնցից մեջտեղինը կարող է մի փոքր ավելի խոշոր լինել մյուսներից (նկ. 65):

Ռոստոմբեկովի ժայռային մողես - Darevskia rostombekovi (էջ 95)


14 (2) Վերաչքային և վերթարթիչային վահանիկների միջև գտնվող հատիկավոր թեփուկների շարքը ընդհատված է:.....15

15 (16) Կենտրոնական քունքային և թմբկային վահանիկների միջև՝ նրա ամենամեղ տեղում, հիմնականում մեկը մյուսի վրա դասավորված են երկու մեծությամբ մոտավորապես իրար հավասար վահանիկներ: Երբեմն նրանք դասավորված են ուրիշ կերպ կամ ընդհանրապես չկան (նկ. 66, 68):

Հայկական ժայռային մողես - Darevskia armeniacae (էջ 97)



Նկ. 66. Ժայռային մողեսների տարբեր տեսակների գլխի ջունքային բաժինը: 1-թմբկային վահանիկ, 2- կենտրոնական ջունքային վահանիկ:



Նկ. 67. Ժայռային մողեսի գլխի առջևի մասը կողքից: 1-տաղդեյի, 2-դալի մողեսներ: Վահանիկներ: ա-ճակատաքթային, բ-հետքթային, գ-նախաքթային:

16 (15) կենտրոնական ջունքային և թմբկային վահանիկների միջև, նրանց ամենամեղ տեղում, թեփուկները դասավորված են 2, երբեմն 1 կամ 3 շարքով (Նկ. 64): Կոկորդային շրջանի միջին մասում մինչև օձիքն ունեն 21-29 թեփուկներ: Կենդանի առանձնյակների փորը վառ դեղնամարնջագույն է, երբեմն՝ նաև սպիտակ:

Վալենտինի ժայռային մողես- *D. valentini* (տջ 86)



Նկ. 68. Դայլակա ժայռային մողեսի գլխի ջունքային բաժինը: 1-կենտրոնական ջունքային և թմբկային վահանիկների միջև գտնվող թեփուկները:



Նկ. 69. Վայենտինի ժայռային մողեսի գլխի քունքային բաժինը:

17 (9) Միջմոտային վահանիկը շատ քիչ երկար կապով կաչում է ճակատագագաթայինին՝ անջատելով իրարից 2 առաջնային քթային վահանիկները (Նկ. 87): Թմբկային և կենտրոնական քունքային վահանիկների միջև, նրանց ամենամեղ տեղում, ունեն 2-4 խոշորացած վահանիկներ (Նկ. 86):

Ապիտակափոր ժայռային մողես - Darevskia unisexualis (տջ 99)

18 (1) Գլուխը վերևից ներքև հաստացած է: Մեջքային թեփուկները ձգված են երկարությամբ և ունեն լավ զարգացած կողիկներ: Հետին վերաչքային վահանիկը կաչում է առաջին վերքունքային վահանիկին (Նկ. 64):

Մարգագետնային մողես - Darevskia praticola (տջ 102)

15. Զուռի ժայռային մողես - Куринская скальная ящерица - *Darevskia portschinskii* Kessler, 1878

Տիպային տարածքն է՝ ք. Թրիլիսին (Վրաստան).

Darevskia portschinskii portschinskii (Kessler 1878)

Darevskia portschinskii nigrita (Bakradze 1976)

Lacerta portschinskii Kessler 1878


Lacerta muralis var. *depressa* (nec Camerano 1878) Boettger in Radde 1899

Lacerta saxicola portschinskii, Nikolsky 1910

Lacerta portschinskii nigrita Bakradze 1976

L. 65 մմ (տգեր); 67 (արուներ); L/L.cd. 0.41-0.55 (արուներ); 0,50-0,62 (տգեր); Sq. 49-61 միջինը 55,6; G. 2534; P.fm. 14-222

Ձևարանական հատկանիշները: Մարմնի երկարությունը գլխի հետ արուներինը 48-67մմ է, իսկ էգերինը՝ 45-65մմ: Միջմոտային վահանիկը չի կաչում ճակատաքթային վահանիկին կամ, եթե կաչում է, ապա մի կետում: Թմբկային և կենտրոնական քունքային վահանիկների միջև նրանց ամենամեղ տեղում դասավորված են 2-5 խոշորացած թեփուկներ: Կոկորդային շրջանի միջին մասում ունեն 25-34 թեփուկներ: Յուրաքանչյուր փորային վահանիկ իր արտաքին եզրով սահմանակցվում է 3 մարմնական թեփուկներով արուների և 2, հազվադեպ 3՝ էգերի մոտ: Մարմնի միջին մասի շուրջը 1 շարքում ունեն 49-61 թեփուկներ: Հետանցքային վահանիկից առաջ գտնվում է մեկ խոշոր լայնացած նախահետանցքային վահանիկ (Նկ. 70):



Նկ. 70. *D. portschinskii*-ի տեսակի թեփուկային ծածկի հատկանիշները:
 1- գլուխը վերևից, 2-գլուխը կողքից, 3- բունքային բաժին, 4-մեջքային թեփուկների և փորային վահանիկների միջև սահմանը, 5-հետանցքային և նախահետանցքային բաժինը:

Մարմնի վերին մասը մոխրագույն, մկնա-մոխրագույն, դարչնագույն կամ գորշ-մոխրագույն է և պատված է անկանոն դասավորված սև բծերով, որոնք առաջացնում են մարմնի կենտրոնական մասում լավ երևացող նախշ: Կենդանի առանձնյակների փորը դեղնավուն կամ դեղնանարջագույն է, երբեմն հանդիպում են սպիտակավուն փորով առանձնյակներ: Մեծամասամբ փորի կողքերին ունենում են վառ մանուշակագույն կամ կապույտ բծեր: Բազմացման շրջանում արունների փորը, կուրծքը, կրկորդային մասը և գլուխը ներքևից դառնում են վառ դեղին կամ դեղնանարնջագույն: Իսկ փորային վահանիկների եզրերը այդ ժամանակամիջոցում ստանում են վառ կապտավուն գունավորում (նկ. 71, 72):




Նկ. 71. Քուռի ժայռային մողես 1- *D. portchinskii nigrita* ենթատեսակ, 2- *D. portchinskii*:

Տարածվածությունը: Տարածված են Քուռ գետի և նրա վտակների հովիտներում, Գորիսից մինչև Կիրովաբադ: Հայաստանում հանդիպում է Աղստեֆ և Ղևբետ գետերի ձորերում: Ստեփանավան քաղաքի շրջակայքում հանդիպում է *D. portchinskii nigrita* ենթատեսակը: Մի քանի պոպուլյացիաներ հայտնաբերվել են նաև Լեռնային Ղարաբաղում՝ Շահունյանի շրջանի Քելբաջար և Ջուար գյուղերի շրջակայքում (քարտեզ 22):



Նկ. 72. *D. portschinskii*-ի տեսակի առանձնյակների մարմնի և փորի գունավորումը:

Սպրեւավայրերը: Բնակեցնում է գետերի ափերին և չորասեր բուսականություն ունեցող լանջերին տեղակայված չոր և չափավոր չոր ժայռերը, քարքարոտ կիրճերը՝ հասնելով ծովի մակերևույթից մինչև 1100-1200 մ բարձրությունները: 1 կմ երթուղիում առանձնյակների թվաքանակն հասնում է 40-55:



Քարտեզ 22. Քուռի ժայռային մողեսի տարածվածությունը Հայաստանում և Լեռնային Ղարաբաղում:

Կենսաբանության առանձնահատկությունները: Չմեռային քնից դուրս են գալիս մարտի երկրորդ կեսին, բարձրադիր լեռներում՝ ապրիլի կեսերին: Սնվում է միջատներով և մանր անողնաշար կենդանիներով: Սննդաբաժնում գերիշխում են բզեզները, ուղղաթևավորները, երկթևանիները, թաղանթաթևավորները, ցիկադները, ինչպես նաև սարդերը, բազմատանիները: Չվաղում են հունիսին, հուլիսի կեսերին: Դնում են 2-5 ծու: Ինկուբացիոն շրջանը տևում է 48-55 օր: Մատղաշ առանձնյակները 25-27 մմ մեծությամբ, բնության մեջ հայտնվում են հուլիսի կեսին - օգոստոսի վերջին:

Կարգավիճակը: Մարդածին գործոնի առկայության պատճառով մարդկանց բնակավայրերի շրջակայքում գտնվող պոպուլյացիաներում կենդանիների թվաքանակը աստիճանաբար պակասում է: Բնակավայրերից հեռու, խոր ծորերում ապրող պոպուլյացիաներում մողեսների թվաքանակը կայուն է:

16. Վալենտինի ժայռային մողես - Скальная ящерица Валентина - *Darevskia valentine* Boettger, 1892


Տիպային տարածքը՝ Բազարկենտ (Հյուսիս արևելյան Հայաստան)

Lacerta muralis var. *valentine* Boettger 1892
Lacerta saxicola valentini, Mehely 1909
Lacerta saxicola terentjevi, Darevsky 1957

L.77 մմ (տգեր); 70 (արուններ); L/L.cd. 0.48-0.60 (արուններ); 0,51-0,69 (տգեր); Sq.41-59 միջինը 48,2; G.21-35; P.fm. 14-23




Չևարանական հատկանիշները: Արունների մարմնի երկարությունը գլխի հետ 56-70մմ է, իսկ էգերինը՝ 58-77մմ: Միջծնոտային վահանիկը բաժանված է ճակատագագաթնայինից կամ՝ շատ հազվադեպ՝ կաչում է նրան: Վերթարթիչային վահանիկները բաժանված են վերաչքայիններից, լրիվ կամ երբեմն ընդհատված շարքից կազմված 1-18 թեփուկներով: Փորային վահանիկներն իրենց արտաքին եզրերով սահմանակցում են 2-3 մարմնական թեփուկների հետ (արուններինը հիմնականում 3, էգերինը՝ 2, հազվադեպ՝ 3) (Նկ. 73):



Նկ. 73. Փորային վահանիկների և մարմնական թեփուկների միացման սահմանը արու առանձնյակների մոտ:

Հետքունքային վահանիկները 5 են: Թմբկային և կենտրոնական քունքային վահանիկների միջև, նրա ամենամեղ տեղում, դասավորված են 1-4 թեփուկներ (Նկ. 74):



Նկ. 74. *D. valentini*-ի տեսակի թեփուկային ծածկի հատկանիշները. 1- գլուխը վերևից, 2- գլուխը կողքից, 3- քունքային բաժին, 4- մեջքային թեփուկների և փորային վահանիկների միջև սահմանը, 5- հետանցքային և նախահետանցքային բաժին:



Մարմնի վերին մասը կանաչավուն է և պատված է մեծ քանակի անկանոն դասավորված սև բծերով: Բազմացման շրջանում փորը վառ դեղնանարնջագույն է: Հանդիպում են նաև սպիտակ փորով առանձնյակներ, որոնց փորային վահանիկների եզրերը ունենում են վառ կապույտ կամ բաց կապույտ գունավորում (Նկ. 75):



Նկ. 75. *D.valentini*-ի ժայռային մողեսի 1-արու, 2-եգ առանձնյակները:

Տարածվածությունը: Տարածված են Հարավային Վրաստանի, Հյուսիս-արևելյան Թուրքիայի և Հյուսիսային Հայաստանի լեռնային շրջաններում: Այդ տեսակի տարածման գոտին Հայաստանում բաժանված է մի քանի մասերի: Նա ընդգրկում է Շիրակի մարզի հյուսիսային լեռնային շրջանները, Արագածի լեռնատափաստանային գոտին մինչև ալպիական գոտի: Ոչ մեծ մեկուսացված պոպուլյացիաներ կան Ծաղկունյաց և Փամբակի լեռնաշղթաներում, կենտրոնական և հյուսիս-արևելյան Հայաստանում: Այն ընդգրկում է Գեղամա և Վարդենիսի լեռնաշղթաները՝ հասնելով մինչև Ձանգեզուրի լեռնաշղթա (քարտեզ 23):

Ապրելավայրերը: Բարձրլեռնային մողես է, որը բնակեցնում է չափավոր թեքություն ունեցող լանջերը, ժայռերի ելքերը, խոշոր քարերը: Բնակվում է ծովի մակարդակից 1900-3000 մ բարձրության վրա գտնվող լեռնատափաստանային և լեռնամարգագետնային գոտիներում: Հանդիպում է նաև քարերից ու ժայռերից ոչ հեռու գտնվող, կտրատված խոտածածկով պատված լեռնալանջերին: Որպես թաքստոց օգտագործում է ժայռերի ճեղքերը, կրծողների բները և քարերի տակ գտնվող դատարկ տարածությունները: 1 կմ երթուղիում հասուն առանձնյակների թվաքանակը հասնում է 19-25:



Քարտեզ 23. Վալենտինի ժայռային մողեսի տարածվածությունը Հայաստանում:

Կենսաբանության առանձնահատկությունները: Չմեռային քնից դուրս է գալիս ապրիլի վերջին, մայիսի սկիզբին: Սնվում է միջատներով և մանր անողնաշար կենդանիներով: Սննդաբաժնում հայտնաբերվել են երկարակնճիթ բզեզներ, երկթևանիներ, թաղանթաթևավորներ (այդ թվում նաև մրջյուններ), թեփուկաթևավորներ, ականջմտուկներ, առվակայիններ, սարդեր և փափկամարմիններ:

Զուգավորումը սկսում է մայիսի վերջին, հունիսի սկզբին: Չվաղում են հունիսի կեսին-հուլիսի սկիզբին: Դնում են 14x8 մմ մեծության, 3-8, հաճախ՝ 5 ծու: Երիտասարդ առանձնյակները, 26-27 մմ երկարությամբ, հայտնվում են օգոստոսի վերջին-սեպտեմբերի սկիզբին:

Կարգավիճակը: Տարածման վայրերում թվաքանակը կայուն է:

17. Ռադեյի ժայռային մողես - Скальная ящерица Раддеи- Darevskia raddei Boettger, 1892

Տիպային տարածքը՝ Նյովադի, այժմ Նոնաժոր (Հայաստան)


- Podarcis defilippi* Camerano 1877
- Lacerta muralis* var. *raddei* Boettger 1892
- Lacerta muralis* subsp. *fusca* var. *persica* Bedriaga 1886
- Lacerta saxicola* defilippii, Mehely 1909
- Lacerta saxicola raddei*, Darevsky 1957c

L.72 մմ (էգեր); 76 (արուներ); L/L.cd. 0.43-0.68 (արուներ); 0,50-0,69 (եգեր); Sq.43-63, G.22-31; P.fm. 13-22


Չևարանական հատկանիշները: Մարմնի երկարությունը գլխի հետ արուներից՝ 49-69մմ է, էգերից՝ 46-67 մմ: Կոկորդային շրջանի միջին մասում, մինչև օձիքը դասավորված են 20-29 թեփուկներ: Թմբկային և կենտրոնական քունքային վահանիկների միջև՝ նրանց ամենամեղ տեղում ունեն 2-5 մանր թեփուկներ: Հետանցքային վահանիկից առաջ գտնվող 2 նախահետանցքային վահանիկների միջև տեղավորված է ոչ մեծ երրորդ կամ բոլոր 3 նախահետանցքային վահանիկները իրենց մեծությամբ հավասար են:

Մարմնի շուրջը 1 շարքում ունեն 48-62 թեփուկներ: Փորային վահանիկներն իրենց արտաքին եզրերով սահմանակցում են 2-3 մարմնական թեփուկների հետ (արուների մոտ՝ 2, էգերի մոտ՝ 3) (Նկ. 76, 77):

Մարմնի վերին մասը բաց սրճագույն, մոխրադարչնագույն, մուգ ավազագույն է, ամբողջովին պատված անկանոն մուգ բծերով, որոնք երբեմն կազմում են 2 զուգահեռ շերտեր: Մարմնի ներքևի մասը սպիտակավուն, կապտավուն կամ կանաչասպիտակավուն է: Բազմազան ժամանակ արուների կողքի փորային վահանիկների եզրերը ստանում են բաց երկնագույն գունավորում (Նկ. 78):



Նկ. 76. Փորային վահանիկների և մարմինը պատող թեփուկների միացման սահմանը:



Նկ. 77. *D. raddei*-ի թեփուկային ծածկի հատկանիշները: 1- գլուխը վերևից, 2- գլուխը կողքից, 3- քունքային բաժինը, 4- մեջքային թեփուկների և փորային վահանիկների միջև սահմանը, 5- հետանցքային և նախահետանցքային բաժինը:



Նկ. 78. *D. raddei* -ի տեսակի 1-աբուր և 2-եզ առանձնյակները:



Տարածվածությունը: Տարածված են հարավ-արևելյան, արևելյան և հյուսիսային Հայաստանում, հարավային Ադրբեջանում և հյուսիս-արևմտյան Իրանում: Հայաստանում նրա տարածման գոտին ընդգրկում է ամբողջ Զանգեզուրի լեռնաշղթան և իջնելով Արաքսի հովիտ՝ տարածվում է մինչև Իրան: Մի քանի մեկուսացված պոպուլյացիաներ կան Աղստեֆի և Դևբետի ձորերում և Լեռնային Դարաբաղում (քարտեզ 24):



Քարտեզ 24. Ուղղեի ժայռային մողեսի տարածվածությունը Հայաստանում և Լեռնային Դարաբաղում:

Ապրելավայրերը: Ինչպես մյուս ժայռային մողեսները, այս տեսակը նույնպես հանդիպում է լեռնային և լեռնատափաստանային գոտիների լեռնային գետերի քարքարոտ ափերին, խոշոր քարաբեկորների վրա: Կարող է բնակվել ծովի մակերևույթից մինչև 2500 մ բարձրության վրա:

Կենսաբանության առանձնահատկությունները: Ակտիվ է մարտից մինչև նոյեմբերի սկիզբը: Բարենպաստ պայմաններում 1 կմ երթուղիում առանձնյակների թվաքանակը հասնում է 40-60:

Մնվում են բզեզներով, թաղանթաթևավորներով, երկթևանիներով, թիթեռներով և այլ միջատներով, ինչպես նաև սարբեր անողնաշար կենդանիներով: Չվաղում են հունիսի կեսին հուլիսի վերջին: Դնում են 2-5, հաճախ՝ 4 ձվեր: Ինկուբացիոն շրջանը շուրջ 55 օր է: Երիտասարդ առանձնյակները 22-26 մմ երկարությամբ, հայտնվում են հուլիսի վերջին սեպտեմբերի սկզբին:

Կարգավիճակը: Լայն տարածում ունեցող մողես է: Տարածման վայրերում առաջացնում է մեծ կուտակումներ:

18. Նաիրյան ժայռային մողես - Скальная ящерица Наирни - *Darevskia nairensis* Darevsky, 1967

Տիպային տարածքը՝ Լճաշեն (Սևանի ավազան)


Lacerta saxicola defilippii, (partim) Chemov 1939

Lacerta saxicola nairensis Darevsky 1967

Lacerta raddei nairensis, Uzzell and Darevsky 1973

L.72 մմ (տգեր); *76* (արուներ); *L/L.cd. 0.43-0.68* (արուներ); *0,50-0,69* (տգեր); *Sq.50-60* , *G.23-31*; *P.fm. 15-21*

Ձևաբանական հատկանիշները: Մարմնի երկարությունը գլխի հետ 76 մմ է: Միջծնոտայինը վահանիկը բաժանված է ճակատագագաթնայինից: Վերթարթիչային վահանիկները անջատված են վերաչքայիններից 8-9 հատիկավոր թեփուկներից կազմված շարքով: Կենտրոնական քունքային և թմբկային վահանիկների արանքում կա 2-3, երբեմն՝ 4-5 թեփուկներ: Հետանցքային վահանիկից առաջ հիմնականում ունեն 2 խոշորացված նախահետանցքային վահանիկներ: Մարմնի շուրջը մի շարքում գտնվում են 50-60 թեփուկներ: Փորային վահանիկներն իրենց արտաքին եզրով սահմանակցվում են 3, երբեմն՝ 2 մարմնական թեփուկների հետ: Կոկորդային շրջանի միջին մասում մինչև օձիքը ունեն 23-31 թեփուկներ (նկ. 79):



Նկ. 79. *D. nairensis* տեսակի թեփուկային ծածկի հատկանիշները: 1- գլուխը վերևից, 2- գլուխը կողքից, 3- բունքային բաժինը, 4- մեջքային թեփուկների և փորային վահանիկների միջև սահմանը, 5- հետանցքային և նախահետանցքային բաժինը:

Մարմնի վերին մասը բաց գորշագույն, մուգ մոխրագույն է: Մեջքն իր ամբողջ երկարությամբ ծածկված է սև կամ մուգ գորշագույն բծերից կազմված նախշով: Փորային մասը կանաչադեղնավուն է: Կողքային փորային վահանիկների եզրերը կապտավուն են: Բազմացման ժամանակ արունների փորային մասը ընդունում է վառ դեղնականաչավուն գունավորում, իսկ կողային փորային վահանիկների եզրերը կապտավուն են դառնում (Նկ. 80):



Նկ. 80. Նաիրյան ժայռային մողես:



Տարածվածությունը: Տարածված են հյուսիս արևելյան Թուրքիայում, կենտրոնական, արևմտյան և հարավ-արևմտյան Հայաստանում: Այս ենթատեսակի տարածման գոտին Հայաստանում սկսվում է Գյումրի քաղաքի շրջակայքից, և շրջանցելով Արագած լեռը, հարավ-արևմուտքից Հրազդանի ձորով բարձրանում է դեպի Սևանի ավազանը՝ իր մեջ ընդգրկելով Գեղամա լեռնաշղթան: Մեկուսացված պոպուլյացիաներ հանդիպում են Թումանյան և Կարմրաշեն գյուղերի շրջակայքում (քարտեզ 25):



Քարտեզ 25. Նախրյան ժայռային մողեսի տարածվածությունը Հայաստանում:

Ապրելավայրերը: Նախընտրում է ծ.մ. 1000-2600 մ. բարձրությունների վրա գտնվող լեռնային տափաստանների քարքարոտ մասերը, ինչպես նաև լեռնային գետերի երկյանքով ձգված ժայռերը:

Կենսաբանության առանձնահատկությունները: Չմեռումից դուրս են գալիս մարտի սկզբից մինչև մարտի կեսը: Չուգավորման շրջանը Հրազդանի ձորում սկսում է մայիսի կեսից, իսկ Սևանի ավազանում՝ Լճաշեն գյուղի շրջակայքում մայիսի վերջին-հունիսի կեսին: Չվաղրումը սկսում է հուլիսի սկզբին: Դնում են 2-5 ձու: Չագերը դուրս են գալիս օգոստոսի վերջին:

Կարգավիճակը: Տարածման որոշ շրջաններում առանձնյակների թվաքանակը բավականին մեծ է:


19. Դալի ժայռային մողես - Скальная ящерица Дали - *Darevskia dahli* Darevsky, 1957

Տիպային տարածքը՝ գ.Շահալի (Վանաձորի մարզ)

Lacerta saxicola dahli Darevsky 1957
Lacerta dahli, Darevsky 1966b

L. 64 մմ (տգեր); L/L.cd. 0.48-0.75 (տգեր); Sq. 54-56, G. 24-30; P.fm. 14-20

Չևարանական հատկանիշները: Մարմնի երկարությունը գլխի հետ 48-64 մմ է: Կոկորդային շրջանի միջին մասում ունեն 24-30 թեփուկ: Կենտրոնական քունքային և թմբկային վահանիկների միջև (նրա ամենամեղ տեղում) դասավորված են 2, երբեմն՝ 3 խոշորացած թեփուկներ: Հետին քթային և ճակատաքթային վահանիկների միջև եղած կարը բավականին կարճ է առաջնային և հետին քթային վահանիկների միջև եղած կարից: Հաճախ այդ 2 վահանիկների միջև գտնվում է վերքթային փոքրիկ վահանիկ: Մարմնի միջին մասի շուրջը 1 շարքում ունեն 51-56 թեփուկ: Յուրաքանչյուր փորային վահանիկ իր արտաքին եզրով սահմանակցում է երկու խոշորացած մարմնի թեփուկի հետ (նկ. 81):




Նկ. 81. *D. dahlii*-ի տեսակի թեփուկային ծածկի հատկանիշները:
1- գլուխը վերևից, 2- գլուխը կողքից, 3- քունքային բաժինը, 4- քթանցքային բաժին,
5- մեջքային թեփուկների և փորային վահանիկների միջև սահմանը,
6- հետանցքային և նախահետանցքային բաժինը:

Մարմնի վերին մասը սրճա-մոխրագույն, մուգ ավազագույն կամ մուգ դարչնագույն է, որի միջին երկարությամբ դասավորված են անորոշ ձևի մանր մուգ - գորշագույն շերտեր, որոնք լավ երևում են երիտասարդ առանձնյակների վրա: Փորային մասը կանաչա-դեղնավուն է: Կոկորդային և գլխի ստորին մասը կաթնասպիտակագույն է: Փորային վահանիկների արտաքին եզրերին կան կապտագույն շերտեր (նկ. 82):



Նկ. 82. Դալի ժայռային մողես:

Տարածվածությունը: Տարածված են Հարավային Կրաստանի և Հյուսիսային Հայաստանի անտառային գոտիներում: Ժամանակակից արեալը մասնատված է մի քանի մեկուսացված պոպուլյացիաների, որոնք գտնվում են Հայաստանի հյուսիսում: Հայաստանում նրա տարածման սահմանն անցնում է Բազումի (Էռնաշղթայի հարավային լանջերով՝ Փամբակ և Աղստև գետերի ձորերով՝ հասնելով մինչև Գյումրի և Դիլիջան: Արեալը մասնատված է մի շարք փոքր, իրարից անջատված հատվածների (քարտեզ 26):



Քարտեզ 26. Դալի ժայռային մողեսի տարածվածությունը Հայաստանում:

Ապրելավայրերը: Հանդիպում է ծ.մ. 900-1700 մ բարձրության վրա գտնվող անտառային գոտու կիրճերի չափավոր չոր լանջերի, ժայռերի վրա: Տեղ-տեղ թափանցում է նաև լեռնային տափաստանի քարքարոտ տեղամասեր՝ մնալով անտառեզրերին, ինչպես նաև ճամփեզրերին և թփուտներում: Հաճախ բնակվում է քարերից պատրաստված պատնեշներում և շինությունների պատերի վրա:

Կենսաբանության առանձնահատկությունները: Թվաքանակը սովորաբար մեծ է, որոշ վայրերում 1 կմ երթուղիում կազմում է մինչև 100 հասուն առանձնյակ: Չմեռային քնից հետո հայտնվում են ապրիլի սկիզբին-ապրիլի կեսին: Սնվում է միջատներով և նրանց թրթուրներով, սարդերով, նեպուկներով և անձրևորդերով: Բազմանում է կուսածնությամբ, առանց արունների միջամտության, որոնք սերնդում գործնականում բացակայում են: Չվաղում են հունիսի սկզբից մինչև հուլիսի կեսերը, դնելով 7-12 մմ երկարությամբ 2-3, հաճախ՝ 4 ձու: Հասուն էգերը երբեմն երկու անգամ են ծվադրում: Չազերը դուրս են գալիս օգոստոս, սեպտեմբեր ամիսներին: Տեսակի թվաքանակն աստիճանաբար պակասում է ճանապարհների վերակառուցման, գետերի ջրահոսքի փոփոխման հետևանքով: Վերջինս բերում է ապրելավայրի միկրոկլիմայի փոփոխման:

Կարգավիճակը: Տեսակն ընդգրկված է Հայաստանի Հանրապետության Կարմիր գրքում: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Near Threatened» կարգավիճակով «Վտանգված» տեսակ:

20. Ոստոնքեկովի ժայռային մողես - Скальная ящерица Ростомбекови - *Darevskia rostombekovi* Darevsky, 1957

Տիպային տարածքն է՝ Իջևան (Հյուսիսային Հայաստան)


Lacerta saxicola rostombekovi Darevsky 1957
Lacerta rostombekovi, Darevsky 1966b

L.756մմ (տգեր); L/L.cd.0.50-0.70;Sq.47-54 , G.21-28;

Չևարանական հատկանիշները: Մարմնի երկարությունը գլխի հետ 44-56 մմ է: Միջծնոտային վահանիկը միշտ բաժանված է ճակատաքթայինից: Կենտրոնական ջուրքային և թմբկային վահանիկների միջև դասավորված են 2-4 թեփուկներ: Յուրաքանչյուր փորային վահանիկ իր արտաքին եզրով սահմանակցվում է 3 կամ 2 մարմնական թեփուկների հետ: Մարմնի միջին մասի շուրջը 1 շարքում ունեն 47-54 թեփուկներ: Կոկորդային շրջանի միջին մասում մինչև օձիքը՝ 21-28 թեփուկ: Հետանցքային վահանիկից առաջ հավասարաչափ դասավորված են 3 չափերով ոչ



մեծ, շատ թե քիչ իրար հավասար նախահետանցքային վահանիկներ, որոնցից մեջտեղինը կարող է մի փոքր ավելի խոշոր լինել մյուսներից (Նկ. 66, 83):



Նկ. 83. *D. rostombekovi* տեսակի թեփուկային ծածկի հատկանիշները: 1- գլուխը վերևից, 2- գլուխը կողքից, 3- բունքային բաժինը, 4- մեջքային թեփուկների և փորային վահանիկների միջև սահմանը, 5- հետանցքային և նախահետանցքային բաժինը:

Սարմնի վերին մասը դարչնագույն, մոխրա-սրճագույն կամ բաց ավազագույն է: Փորը, կոկորդը և գլխի ներքևի մասը դեղնա-կանաչավուն է: Փորային վահանիկների եզրերին կան բաց կապտավուն շերտեր: Գլխի վերին մասն ունի մուգ բծեր և շերտեր (Նկ. 84):



Նկ. 84. Ռոստոմբեկովի ժայռային մողես:

Տարածվածությունը: Տարածված են արևմտյան Ադրբեջանում և հյուսիսային Հայաստանում: Հայաստանում նրանց տարածման սահմանն անցնում է Փամբակ և Աղստեֆ գետերի ձորերով, Բազումի լեռնաշղթայի հարավային լանջերի երկարությամբ՝ հասնելով մինչև Սպիտակ: Բացի այդ, հայտնի է մեկուսացված պոպուլյացիա Սևանա լճի հարավ-արևելյան ափին (քարտեզ 27):



Քարտեզ 27. Ռոստոմբեկովի ժայռային մոդեսի տարածվածությունը Հայաստանում:

Ապրելավայրերը: Հանդիպում են առավելապես անտառային գոտում, որոշ տեղերում անցնում են լեռնատափաստանային գոտի՝ ծ.մ. 800–1600մ բարձրության վրա: Միայն Սևանա լճի ափին հայտնաբերված պոպուլյացիան է բնակվում ծ.մ. 2000մ բարձրության վրա: Արուները բացակայում են, հանդիպում են միայն էգեր: Մեկ կմ երթուղիում թվաքանակը կազմում է 15-20 առանձնյակ: Որոշ տեղերում թվաքանակը կտրուկ կրճատվել է՝ բնակության միջավայրերի ոչնչացման հետևանքով:

Կենսաբանության առանձնահատկությունները: Չմեռումից դուրս է գալիս ապրիլի վերջից մայիսի սկիզբը: Սնվում է միջատներով և մանր անողնաշար կենդանիներով: Բազմանում է կուսածնությամբ, առանց արուների մասնակցության: Չվադրումը՝ հունիսի վերջին, հուլիսի սկզբին: Չվակույտում՝ 2–4 ծու: Ինկուբացիոն շրջանը շուրջ 55 օր է: Չագերը դուրս են գալիս օգոստոսի վերջին, սեպտեմբերի սկզբին: Տնտեսական գործունեությունը լեռնատափաստանային գոտում բերում է բնորոշ ապրելավայրերի քայքայման, որը կտրուկ ազդեցություն է ունենում պոպուլյացիայի թվաքանակի վրա:

Կարգավիճակը: Գրանցված է Հայաստանի Հանրապետության Կարմիր գրքում՝ որպես վտանգված տեսակ: Տեսակն ընդգրկված է Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակում «Endangered B1ab (i,iii)» կարգավիճակով և գնահատվում է որպես «վտանգված» տեսակ:

21. Հայկական ժայռային մոդես - Армянская скальная ящерица - *Darevskia armeniaca* Mehely, 1909

Տիպային տարածքը՝ Սևան

Lacerta muralis Boettger 1893

Lacerta saxicola var. *armeniaca* Mehely 1909

Lacerta saxicola armeniaca, Lantz and Cyren 1936


Lacerta armeniaca, Darevsky 1966b

L.73 մմ (էգեր); L/L.cd.0.55-0.72 (էգեր);Sq.42-47 , G.19-26; P.fm. 14-19

Ձևաբանական հատկանիշները: Մարմնի երկարությունը գլխի հետ 51-73 մմ է: Կենտրոնական քունքային և թմբկային վահանիկների միջև՝ (նրա ամենամեղ տեղում) մեկը մյուսի վրա դասավորված են 2, մեծությամբ մոտավորապես իրար հավասար վահանիկներ: Երբեմն նրանք դասավորված են ուրիշ կերպ կամ ընդհանրապես չկան: Վերթարթիչային և վերաչքային վահանիկների միջև գտնվող 2-8 հատիկավոր թեփուկների շարքը միշտ ընդհատված է: Ազդրային անցքերի և ազդրերի ստորին մակերեսին գտնվող խոշորացած թեփուկների միջև ունեն 4 զուգահեռ շարքով դասավորված մանր վահանիկներ: Կոկորդային շրջանի միջին մասում ունեն 19-26 թեփուկներ: Օծիքն ուղիղ է կամ քիչ առամնավոր: Մարմնի միջին



մասի շուրջն՝ ունեն 42-47 թփուկներ: Յուրաքանչյուր փորային վահանիկ իր արտաքին եզրով սահմանակցվում է 2, երբեմն՝ 3 մարմնական թփուկների հետ: Հետանցքային վահանիկից առաջ գտնվում է 1 կամ 2 նախահետանցքային վահանիկ: Ազդրային անցքերը 14-19 են (նկ. 85):



Նկ. 85. *D. armeniaca* տեսակի թփուկային ծածկի հատկանիշները: 1- գլուխը վերևից, 2-կողքից, 3- քունքային բաժինը, 4- հետանցքային և նախահետանցքային բաժին, 5- մեջքային թփուկների և փորային վահանիկների միջև սահմանը:

Մարմնի վերին մասը բաց կանաչավուն կամ գորշ կանաչագույն է: Ընդ որում, կանաչ գույնը ցայտուն է դառնում մարմնի առջևի մասում: Մարմնի մեջքային մասով, նրա երկարությամբ դասավորված են սև կամ գորշ գույնի շերտեր: Կենդանի մողեսների փորը բաց դեղնա-կանաչագույն է (նկ. 86):




Նկ. 86. Հայկական ժայռային մողես:

Տարածվածությունը: Տարածված են հարավային Կրաստանում, արևմտյան Ադրբեջանում, հյուսիս-արևելյան Թուրքիայում և հյուսիսային Հայաստանում:



Հայաստանում նրա տարածման գոտին անցնում է Արագածի հյուսիսային և հյուսիս-արևելյան լանջերով: Ծաղկունյաց և Փամբակի լեռնաշղթաներով և նեղ շերտով Սևանի լեռնաշղթայով անցնում է Աղդրեջան (քարտեզ 28):

Ապրելավայրերը: Բնակեցնում է 1700-2200 մ բարձրության վրա գտնվող անտառային և լեռնատափաստանային գոտու ժայռերի ելքերը, կիրճերի լանջերը, խոշոր ժայռաբեկորները: 1 կմ երթուղիում հասուն առանձնյակների թվաքանակն մոտավորապես հասնում է 200-ի:



Քարտեզ 28. Հայկական ժայռային մողեսի տարածվածությունը Հայաստանում:

Կենսաբանության առանձնահատկությունները: Չմեռային քնից հետո հայտնվում են մարտի վերջին-մայիսի սկզբին: Սննդաբաժնում հայտնաբերվել են թաղանթաթևավորներ (այդ թվում նաև մրջյուններ), բզեզներ, ուղղաթևավորներ, երկթևանիներ, թիթեռներ, սարդեր, ինչպես նաև բազմոտանիներ, անձրևորդեր և փափկամարմիններ: Կուսածին տեսակ է: Արուներ չունեն, հանդիպում են միայն էգեր, որոնք բազմանում են առանց բեղմնավորման: Չվաղրում են հունիսի կեսին-հուլիսի սկզբին: Դնում են 2-5 ձու: Ինկուբացիոն շրջանը շուրջ 55 օր է: Երիտասարդ առանձնյակները, 24-26 մմ երկարությամբ, հայտնվում են հուլիսի վերջին-օգոստոսի սկիզբին:

Կարգավիճակը: Կայուն թվաքանակ ունեցող տեսակ է:

22. Սպիտակափոր ժայռային մողես - Белобрюхая скальная ящерица - *Darevskia unisexualis* (Darevsky, 1966)

Տիպային տարածքն է Սևանի կղզին

Lacerta saxicola defilippii, Chernov 1939
Lacerta saxicola defilippii, (parthenogenetic) Darevsky 1957
Lacerta unisexualis Darevsky 1966


L.70 մմ (էգեր); L/L.cd.0.47-0.54 ;Sq.49-55 , G.24-31; P.fm. 16-21

Ձևաբանական հատկանիշները: Մարմնի երկարությունը գլխի հետ 56-70 մմ է: Միջձնոտային վահանիկը շատ թե քիչ երկար կապով կաչում է ճակատաքթայինին՝ անջատելով իրարից 2 առաջնաքթային վահանիկները (նկ. 87):

Թմբկային և կենտրոնական քունքային վահանիկների միջև, նրանց ամենամեղ տեղում, ունեն 2-4 խոշորացած վահանիկներ: Կոկորդային շրջանի միջին մասում, մինչև օձիքը, դասավորված են 24-31 թեփուկներ: Մարմնի միջին մասի շուրջը 1 շարքում ունեն 50-55 թեփուկներ: Յուրաքանչյուր կողքի փորային վահանիկն իր արտաքին եզրով շփվում է 2, երբեմն 3 մարմնական թեփուկների հետ: Հետանցքային վահանիկից առաջ ունեն 2, երբեմն 1 նախահետանցքային վահանիկ (նկ. 88):



Նկ. 87. *D. unisexualis*-ի գլխի վերին մասը: 1-միջնոտային, 2-առաջնաքթային, 3-ճակատաքթային:



Նկ. 88. *D. unisexualis* տեսակի թեփուկային ծածկի հատկանիշները: 1- գլուխը վերևից, 2- կողքից, 3- քունքային բաժինը, 4- մեջքային թեփուկների և փորային վահանիկների միջև սահմանը, 5- հետանցքային և նախահետանցքային բաժինը:

Մարմնի վերին մասը գորշ-մոխրագույն, գորշ-սրճագույն կամ մուգ-ավազագույն է: Մեջքի ամբողջ լայնությամբ անցնում է ցանցաձև նախշ, որը կազմված է անկանոն դասավորված բծերից: Փորային մասը կաթնա-սպիտակավուն է: Կողքափորային վահանիկների եզրին ունեն վառ-կապտավուն գունավորում (Նկ. 89):

Տարածվածությունը: Տարածված են հյուսիսային Հայաստանում և հյուսիսարևելյան Թուրքիայում: Այս տեսակի տարածման գոտին Հայաստանում բաժանված է մի շարք, համեմատաբար փոքր մեկուսացված պոպուլյացիաների, որոնք դասավորված են *D.r.nairensis*-ի տարածման գոտու ծայրամասերին՝ Կոտայքի, Գուգարքի, Շիրակի մարզերում (քարտեզ 29):



Նկ. 89. Սպիտակափոր ժայռային մողես:

Ապրելավայրերը: Բնակեցնում է ծ.մ.1700-2000 մ բացարձակ բարձրության վրա գտնվող լեռնատափաստանային գոտու քարքարոտ լանջերը և ժայռերի ելքերը: Տարածման որոշ վայրերում 1 կմ երթուղիում առանձնյակների թվաքանակը հասնում է 20-30:

Կենսաբանության առանձնահատկությունները: Չմեռային քնից դուրս են գալիս ապրիլի կեսին մայիսի սկզբին: Սննդաբաժնում հայտնաբերվել են բզեզներ, թաղանթաթևավորներ, երկթևանիներ, ուղղաթևավորներ, թիթեռներ, սարդեր, նեպուկներ, բազմոտանիներ, անձրևորդեր: Արուներ չունեն, հանդիպում են միայն էգեր, որոնք բազմանում են կուսածնությամբ: Գունիսի վերջին-հուլիսի սկիզբին դնում են 2-7 ձու: Երիտասարդ առանձնյակները, 25-27 մմ երկարությամբ, հայտնվում են օգոստոսի վերջին-սեպտեմբերի սկիզբին:



Քարտեզ 29. Սպիտակափոր ժայռային մողեսի տարածվածությունը Հայաստանում:

Կարգավիճակը: Տեսակն ընդգրկված է Հայաստանի Հանրապետության Կարմիր գրքում: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով «Near Threatened» կարգավիճակով գնահատվում է որպես «խոցելի» տեսակ:



23. Մարգագետնային մողես - *Lygova ящерица - Darevskia praticola* Eversman, 1834

Տիպային տարածքը՝ Հյուսիսային Կովկաս

Lacerta praticola Eversmann 1834:345.

Lacerta praticola praticola, Lantz and Cyren 1919

Lacerta praticola pontica Lantz and Cyren 1919:30; Chernov 1937

L 56 մմ, L/L.c.d. - 0.45-0.65, s.q. 28-46

Ձևաբանական հատկանիշները: Գլուխը տափակացած չէ: Միջոնոտային վահանիկը մեծ մասամբ կաչուում է քթանցքերին: Հետքթային և այտային վահանիկները կենտ են, ունեն առաջնային և հետայտային վահանիկներ: Ենթաչքային վահանիկից առաջ սովորաբար ունեն 4, հազվադեպ՝ 3 կամ 5 վերջրթնային վահանիկներ: Վերթարթիչային և վերաչքային վահանիկների միջև գտնվող 1-12 հատիկավոր թեփուկների շարքն ընդհատված է: Ունեն կենտրոնական քունքային և թմբկային վահանիկներ: Վերքունքային վահանիկները 2 կամ 3 հատ են: Ստորոնոտային վահանիկները հինգ զույգ են, նրանցից միայն առաջին երկուսն են շփվում միմյանց: Մեջքային թեփուկներն ունեն լավ երևացող կողիկներ, որոնք փորի սահմանում դառնում են հարթ: Ազդրային անցքերը 9-14 զույգ են և նրանց շարքը գրեթե հասնում է ծնկի ծալվածքին: Հետանցքային վահանիկն առջևից շրջապատված է մեկ շարքով դասավորված, 8-12 մանր նախահետանցքային վահանիկներով: Հետանցքային վահանիկի լայնությունը 1.2-2 անգամ գերազանցում է նրա երկարությանը:



Նկ. 90. Մարգագետնային մողես:

Մարմնի վերին մասը բաց գորշ, սրճագույն, սրճա-մոխրագույն, երբեմն էլ՝ սև գույնի է: Մեջքի երկարությամբ, ծոծրակային մասից սկսած, անցնում է բավական լայն, գորշ դարչնագույն շերտ: Քունքային մասից սկսվում են երկու լայն, սրճագույն կամ գորշ շերտեր, որոնք անցնելով մարմնի կողքերով, վերջանում են պոչի վրա: Արուների մարմնի ստորին մասը դեղնա-կանաչավուն է, էգերինը՝ բաց դեղնավուն կամ սպիտակ: Երիտասարդներն ունեն մուգ գունավորում (Նկ. 90):

Տարածվածությունը: Տարածված են Բալկանյան թերակղզու հարավ-արևելյան մասում և հյուսիսային Իրանում: Այս տեսակը հայտնի է նաև Ուկրաինայից, Վրաստանից և հարավ-արևելյան Ադրբեջանից:

Հայաստանում հանդիպում է միայն հյուսիսային մասի անտառային շրջաններում (Դիլիջան, Վանաձոր, Թումանյան, Ստեփանավան) (քարտեզ 30):

Ապրելավայրերը: Հանդիպում է առավելապես սաղարթավոր անտառներում, որտեղ մնում է անտառեզրերում և բացատներում, ճամփեզրերում, թփուտային բացատների շրջակայքում, նաև անհետացող անտառներում: Թաքնվում են կրծողների բներում, արմատների տակ և այլն:



Քարտեզ 30. Մարգագետնային մողեսի տարածվածությունը Հայաստանում:

Կենսաբանության առանձնահատկությունները: Սնվում են մրջյուններով, մորեխներով և մանր միջատներով: Չմեռումից դուրս է գալիս ապրիլի վերջին: Ձուգավորումը սկսվում է մայիսի վերջին: Չվաղորում են հունիսի կեսերին-հուլիսի սկզբին: Չվերի քանակը՝ 2-6 ծու: Չագերը դուրս են գալիս օգոստոս-սեպտեմբեր ամիսներին: Թվաքանակի փոփոխությունները հայտնի չեն:

Կարգավիճակը: Տեսակն ընդգրկված է Հայաստանի Հանրապետության Կարմիր գրքում և Բնության Պահպանության Միջազգային Միության Կարմիր ցուցակում «Near Threatened» կարգավիճակով և չափորոշիչներով զնահատվում է որպես «խոցելի»՝ տեսակ: Պահպանվում է «Դիլիջան» ազգային պարկում:

Ցեղ Պարվիլացերտա - *Parvilacerta*

Ցեղն ունի երկու տեսակներ, որոնցից մեկը հանդիպում է Հայաստանի հանրապետության տարածքում:

24. Փորքասիական մողես - *Малоазиатская ящерица - Parvilacerta parva* (Boulenger, 1887)

Տիպային տարածքը՝ Կայսարիա (Փոքր Ասիա)

Lacerta parva Boulenger 1887

Lacerta (Parvilacerta) parva, Harris et al. 1998:1947. [subgenus *Parvilacerta* considered a nomen nudum]

Parvilacerta parva, Arnold et al. 2007

L 61 մմ, L/L.c.d. – 0.54-0.83, s.g. 29-43

Չևարանական հատկանիշները: Միջոնոտային վահանիկը չի կաչում քթանցքերին և նրանցից անջատված է լայն կարով: Հետքթանցքային վահանիկը 2 կամ, հազվադեպ, 1-ն է: Ունեն առաջնային և հետին այտային վահանիկներ: Վերթարթիչային և վերաչքային վահանիկների միջև մեծմասամբ ունեն 2-14 հատիկավոր թեփուկներից կազմված շարք, որն ընդհատվում է: Թմբկային և կենտրոնական քունքային վահանիկների միջև դասավորված են երկու խոշորացված թեփուկներ: Ենթաչքային վահանիկի առջևի վերին անկյունը երկարացած է և հասնում է աչքի եզրին կամ մի փոքր առաջ է ընկնում: Ենթաչքային վահանիկից առաջ ունեն 4 վերշրթնային վահանիկներ: Ստորոնոտային վահանիկները 5, երբեմն 6 զույգ են, որոնցից առաջին երեքը կաչում են իրար: Կոկորդային թեփուկները 14-22 են, մարմնական թեփուկները վեցանկյունանի են և երկարությամբ ձգված տեսք ունեն: Պարանոցի և կողքերի վրա նրանք հարթ են, իսկ պոչի և մեջքի վրա երկայնական:



Ազդրային անցքերը 13-20 հատ են: Փորային վահանիկները դասավորված են 8 երկայնական շարքերով, որոնցից փորի երկու կողմերի եզրայինները նեղ են և լավ երևում են: Հետանցքային վահանիկը շրջապատված է 6-8 նախահետանցքային վահանիկներով: Նրա լայնությունը 1.2-1.8 անգամ գերազանցում է երկարությանը:

Մարմնի վերին մասը մոխրագույն, կանաչամոխրագույն կամ սրճագույն է: Մարմնի միջին մասի երկարությամբ անցնում է բաց գույնի լայն շերտ, որի լայնությունը մոտավորապես հավասար է ծոծրակային վահանիկի լայնությանը: Նրա կողքերով անցնում է մուգ սրճագույն բծերից կազմված մի շարք, որը վերևից և ներքևից բաժանված է բաց գծիկներով կամ շերտերով: Փորը սպիտակ, դաչնագույն, կանաչա-դեղնավուն և վառ դեղնականաչավուն է (Նկ. 91):



Նկ. 91. Փոքրասիական մողես:

Տարածվածությունը: Տարածված են Փոքր Ասիայում, Հայաստանում և հյուսիսարևմտյան և կենտրոնական Ադրբեջանում: Հայաստանում այս տեսակը հանդիպում է Սպիտակի շրջանի դժվարամատչելի և չնշակված տեղամասերում, Շիրակի մարզի Լանջ գյուղի շրջակայքում: Հայտնաբերված է նաև Տավուշի ջրամբարի հյուսիսային ափերին (քարտեզ 31):



Քարտեզ 31. Փոքրասիական մողեսի տարածվածությունը Հայաստանում:

Ապրելավայրերը: Ապրում է չորասեր մոսր բուսածածկով, քարքարոտ լեռնաքսերոֆիտային տափաստաններում:

Կենսաբանության առանձնահատկությունները: Սնվում է սարդերով, ինչպես նաև մորեխներով և այլ միջատներով: Տարեկան ծվադրում է երկու անգամ՝ հունիսի վերջին և օգոստոսի սկզբին: Զվակույտում լինում է 2-5 ծու: Զագերը դուրս են գալիս հուլիսի վերջին և սեպտեմբերին:



Կարգավիճակը: Խիստ սակավաթիվ, անհետացող տեսակ է: Գրանցված է Հայաստանի Կարմիր գրքում: Տեսակն ընդգրկված է ԲՊՄՍ Կարմիր ցուցակում «Least Concern» կարգավիճակով և գնահատվում է որպես «Կրիտիկական վիճակում գտնվող» տեսակ:


Ցեղ - Կանաչ մողեսներ - Lacerta, Linnaeus, 1758

Խոշոր մողեսներ են, որոնց չափերը հասնում են 20-40 սմ: Գլուխը վերևից ներքև հաստացած է, մարմնի մեջքային թեփուկները ձգված են երկարությամբ. վեցանկյունանի են և ունեն կողիկներ: Կոպերը շարժուն են: Ճակատային վահանիկը լայնացած է և միջին մասում սեղմված չէ: Ունեն ծոծրակային վահանիկ: Քթանցքերը կաշուն են առաջին վերջուրային վահանիկին կամ անջատված են նրանից նեղ կապով: Ունեն օձիք: Փորային վահանիկները դասավորված են ուղիղ երկայնական և լայնական շարքերով: Ունեն հետանցքային վահանիկ և ազդրային անցքեր: Ունեն հստակ արտահայտված սեռական դիմորֆիզմ, որն արտահայտվում է մարմնի մեջքային մասի նախշի փոփոխությամբ: Երիտասարդ առանձնյակների մեջքային մասը հաճախ կեղտա-կանաչավուն է, իսկ հասուն առանձնյակներինը՝ վառ կանաչավուն և կրում է մուգ գույնի բծեր: Այս ցեղն իր մեջ ընդգրկում է 40-ից ավելի տեսակներ, որոնք տարածված են Եվրոպայում, Արևելյան Ասիայում, ինչպես նաև Հյուսիսային և արևադարձային Աֆրիկայում: Նախկին ԽՍՀՄ-ի տարածքում հանդիպում էին 20-ից ավելի տեսակներ, որոնց մեծ մասը ապրում է Կովկասում և Անդրկովկասում: Հայաստանում հանդիպում են 3 տեսակներ:

Կանաչ մողեսների ցեղի տեսակները որոշելու աղյուսակ

1 (2) Ազդրային անցքերի շարքը կարճ է և չի հասնում ծնկի ծալատեղին (նկ. 92): Ունի 3 կամ 4 զույգ ստործնոտային վահանիկներ:

Միջին մողես - Lacerta media. (տջ 106)



Նկ. 92. Ազդրի ստորին մասում գտնվող ազդրային անցքերի շարքը: 1 – ճարպիկ մողես, 2 – միջին մողես:

2 (1) Ազդրային անցքերի շարքը հասնում է ծնկի ծալատեղին (նկ. 92): Ունի 5 զույգ ստործնոտային վահանիկներ:3

3 (4) Միջծնոտային վահանիկը հաճախ կաշուն է քթանցքերին կամ բաժանվում է նրանից նեղ կապով (նկ. 93): Ենթաաչքային վահանիկից առաջ ունեն 4 երբեմն 3- 5 վերջուրային վահանիկներ: Մարմնի շուրջը թեփուկների թիվը կազմում է 38-46: Միշտ ունեն թմբկային վահանիկ:

Շերտավոր մողես - Lacerta strigata (տջ 108)



Նկ. 93. Միջճնոտային վահանիկ: ա - շերտավոր մողես- կաչում է քթանցքին, բ- ճարպիկ մողես - չի կաչում քթանցքին:

4 (3) Միջճնոտային վահանիկը բաժանված է քթանցքերից շատ թե քիչ լայն կապով: Թմրկաթաղանթային վահանիկ հիմնականում չունեն (Նկ. 93): Մարմնի շուրջը թեփուկների թիվը կազմում է 33-54:

ճարպիկ մողես - *Lacerta agilis* (տջ 109)

25. Միջին մողես - Средняя ящерица - *Lacerta media* Lantz and Cyren, 1920

Տիպային տարածքը՝ Դունաստան

Lacerta viridis (partim) Kessler, 1878
Lacerta viridis media Lantz and Cyren 1920
Lacerta media, Chernov 1939

L 155 մմ, L/L.c.d. – 0.43-0.60, S.q. 44-56

Չևարանական հատկանիշները: Միջճնոտային վահանիկը կաչում է քթանցքերին: Դետքային և այտային վահանիկները 2-ն են: Ենթաաչքային վահանիկից առաջ ունեն 4 վերշրթնային վահանիկներ: Ստորաչքային վահանիկները հիմնականում 4 զույգ են, որոնցից 3-ը կաչում են իրար: Ենթաաչքային վահանիկի առջևի վերին եզրը չի հասնում աչքի առջևի եզրին: Վերթարթիչային վահանիկների և վերաչքայինների միջև գտնվող հատիկավոր թեփուկների շարքը չի ընդհատվում: Կենտրոնական քունքային վահանիկն արտահայտված չէ: Ունեն թմրկային վահանիկ: Վերին քունքային վահանիկները երկուսն են, երբեմն՝ երեքը, որոնցից առաջինն ամենամեծն է: Մարմնի թեփուկները վեցանկյուն ձգված են և ունեն լավ զարգացած կողիկներ: Փորային վահանիկները դասավորված են 6 երկայնական շարքերով, սակայն կողքային մարմնական թեփուկները հաճախ այնքան են խոշորացած, որ յուրաքանչյուր կողքից առաջացնում են լրացուցիչ շարք: Կոկորդային թեփուկները կոկորդի միջին գծով մինչև օձիք՝ 17-23 են: Ազդրային անցքերի շարքը կարճ է (11-16) և վերջանում է ծնկի ծավածքից բավական հեռու: Դետանցքային վահանիկների լայնությունը 1.6-2.3 անգամ ավել է երկարությունից և առջևից շրջապատված է 7-10 վահանիկներով, որոնցից 2 միջիններն ամենամեծն են:

Մարմնի վերին մասը երիտասարդների մոտ մուգ սրճագույն կամ մուգ դարչնագույն է և ունի 5 բավականին նեղ, բաց կանաչավուն շերտեր, որոնցից միջինը հաճախ կտրտված կամ ծռնված է: Դասակի փոփոխման հետ այդ շերտերն աստիճանաբար անհետանում են և հասուն ձևերի մոտ ամբողջ մարմինը և գլուխը ստանում



են վառ կանաչ գունավորում պատված մանր, սև կետիկներով կամ շերտերով: Էգերի փորը, երբեմն նաև կոկորդային մասը, սպիտակ կամ դեղնավուն է, իսկ արունների՝ դեղնականաչավուն կամ կանաչա-դեղնավուն: Արունների բազմացման ժամանակ մարմնի կողքերը, գլուխը և կոկորդային մասը ստանում են կապտաերկնագույն գունավորում, իսկ մարմինը մնում է վառ կանաչավուն (նկ. 94):



Նկ. 94. Միջին մողես: 1,3-էգ, 2-արու:

Տարածվածությունը: Տարածված են հարավ-արևելյան Բուլղարիայում, կենտրոնական և արևելյան Թուրքիայում, հյուսիս-արևմտյան Իրանում, Ղաղստանում, Վրաստանում, արևմտյան Ադրբեջանում և Հայաստանում:


Հայաստանում տարածված են Նոյեմբերյանի, Թումանյանի, Կոտայքի, Տավուշի, Մարտունու, Վարդենիսի, Կապանի, Սպիտակի, Եղեգնաձորի, Թալինի, Իջևանի, Աշտարակի (Արագածի հարավային լանջերին), Գորիսի, Սիսիանի, Արարատի շրջակայքում և Լեռնային Ղարաբաղի հանրապետությունում (քարտեզ 32):

Ապրելավայրերը: Հանդիսանում է իսկական թփուտային մողես և միշտ ապրում է ծառերի և թփերի մոտակայքում: Հանդիպում է կուտակված քարերի տակ, կրծողների բներում, խաղողի դաշտերում և այգիներում, ինչպես նաև չոր խոտով պատված տարածքներում: Որպես թաքստոց օգտագործում է կրծողների բները: Կարող է նաև բներ փորել մինչև 1 մետր և ավել խորությամբ:

Կենսաբանության առանձնահատկությունները: Շատ շարժուն մողես է: Փախչելուց կամ զոհին հետևելիս կարող է բարձրանալ ծառերի վրա, հետո ցատկել մինչև 3 մետրանոց բարձրությունից: Սնվում է միջատներով և այլ անողնաշար կենդանիներով: Հազվադեպ ուտում է փոքր մողեսներին, երբեմն նաև սեփական ծագերին: Բազմացման շրջանը սկսվում է ծմեռային քնից դուրս գալուց անմիջապես հետո՝ ապրիլին: Սեզոնի ընթացքում ձվադրում է 1, երբեմն նաև 2 անգամ՝ դնելով 9-12 ձու:



եզը պաշտպանում է ձվերը: Չափերը ծվից դուրս են գալիս մայիսին՝ 29-35 մմ չափերով: Սեռահասուն է դառնում 2 տարեկանում, երբ մարմնի երկարությունը դառնում է 90-95 մմ:
Կարգավիճակը: Կայուն թվաքանակ ունեցող մողես է:



Քարտեզ 32. Միջին մողեսի տարածվածությունը Հայաստանում և Լեռնային Ղարաբաղում:

26. Շերտավոր մողես - Полосатая ящерица - *Lacerta strigata* Eichwald, 1831.

Տիպային տարածքը՝ Կրասնովոդսկ

Lacerta viridis (partim) Kessler, 1878

Lacerta strigata Eichwald 1831

Lacerta viridis var strigata, De Filippi 1865

L 112 մմ, L/L.c.d. – 0,43-0,6, S.q. 37-46

Չևարանական հատկանիշները: Միջնոտային վահանիկը կաչում է քթանցքերին կամ նրանցից անջատվում է կարճ կարով: Հետքային վահանիկները երկուսն են, այտայինները երկու, երբեմն երեքը: Ենթաաչքային վահանիկներից առաջ ունեն 4, երբեմն 3 կամ 5 վերշրթնային վահանիկներ: Ստործնոտային վահանիկները 5 գույգ են:

Վերթարթիչային և վերաչքային վահանիկների միջև ունեն 10-11 հատիկավոր թեփուկներ: Կենտրոնական, քունքային և թմբկային վահանիկները միշտ առկա են: Վերքունքային վահանիկները 2-ն են, որոնցից առաջինը խոշոր է: Մեջքային թեփուկները երկարությամբ ձգված վեցանկյունանի են: Կոկորդային թեփուկների քանակը կոկորդի միջին գծով մինչև օձիքը 16-22 է: Ազդրային անցքերը 15-21, հաճախ 17-18: Հետանցքային վահանիկի լայնությունը 1.4-1.8 անգամ գերազանցում է նրա երկարությանը: Հետանցքային վահանիկն առջևից շրջապատված է 7-10, մեծությամբ հավասար նախահետանցքային վահանիկներով:

Երիտասարդների մարմնի վերին մասը սրճագույն է, 5 բաց գույնի մեղ շերտերով, որոնցից միջին շերտը սկսվում է ծոծրակային վահանիկից, նրա հարևան 2-ը՝ հետին վերթարթիչային վահանիկներից, իսկ կողքայինները՝ ականջի ետին եզրից: Հասակի հետ այդ շերտերի միջև առաջանում են բավականին խոշոր մուգ դարչնագույն սև շերտեր կամ բծեր: Մեծահասակ մողեսների մեջքային բաց գույնի շերտերն աստիճանաբար ծուլվում են մարմնի ֆոնի հետ: Հասունների մարմինը կանաչ է, բազմաթիվ մանր, սև գույնի, անկանոն դասավորված բծերով և շերտերով, որոնք գլխի վրա բացակայում են: Բազմացման ժամանակ գլուխը, կոկորդային մասը և պարանոցի եզրերը ստանում են կապույտ գունավորում: Արուների փորը կանաչավուն կամ կանաչադեղնավուն է, էզերինը՝ սպիտակ (նկ. 95):



Նկ. 95. Շերտավոր մողես:

Տարածվածությունը: Տարածված են Բալկանյան թերակղզու արևելյան մասում, Փոքր Ասիայում, Սիրիայում, Իրաքում և Իրանում, Անդրկովկասում, Թուրքմենիայում, Հյուսիսային Կովկասում:

Հայաստանում *Laceta strigata*-ի տարածման գոտին բավական կտրուկված է: Նա ընդգրկում է հյուսիսում Քուռ գետի վտակները, հարավում՝ Արաքս գետի հովիտը: Բացի դրանից մեկուսացված պոպուլյացիաներ կան Սևանա լճի ավազանում: Հանդիպում է Լեռնային Ղարաբաղի հանրապետությունում (քարտեզ 33):



Քարտեզ 33. Շերտավոր մողեսի տարածվածությունը Հայաստանում և Լեռնային Ղարաբաղում:

Ապրելավայրերը: Բնակվում է լեռնատափաստանային, չոր անտառային գոտիներում: Բարձրանում է մինչև 2500 մ բարձրությունների վրա: Ապրում է քիութային բուսականությամբ կիսաանապատային տարածքներում, այգիներում, քարքարոտ տեղանքներում:

Կենսաբանության առանձնահատկությունները: Չմեռումից դուրս են գալիս մարտի վերջերին: Չմեռման զնուն են հոկտեմբերի կեսին: Ակտիվ են ապրիլի սկզբից: Սնվում են միջատներով, մորեխներով, սարդերով և այլն:

Տարեկան ծվադրում են 2 անգամ: Առաջին ծվադրումը Արաքսի հովտում հունիսի սկզբներին է, Սևանի ավազանում՝ հունիսի վերջերին: Երկրորդ ծվադրումը կատարվում է հուլիսի կեսերին: Չվերի քանակը տատանվում է 5-9:

Կարգավիճակը: Ունեն բավարար թվաքանակ և կայուն կարգավիճակ:

27. Ճարպիկ մողես - Прыткая ящерица - *Lacerta agilis* Linnaeus, 1758

Տիպային տարածքն է՝ Հարավային Շվեդիան



- Lacerta agilis* Linnaeus, 1758
- Lacerta agilis* var. *orientalis* Kessler 1878
- Lacerta exigua* Eichwald 1831
- Lacerta agilis exigua*, Chernov 1939



Lacerta agilis brevicaudata Peters 1958

L. 114 մմ, L/L.c.d. – 0,53-0,77, S.q. 40-54

Չևարանական հատկանիշները: Միջծնոտային վահանիկը մեծ մասամբ չի կպչում քթանցքերին: Հետքթային վահանիկները երկուսն են: Այտային վահանիկներն ընդհանրապես 3, երբեմն՝ երկուսն են: Վերին առաջնայտային վահանիկը շրջապատված է հետայտային, նախաճակատային, առաջնաքթային, հետքթային և ստորայտային վահանիկներով: Վերթարթիչային և վերաչքային վահանիկների միջև հատիկավոր թեփուկներ չկան կամ երբեմն ունենում են 1-3 թեփուկ: Ենթաչքային վահանիկի առջևի վերին եզրը չի հասնում աչքի առջևի եզրին: Ունեն երկու խոշոր վերթունքային վահանիկներ: Աչքային վահանիկը հիմնականում բացակայում է (նկ. 96): Հայաստանում հանդիպում է *L.a.brevicaudata* ենթատեսակը:



Նկ. 96. ճարպիկ մողեսի գլուխը կողքից:
Վահանիկներ. 1- միջծնոտային, 2- վերշրթնային, 3- ենթաաչքային, 4- հետքթային, 5- առջևի այտային, 6- հետին այտային, 7- վերթարթիչային:

Մեջքային թեփուկները ձգված են երկարությամբ և ունեն լավ երևացող կողիկներ: Փորային վահանիկները դասավորված են 6 երկայնական շարքերով: Կոկորդային թեփուկների քանակը կոկորդի միջին գծով մինչև օձիքը 15-23 է: Ազդրային անցքերը 11-19, հաճախ 13-14 և դրանց շարքը հասնում է ծնկի ծալին: Հետանցքային վահանիկը լայնացած է և նրանից առաջ գտնվում են 2 նախահետանցքային վահանիկներ: Հետանցքային վահանիկի լայնությունը գերազանցում է նրա երկարությանը արունների մոտ 1.6-3.5 և էգերինը՝ 1.8-2.6 անգամ:

Մարմնի գունավորումը շատ փոփոխական է: Երիտասարդների մարմնի վերին մասը գորշ մոխրագույն է և ունի բաց գույնի, կողքերից եզրավորված ավելի մուգ երեք շերտ: Նրանցից միջինը սկիզբ է առնում ծոծրակային վահանիկից և հասնում է մինչև պոչի հիմքը: Մյուս երկուսն ավելի լայն են և անցնում են մեջքի կողքերով:

Հասակի հետ պատկերը փոխվում է: Բաց մարմնական շերտերն անհետանում են, իսկ նրանց եզրապատող մուգ գծերը փոխվում են գորշ, մուգ գորշ կամ սև գույնի, խոշոր, անկանոն ձևի առանձին շերտերի: Այդպիսի շերտեր հայտնվում են էգերի մարմնի կողքերին: Առանձին դեպքերում էգերի մոտ այդպիսի շերտեր չեն զարգանում և նա լինում է միագույն, մուգ կամ սև հատիկներով: Արունների մարմնի գունավորումը հաճախ կանաչ է՝ առանց շերտերի և գծերի: Էգերի մեծ մասի գունավորումը դարչնագույն կամ գորշ սրճագույն է (այդ դեպքում մեջքին և կողքերին մնում են մուգ շերտեր), մյուս մասը զրկված է շերտերից և մեջքը, գլուխը և կոկորդը բաց կանաչավուն են: Հասուն մողեսների փորը սպիտակ կամ կանաչավուն է, սովորաբար խոշոր սև շերտերով (նկ. 97):




Նկ. 97. Ճարպիկ մողեսի տարբեր գունավորում ունեցող առանձնյակներ:

Տարածվածությունը: Տեսակի տարածման գոտին ընդգրկում է Եվրոպայի մեծ մասը, Ղրիմը, Հյուսիսային Կովկասը, Անդրկովկասը, Սիբիրը, Ղազախստանը, Ղրղզստանը, Հյուսիսային Մոնղոլիան և հյուսիս-արևմտյան Չինաստանը:

Հայաստանում տարածված են Դուկասյանի, Ստեփանավանի, Հրազդանի, Վարդենիսի, Արարատի, Վանաձորի, Ախուրյանի, Արթիկի, Ապարանի, Սպիտակի, Սևանի շրջաններում (քարտեզ 34):

Ապրելավայրերը: Ապրում են քարքարոտ լեռնաքսերոֆիտային տափաստաններում: Երբեմն հանդիպում են անտառային գոտում:



Քարտեզ 34. Ճարպիկ մողեսի տարածվածությունը Հայաստանում:

Կենսաբանության առանձնահատկությունները: Սնվում են միջատներով, սարդերով, թրթուրներով և այլն: Տարեկան ծվադրում են, ըստ երևույթին, 2 անգամ: Առաջին ծվադրումը տեղի է ունենում հունիսի վերջերին: Չվերի քանակն առաջին ծվադրման դեպքում մեծ մասամբ 9-10 է:

Կարգավիճակը: Ունեն կայուն թվաքանակ:

Ցեղ Ավազային մողեսիկներ - *Eremias Fitzinger inWiegmann, 1834*

Փոքր և միջին չափի մողեսներ են: Փորային վահանիկները քառանկյուն են և թեք շարքերով դասավորված են փորի միջին գծի նկատմամբ անկյան տակ (Նկ. 59): Թթանցքերը չեն կաչում վերջրթնային վահանիկներին: Ճակատային վահանիկը նեղ է:



Նրա լայնությունը ճակատագագաթային վահանիկների սահմանում 2 անգամ կարճ է մեծ վերաչքայինների միջև եղած կարից: Ծոծրակային վահանիկ մեծ մասամբ չունեն: Քթային 3-4 վահանիկների միջև գտնվող քթանցքերը բաժանված են վերշրթնային վահանիկներից: Սեռքային թեփուկները հատիկավոր են, հարթ են կամ ունեն բութ կողիկներ: Հետանցքից առաջ սովորաբար դասավորված են մանր, անկանոն ձևի վահանիկներ: Ունեն ազդրային անցքեր:

Ցեղն իր մեջ ընդգրկում է մինչև 50 տեսակներ, որոնք տարածված են Աֆրիկայում, հարավ-արևմտյան Եվրոպայում, Միջին և Կենտրոնական Ասիայում, հյուսիսային Չինաստանում, Կորեայում և նախկին ԽՍՀՄ-ում: Հայաստանում հանդիպում են 3 տեսակներ:

Ավազային մողեսիկների ցեղի տեսակների որոշման աղյուսակ

1 (2) Ենթաչքային վահանիկը չի կաչում բերանի անկյունին և նրանից անջատված է փոքր վերշրթայինով (Նկ. 98):

Անդրկովկասյան բազմագույն մողեսիկ - *Eremias arguta transcaucasica* (էջ 113)



Նկ. 98. Ենթաչքային վահանիկը: 1- *E. arguta* չի հասնում բերանի անկյունին, 2- *E. strauchi* կաչում է բերանի անկյունին:


2 (1) Ենթաչքային վահանիկը կաչում է բերանի անկյունին (Նկ. 98):

3 (4) Վերաչքային վահանիկները ճակատագագաթային վահանիկներից անջատված են հատիկավոր թեփուկների լրիվ շարքով: Ազդրային անցքերի շարքերի միջև դասավորված են 5-9 թեփուկներ (Նկ. 99):

Անդրկովկասյան մողեսիկ - *Eremias pleskei* (էջ 115)

4 (3) Վերաչքային վահանիկները ճակատային և ճակատագագաթային վահանիկներից անջատված չեն հատիկավոր թեփուկների շարքով: Ազդրային անցքերի շարքերի միջև դասավորված են 2-4 թեփուկներ (Նկ. 98):

Շտրաուսի մողեսիկ - *Eremias strauchi* (էջ 117)



Նկ. 99. Ազդրային անցքերի շարքը: 1- *E. plieskei* կազմված է 5-9 ազդրային անցքերից; 2- *E. strauschi* կազմված է 2-4 ազդրային անցքերից:

28. Անդրկովկասյան բազմագույն մողեսիկ - Закавказская разноцветная ящурка - *Eremias arguta* Pallas, 1773

Տիպային տարածքը գտնվում է Ուրալ և Էմբա գետերի միջև

Eremias arguta transcaucasica Darevsky 1953

Lacerta arguta Pallas 1773

Eremias arguta, Boettger 1892

L. 85 մմ, L/L.c.d. – 0.97-1.10, S.q. 41-62, G.24-29, P.fm 5-12,

Չևարանական հատկանիշները: Վերաչքային վահանիկները, ճակատային և ճակատա-գագաթային վահանիկներից անջատված չեն հատիկավոր թեփուկներով: Ստորաչքային վահանիկը չի կպչում բերանի անկյունին: Նախաճակատային վահանիկների միջև հաճախ ունենում են փոքրիկ միջճակատային վահանիկ: Ստորոնտային վահանիկները 4, երբեմն 5 գույգ են, որոնցից վերջին երկուսը սովորաբար անջատված են ստորշրթայիններից փոքրիկ վահանիկներով: Մարմնի թեփուկները հարթ են: Կոկորդային թեփուկների քանակը 24-38 է: Ազդրային անցքերը 8-12, հաճախ 8-10 են: Նրանց շարքը կարճ է և չի հասնում ծնկի ծալքին: Ազդրային անցքերի շարքերի միջև դասավորված են 8-16 թեփուկներ: Երիտասարդների մարմնի վերին մասը գորշ-մոխրագույն է և ունի 6-8 շարքերով դասավորված սպիտակ կետիկներ, որոնք շրջապատված են սև գույնի օղակներով: Սպիտակ կետիկներ կան առջևի և հետևի վերջույթույնների վերին մակերևույթին:

Հասուն առանձնյակների մարմնի վերին մասը մոխրագույն կամ դարչնա-մոխրագույն է և իր վրա ունի քիչ թե շատ լայնակի շարքերով հավասար դասավորված սև կամ սև-գորշագույն շերտեր, որոնց արանքում դասավորված են մարմնի գույնից բաց գույնի կետիկներ: Մարմնի ստորին մասը սպիտակ կամ դեղնավուն է (Նկ. 100):

Տարածվածությունը: Լայն տարածում ունի Հյուսիս արևելյան Ռուսիայից մինչև հարավ արևմտյան Մոնղոլիա: Նախկին ԽՍՀՄ-ում տարածված էր Միջին Ասիայում, Ղազախստանում, Կովկասում և Անդրկովկասում: Տարածման արեալում նկարագրված են 5 ենթատեսակներ: Հայաստանում հանդիպում է Անդրկովկասյան բազմագույն մողեսիկի՝ *E. arguta transcaucasica* ենթատեսակը, որը Հայաստանում նկարագրվել է 1953 թ. Ի.Ս.Ղարևակու կողմից: Ենթադրվում է, որ այդ ենթատեսակը



Նկ. 100. Անդրկովկասյան բազմագույն մողեսիկ:

հանդիպում է նաև Լեռնային Ղարաբաղում (քարտեզ 35):

Հայաստանում հայտնի միակ պոպուլյացիան գտնվում է Սևանա լճի հարավային ափին, Նորադուզ գյուղի շրջակայքի կիսաանապատային տարածքում:

Ապրելավայրերը: Բնակվում է ինչպես փուխր, այնպես էլ կարծր հողերով տեղամասերում՝ բնակեցնելով Սևանա լճի ջրավազանի Լեռնաքսերոֆիտային և ավազուտային տափաստանները: Թաքնվում են կրծողների բներում, քարերի կուտակումների, թփուտների տակ:



Քարտեզ 35. Բազմագույն մողեսիկի տարածվածությունը Հայաստանի Հանրապետությունում և Լեռնային Ղարաբաղում:

Կենսաբանության առանձնահատկությունները: 1961թ-ին ք. Սարտունու շրջակայքում պահպանված վերջին 27 հասուն մողեսիկները որսվել են Սևանա լճի ափի և մշակովի դաշտերի միջև մնացած նեղ հողաշերտում և բաց են թողնվել գ. Նորադուզի մոտակայքում գտնվող կիսատափաստանային տարածքում: Այդ առանձնյակներն առաջացրել են նոր պոպուլյացիա, որն աստիճանաբար լայնացնում է իր սահմանները: Ներկայումս դրանց թվաքանակը կազմում է 80–150 առանձնյակ:



Չմեռումից դուրս են գալիս վաղ գարնանը: Ակտիվ են ապրիլի վերջից մինչև սեպտեմբերի կեսերը: Հանդիպում են հիմնականում չոր և տաք հողի վրա: Խոնավ հողի վրա դժվար է նրանց հանդիպել: Մեծ տեղաշարժեր չեն կատարում և ապրում են 40-49 հա տարածքում: Սնվում են միջատներով՝ թիթեռներով և բզեզներով: Չվաղրում են հունիսի կեսերին, եղը դնում է 13-14 սմ մեծության 4-5 ծու: Չագերը հայտնվում են սեպտեմբերի սկզբին:

Կարգավիճակը: Խիստ սակավաթիվ, հիմնական արեալից կտրված, միայն Հայաստանում հանդիպող, անհետացող ենթատեսակ է: Ենթատեսակն ընդգրկված է Հայաստանի Հանրապետության Կարմիր գրքում: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով «Critically Endangered A2c» կարգավիճակով գնահատվում է որպես «Կրիտիկական վիճակում գտնվող» տեսակ:

29. Անդրկովկասյան մողեսիկ - Закавказская ящурка - *Eremias pleskei* Bedriaga, 1905

Տիպային տարածքն է Նախիջևանը (Ադրբեջան)

Eremias pleskei, Bedriaga 1906[1905]
Eremias fasciata pleskei Nikolsky 1915

L. 60 մմ, L/L.c.d. – 0,48-0,60, S.q. 48-62

Ձևաբանական հատկանիշները: Վերնաչքային վահանիկները սովորաբար շրջապատված են հատիկավոր թեփուկների լրիվ շարքով, որոնք նրանց բաժանում են ճակատային, ճակատաքթային և վերթարթիչային վահանիկներից: Ստորին քթային վահանիկը չի կաչում միջծնոտայինին: Առաջին վերնաչքայինից վահանիկից առաջ դասավորված են 1-2 ոչ մեծ վահանիկներ և մինչև 7 մանր, հատիկավոր թեփուկներ: Ենթաաչքային վահանիկը կաչում է բերանի եզրին: Դրանից առաջ դասավորված են սովորաբար 5 վերշրթնային վահանիկներ: Ստործնոտային վահանիկները 5 գույգ են: Նրանցից 3-ը կոկորդի միջին զծի ուղղությամբ կաչում են իրար: Ազդրային անցքերը 13-18, հաճախ՝ 15-16 են: Նրանց շարքերի միջև դասավորված են 5-9 թեփուկներ:

Երիտասարդների մարմնի վերին մասը թավշանման սև է և ունի 8 սպիտակ կամ դեղնավուն շերտեր, որոնք անցնում են մեջքի և կողքերի երկարությամբ: Նրանցից 2 միջինները սկսվում են գազաթային վահանիկների եզրերից և հաճախակի կտրատված են լինում, իսկ երկու ավելի լայնները սկսվում են քունքային մասից և հասնում են մինչև պոչը: Հասակի հետ մարմինը դառնում է մոխրագույն կամ դարչնամոխրագույն, իսկ շերտերը կորցնում են իրենց պարզությունը: Փորային մասը սպիտակավուն կամ բաց դեղնագույն է, դեղին գույնը անցնում է պոչի ստորին մասով ընդգրկելով նաև ազդրերի որոշ մասը: Չվից նոր դուրս եկած մողեսների պոչի ծայրը գորշ է: Մի քանի օր հետո պոչի հետին մասը ներքևից սկսում է դեղնել և այդ գույնը աստիճանաբար տարածվում է պոչի ներքին մակերեսով: Այդ գունավորումը մնում է մինչև նրանց սեռահասուն դառնալը (նկ. 101):

Տարածվածությունը: Տարածված է հյուսիս արևելյան Թուրքիայում, հյուսիս արևմտյան Իրանում և Արաքս գետի միջին հոսանքի ձախափնյա տարածքում: Հայաստանում հանդիպում է Արաքս գետի ձախափնյա հովտում՝ ք. Էջմիածնից արևմուտք, մինչև Մեղրու լեռնաշղթայի հարավային նախալեռները (քարտեզ 36):

Ապրելավայրերը: Բնակվում է հիմնականում ավազուտներում, քարքարոտ օշինդրային և աղուտային կիսաանապատներում: Անդրկովկասյան մողեսիկն իր



ապրելավայրում թաքնվում է կրծողների և կրիաների բներում, իշակաթնուկի, գազի, թփերի հիմքում: Տարիներ առաջ բավականին շատ հանդիպում էր Արարատյան հարթավայրի կիսաանապատային և անապատային լանդշաֆտներում: Արարատյան հարթավայրի կիսաանապատային տարածքների օգտագործման հետևանքով այդ մողեսիկների թվաքանակը կտրուկ նվազել է:



Նկ. 101. Անդրկովկասյան մողեսիկ:

Կենսաբանության առանձնահատկությունները: Չմեռումից դուրս է գալիս ապրիլին և ծմեռելու է գնում դեռ տաք սեպտեմբերին: Սնվում է մանր բզեզներով, թաղանթաթևավորներով, երկթևանիներով, թրթուրներով, մրջյուններով և սարդերով: Ակտիվ է ամբողջ օրվա ընթացքում: Արագ շարժվում է: Տեղաշարժման ընթացքում յուրաքանչյուր մեկ մետր անցնելուց հետո կենդանին կանգնում է, պոչը առաջ է բերում և մի քանի անգամ առջևի վերջույթները բարձրացնում և իջեցնում է: Կենդանու այս վարքագիծը շատ բնութագրական է և թույլ է տալիս նրան տարբերել այդ տարածքում ապրող այլ մողեսներից:



Քարտեզ 36. Անդրկովկասյան մողեսիկի տարածվածությունը Հայաստանում:

Բազմացման սեզոնը սկսվում է ապրիլի կեսից և տևում է մինչև հունիսի կեսը: Զուգավորումը տեղի է ունենում ապրիլից մինչև հունիսի առաջին կեսը: Չվաղրումը (3-4 ծու) տեղի է ունենում հունիսից մինչև օգոստոսի սկիզբը: Առաջին տարվա ծագերը հանդիպում են հուլիսի կեսերից մինչև սեպտեմբերի վերջը:



Նեղ արեալ ունեցող, քանակապես կրճատվող տեսակ է: Վերջին 10–15 տարիների թվաքանակը կտրուկ կրճատվել է, ոչնչացվել են Արաքս գետի հովտի մի շարք պոպուլյացիաներ: Արարատյան հարթավայրի մեծ մասում ամբողջովին վերացել է:

Կարգավիճակը: Գրանցված է Հայաստանի Հանրապետության Կարմիր գրքում: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով «Critically Endangered A2c» կարգավիճակում և զնահատվում է որպես «Կրիտիկական վիճակում գտնվող» տեսակ:

30. Շորաուխի մողեսիկ - Ящурка Штрауха - *Eremias strauchi* Kessler, 1878

Տիպային տարածքը` էքնիածին (Հայաստան)

Eremias strauchi Kessler, 1878
Eremias velox strauchi Nikolsky 1915

L. 80 մմ, L/L.c.d. – 0,50-0,70, S.g. 44-69, G. 24-36

Չևարանական հատկանիշները: Վերնաչքային վահանիկներն անջատված չեն ճակատային և ճակատագագաթային վահանիկներից հատիկավոր թեփուկների շարքով: Ստորին քթային վահանիկը սովորաբար չի շփվում միջծնոտային վահանիկին կամ կաչում է նրան մի կետում: Նախաճակատային վահանիկների միջև հաճախ լինում է 1 փոքրիկ լրացուցիչ վահանիկ: Ենթաաչքայինը կաչում է բերանի անկյունին, նրանից առաջ դասավորված են 5-6 վերջրթնային վահանիկները: Ստործնոտային վահանիկները 5 զույգ են: Հինգերորդ ստործնոտային վահանիկը մեծ մասամբ կաչում է ստորաչքային վահանիկին: Ազդրային անցքերը 16-23, հաճախ 17-20 են: Նրանց շարքերի միջև դասավորված են 3-5 թեփուկներ (նկ. 102):



Նկ. 102. Շորաուխի մողեսիկ:



Մարմնի վերին մասը գորշ մոխրագույն, դարչնագույն կամ գորշ դեղնավուն է: Մարմնի գունավորումը շատ տատանվում է: Մեծ մասամբ մարմնի կողքերին դասավորված են լինում սև շերտեր, որոնք եզրապատված են սպիտակ գծերով կամ գծիկներով: Այդպիսի գծիկներ են անցնում նաև մեջքի կողքերով: Արունների մեջքային և կողքային սև բծերը սովորաբար ձուլվում են իրար: Էգերի մոտ այդ գծերը դառնում են առանձին շերտեր, որոնց հաճախ հաջորդում են բաց գույնի երկայնական գծիկներ: Էգերի կողքերին կարելի է տեսնել կապույտ կլորավուն, իսկ արունների մոտ վառ դեղնականաչավուն շերտեր:

Արունների մարմնի ներքևի մասը դեղնավուն է, իսկ էգերինը՝ սպիտակ: Պոչը ներքևից կաթնագույն կամ դեղնավուն է:

Տարածվածությունը: Տարածված է հյուսիսային Իրանում, արևելյան Թուրքիայում, հարավ արևելյան Ադրբեջանում, Թուրքմենիստանում: Հայաստանում հանդիպում է Արաքս գետի հովտում՝ հասնելով մինչև Մեղրի և Լեռնային Ղարաբաղ (քարտեզ 37):




Քարտեզ 37. Շտրաուխի մողեսիկի տարածվածությունը Հայաստանում:

Ապրելավայրերը: Ապրում են չոր բուսականությամբ պատված քարքարոտ կիսաանապատներում:

Կենսաբանության առանձնահատկությունները: Չմեռումից դուրս են գալիս մարտի սկզբին և ակտիվ են մինչև հոկտեմբերի վերջը: Սնվում են միջատներով, բզեզներով, սարդերով, թիթեռներով և այլն: Տարեկան ունենում են 2 ձվադրում: Առաջինը՝ մայիսի կեսին, երկրորդը՝ հուլիսի վերջին կամ օգոստոսի սկզբին: Չվակույտում լինում է 2-4 ծու:

Կարգավիճակը: Տեսակի թվաքանակը կայուն է և հատուկ պահպանական միջոցներ չի պահանջում:



ՕՁԵՐ



ԿԱՐԳ - ՕՁԵՐ - SERPENTES LINNAEUS, 1758

Երկար ժամանակ օձերին համարում էին թեփուկավորների (Squamata) կարգի ենթակարգ, սակայն վերջին տարիներին շատ կենդանաբաններ նրանց դիտարկում են որպես սողունների դասի ինքնուրույն կարգ:

Օձերի մարմինը շատ երկարացած է: Պոչը սովորաբար կարճ է մարմնից: Երկրագնդի վրա ապրող օձերից ամենախոշոր օձերը պատկանում են պիթոնների և վիշապների ընտանիքներին, որոնց որոշ ներկայացուցիչների չափերը կարող են հասնել 8-10 մ., դրանցից են ցանցավոր պիթոնը, անակոնդան, իսկ ամենափոքր օձերի երկարությունը չի գերազանցում 10 սմ (կույրօձիկները): Օձերը վերջույթներ չունեն, սակայն *Typhlopoidea* և *Booidea* ընտանիքի ներկայացուցիչների մոտ պահպանվել են կոնքի կամ հետին վերջույթների մնացորդները (նկ. 107): Անոտ մողեսներից օձերը տարբերվում են շարժուն կոպերի, թմբկաթաղանթի, ուսագոտու բացակայությամբ:

Օձերի աչքի մակերեսը պատված է անշարժ, թափանցիկ թաղանթով: Նրանց ներքին ծնոտները միացած են իրար շարժուն կապանների միջոցով: Ունեն զարգացած ատամներ, որոնք տեղավորված են վերին և ստորին ծնոտների, քիմքային ու թևածև ոսկրների վրա: Օձերի ատամները շատ սուր են, ծոված են դեպի բերանի խորքը և դեպի հետ աստիճանաբար մանրանում են: Դրանք հարմարված են խոշոր կերը բռնելու և կուլ տալու համար: Թունավոր օձերը վերծնոտային ոսկրի վրա կրում են խոշոր ժանիքածև թունավոր ատամներ, որոնք խողովակով միացած են թույնի գեղձին:

Օձերի մարմինը պատված է միատիպ եղջերային թեփուկներով, գլուխը համաչափ դասավորված վահանիկներով կամ անկանոն դասավորված թեփուկներով: Փորը պատված է լայն վահանիկներով, որոնք հնարավորություն են տալիս կենդանուն ավելի ամուր կառչելու հողի մակերեսին և հեշտացնում են նրա տեղաշարժումը:

Ողնշարը կազմված է 200-450 միակերպ ողերով, որոնք ունեն կրկնակի հողավորում: Հողավորվում են ողերի մարմիններով և վերին աղեղների միջոցով: Այդպիսի հողավորումը ապահովում է ողնաշարի շարժունակությունը և դիմացկունությունը, որն այնքան կարևոր է մարմինը ծռելով սողալիս: Ողերին միացած են ազատ վերջացող կողերը, որոնք իրենց արտաքին ծայրերով հենվում են փորային վահանիկների հետ կապված մկանային շերտին: Փորային վահանիկներին կապված կողերի շարժման շնորհիվ կենդանին տեղաշարժվում է:

Օձերի մեծամասնության գանգը տարբերվում է լավ զարգացած շարժունակությամբ կինետիզմով: Ծնոտային ապարատի շատ ոսկրեր քառակուսային, թևածև, քիմքային, թեփուկային, ծնոտային, մեկը մյուսի նկատմամբ շարժուն միացած են էլաստիկ կապանների միջոցով: Այդ առանձնահատկությունը, ինչպես նաև ծնոտների աջ և ձախ կեսերի հաջորդական շարժումը հնարավորություն է տալիս բռնել կերը, հրել դեպի կերակրափող և ամմիջապես կուլ տալ խոշոր կենդանիների: Խոշոր կենդանիների կուլ տալը հեշտացվում է թքագեղձերի առատ արտադրանքով: Օձերի մեծ մասը սպանում են իրենց որսին փաթաթվելով նրա շուրջը: Մի մասն էլ, որոնք ունեն թույնի գեղձեր, կծում են որսին ծնոտների առջևում տեղավորված խոշոր թունավոր ատամներով և թույնը ներարկում զոհի մարմնի մեջ:


Ի տարբերություն մողեսների օձերի մոտ զարգացած է միայն աջ թոքը, ձախ թոքը եթե կա, ապա ռուդիմենտային է: Օձերի երիկամները և սեռական գեղձերը ուժեղ երկարածոված են: Միզափամփուշտը բացակայում է: Օձերը բազմանում են ձվադրությամբ, ձվակենդանածնությամբ և կենդանածնությամբ:

Ժամանակակից օձերի կարգը բաժանվում է 21 ընտանիքների, 480 ցեղերի, որոնք իրենց մեջ ընդգրկում են մոտ 3500 տեսակներ:

Արտաքին հատկանիշներով օձերին որոշելու ժամանակ մեծ նշանակություն ունի մարմինը և գլուխը ծածկող վահանիկների և թեփուկների ձևը, դասավորությունը, մեծությունը, քանակը և այլն:




Օձերի դնչի ծայրը ծածկում է միջծնոտային վահանիկը (praemaxillaria), որը լավ երևում է վերևից: Գլխի վերին մակերեսը պատված է հետևյալ վահանիկներով՝ միջքթային (internasalia), նախաճակատային (praefrontalia), կենտ ճակատային (frontale), զույգ զագաթային (parietalia) և վերաչքային (supraocularia): Գլխի կողքերին երևում են քթամիջծնոտային (nasorostalie), քթային (nasalia), այտային (frenale), նախաաչքային (praeocularia), ենթաաչքային (suboculare), հետաչքային (postocularia), վերշրթային (supralabialia), քունքային (temporalia) վահանիկները (նկ. 103):



Նկ. 103. Օձերի գլխի կողքային և վերին մասի վահանիկների դասավորությունը: (Վահանիկները նշված են տարբեր գույներով դասավորությունը տարբերելու համար):
 Ա-Գլխի կողքային մասը-առաջնաքթային, 2-հետքթային, 3-այտային, 4-առաջնաճակատային, 5-նախաաչքային, 6-հետաչքային, 7-քունքային, 8-վերծնոտային:
 Բ-Գլխի վերին մասը-միջծնոտային, 2-նախաճակատային, 3-վերաչքային, 4-ճակատային, 5-զագաթային:

Գլխի ստորին մակերեսին երևում են կզակային (mentale), ստորշրթնային (infralabialia), ստործնոտային (inframaxillaria) վահանիկները (նկ. 104): Փորային վահանիկները վերջանում են հետանցքային վահանիկով (anale): Պոչի ստորին մասը ծածկված է ենթապոչային (subcandalia) վահանիկներով:


Մարմինը պատող թեփուկները կարող են լինել հարթ կամ կողիկներով: Թեփուկների վրա հետին մասում սովորաբար լինում են 1-2 փոքրիկ, հաճախ միայն խոշորացումով երևացող կլոր փոսիկներ, որոնք կոչվում են ապիկալ փոսիկներ (նկ. 117): Որոշման ժամանակ մեծ նշանակություն ունի մարմնի շուրջը դասավորված թեփուկների քանակը, որոնց ճիշտ հաշվելուց է կախված տեսակների ճիշտ որոշումը: Վահանիկները և թեփուկները կարելի է հաշվել գնդասեղի կամ ասեղի օգնությամբ: Ենթապոչային վահանիկները հաշվելիս պետք է ուշադրություն դարձնել պոչը կտրված է թե ոչ:



Նկ. 104. Օձերի գլխի ստորին մասի վահանիկների դասավորությունը: (Վահանիկները նշված են տարբեր գույներով դասավորությունը տարբերելու համար):
1-միջձնոտային, 2-ստորշրթնային, 3-հետին ստորձնոտային, 4-առջևի ստորձնոտային, 5-առջևի ստորշրթնային, 6-նախադնչային:

Տեսակների որոշման ժամանակ օգտագործվում են հետևյալ կրճատումները:

- L.** - Մարմնի երկարությունը (Longitudo corporis) - Ղնչի ծայրից մինչև հետանցքի առջևի ծայրը:
- L. cd.** - Պոչի երկարությունը (Longitudo caudalis) - Գետանցքի առջևի ծայրից մինչև պոչի ծայրը:
- Sq.** - Մարմնի միջին մասի շուրջը դասավորված թեփուկների քանակը (փորային վահանիկները չեն հաշվում): Թե ինչպես հաշվել թեփուկների քանակը պատկերված է նկարում (Նկ. 105):
- Ventr.** - Փորային վահանիկները (Sc. ventralia) - Կոկորդի առջևի վահանիկից մինչև հետանցքային վահանիկը:
- Scd.** - Ենթապոչային վահանիկներ (Sc. subcaulata) - Գետանցքից հետո գտնվող առաջին վահանիկից մինչև պոչի ծայրը:




Նկ. 105. Մարմնի միջին մասի շուրջը դասավորված թեփուկների քանակը: Պիտը ցույց է տալիս ինչպես հաշվել մարմնի շուրջը դասավորված թեփուկները:



Օձերի ընտանիքները որոշելու աղյուսակ


1 (2) Ունեն որդանման մարմին: Աչքերը ծածկված են գլխի վահանիկներով, որոնց տակից երևում են որպես 2 փոքրիկ մուգ կետեր: Մարմինը վերևից և ներքևից պատված է միանման թեփուկներով (նկ. 106):

Ընտանիք - Կույր օձիկներ – Typhlopidae (տջ 125)



Նկ. 106. Կույր օձիկի գլուխը պատող վահանիկները և աչքերը:

2 (1) Մարմինը որդանման չէ: Աչքերը ծածկված են եղջերային թափանցիկ վահանիկով: Մարմնի ներքին մակերեսը պատված է լայնությամբ ձգված փորային վահանիկներով, որոնք նման չեն մարմնի վերին մասը պատող թեփուկներին:.....3



Նկ. 107. Վիշապների վերջույթների մնացորդները (1) և կմախքի կոնքային բաժինը:

3 (4) Փորային վահանիկները չեն պատում մարմնի ներքին մակերեսի ամբողջ լայնությունը: Մարմնի միջին մասի շուրջն ունեն 35-ից ոչ պակաս թեփուկներ: Հետանցքի կողքերին գտնվում են փոքրիկ մագիլանման հավելվածքներ, որոնք հետին վերջույթների մնացորդներ են (նկ. 107): Պոչը կարճ է և վերջանում է բութ կլորավուն ձևով:


Ընտանիք - Վիշապներ – Boidea (տջ 127)



4 (3) Փորային վահանիկները պատում են մարմնի ամբողջ ներքին մակերեսը և տարբերվում են մարմնի վերին մասը պատող թեփուկներից: Մարմնի միջին մասի շուրջը գտնվող թեփուկները 35-ից պակաս են:.....5

5 (6) Դնչի վերին մասի վրա գտնվում են 2 զույգ խոշոր միջքթային և նախաճակատային վահանիկներ: Քթային վահանիկը չփվում է միջծնոտային վահանիկին: Վերջրթնային վահանիկները կաչում են այտային վահանիկներին (նկ. 103, 108): Պոչը երկար է և բարակում է աստիճանաբար (նկ. 109):


Ընտանիք - Լորտուանմաններ - Colubridae (չ 129)



Նկ. 108. Լորտուների և իծերի գլուխը պատող վահանիկները:
Ա-Սովորական լորտու, Բ-Կովկասյան գյուրզա, Գ-երևանյան իծ:
1-միջծնոտային, 2-միջքթային, 3-նախաճակատային, 4-ճակատային,
5-վերնաչքային, 6-զագաթային վահանիկներ:

6 (5) Դնչի վերին մասի վրա դասավորված են անկանոն ձևի մանր վահանիկներ կամ թեփուկներ: Քթային վահանիկը չի կաչում միջծնոտայինին և նրանից անջատված է հստակ քթամիջծնոտային վահանիկով: Վերջրթնային վահանիկներն անջատված են աչքից ոչ պակաս քան մեկ շարք մանր վահանիկներով (նկ. 108): Պոչը կարճանուն է միանգամից (նկ. 109):

Ընտանիք - Իծեր - Viperidae (չ 167)



Նկ. 109. Լորտոլյանմանների (a) և իժերի (b) պոչը պատող վահանիկները:
1-փորային, 2-հետանցքային, 3-ենթապոչային վահանիկներ:

Ընթանիջ Կույր օձիկներ - Слепозмейковые - Typhlopidae Merrem, 1820

Բավականին փոքր որդանման օձեր են (խոշոր առանձնյակների մարմնի երկարությունը չի գերազանցում 450 մմ): Գլուխը չի սահմանազատվում պարանոցից և վերևից ու կողքերից պատված է խոշոր, համաչափ դասավորված վահանիկներով: Աչքերը ծածկված են վահանիկներով և նրանց տակից երևում են որպես մուգ կետիկներ: Բերանը բացվում է դնչի տակ: Մարմինը պատված է միանման, հարթ, հետևում կլորացող թեփուկներով: Պոչը բավականին կարճ է և վերջանում է փոքրիկ ցցվածքով: Այս ընտանիքն ունի 5-6 ցեղեր, մոտ 200 տեսակներ, որոնք տարածված են Ամերիկայի, հարավային Եվրոպայի, Աֆրիկայի, հարավային Ասիայի արևադարձային և մերձարևադարձային շրջաններում:

Ցեղ - Կույր օձիկ - Typhlops Shneiderin Oppel, 1811

Փոքրիկ որդանման օձեր են որոնց մարմնի երկարությունը 14-76 սմ է: Աչքերը ռեդուկցված են և երևում են փոքրիկ կետիկների տեսքով: Մարմնի միջին մասի շուրջը ունեն 18-40 թեփուկներ: Պոչը շատ կարճ է և ծայրում ունի փշանման ցցվածք: Կույր օձիկները ապրում են թափված տերևների, արմատների և հողի տակ:

Ցեղը ընդգրկում է մոտ 130 տեսակներ, որոնք հիմնականում տարածված են արևադարձային և մերձարևադարձային երկրներում: Հայաստանում հանդիպում է մեկ տեսակ:

31. Որդանման կույր օձիկ - Слепозмейка - Typhlops vermicularis Merrem, 1820

Տիպային տարածքը՝ Հունաստանի կղզիներ

Typhlops vermicularis Merrem 1820
Typhlops lumbricalis Hohenacker 1837

L. 360մմ, L/L.cd. 40-52, Sq. 22-24

Չևարանական հատկանիշները: Բավականին փոքր որդանման օձեր են (մարմնի երկարությունը խոշորների մոտ չի գերազանցում 350-450մմ): Պոչը բավականին կարճ է և վերջանում է փոքրիկ փշանման ցցվածքով: Միջնոտային վահանիկը զրեթե հասնում է աչքի առջևի եզրերը միացնող գծին: Քթային վահանիկը բաժանված է միայն իր ստորին մասում: Նախաաչքային վահանիկն իր մեծությամբ




գրեթե հավասար է աչքայինին և կաշուն է երկրորդ և երրորդ վերաչքայիններին: Աչքերը ծածկված են վահանիկներով և նրանց տակից երևում են որպես մուգ կետիկներ: Բերանը բացվում է դնչի տակ: Մարմինը պատված է միանման, հարթ, հետևում կլորացող թեփուկներով: Գլուխը չի սահմանազատվում պարանոցից: Պոչը շատ կարճ է և ծայրում ունի փշանման հավելվածք: Գլուխը փոքր է և կլորավուն: Ամբողջ տեսքով և գույնով նման են անձրևորդի: Մարմնի վերին մասի գունավորումը դարչնագույն, շագանակագույն, վարդագույն կամ վարդակարմրավուն, սովորաբար ավելի մուգ է պոչի վրա և բաց՝ ստորին մասում: Հասուն առանձնյակների մարմնի երկարությամբ անցնում են բարակ, մուգ գծեր (նկ. 110):



Նկ. 110. Կույր օձիկ:

Տարածվածությունը: Որդանման կույր օձիկի տարածման արեալն ընդգրկում է Բալկանյան թերակղզին, Փոքր Ասիան, Սիրիան, Կովկասի արևելյան մասը, Միջին Ասիան, Իրանը և Աֆղանստանը: Հայաստանում լայն տարածում ունի Արաքս գետի հովտում, Եղեգնաձորի և Վայոց ձորի շրջակայքում, Սեղրիում: Հանդիպում է նաև Լեռնային Ղարաբաղում: Լեռնատափաստանային շրջաններում հանդիպում են մինչև ծ.ծ. 2000մ բարձրությունների վրա (քարտեզ 38):



Քարտեզ 38. Կույր օձիկի տարածվածությունը Հայաստանում և Լեռնային Ղարաբաղում:

Ապրելավայրերը: Բնակվում են հիմնականում ազատ տարածքներում: Եղեգնաձորի շրջանում նրանց կարելի է հանդիպել Արփա գետի քարքարոտ ձորում: Ապրում են քարերի տակ, մրջյունների բներում: Գետնի մակերես հիմնականում դուրս են գալիս գարնանը: Անձրևից հետո գարնանը հաճախ նրանց կարելի է տեսնել արևի տակ տաքանալիս:

Կենսաբանության առանձնահատկությունները: Օձերի այլ ընտանիքների հետ համեմատած, այս ընտանիքի ներկայացուցիչների մաշկափոխությունը տեղի է ունենում ոչ թե ամբողջությամբ, այլ մաս-մաս՝ տեղաշարժվելու ընթացքում մաշկը



օղակներով թողնելով հողի մեջ: Նրանց բազմացման մասին գրականության մեջ տվյալները շատ քիչ են: Ենթադրվում է, որ սեռահասուն են դառնում 2-րդ տարում, երբ մարմնի չափերը հասնում են 23 սմ-ի: Չվաղությունը կատարվում է օգոստոսի սկզբին: Էգերը դնում են 4-8 շատ խոշոր 7-25 մմ ձվեր: Նոր ձվից դուրս եկած օձերը անմիջապես գնում են հողի խորքերը և դուրս են գալիս հաջորդ գարնանը: Սնվում են հիմնականում թրթուրներով, մրջյուններով և նրանց ձվերով:

Կարգավիճակը: Հաճախակի հանդիպող, բազմաքանակ տեսակ է, որը պահպանվում է միայն արգելոցներում:

Ընտանիք - Կեղծոտանիներ կամ վիշապներ - Удавьи - Boidae Gray, 1825

Ընտանիքում ընդգրկված են ժամանակակից ամենախոշոր օձերը, որոնց որոշ ներկայացուցիչների մարմնի չափերը հասնում են մինչև 10 մ-ի: Ընտանիքում կան նաև փոքր, մինչև 450 մմ չափեր ունեցող տեսակներ: Վիշապների ընտանիքի բոլոր ներկայացուցիչներն ունեն շատ մկանուտ մարմին: Նրանց տեսակների մոտ պահպանվում են կոնքի և հետին վերջույթների մնացորդները, որոնք ելուստների ձևով դուրս են ցցված հետանցքի կողքերին (նկ. 107): Այդ մնացորդներն ավելի ցայտուն արտահայտված են արուների մոտ և ըստ երևույթին, օգտագործվում են բազմացման շրջանում զուգավորման ժամանակ: Մարմնի ստորին մակերեսը պատված է մեկ շարք ընդլայնական վահանիկներով: Աչքերը լավ զարգացած են, բիբը կլոր է:

Վիշապների ընտանիքի ներկայացուցիչները լայն տարածում ունեն ամբողջ աշխարհում, մասնավորապես արևադարձային և մերձարևադարձային մարզերում: Առաջացնում են տարբեր էկոլոգիական խմբեր գետնափոր, ծառաբնակ, ցամաքային և այլ կենսակերպ վարող:

Ընտանիքը բաժանվում է 2 ենթաընտանիքների, ունի 9 ցեղ և մոտ 30 ժամանակակից տեսակներ: Հայաստանում հանդիպում է մեկ տեսակ:

Ցեղ - Վիշապիկներ - Eryx Daudin

Միջին չափերի՝ 60-100 սմ-ի հասնող օձեր են: Մարմինը հաստ է և մկանուտ: Գլուխը պատված է բազմաթիվ մանր վահանիկներով, իսկ ստորին մասը միանման մանր թեփուկներով: Միջծնոտային վահանիկը խոշոր է և ծռված է դեպի դուռնը: Ցեղն ընդգրկում է 10 տեսակներ, որոնք տարածված են հարավ արևելյան Եվրոպայում, հարավային Ասիայում:

32. Արևմտյան վիշապիկ - Удавчик западный - Eryx jaculus (Linnaeus, 1758)

Տիպային տարածքը Եգիպտոս

Anguis jaculus Linnaeus 1758

Boa tatarica, Hohenacker 1831

Eryx familiaris Eichwald 1831

Eryx turcicus, Eichwald 1841

Eryx jaculus, Strauch 1873

Eryx jaculus familiaris, Carevsky 1915

L. 600մմ, L/L.cd. 5.4-14.5, Sq. 45-54, Ventr. 161-203, Scd oo 25-36 և oo 19-27.

Ձևարանական հատկանիշները: Փոքր օձեր են: Գլուխը չի սահմանազատվում պարանոցից և պատված է համեմատաբար փոքր, անկանոն դասավորված վահանիկներով: Միջծնոտային վահանիկը խոշոր է, շրջված է դեպի դնչի վերին մասը: Ենթապոչային վահանիկները կամ նրանց մեծ մասը դասավորված են մեկ շարքով: Մեջքային վահանիկների հետևում ունեն 2, երբեմն 3 խոշոր վահանիկ: Գակատը և դնչի վերին մակերեսը ուռուցիկ են: Աչքերի միջև ունեն 5-7 ոչ մեծ, անորոշ ձևի վահա-



նիկներ: Աչքերը շրջապատված են 7-11 վահանիկներով: Վերշրթնայինները նույնպես 7-11 են: Նրանցից երկրորդը լայն է և ավելի բարձր է առաջինից: Մարմնի թեփուկները հարթ են և միայն պոչի վրա ունեն կողիկներ: Պոչը շատ կարճ է:




Նկ. 111. Արևմտյան վիշապիկ:

Մարմնի վերին մասը գորշ դեղնավուն կամ դեղնասարճագույն է: Մեջքի երկարությամբ 1 կամ 2 շարքով անցնում են գորշ կամ սև, լայնությամբ ձգված անկանոն շերտեր, որոնք տեղ-տեղ ձուլվում են միմյանց: Այս տիպի շարքեր, կազմված ավելի մանր շերտերից, անցնում են մարմնի կողքերով: Փորը բաց գույնի է, հաճախ միագույն, մանր, մուգ շերտերով: Երիտասարդների փորը վառ վարդագույն է (Նկ. 111):

Տարածվածությունը: Տարածված են Հյուսիս արևելյան Աֆրիկայում, Փոքր Ասիայում, Սիրիայում, Իրանում, Իրաքում, Պաղեստինում, Բալկանյան թերակղզում, արևելյան Կովկասում: Դաղստանում, Վրաստանում, Ադրբեջանում:

Հայաստանում հանդիպում է Արաքս գետի հովտում՝ տարածվելով մինչև Մեղրի, որտեղից անցնում է նաև Լեռնային Ղարաբաղի հանրապետության հարավային շրջանները (քարտեզ 39):



Քարտեզ 39. Արևմտյան վիշապիկի տարածվածությունը Հայաստանում և Լեռնային Ղարաբաղում:

Ապրելավայրերը: Բնակվում են անապատային և կիսաանապատային լանդշաֆտներում: Ապրում են քարքարոտ և կավային չոր հողերում, քսերոֆիտ բուսականությամբ անտառներում, խաղողի այգիներում: Թաքնվում են հողի տակ, կրծողների բներում:



Կենսաբանության առանձնահատկությունները: Ակտիվ են մարտի կեսից մինչև հոկտեմբերի վերջը: Տարվա շոգ ժամերին վարում են թաքնված կամ մթնշաղային կենսակերպ: Սնվում են մողեսներով և կրծողներով, հազվադեպ՝ մանր օձերով: Բազմացման մասին տեղեկությունները քիչ են: Բազմանում են ձվակենդանածնությամբ՝ ծնելով 6-20 ձագ: Չազերը հայտնվում են հուլիսի վերջին օգոստոսի սկզբին:

Կարգավիճակը: Արևմտյան վիշապիկի թվաքանակը աստիճանաբար կրճատվում է ապրելավայրերը տարբեր նպատակներով օգտագործելու հետևանքով: Պահպանվում են միայն արգելոցային տարածքներում:

Ընտանիք - Լորտուանմաններ - Colubridae Oppel, 1811

Լորտուանմանները տեսակներով օձերի ամենամեծաքանակ խումբն են կազմում: Այս ընտանիքի մեջ մտնում են ինչպես փոքրիկ, այնպես էլ միջին և խոշոր՝ մինչև 3,5 մ. չափերի հասնող տեսակներ: Լորտուանմանների մարմինը պատված է հիմնականում ճիշտ շարքերով դասավորված, հարթ, երբեմն վերևից սեպածև կողիկավոր թեփուկներով: Փորային վահանիկները ուժեղ լայնացած են և դասավորված են մարմնի երկարությամբ մեկ շարքով ու կտրուկ տարբերվում են մարմնի վերին մասը պատող թեփուկներից (Նկ. 115): Գլուխը պատված է զույգերով համաչափ դասավորված խոշոր վահանիկներով (Նկ. 113):

Պոչը երկար է և աստիճանաբար բարակում է: Աչքերի բիբերը հիմնականում կլոր են: Ընտանիքը ներառում է նաև մի շարք տեսակներ, որոնք ունեն էլիպսաձև բիբ: Եթե բիբը էլիպսաձև է, ապա պոչը երկար է և բարակում է աստիճանաբար: Լորտուանման օձերի մեծամասնությունը թունավոր չեն, սակայն ընտանիքում կան տեսակներ, որոնք ունեն թուլյի գեղձեր և բերանի խորքում վերծնտային ոսկրերի վրա տեղավորված ակոսավոր թունավոր առամներ: Լորտուանմանները բնութագրվում են նաև գանգի և ստորին ծնոտի ոսկրների մեծ շարժունակությամբ, ինչը կարևոր նշանակություն ունի խոշոր կենդանիներ արողջական կուլ տալու համար:

Լորտուանմանների ընտանիքը իր մեջ ընդգրկում է ավելի քան 300 ցեղեր, մոտ 3000 ժամանակակից տեսակներով: Տարբեր կենդանաբաններ այս ընտանիքը հաճախ բաժանում են 10-12 ենթաընտանիքների, որոնցից մի քանիսը երբեմն դիտարկում են որպես առանձին ընտանիքներ: Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի ֆաունայում հանդիպում են 2 ենթաընտանիքներ՝ Իսկական լորտուներ - *Natricinae* ու *Ushniodter-Colubridae* և 10 ցեղեր:


Լորտուանմանների ընտանիքի ցեղերի որոշման աղյուսակ

1 (2) Այտային վահանիկը կաչում է աչքին: Բիբն ուղղահայաց է (Նկ. 112):

Ցեղ - Կատված - Telescopus (ց 163)

2 (1) Այտային վահանիկը չի կաչում աչքին և նրանից անջատված է նախաաչքային վահանիկով: Բիբը կլոր է (Նկ. 112):.....3

3 (4) Դնչի վերին մակերեսը փոս է ընկած: Ճակատային վահանիկը երկար է և ցեղ: Դրա երկարությունը 2 անգամից ավել գերազանցում է նրա ամենամեծ լայնությանը (Նկ. 113): Այտային վահանիկները 2-ից պակաս չեն: Աչքերին կաչում են 2 վերշրթնային վահանիկներ:



Նկ. 112. Կառվածքների (1) և իսկական լորտուների (2) այտային վահանիկների դասավորությունը: ա-այտային վահանիկ:

Ցեղ - Մողեսաձ - Malpolon (ըջ 165)




Նկ. 113. Լորտուանմանների ընտանիքի մերկայացուցիչների գլուխը վերևից: 1-մողեսաձի և 2-սահնօծների դնչի վերին մակերեսը, ա-ճակատային վահանիկ:

4 (3) Դնչի վերին մակերեսը փոս ընկած չէ: ճակատային վահանիկի երկարությունը 2 անգամ պակաս է նրա լայնությունից (Ու. 113):.....5

5 (8) Մարմնի միջին մասի շուրջը դասավորված են 15-17 թեփուկներ:.....6

6 (7) Միջնոտային վահանիկը շրջված է դեպի դնչի վերին մասը և գտնվում է միջբթային վահանիկների միջև: Նրա վերևից երևացող մասի երկարությունը մոտավորապես հավասար հետին եզրի և ճակատային վահանիկի միջև եղած տարածությանը: Ստործնոտային վահանիկներ չունեն (Ու. 114):

Ցեղ - Ռինխոկալամուս - Rhynchocalamus (ըջ 153)



Նկ. 114. Ռինխոկալամուս (a) և էյրենիս (b) ցեղի օձերի միջոնտային վահանիկի դասավորությունը դնչի վրա:

7 (6) Միջոնտային վահանիկը միայն մի փոքր է շրջված դեպի դնչի վերին մասը: Ունեն ստորոնտային վահանիկներ (Նկ. 114):

Ցեղ - էյրենիս - Eirenis (էջ 155)

8 (5) Մարմնի միջին մասի շուրջը դասավորված են 19 թեփուկներ:9

9 (10) Մարմնի թեփուկներն ունեն լավ երևացող կողիկներ: Մարմնի միջին մասի շուրջը դասավորված են 19 թեփուկ (Նկ. 115):

Ցեղ - Իսկական լորտուներ - Natix (էջ 133)



Նկ. 115. Լորտուանմանների մարմինը պատող թեփուկները: 1-կողիկներով թեփուկներ, 2-հարթ թեփուկներ:

10 (9) Մարմնի թեփուկները հարթ են կամ ունեն թույլ երևացող կողիկներ (Նկ. 115): Մարմնի միջին մասի շուրջը դասավորված են 19-ից ավել թեփուկներ:.....11

11 (12) Նախաաչքային վահանիկի տակ ենթաաչքային վահանիկ չունեն (Նկ. 116): Միջոնտային վահանիկը երկարել է և տեղավորված է միջքթային վահանիկների արանքում:

Ցեղ - Պղնձօձ - Coronella (էջ 150)



Նկ. 116. Պղնձօձերի և սահնօձերի նախաաչքային և ենթաաչքային վահանիկների դասավորությունը: ա-պղնձօձ, բ-սահնօձ: 1-նախաաչքային, 2-ենթաաչքային վահանիկներ:


12(11) Նախաաչքային վահանիկի տակ ունեն ենթաաչքային վահանիկ: Միջոնոտային վահանիկը քիչ մասով է տեղավորված միջբթային վահանիկների արանքում (Օկ. 116):.....13

13(16) Մարմնի միջին մասի շուրջը դասավորված են 21-25 թեփուկներ: Եթե թեփուկները ավել են, ապա նախաաչքային վահանիկը 2-ն է: Ճակատային վահանիկի կողքային գծերը փոս են ընկած:

Ցեղ - Բազմագույն սահնօձեր - Hemorrhois (էջ 138)

14(15) Մարմնի թեփուկներն ունեն 1 ապիկալ փոսիկ: Հետին ստորոնոտային վահանիկները նեղ են առաջնայիններից: Մարմնի առջևի մասի կողքերին կան մուգ գույնի, սովորաբար բաց գծերով շրջապատված շերտեր: Աչքերի առջևում և հետևում ունեն բաց գույնի շերտեր:

Գեղ - Կախակաշտիկ սահնօձեր - Platyceps (էջ 144)



Նկ. 117. Գիերոֆիսների մարմնի թեփուկները 2 ապիկալ փոսիկներով:

15(14) Մարմնի թեփուկներն ունեն 2 ապիկալ փոսիկներ (Օկ. 117): Հետին ստորոնոտային վահանիկները լայնությամբ հավասար են կամ գրեթե հավասար են առաջնային վահանիկներին: Մարմնի առջևի մասի կողքերին չկան երկայնական շերտեր: Աչքերի առջևում և հետևում բաց գույնի շերտ չունեն:

Ցեղ - Գիերոֆիսներ - Dolichophis (էջ 143)



16 (13) Մարմնի միջին մասի շուրջը դասավորված են 15-21 թեփուկներ: Ունեն 1 նախաջրային վահանիկ: Ճակատային վահանիկի կողքային գծերը փոս ընկած չեն:

Ցեղ - Մազլցող սահնօծեր - Elaphe Fitziger (tշ 146)

Ենթաընտանիք - Իսկական լորտուներ - Natricinae Bonaparte, 1838

Ցեղ - Իսկական լորտուներ - Настоящие ужи - Natrrix Laurenti, 1768

Միջին չափերի 1200-1500մմ երկարություն ունեցող օձեր են: Մարմնի միջին մասի շուրջը կրում են 19 թեփուկներ, որոնք ունեն լավ արտահայտված երկայնական կողիկներ: Ենթապոչային վահանիկները 50-86 զույգ են: Դրանք բացակայում են միայն փոքրի սահմանակից շարքերում: Գլուխը վերին մասում կրում է համաչափ դասավորված խոշոր վահանիկներ: Բիբը կլոր է: Վերծնոտային ոսկորները կրում են 20-25 ատամներ, որոնք աստիճանաբար չափերով մեծանում են դեպի բերանի խորքը: Ստործնոտային ատամները հավասար չափերի են: Հետին ստործնոտային վահանիկները սովորաբար երկար են առաջիններից: Հետանցքային վահանիկը բաժանված է: Ենթապոչային վահանիկները 2 շարք են: Հայաստանում հանդիպում են 2 տեսակներ:

Իսկական լորտուների ցեղի տեսակների որոշման աղյուսակ

1 (2) Միջծնոտային և միջքթային վահանիկների միջև եղած կարը երկար է միջծնոտային և առաջին վերջրթնային վահանիկների կարից (**Ու. 118**): Միջքթային վահանիկները քիչ թե շատ սեղանաձև են: Վերջրթնայինները սովորաբար 7 են: Գլխի կողքերին բունքերից հետո անցնում են 2 խոշոր, դեղնավուն, նարնջագույն կամ սպիտակավուն շերտեր:



Ու. 118. Իսկական լորտուների միջծնոտային և միջքթային վահանիկների դասավորությունը: ա-սովորական լորտու, բ-ջրային լորտու: 1-միջծնոտային, 2-առաջնաքթային, 3-միջքթային, 4-առաջնապոչային, 5-հետապոչային, 6-առաջնաշրթնային:

Սովորական լորտու *Natrix natrix* (Lin) (tշ 134)

2 (1) Միջծնոտային և միջքթային վահանիկների միջև եղած կարը բավական կարճ է միջծնոտային և առաջին վերջրթնային վահանիկների միջև եղած կարից (**Ու. 118**): Միջքթային վահանիկները քիչ թե շատ եռանկյան ձև ունեն: Սովորաբար ունեն 8 վերջրթնային վահանիկներ:

Չրային լորտու *Natrix tessellata* Laur. (tշ 135)



33. Սովորական լորտու - Обыкновенный уж - *Natrix natrix* (Linnaeus, 1758)

Տիպային տարածքը՝ Եվեյցարիա

- Natrix natrix persa*
- Natrix natrix scutata*
- Coluber natrix* Linnaeus 1758
- Coluber scutatus* Pallas 1771
- Coluber persa* Pallas 1811
- Tropidonotus natrix*, Eichwald 1831
- Tropidonotus persicus*, Eichwald 1831
- Tropidonotus natrix var. persica*, Kessler 1878
- Tropidonotus natrix var. scutatus*, Boettger 1899
- Natrix natrix natrix*, Nikolsky 1916

L. 1000 մմ, L/L.cd. 3.0-5.0, Sq. 19, Ventr. 153-193, Scd oo 33-50 գույգ

Չևարանական հատկանիշները: Միջծնոտային և առաջին վերջոթնային վահանիկների միջև եղած կարը երկար չի միջծնոտային և միջքթային վահանիկների միջև եղած կարից: Ունեն 1, երբեմն 2 նախաաչքային, 2-4 (հաճախ 3) հետաչքային, 7 երբեմն 6 կամ 8 վերջոթնային վահանիկներ: Քունքային վահանիկներն առաջին շարքում 1, երկրորդում 2 կամ 3 են: Մարմնի թեփուկներն ունեն շատ լավ երևացող կողիկներ: Հետանցքային վահանիկը բաժանված է: Պոչի թեփուկները հարթ են կամ ունեն թույլ երևացող կողիկներ (նկ. 119):




Նկ. 119. Սովորական լորտու: 1-Natrix natrix, 2-Natrix natrix persa:

Մարմնի վերին մասի գունավորումը տատանվում է գորշ կանաչավունից մինչև գորշ մոխրագույն և սև: Գլխի կողքերին քունքերից հետո անցնում են 2 խոշոր դեղնավուն, նարնջագույն կամ սպիտակավուն շերտեր: Մարմնի կողքերին ունեն սև բծեր: Մարմնի ստորին մասը կաթնասպիտակավուն է և իր վրա կրում է լայնությամբ ձգված, անկանոն ձևի սև շերտեր, որոնք հաճախ միանում են իրար և մարմնի ստորին մասը դառնում է լրիվ սպիտակ:

Տարածվածությունը: Սովորական լորտուն լայն տարածում ունի Եվրոպայում, (բացառությամբ Իռլանդիայի, Մեծ Բրիտանիայի և Սկանդինավյան թերակղզու հյուսիսային մասի), հյուսիս արևմտյան Աֆրիկայում, արևմտյան Ասիայում:



Հանդիպում է արեւմտյան Սոնդոլիայում, հարավ արևելյան Սիբիրում, Կովկասում և Իրանում: Հայաստանում և Լեռնային Ղարաբաղում տարածված է գրեթե բոլոր ջրամբարների շրջակայքում: Հայաստանում տարածված *Natrix natrix* տեսակից բացի հանդիպում է նաև *Natrix natrix persa* (Pallas) ենթատեսակը, որն ունի մարմնի վրայով անցնող 2 սպիտակ գծեր (նկ. 118): Նրանք սկսվում են զլխի հետևից և մեջքի կողքերով անցնում են հետ: Որոշ տեղերում այս 2 ենթատեսակները հանդիպում են միասին (քարտեզ 40):



Քարտեզ 40. Սովորական լորտուի տարածվածությունը Հայաստանում և Լեռնային Ղարաբաղում:

Ապրելավայրերը: Բնակվում են ջրավազանների, գետերի, լճերի ափերին, խոնավ անտառներում: Հաճախ նրանց կարելի է հանդիպել ջրավազաններից բավական հեռու: Պետք է նշել, որ *N. n. persa*-ն ավելի է կապված ջրի հետ, քան *N. n. tessellata*-ն:

Կենսաբանության առանձնահատկությունները: Չմեռելուց դուրս են գալիս մարտի կեսերին և ակտիվությունը շարունակվում է մինչև հոկտեմբեր-նոյեմբեր ամիսները: Բազմացման շրջանին դիտվում է տասնյակ օձերի կուտակումներ: Էգերը ծվադրում են հուլիս-օգոստոս ամիսներին: Դնում են 4-40 խոշոր չափերի երկարավուն ծվեր: Էգերը կարող են ծվադրել խմբերով, այսինքն մի քանի էգ ծվադրում են առավել հարմար մի բնում: Այդպիսի բնում կարելի է հայտնաբերել մինչև 1200 ծու: 13սմ երկարությամբ ծագերը ծվից դուրս են գալիս օգոստոսի կեսին և սեպտեմբերի սկզբին: Սնվում են գերազանցապես երկկենցաղներով, ինչպես նաև ձկներով: Հազվադեպ կեր են հանդիսանում մողեսները, փոքր կաթնասունները և թռչունները: Որսին կուլ են տալիս կենդանի վիճակում:

Կարգավիճակը: Չի համարվում վտանգված տեսակ: Տարածման վայրերում այս տեսակի թվաքանակը բավականին հաստատուն է, իսկ որոշ վայրերում հաճախ առաջացնում է մեծ կուտակումներ: Պահպանվում է արգելոցներում:

34. Ջրային լորտու - Водяной уж - *Natrix tessellata* (Laurenti, 1768)

Տիպային տարածքը Իտալիա

Coronella tessellata Laurenti 1768

Coluber hydrus Pallas 1771

Tropidonotus hydrus, Eichwald 1831

Tropidonotus tessellatus, Wagner 1850

Tropidonotus tessellatus var. hydrus, Boettger 1886

Natrix tessellata, Nikolsky 1916

L. 1000-1050 մմ, L/L.cd. 3.4-4.58, Sq. 19, Ventr. 162-192, Scd 47-86 գույգ


Չևարանական հատկանիշները: Սիջքթային վահանիկները շատ թե քիչ եռանկյան ձև ունեն: Սիջծնոտային և առաջին վերշրթնային վահանիկների միջև եղած կարը բավական երկար է միջծնոտային և միջքթային վահանիկների միջև եղած կարից:



Ունեն 2-3, երբեմն նաև 1 նախաաչքային, 3-4, հազվադեպ՝ 5 հետաչքային, 8, երբեմն 7 վերջրթնային վահանիկներ:

Առաջին շարքում ունեն 1, իսկ երկրորդում 2 քունքային վահանիկներ: Հետաչքային վահանիկը բաժանված է: Պոչը և մարմինը ծածկող թեփուկներն ունեն լավ երևացող կողիկներ:

Մարմնի գունավորումը շատ տատանվում է: Մարմնի վերին մասը մոխրագույն կամ հողագույն է, հաճախ՝ սևին մոտ: Մարմինը պատված է մուգ բծերով, որոնք հիմնականում դասավորված են քիչ թե շատ շախմատաձև: Գլխի հետևում գրեթե միշտ ունի սև կամ մուգ գույնի, լատինական V տառի ձևով նախշ: Փորային մասը դեղնավուն կամ կարմրավուն է պատված սև բծերով: Երբեմն հանդիպում են բծերից և նախշերից գուրկ լրիվ սև առանձնյակներ: Մարմնի ստորին մասը սպիտակավուն, դեղնավուն կամ կարմրավուն է: Նրա լայնությամբ ձգված են սև գույնի շերտեր, որոնք հաճախ ծուլվում են միմյանց: Մեծ բարձրությունների վրա ապրողների մարմինը սև գույնի է (Նկ. 120, 121):



Նկ. 120. Իսկական լորտուների գլուխը վերևից և փորը պատող վահանիկներ 1-ջրային լորտու, 2-սովորական լորտու:



Նկ. 121. Ջրային լորտու:



Տարածվածությունը: Տարածված է հարավ արևմտյան Ֆրանսիայից մինչև հյուսիսային Աֆրիկա, կենտրոնական և հարավային Եվրոպայից Փոքր, Կենտրոնական և Միջին Ասիա: Հանդիպում է Սիրիայում, Իրանում, Իսրայելում, Եգիպտոսում, Թուրքիայում, Կովկասում:

Հայաստանում և Լեռնային Ղարաբաղում հանդիպում է գրեթե բոլոր գետերի, լճերի և ջրամբարների շրջակայքում (քարտեզ 41):



Քարտեզ 41. Տրային լորտուլի տարածվածությունը Հայաստանում և Լեռնային Ղարաբաղում:

Ապրելավայրերը: Հիմնականում ապրում են ջրավազանների ափերին: Հաճախ նրանց կարելի է հանդիպել ջրամբարներից հեռու:

Կենսաբանության առանձնահատկությունները: Սնվում են երկկենցաղներով և ձկներով: Չվաղրում են հունիսի վերջերին: Դնում են 5-18 ձու: Չմեռում են մեծ խմբերով: Գարնանը, ձմեռումից դուրս գալուց հետո, ձմեռանոցների շրջակայքում առաջացնում են մեծ կուտակումներ: Այս տեսակը բնորոշվում է հետաքրքիր պաշտպանական վարքով: Թշնամուն հանդիպելիս, եթե հնարավորություն չունի փախչելու, բացում է բերանը, շրջվում մեջքի վրա՝ և ցուցադրելով փորը, անշարժանում է: Վտանգը անցնելուց հետո, հեռանում է այդ վայրից (Նկ. 122):

Այս տեսակը ավելի շատ է սիրում տաքություն, քան սովորական լորտուն և ավելի շատ է կապված ջրին: Հանդիպում է ինչպես քաղցրահամ, այնպես էլ շատ աղի ջրերում: Լավ լողում է նույնիսկ ուժեղ լեռնային հոսանքներում: Թաքնվում է քարերի տակ, չոր խոտի դեզերում, կրծողների բներում: Ակտիվ է ցերեկային ժամերին, շատ է հանդիպում հիմնականում առավոտյան և երեկոյան, ջրամբարների շրջակայքում: Արևի դուրս գալու հետ բավականին ակտիվանում է և մտնում ջուրը: Շատ տաք օրերին կարող է երկար ժամանակ մնալ ջրի միջ: Բազմացման շրջանը սկսվում է ապրիլ-մայիս ամիսներին: Հունիս-հուլիս ամիսներին դնում է 6-23 ձու: Երիտասարդ օձերը դուրս են գալիս օգոստոսին:



Նկ. 122. Տրային լորտուլի վարքագիծը:



Կարգավիճակը: Չի համարվում վտանգված տեսակ: Տարածման վայրերում այս տեսակի թվաքանակը բավականին հաստատուն է, իսկ որոշ վայրերում հաճախ առաջացնում է մեծ կուտակումներ: Պահպանվում է արգելոցներում:

Ենթաընտանիք - Սահնոծեր - Полозы - Colubridae Oppel, 1811

Ցեղ - Բազմագույն սահնոծեր - Разноцветные полозы - Hemorrhois Boie, 1826

Չափերով բավականին մեծ, երկար պոչով, մինչև 2 մետր երկարություն ունեցող օձեր են: Գլուխը խոշոր է և քիչ սահմանազատված է վզից: Մարմնի միջին մասի շուրջն ունեն 21-25 թեփուկներ, որոնք հարթ են կամ ունեն հազիվ երևացող կողիկներ: ճակատային վահանիկի կողքային գծերը փոս են ընկած: Քթանցքերը գտնվում են 2 քթային վահանիկների միջև: Բիբր կլոր է: Ենթապոչային վահանիկները կազմում են 2 շարք: Վերծնոտային ատամները դեպի բերանի խորքը աստիճանաբար մեծանում են և վերջին 2-3 ատամներն ամենախոշորն են: Ցեղն ունի 4 տեսակներ, որոնցից երկուսը *H. ravergieri* և *H. nummifer* հանդիպում են Հայաստանում ու Լեռնային Ղարաբաղում և հաճախ միմյանց հետ առաջացնում են սիմպատրիկ պոպուլյացիաներ:

Բազմագույն սահնոծեր ցեղի տեսակների որոշման աղյուսակ

1 (2) Մարմնի միջին մասի շուրջը սովորաբար դասավորված են 21, հազվադեպ 23 թեփուկներ: Եթե ավել են, ապա նախա-չքային վահանիկը 2-ն է: Հետանցքային վահանիկը կարող բաժանված է 2 մասի: Մեջքի երկարությամբ մեկ շարքով անցնում է գորշ, երբեմն մուգ գույնի, հաճախ թեք բծեր կամ գծեր, որոնք տեղ-տեղ ծուլվում են և առաջացնում զիգզագաձև շերտեր: Փորը դեղնավարդագույն է:

Բազմագույն սահնոծ - *H. ravergieri* (ըջ 138)

2 (1) Մարմնի միջին մասի շուրջը դասավորված են 23-25 թեփուկներ: Հետանցքային վահանիկը կարող բաժանված չի: Մեջքը և մարմնի կողքերն ունեն լավ երևացող մուգ կամ գրեթե սև բծեր, որոնք հասունների մոտ եզրավորված են բաց բծերով: Փորը մոխրասպիտակավուն է:

Կապարագույն սահնոծ - *H. nummifer* (ըջ 140)

35. Բազմագույն սահնոծ - Разноцветный полоз - *Hemorrhois ravergieri* (Menetries, 1832)

Տիպային տարածքը Բաքու

- Coluber ravergieri* Menetries 1832
- Zamenis ravergieri*, Kessler 1872
- Zamenis ravergieri*, Nikolsky 1909
- Coluber ravergieri cernovi* Mertens 1952
- Coluber ravergieri*, Alekperov 1978
- Coluber ravergieri*, Schättli and Aghasyan 1985
- Hemorrhois ravergieri*, Schättli and Utiger 2001

L. 1000-1150 մմ, L/L.cd. 2.7-4.3, Sq. 21-25, Ventr. 190-225, Scd. 78-108 զույգ



Ձևաբանական հատկանիշները: Մարմնի միջին մասի շուրջը սովորաբար դասավորված են 21, հազվադեպ՝ 23 թեփուկներ: Գլուխը շատ թե քիչ պարզ սահմանագատված է պարանոցից: Ունեն 1 այտային, 2 նախաչքային, 2 կամ 3 հետաչքային, 9 կամ 10 վերշրթնային (որոնցից երկուսը կպչում են այտին) վահանիկներ: Նախաչքային վահանիկները երկուսն են, նրանցից ներքևին տակը գտնվում են 1, երբեմն 2 ենթաաչքային վահանիկներ, որոնք սովորաբար տեղավորված են երրորդ և հինգերորդ վերշրթնային վահանիկների միջև: Քունքային վահանիկները լավ չեն արտահայտված: Առաջին և երկրորդ շարքում նրանք 2-4 են: Մարմնի թեփուկները հարթ են, կամ երբեմն ունեն ոչ պարզ արտահայտված կողիկներ: Հետանցքային վահանիկը բաժանված է կամ լրիվ է:

Մարմնի հետին մասը գորշ մոխրագույն, մոխրագույն կամ դարչնագույն է: Մեջքի երկարությամբ մեկ շարքով անցնում են գորշ, երբեմն գրեթե սև, հաճախ՝ թեք բծեր կամ գծեր, որոնք տեղ-տեղ ծուլվում են և առաջացնում զիգզագաձև շերտեր: Նման շերտեր 1 կամ երկու շարքով դասավորված են մարմնի կողքերին: Պոչի երկարությամբ նույնպես անցնում են 3 մուգ շերտեր: Հանդիպում են նաև առանձնյակներ, որոնց մարմնի վրա բծեր գրեթե չեն երևում: Գլխի վերին մակերեսի՝ հիմնականում ճակատային և վերաչքային վահանիկների վրա, դասավորված են մի խումբ մուգ բծեր, որոնք առաջացնում են քիչ թե շատ ճիշտ՝ M տառին նմանվող նախշ: Աչքի հետևի եզրից մինչև բերանի անկյունը, թեքությամբ անցնում է մուգ շերտ: Մի ուրիշ այդպիսի կարճ շերտ գտնվում է նաև աչքի տակ: Մարմնի ստորին մասը դեղնա-վարդագույն է, կամ բաց վարդագույն, թույլ արտահայտված բծերով: Երիտասարդների փորը դեղնա-վարդագույն է (նկ. 123):



Նկ. 123. Բազմագույն սահնօծ:

Տարածվածությունը: Բազմագույն սահնօծը հանդիպում է արևելյան Թուրքիայում և տարածվում դեպի արևելք՝ Կովկաս, Իրան, Միջին Ասիա ընդգրկելով Թուրքմենիան, Ուզբեկստանը, Կիրգիզիան, Աֆղանստանը, Հնդկաստանը, հասնում է հյուսիսարևելյան Չինաստան:

Հայաստանում լայն տարածում ունեցող օձ է: Հանդիպում է հանրապետության հյուսիս արևելյան մասում՝ Տավուշի մարզում, ինչպես նաև Արաքսի հովտում, Եղեգնաձորի, Կապանի, Մեղրիի մարզերում, որտեղից անցնում է Լեռնային Ղարաբաղ (քարտեզ 42):

Ապրելավայրերը: Սովորաբար ապրում է քսերոֆիտ բուսականությամբ հարուստ, քարքարոտ միջավայրերում, գետերի ափերին աճող թփուտներում: Հանդիպում է մինչև 2400 մ. ծ.մ. բարձրությունների վրա քարքարոտ կիսաչոր բուսականությամբ հարուստ լեռնատափաստաններում:



Քարտեզ 42. Բազմագույն սահնոծի տարածվածությունը Հայաստանում և Լեռնային Ղարաբաղում:

Կենսաբանության առանձնահատկությունները: Այս տեսակի էկոլոգիան և պոպուլյացիաների վիճակը թույլ է ուսումնասիրված: Հայտնի է, որ ծնեռումից դուրս են գալիս մարտի վերջին, ապրիլի սկզբին: Սնվում են կրծողներով, երկկենցաղներով, սողուններով, մանր թռչուններով: Բազմանում են ձվադրությամբ: Ձուլզընտրությունը և զուգավորումը սկսվում է մայիսի սկզբին: Չվադրում են հունիս-հուլիս ամիսներին, դնելով 5-18 ձու: Չագերը դուրս են գալիս սեպտեմբերի վերջին:

Կարգավիճակը: Հանրապետության տարածքում այս տեսակը հաճախակի է հանդիպում, սակայն ապելավայրերի օգտագործումը գյուղատնտեսական նպատակներով բացասական ազդեցություն է ունենում տեսակի թվաքանակի վրա: Տեսակը պահպանվում է «Խոսրովի անտառ» և «Շիկահող» արգելոցներում:

36. Կապարագույն սահնոծ - Свиноцовый полоз - *Hemorrhois nummifer* - (Reuss, 1834)

Տիպային տարածքը եգիպտոս

Coluber nummifer Reuss 1834

Elaphe dione plumbea Chernov 1926:68; Chernov, 1939

Coluber ravergieri plumbeus, Terentjev and Chernov 1949

Coluber ravergieri, Alekperov 1978

Coluber ravergieri ravergieri, Muskhelishvili 1970

Coluber nummifer, Schatti and Aghasyan 1985

Hemorrhois nummifer, Schatti and Utiger 2001

Ձևաբանական հատկանիշներ: Սարմնի միջին մասի շուրջ դասավորված են 23-25 թեփուկներ: Ունեն 2 նախաաչքային, 1 այտային վահանիկներ, որոնց տակ գտնվում են 1 կամ 2 ենթաաչքային վահանիկներ: Ունեն 2 հետաչքային վահանիկ: Հետանցքային վահանիկը կարող բաժանված չէ:

Հասուն առանձնյակներն ունեն լավ արտահայտված սեռական դիմորֆիզմ: Արուների մարմինը, որպես օրենք միագույն է, թույլ մոխրագույն, կողքերից եզրավորված է բաց բծերով կամ գրեթե առանց բծերի է: Հասուն էգերի մարմինն ունի խոշոր բաց մոխրագույն բծեր:

Փորը մոխրա-սպիտակավուն, կամ գորշ-դեղնավուն է, որի երկարությամբ երբեմն անցնում են բազմաթիվ շերտեր: Էգերի գլուխը սովորաբար վերևից կրում է հստակ արտահայտված նախշ, իսկ արուների մոտ այդ նախշը հազիվ նկատելի է կամ ընդհանրապես բացակայում է: Երիտասարդների մարմնի երկարությամբ անցնում են շախմատաձև դասավորված 3 նեղ մուգ գծեր (նկ. 124):

Տարածվածությունը: Տարածված են Իսրայելում, Սիրիայում, Հորդանանում, Եգիպտոսում, Կիպրոսում, Թուրքիայի հյուսիսում, Իրանում, Թուրքմենիայում (Կոպետ Դաղ), Ղազախստանում, Տաջիկստանում, Անդրկովկասում:




Հայաստանում տարածված են հիմնականում Արաքս գետի հովտում, որտեղից բարձրանում են լեռնատափաստանային գոտի և հասնում մինչև Մեղրի, տեղ-տեղ առաջացնելով սիմպատրիկ պոպուլյացիաներ *Hemorrhois ravergieri* (քարտեզ 43):



Նկ. 124. Կապարագույն սահնօծ:

Ապրելավայրերը: Ապրում են քարքարոտ քերոֆիտ բուսականությամբ հարուստ կիսաանապատներում և լեռնատափաստաններում, գետերի ափերին ածող թփուտներում: Չեն խուսափում ապրել նաև մարդկանց հարևանությամբ: Հաճախ հանդիպում են քարե պատերի, քանդված շինությունների շրջակայքում ինչպես նաև, խաղողի այգիներում: Որպես թաքստոց օգտագործում են կրծողների բները, պատերի, ժայռերի ճեղքերը և այլն.



Քարտեզ 43. Կապարագույն սահնօծի տարածվածությունը Հայաստանում և Լեռնային Ղարաբաղում:

Կենսաբանության առանձնահատկությունները: Չմեռումից դուրս են գալիս մարտի սկզբին: Սնվում են մանր կրծողներով, երկկենցաղներով, թռչուններով, մողեսներով: Չվաղրում են հուլիսի վերջին: Դնում են 10-16 ձու: Արաքսի հովտում ծագերը դուրս են գալիս սեպտեմբերի կեսերին:

Կարգավիճակը: Համեմատած *H. ravergieri* հետ, այս տեսակն ավելի քիչ է հանդիպում: Ապրելավայրերի օգտագործումը գյուղատնտեսական նպատակներով բավական բացասական ազդեցություն է ունենում տեսակի թվաքանակի վրա: Ցեսակը պահպանվում է «խտրովի անտառ» արգելոցում:

Ցեղ - Տափակագլուխ սահնօծեր - *Platycephs* Blyth, 1860

Ցեղն ունի 21 տեսակներ, որոնք տարածված են հյուսիս-արևմտյան Աֆրիկայից մինչև Հնդկաստան: Հայաստանում հանդիպում է 1 տեսակ:




37. Չիթապտղագույն սահնոծ - Оливковый полоз - *Platyceps najadum* (Eichwald, 1831)

Տիպային տարածքն է Բաքու /Ադրբեջան/

- Tyria dahlia* Fitzinger 1826
- Tyria Najadum*, Eichwald 1831
- Coluber dahlia*, Schinz 1833
- Tyria dahlia*, De Filippi 1865
- Zamenis dahlia*, Kessler 1872; Nikolsky 1916
- Zamenis dahlia* var. *najadum*, Boettger 1892
- Coluber najadum*, Mertens and Muller 1928;
- Chernov* 1939; Muskhelishvili 1970;
- Alekperov* 1978
- Coluber najadum najadum*, Mertens 1940
- Platyceps najadum*, Inger and Clark 1943

L. 1000 մմ, L/L.cd. 2.29, Sq. 19, Ventr. 218-238, Scd. 98-135 գույգ

Չևարանական հատկանիշները: Դնչի ծայրը կլոր է: Միջծնոտային վահանիկը շատ քիչ մասով է տեղավորվում միջքթային վահանիկների արանքում: Նախաաչքային վահանիկը մեկն է: Նրա տակ գտնվող փոքր ենթաաչքային վահանիկը տեղավորված է 3-4 վերջրթայինների միջև: Ունեն 2 հետաչքային վահանիկներ: Քունքային վահանիկներն առաջին շարքում 2 են, երբեմն՝ 1, երկրորդ շարքում՝ 3, երբեմն 2 են: Վերջրթայինները 9 են, հազվադեպ՝ 7 կամ 8: Նրանցից չորրորդը և հինգերորդը կաչում են աչքին: Հետին ստործնոտային վահանիկները երկար ու նեղ են առաջնայիններից և բաժանված են իրարից մեծ թեփուկների շարքով: Մարմնի թեփուկները հարթ են և յուրաքանչյուր թեփուկ ունի մեկ ապիկալ փոսիկ: Հետանցքային վահանիկը բաժանված է (նկ. 125):



Նկ. 125. Չիթապտղագույն սահնոծի գլուխը կողքից: 1-հետաչքային, 2-ենթաաչքային, 3-նախաաչքային վահանիկներ:

Մարմնի վերին մասը դեղնավուն է, դեղնականաչ մոխրագույն, բաց դարչնագույն կամ դարչնագույն է, երբեմն ունի կանաչավուն կամ գորշ երանգ: Հասակավորների մոտ կողքային շերտերը սովորաբար պարզանում կամ ընդհանրապես բացակայում են: Գլուխը վերևից միագույն է՝ առանց շերտերի: Աչքի առջևում և ետևում միշտ ունեն լավ արտահայտված բաց շերտ: Մարմնի ստորին մասը դեղնավուն կամ կանաչասպիտակավուն է՝ առանց շերտերի: Ակնածիածանը դեղնաոսկեգույն է (նկ. 126):

Երիտասարդ անհատներն ունեն լավ արտահայտված գորշ կամ գրեթե սև բաց գծով շրջապատված շերտեր, որոնք տեղավորված են վզի կողքերին կամ մարմնի առջևի մասում: Այդ շերտերը պոչի ուղղությամբ աստիճանաբար կորցնում են իրենց շերտավորությունը և դառնում են մանր սև կետիկներ, որոնք հասնում են մարմնի մինչև կեսը:



Նկ. 126. Չիթապտղագույն սահնօժ: 1-հասուն, 2-երիտասարդ առանձնյակ:

Տարածվածությունը: Տարածված է Բալկանյան թերակղզում, Փոքր Ասիայում, Սիրիայում, Իսրայելում, Հորդանանում, Իրաքում, հյուսիսային Իրանում, հարավարևմտյան Թուրքմենիայում, Կովկասում: Հայաստանում հանդիպում է Արաքս գետի հովտում և լեռնատափաստանային լանդշաֆտում, Սեղրիի և Տավուշի մարզերում (քարտեզ 44):



Նկ. 44. Չիթապտղագույն սահնօժի տարածվածությունը Հայաստանում:

Ապրելավայրերը: Կիսաանապատային գոտուց բացի հաճախ հանդիպում են լեռնատափաստանային գոտու քարքարոտ լեռնալանջերին, կաղնու անտառներում, գետերի ափերին: Թաքնվում են կրծողների բներում, քարերի արանքում, ժայռերի ճեղքերում և այլն: Լեռնատափաստանային գոտում հանդիպում են մինչև ծ.մ. 2200 մ. բարձրությունների վրա:

Կենսաբանական առանձնահատկությունները: Չմեռումից դուրս են գալիս մարտի կեսերին: Հիմնականում սնվում են մողեսներով և դաշտամկներով: Երիտասարդ առանձնյակները սնվում են նաև խոշոր միջատներով: Բազմացման մասին տեղեկությունները քիչ են: Չվաղրումը տեղի է ունենում հուլիսի սկզբին: Դնում են 3-12 երկարավուն ձու: Չագերը դուրս են գալիս սեպտեմբերի կեսերին:

Կարգավիճակը: Մեծ թվաքանակ չունի: Պահպանվում է հստորովի արգելոցում:

Ցեղ - Գիերոֆիսներ - *Hierophis Fitzinger, 1843*

Այս ցեղն իր մեջ ընդգրկում է խոշոր օձերին, որոնց մարմնի երկարությունը պոչի հետ երբեմն հասնում է 2500 սմ-ի: Բավականին ագրեսիվ օձեր են, որոնք վտանգի դեպքում չեն փախչում, այլ հարձակվում են թշնամու վրա: Ցեղն ունի 7 տեսակներ,



որոնք տարածված են հարավ-արևմտյան Եվրոպայում, Թուրքիայում, Կովկասում, Աիրիայում, Հորդանանում, Իսրայելում, Իրանում, հարավ-արևմտյան Թուրքմենիայում: Կովկասում տարածված է 2 տեսակ: Հայաստանում հանդիպում է մեկ տեսակ:

38. Կարմրափոր սահնոծ - Краснобрюхий полоз - *Hierophis schmidtii* (Nikolsky, 1909)

Տիպային տարածքն է Թբիլիսի

- Coluber erythrogaster* Fischer von Waldheim 1832
- Coluber erythrogaster* Forster, 1771
- Coluber schmidtii* Nikolsky, 1909
- Zamenis gemonensis schmidtii*, Nikolsky 1916
- Zamenis gemonensis var. caspius*, Mehely 1894
- Coluber jugularis erythrogaster*, Chernov, 1937:43.
- Coluber jugularis schmidtii*, Muskhelishvili 1970
- Coluber jugularis*, Alekperov 1978
- Coluber (Hierophis) schmidtii*, Schatti 1993
- Dolichophis schmidtii*, Nagy et al. 2004

L. 1500 մմ, L/L.cd. 2.6-3.5, Sq. 19, Ventr. 191-213, Scd. 37-107 գույգ

Չևարանական հատկանիշները: Դնչի ծայրը բութ է: Նախաաչքային վահանիկը մեկն է, որը երբեմն բաժանված է երկու մասի: Նրա տակ գտնվող փոքրիկ ենթաաչքային վահանիկը տեղավորված է երրորդ և չորրորդ վերշրթնայինների արանքում: Ունեն 2, երբեմն 3 հետաչքային վահանիկներ: Առաջին շարքում դասավորված են 2, երկրորդ շարքում 2 կամ 5 քունքային վահանիկներ: Վերշրթնայինները 3, երբեմն 7 կամ 9 են (նկ. 127):



Նկ. 127. Կարմրափոր սահնոծի գլուխը կողքից:
1-նախաաչքային, 2-ենթաաչքային, 3-հետաչքային վահանիկներ:

Երիտասարդ առանձնյակների հետին ստործնոտային վահանիկները կպչում են միմյանց, իսկ հասունների մոտ նրանք բաժանված են սովորաբար 1 շարք մանր թեփուկներով: Մարմնի թեփուկները հարթ են և յուրաքանչյուրն ունի 2 ապիկալ փոսիկ (նկ. 117): Հետաճքային վահանիկը բաժանված է: Երիտասարդ առանձնյակների մարմնի վերին մասը մոխրագույն կամ գորշ մոխրագույն է: Սեջքի երկարությամբ անցնում են 1 կամ երկու շարք մուգ գորշ բծեր, որոնք տեղ-տեղ միանում են իրար և առաջացնում կարծ լայնական շերտեր: Մարմնի կողքերով անցնում են 1 շարք մուգ



գույնի մանր բծեր: Նման բծեր կան նաև փորային վահանիկների եզրերին: Երիտասարդների փորը սպիտակամոխրագույն է, բավականին վառ դեղնակարմիր բծերով, որոնք տեղադրված են պոչի թեփուկների սահմանին:

Հասունների մոտ այդ բծերն անհետանում են և մարմինը ստանում է կարմրավուն, դարչնակարմիր գունավորում: Յուրաքանչյուր թեփուկի մեջտեղով անցնում է մուգ շերտ, իսկ եզրերը բաց գույնի են: Փորը կարմրավուն է և լավ փայլունի (Նկ. 128):



Նկ. 128. Կարմրափոր սահնոծ:

Տարածվածությունը: Տարածված է Կենտրոնական Անատոլիայից մինչև Սիրիա, Իրան, Անդրկովկաս, որտեղից անցնում է Թուրքմենիա: Հայաստանում հանդիպում է Արաքս գետի հովտում և նրան հարակից լեռնատափաստանային գոտում, ինչպես նաև Մեղրիի մարզում, որտեղից թափանցում է Լեռնային Ղարաբաղի հարավ արևմտյան մասը (քարտեզ 45):



Նկ. 45. Կարմրափոր սահնոծի տարածվածությունը Հայաստանի Հանրապետությունում և Լեռնային Ղարաբաղում:

Ապրելավայրերը: Հիմնականում ապրում է բաց կիսաանապատներում և խաղողի այգիներում: Հանդիպում է նաև խոր քարքարոտ ձորերում:

Կենսաբանության առանձնահատկությունները: Սնվում է մանր կրծողներով, մողեսներով, թռչուններով: Որսի են դուրս գալիս ցերեկը: Բազմացման մասին քիչ տեղեկություններ կան: Չվաղրումն ըստ երևույթին կատարվում է հուլիսի վերջերին: Դնում են 7-12 ծու: Սողուն են շատ արագ: Ամենաագրեսիվ օձերից մեկն է: Թունավոր չէ:



Կարգավիճակը: Բավականին փոքրաթիվ տեսակ է, որը պահպանվում է միայն Խոսրովի, Շիկահողի արգելոցներում:

Յեղ - Մազլցող սահնօձեր - *Elaphe Fitzzinger*, 1833

Խոշոր և միջին չափերի օձեր են, որոնց մարմնի երկարությունը պոչի հետ հասնում է 800-2000 մմ: Մյուս ցեղից տարբերվում է նրանով, որ վերծնոտային ատամներն իրենց մեծությամբ քիչ թե շատ հավասար են, ունեն 12 մինչև 22 ատամներ և նրանց շարքը բաժանված չէ: Առջևի ստործնոտային ատամները երկար են հետևի ատամներից: Մարմնի թեփուկները հարթ են կամ ունեն հազիվ երևացող կողիկներ: Ճակատային վահանիկի կողքային եզրերն ուղիղ են: Աջքի բիբը կլոր է: Ունեն մոտ 50 տեսակներ, որոնք լայն տարածում ունեն հյուսիսային և կենտրոնական Ամերիկայում, Ասիայում, կենտրոնական և հարավային Եվրոպայում: Վերջին տարիներին այս ցեղի մեջ մտնող մոտ 50 տեսակների մանրակրկիտ հետազոտումը ձևաբանական, կենսաքիմիական և մոլեկուլյար գենետիկական մեթոդների միջոցով հնարավորություն տվեց դրանց բաժանել մի շարք ենթացեղերի, որոնցից Կովկասում և Հայաստանում հանդիպում են ***Elaphe*** և ***Zamenis*** ենթացեղերը:


Մազլցող սահնօձերի ցեղի տեսակների որոշման աղյուսակ

1 (2) Ունեն ենթաաչքային վահանիկ, որը տեղավորված է 3-րդ և 4-րդ վերջրթնային վահանիկների միջև (Տկ. 129): Գագաթային վահանիկներն իրենց առաջնաանկյունային եզրով մեծ մասամբ կաչում են ներքևի հետաչքային վահանիկին: Հասուն առանձնյակների գլուխը վերևից մուգ է առանց նախշի: Փորը դեղնավուն է կամ անգույն և կողքերին կրում է մուգ շերտեր: Սեռքի երկարությամբ, սկսած գլխի ճակատային վահանիկից, անցնում է մուգ գծերով շրջապատված, դեղնավուն կամ սպիտակ շերտ:

Պալասի սահնօձ - *Elaphe sauromates* (տք 147)

2 (1) Ենթաաչքային վահանիկը բացակայում է: Ունեն մեկ խոշոր նախաաչքային վահանիկ: Գլուխ վերևից պատված է մանր մուգ բծերով, որոնք ծոծրակային մասում վերածվում են 2 թեք շերտերի: Ստորին հետաչքային վահանիկից մինչև բերանի անկյունը անցնում է ցայտուն արտահայտված մուգ գույնի թեք շերտ (Տկ. 129): Մուգ գույնի երկու շարք շերտեր անցնում են նաև մեռքի երկարությամբ:

Անդրկովկասյան սահնօձ - *Zamenis hohenackeri*



Տկ. 129. Պալասի (ա) և անդրկովկասյան (բ) սահնօձերի գլուխը կողքից: 1-վերջրթնային, 2-ենթաաչքային, 3-նախաաչքային վահանիկներ:




39. Պալասի սահնոծ - Полос Палласа - *Elaphe sauromates* Pallas, 1811

Տիպային տարածքը Պերեկոպ (Ղրիմ)

Coluber sauromates Pallas 1811
Elaphe sauromates, Strauch 1873
Coluber quatuorlineatus, Nikolsky 1913
Elaphe quatuorlineata, Nikolsky 1937:46; Alekperov 1978
Elaphe quatuorlineata sauromates, Chernov 1937:46; Muskhelishvili 1970
Elaphe sauromates, Link et al. 2001

L. 1220-1600 մմ, L/L.cd. 3,5-5,5, Sq. 25 երբեմն 27 կամ 23, Ventr. 195-228, Scd. 58-78 զույգ

Ձևարանական հատկանիշները: Ունեն 1 խոշոր նախաաչքային վահանիկ, որի տակ գտնվող ենթաաչքային վահանիկը տեղավորված է երրորդ և չորրորդ վերջրթնային վահանիկների միջև: Հետաչքային վահանիկները 2 կամ շատ հազվադեպ 3 են: Այտային վահանիկի տակ երբեմն ունեն 1-3 փոքրիկ վահանիկներ: Գագաթային վահանիկներն իրենց առջևի ստորին անկյան եզրով, որպես օրենք, կաչում են ներքևի հետաչքային վահանիկին: Ունեն 8 կամ 9 վերջրթնային վահանիկներ: Քունքային վահանիկներն առաջին շարքում 2, երբեմն՝ 3, իսկ երկրորդ շարքում 4, երբեմն 3 են (նկ. 130): Մարմնի թեփուկները ոչ պարզ երևացող կողիկներով են:



Նկ. 130. Պալասի սահնոծի գլխի վահանիկների դասավորությունը: 1-ենթաաչքային, 2-վերջրթնային, 3-քունքային, 4-նախաաչքային, 5-գագաթային, 6-հետաչքային վահանիկներ:

Մարմնի վերին մասը գորշ դեղնավուն է: Մեջքի երկարությամբ անցնում են խոշոր դեղնագույն, գորշ դարչնագույն կամ գրեթե սև շերտեր, որոնք տեղ-տեղ ձուլվում են՝ առաջացնելով զիզգագանման շերտ: Մեկական շարք նման փոքր շերտեր տեղավորված են նաև մարմնի կողքերին: Այդ նախշերը շատ լավ երևում են երիտասարդների մոտ և գրեթե կորչում են հասուն առանձնյակների մոտ: Հասունների մարմնի յուրաքանչյուր թեփուկն իր մեջտեղում ունի մուգ բիծ: Մարմնի կողքերի առանձին թեփուկներ երբեմն ունենում են կարմրավուն կան նարնջագույն գունավորում: Երիտասարդների գլխի վրա տեղավորված է գորշ դարչնագույն, դիմացից կտրված նկար: Մարմնի ստորին մասը բաց դեղնավուն է և հաճախ իր վրա կրում է ոչ մեծ շերտեր (նկ. 131):

Տարածվածությունը: Տարածված է արևելյան Եվրոպայում, որտեղից Ուկրաինայի հարավով, ընդգրկելով Ղրիմը, Կովկասը և Անդրկովկասի արևելյան մասը.



40. Անդրկովկասյան սահնոծ - Закавказский полоз - *Zamenis hohenackeri* (Strauch, 1873)

Տիպային տարածքը՝ Խանլար (Ադրբեջան)


Coluber hohenackeri Strauch 1873

Coluber taurica Werner 1898.

Elaphe hohenackeri, Chernov 1937, Muskhelishvili 1970, Alekperov 1978

L. 750 մմ, L/L.cd.4,0-5,5, Sq. 23 երբեմն 21 կամ 25, Ventr. 195-226, Scd. 57-68 գույգ

Ձևաբանական հատկանիշները: Ունեն 1 խոշոր նախաաչքային, 2 հետաչքային, 8 շատ հազվադեպ 7 կամ 9 վերջրթնային վահանիկներ: Ենթաաչքային վահանիկը բացակայում է: Թունքային վահանիկներն առաջին շարքում 2, երբեմն 1 կամ 3 հատ են և բավական խոշոր են երկրորդ շարքի վահանիկներից: Երկրորդ շարքում դասավորված են 3, հազվադեպ՝ 4 կամ 2 վահանիկներ (նկ. 129, 132): Մարմնի թեփուկները հարթ են: Հետանցքային վահանիկը բաժանված է:



Նկ. 132. Անդրկովկասյան սահնոծի գլուխը՝ ա-կողքից, բ-վերևից: 1-վերջրթնային, 2-հետաչքային, 3-նախաաչքային, 4-այտային, 5-գագաթնային, 6-վերնաչքային, 7-ճակատային, 8-նախաճակատային, 9-միջքթային

Մարմինը վերևից գորշ դարչնագույն, գորշ մոխրագույն կամ բաց դարչնագույն է: Մեջքի երկարությամբ դասավորված են 2 շարք դարչնագույն, գորշ կամ գրեթե սև շերտեր, որոնք տեղ-տեղ միանում և առաջացնում են լայնական շերտեր: Մարմնի կողքերին մեկական շարքով անցնում են մուգ գույնի շերտեր: Գլուխը վերևից պատված է մանր սև կետիկներով, որոնցից ամենախոշորները տեղավորված են գագաթային վահանիկների վրա: Ծոծրակային մասում ունեն 2 մուգ շերտեր, որոնք միանում են եզրերով իրար և նմանվում եղանի: Աչքի հետևի եզրից մինչև բերանը թեթևությամբ անցնում է սև շերտ: Աչքի տակ ունեն ոչ մեծ սև բիծ: Հասունների վերջրթնային և ստորջրթնային վահանիկները հաճախ դեղնավուն և դարչնագույն են: Փորը գորշ մոխրագույն է և փորի յուրաքանչյուր վահանիկ ունի մեծ քանակի մուգ բծեր: Մարմնի առջևի մասը ներքևից հաճախ մուգ դարչնագույն է (նկ. 133):

Տարածվածությունը: Տարածված է Փոքր Ասիայի արևելյան մասում, հյուսիս-արևմտյան Իրանում, Իսրայելում, հյուսիսային Օսեթիայում, Չեչենո-Ինգուշական հանրապետությունում, Ղաղստանում, Ադրբեջանում, Վրաստանում: Հայաստանում տարածված է հանրապետության ինչպես հյուսիսային, այնպես էլ հարավային մասերում: Հանդիպում է նաև Արաքս գետի հովտի նախալեռնային շրջաններում (քարտեզ 46):



Նկ. 133. Անդրկովկասյան սահնոծի:

Ապրելավայրերը: Ապրում է կաղնու նոսր անտառներում, գետերի ժայռոտ ափերին, թփուտներում: Լեռնատափաստանային գոտում հանդիպում է քսերոֆիտ թփուտներով և խոտաբույսերով ծածկված քարքարոտ լանջերին, ժայռերի վրա և քարերի ջարդվածքներում: Հանդիպում է մինչև ծ.մ. 2200մ բարձրության վրա:



Քարտեզ 46. Անդրկովկասյան սահնոծի տարածվածությունը Հայաստանում:

Կենսաբանության առանձնահատկությունները: Չմեռումից դուրս է գալիս ապրիլի սկզբին կամ կեսերին: Սնվում է մողեսներով, մկնանման կրծողներով, միջատներով: Չվաղում են հունիսի վերջերին: Չվերի քանակը 3-7 է: Չագերը դուրս են գալիս սեպտեմբերի սկզբին:

Կարգավիճակը: Գրանցված է նախկին ԽՍՀՄ-ի, Կրաստանի, Ադրբեջանի և Հայաստանի Հանրապետության Կարմիր գրքերում: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «խոցելի»՝ VUB1ab (iii) տեսակ: Պահպանվում է «Խոսրովի անտառ», «Շիկահող» արգելոցներում և «Արևիկ» ազգային պարկում:

Ցեղ - Պղնձոձ - Coronella Laurenti, 1768

Գլուխը թույլ է սահմանագատվում պարանոցից: Բիբը կլոր է: Մարմնի թեփուկները հարթ են: Ենթապոչային վահանիկները 2 շարք են կազմում: Ունեն 2 տեսակ, որոնցից միայն 1-ն է տարածված Հայաստանի տարածքում:




41. Պղնձօժ - Медянка - Coronella austriaca Laurenti, 1768

Տիպային տարածքը՝ Վիեննա (Ավստրիա)

Coronella austriaca austriaca Laurenti, 1768

L. 650-667 մմ, L/L.cd.4,0-6,5, Sq. 19, Ventr.ար 170-194, իգ՝ 185-196, Scd. ար. 53-53, էգ. 42-52 գույգ, Lab.7, ՏիպավՖ ՐպՊՍՍ 8

Չևարանական հատկանիշները: Միջծնոտային վահանիկն իր վերին անկյունով տեղավորված է միջքթայինների միջև: Քթանցքները գտնվում են 2 վահանիկների միջև: Ունեն 1, երբեմն՝ 2 նախաաչքային, 2 հետաչքային, 7 երբեմն՝ 8 վերջրթնային վահանիկներ: Վերջրթնային վահանիկներից երրորդը և չորրորդը կաչում են աչքին: Քունքային վահանիկներն առաջին շարքում 2, երբեմն 1 հատ են, երկրորդ շարքում 2 կամ 3 (նկ. 134): Հետանցքային վահանիկը բաժանված է:



Նկ. 134. Պղնձօժի գլուխը պատող վահանիկները, ա-կողքից, բ-վերևից: 1-քունքային, 2-հետաչքային 3-առաջնաաչքային, 4-միջքթային, 5-միջծնոտային, 6-քթային, 7-վերջրթնային, 8-նախաճակատային, 9-վերնաչքային, 10-ճակատային, 11-գագաթնային:

Մարմնի վերին մասի գունավորումը փոփոխական է: Հանդիպում են առանձնյակներ, որոնք ունեն մոխրագույն, գորշ մոխրագույն, դարչնամոխրագույն, դեղնագորշագույն, կարմրագորշ, պղնձակարմիր գունավորում (նկ. 135):

Փոփոխական է նաև մարմնի նախշը: Մեջքի երկարությամբ անցնում են 2 շարք համեմատաբար խոշոր մուգ գորշագույն շերտեր: Նրանք իրարից բաժանվում են ողնաշարի երկարությամբ անցնող բաց շերտով, որը հազիվ է նկատվում: Նման շերտեր, բայց ավելի մանր, դասավորված են մարմնի կողքերին: Այս տիպի նախշերով առանձնյակներ հազվադեպ են հանդիպում: Հանդիպող առանձնյակների մարմինը մեծ մասամբ պատված է լինում հազիվ երևացող շերտերով կամ բծերով: Պարանոցն ունի 2 գորշ կամ սև գորշագույն գծեր, որոնք ծուլվում են ծոծրակային մասում: Գլուխը վերևից մուգ է կամ ունի աղեղնաձև նախշ, որն անցնում է վերնաչքային և ճակատային վահանիկների վրայով: Քթանցքերից աչքերի վրայով մինչև բերանի անկյունը անցնում է գորշ կամ դարչնագույն շերտ: Մարմնի փորային մասը մոխրագույն կամ գորշագույն է, մանր մուգ բծերով կամ կետիկներով: Պոչը ներքևից հաճախ ուրիշ գույնի է: Երիտասարդների փորը կարմրավարդագույն է (նկ. 135):

Տարածվածությունը: Տարածված են ամբողջ Եվրոպայում, որտեղից հասնում են մինչև արևմտյան Ղազախստան, Փոքր Ասիայի հյուսիսային մաս, Կովկաս և Հյուսիսային Իրան:

Հայաստանում լայն տարածում ունի գրեթե բոլոր շրջաններում, ինչպես նաև Լեռնային Ղարաբաղում: Հանդիպում է լեռնային, լեռնատափաստանային, անտառային շրջաններում, ծ.մ. 1200 մ. և ավել բարձրությունների վրա (քարտեզ 47):



Նկ. 135. Սարմնի տարբեր գունավորում ունեցող պղնձօձեր:



Քարտեզ 47. Պղնձօձի տարածվածությունը Հայաստանում և Լեռնային Ղարաբաղում:

Ապրելավայրերը: Որպես թաքստոց հանդիսանում են կրծողների բները, ժայռերի ճեղքերը:

Կենսաբանության առանձնահատկությունները: Չմեռումից դուրս են գալիս ապրիլի կեսերին: Ակտիվ են մինչև հոկտեմբերի կեսը: Սնվում են հիմնականում *Darevskia* ցեղին պատկանող մողեսներով, ինչպես նաև մանր կրծողներով և թռչուններով, որոնք նրա կերի չնչին մասն են կազմում: Չվակենդանաձին են: Օգոստոսի վերջին կամ սեպտեմբերի սկզբին ծնում են 5-19 թափանցիկ թաղանթով պատված ձագեր, որոնք կտրուկ շարժունով պատռում են թափանցիկ թաղանթը ու



դուրս գալիս: Այս տեսակը վտանգի դեպքում իժի նման կծկում է մարմինը և ֆշացնելով փորձում է կծել, որի շնորհիվ հաճախ նրան շփոթում են թունավոր օձի հետ:

Կարգավիճակը: Ունի լայն տարածում այն շրջաններում, որտեղ կան ժայռային մողեսների կուտակումներ: Թվաքանակը բավականին մեծ է:

Ցեղ - Ռինխոկալամուս - Rhynchocalamus Gunther, 1864

Մանր օձեր են, որոնց նմանության պատճառով երկար ժամանակ մտցնում էին *Oligodon* ցեղի մեջ: Միջծնոտային վահանիկը շրջված է դեպի դնչի վերին մասը և տեղավորված է միջքթային վահանիկների միջև: Մարմնի թեփուկները հարթ են:

Ցեղն իր մեջ ընդգրկում է մոտ 2-3 տեսակներ, որոնք տարածված են Առաջավոր Ասիայում հասնելով մինչև արևելյան Թուրքիա և արևելյան Անդրկովկաս: Հայաստանում տարածված է մի տեսակ:

42. Սևագլուխ ռինխոկալամուս - Черноголовый ринхокаламус - Rhynchocalamus melanocephalus (Jan, 1862)

Տիպային տարածքը Մեդրի

- Rhynchocalamus melanocephalus satunini* (Nikolsky, 1899)
- Homalosoma melanocephalum* Jan 186
- Contia satunini* Nikolsky 1899
- Oligodon melanocephalus* Jan var. *septentrionalis*, Werner 1906
- Oligodon melanocephalus satunini*, Chernov 1935
- Rhynchocalamus satunini*, Reed and Marx 1959
- Rhynchocalamus melanocephalus satunini*, Darevsky 1970

L.360-364 մմ, L/L.cd.4,5-5,09, Sq. 15, Ventr.202-232, Scd. w.p. 52-66

Չևարանական հատկանիշները: Գլուխը քիչ է սահմանագատված պարանոցից: Բերանը բացվում է դնչի ներքևի մասում: Բիբը կլոր է: Մարմնի թեփուկները հարթ են կամ ունեն թույլ երևացող կողիկներ: Միջծնոտային վահանիկը շրջված է դեպի դնչի վերին մասը և տեղավորված է միջքթային վահանիկների միջև (նկ. 114): Նրա վերևից երևացող մասի երկարությունը մոտավորապես հավասար է հետին եզրի և ճակատային վահանիկի միջև եղած տարածությանը: Ստործնոտային վահանիկներ չունեն: Քթանցքերը բացվում են 1 վահանիկի վրա, որի երկարությունը բավական մեծ է աչքի երկայնական տրամագծից: Ունեն մեկ այտային վահանիկ, որը շատ ցածր է տեղավորված և նրա բարձրությունը քիչ է քթային վահանիկի բարձրությունից: Հետանցքային վահանիկը բաժանված է: Ունեն 7 վերշրթային, 1 նախաաչքային, 1 երբեմն՝ 2 հետաչքային վահանիկներ: Քունքային վահանիկներն առաջին շարքում 1, երկրորդ շարքում 1, երբեմն 2 հատ են:

Մարմնի վերին մասը բաց կամ մուգ նարնջագույն է: Ստորին մասը վարդագույն կամ սպիտակ է: Գլուխը վերևից բաց գույնի է և ունի սև աղեղնաձև շերտ, որն անցնում է վերնաաչքային, նախաճակատային, միջքթային և որոշ չափով ճակատային վահանիկների վրայով: Ավելի հետ՝ գազաթային վահանիկների վրա, գտնվում է սրտաձև սև շերտը: Այդ երկու շերտերի միջև եղած տարածությունը բաց նարնջագույն է: Պարանոցի լայնությամբ անցնում է 1 սև շերտ, որն իր մեջ ընդգրկում է 5-8 թեփուկներ (նկ. 136, 137):

Տարածվածությունը: Հանդիպում է արևելյան Թուրքիայում, Սիրիայում, Իսրայելում, Հորդանանում, Իրաքում, Իրանում, Նախիջևանում:

Հայաստանում հանդիպում է Արաքս գետի հովտում, որտեղից բարձրանում է մինչև ծ.մ. 1200մ բարձրությունների վրա (քարտեզ 48):



Նկ. 136. Սևագլուխ ռինիտոկալամուսի գլուխը վերևից:



Նկ. 137. Սևագլուխ ռինիտոկալամուս: (Նկ. Կ.Միլյոի)

Ապրելավայրերը: Հանդիպում է հիմնականում կիսաանապատային վայրերում, կիսաչոր քարքարոտ լանջերում: Ապրում է քարերի տակ: Վարում է թաքնված կենսակերպ՝ դրսում լինելով հիմնականում գարնան շրջանում:

Կենսաբանության առանձնահատկությունները: Ըստ երևույթին վարում է գետնափոր կենսակերպ: Սնվում է մրջյուններով և մանր միջատներով: Բազմացման մասին տեղեկություններ չկան:

Կարգավիճակը: Անդրկովկասի առավել հազվադեպ և քիչ ուսումնասիրված տեսակներից մեկն է: Հայտնի են շատ քիչ քանակով առանձյակներ: Մինչ այժմ հայտնի է 11 առանձնյակներ, որոնցից 9 բռնվել է Հայաստանում: Գրանցված է նախկին ԽՍՀՄ-ի



և Հայաստանի Կարմիր գրքերում: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «խոցելի» VU B2ab (i, iii) տեսակ: Պահպանվում է «Խոսրովի անտառ» արգելոցում և «Արևիկ» ազգային պարկում:



Քարտեզ 48. Սևազուխ ռինիտակամուսի տարածվածությունը Հայաստանում:

Ցեղ - էյրենիսներ - Eirenis Jan, 1863

Փոքր, մինչև 600 մմ երկարություն ունեցող օձեր են: Ցեղն ընդգրկում է 16 տեսակներ: Այս ցեղումին էին երկար ժամանակ դասում նաև պսևդոցիկլոֆիսներին, սակայն հաշվի առնելով ֆոլիոլոգի մի շարք հատկանիշներ վերջերս, որոշ կենդանաբաններ դրանց առանձնացրել են որպես առանձին ցեղ: Որոշման աղյուսակում մենք պսևդոցիկլոֆիսներին թողել ենք էյրենիսների ցեղում:

էյրենիսները տարածված են հյուսիս-արևելյան Աֆրիկայից մինչև հարավ-արևմտյան Ասիա, Արաբական թերակղզուց մինչև Պակիստան և հյուսիս-արևելյան Հնդկաստան, Ղազախստան և Թուրքմենիա: Հայաստանում հանդիպում են 4 տեսակներ:

էյրենիս ցեղի տեսակները որոշելու աղյուսակ

1 (4) Մարմնի միջին մասի շուրջ դասավորված են հիմնականում 15 թեփուկներ: 2

2 (5) Փորային վահանիկները 180-235 են: Մարմինը շատ բարակ է, նրա հաստությունը 55 և ավել անգամ կարող է տեղավորվել մարմնի երկարության վրա:

Պարսկական պսևդոցիկլոֆիս - Pseudocyclophis persicus (tշ 161)

3 (6) Փորային վահանիկները 147-177 են արու և 181-188 էգ առանձնյակների մոտ: Վերջրթնային վահանիկները 7 են, որոնցից 3 և 4 կպչում են աչքին:

Վզնոցավոր էյրենիս - Eirenis collaris (Menetr.) (tշ 157)

4 (1) Մարմնի միջին մասի շուրջ հիմնականում ունեն 17 թեփուկ:.....3

5 (2) Փորային վահանիկները 166-180 են արու առանձնյակների և 181-187 էգերի մոտ: Մարմնի հաստությունը 50 անգամից քիչ կարող է տեղավորվել մարմնի երկարության վրա: Հետին ստործնոտային վահանիկները սովորաբար իրարից բաժանված են մեկ կամ երկու շարք թեփուկներով (Ոկ. 138): Մարմինը միագույն է, չունի գծիկներ և կետիկներ: Ծոծրակային մասում ունի մուգ գույնի շերտ՝ վզնոց, որը հասուն առանձնյակների մոտ կարող է բացակայել (Ոկ. 139, 141):

Հանդարտ էյրենիս - Eirenis modestus (Mart) (tշ 158)




Նկ. 138. Հանդարտ (ա) և հայկական (բ) էյրենիաների հետին ստործնոտային վահանիկների դասավորությունը:

1 ա, բ - առջևի ստործնոտային, 2 ա, բ - ստորջրբնային, 3 ա, բ - հետին ստործնոտային:

6 (3) Փորային վահանիկները 158-163 զույգ են արունների մոտ և 164-175 զույգ էգերի մոտ: Հետին ստործնոտային վահանիկները սովորաբար իրարից բաժանված չեն (Նկ. 138):

Հայկական էյրենիա - *Eirenis punetato-lineatus* (Bttg) (ըջ 160)



Նկ. 139. էյրենիաների գլուխը վերևից: 1-հանդարտ, 2-վզնոցավոր, 3-հայկական էյրենիա:



43. Վզնոցավոր էյրենիս - Ошейниковый эйренис - *Eirenis collaris* (Menetries, 1832)

Տիպային տարածքը` Բեշարամ լեռ (հարավ-արևելյան Դաղստան/

Coluber collaris Menetries, 1832
Eirenis collaris, De Filippi 1862
Contia collaris, Boulenger 1894
Contia modesta, Lyaister 1912
Contia collaris, Chernov 1939

L.2,79-316 մմ, L/L.cd.3,2-5,5, Sq. 15, Ventr. 147-167 և 165-177, Scd. 44-60 գույգ

Չևարանական հատկանիշները: Ունեն 1 նախաաչքային, 2 երբեմն 1 հետաչքային վահանիկներ: Այտային վահանիկը մեկն է և տեղավորված է երկրորդ վերջրթնային վահանիկի վրա: Վերջրթնային վահանիկները 7 են: Նրանցից երրորդը և չորրորդը կաչուս են աչքին: Քունքային վահանիկներն առաջին շարքում 1, երկրորդ շարքում 2 երբեմն 1 հատ են: Հետին ստործնոտայինները կարծ են առաջնայիններից և կաչուս են միմյանց: Մարմնի թեփուկներից յուրաքանչյուրն ունի 1 ապիկալ փոսիկ:

Մարմնի վերին մասը բաց գորշագույն, դարչնամոխրագույն, գորշ մոխրագույն կամ գորշ վարդագույն է: Երիտասարդների մոտ գլխի վրա դասավորված է սև գույնի բծերից կազմված քիչ թե շատ պարզ երևացող նախշ: Կենդանու աճի հետ այդ նախշը խամրում և հասունների մոտ գրեթե անհետանում է: Պարանոցի վրա ունեն լավ երևացող գորշ, սև գորշագույն կամ սև լայնական շերտ (վզնոց), որն իր մեջ ընդգրկում է 4-6 շարք թեփուկներ և շատ պարզ է արտահայտված երիտասարդների մոտ (Նկ. 140): Մարմնի ներքին մասը մոխրագույն, դեղնավուն կամ բաց դարչնագույն է և չունի բծեր:



Նկ. 140. Վզնոցավոր էյրենիս:

Տարածվածությունը: Տարածված են հյուսիս-արևելյան և արևելյան Թուրքիայում, հյուսիսային և հարավային Դաղստանում, արևելյան Անդրկովկասում, Ադրբեջանում, հարավ-արևելյան Վրաստանում: Հայաստանում հանդիպում է Արաքս գետի հովտում և նրան հարակից լեռնատափաստանային շրջաններում, ինչպես նաև Լեռնային Դարաբաղի հանրապետության հարավային մասում (քարտեզ 49):

Ապրելավայրերը: Ապրում է քարքարոտ լանջերում և բաց տարածություններում, բարձրանալով մինչև ծ.մ. 1400 մ.: Թաքնվում է քարերի տակ:



Կենսաբանական առանձնահատկությունները: Հանրապետությունում հաճախ հանդիպող օձերից է: Չմեռումից դուրս է գալիս ապրիլի սկզբին և մնում է ակտիվ մինչև հոկտեմբերի կեսը: Գարնան ամիսներին այս տեսակի տարածման վայրերում շրջելու դեպքում, մի քանի ժամվա ընթացքում քարերի տակ կարելի է հանդիպել մոտ 8-10 առանձնյակների: Սնվում է մորեխներով, միջատներով, սարդերով և այլն: Հուլիսի վերջին ձվադրում է դնելով 4-8 ձու:



Քարտեզ 49. Վզնոցավոր էյրենիսի տարածվածությունը Հայաստանում և Լեռնային Ղարաբաղում:

Կարգավիճակը: Հանրապետությունում այս տեսակի թվաքանակը բավական մեծ է: Սակայն անհրաժեշտ է նշել, որ Երևանի շրջակայքում տեսակի ապրելավայրերը քաղաքաշինական նպատակներով օգտագործելու հետևանքով աստիճանաբար վերանում են: Դա պատճառ է հանդիսանում նաև տեսակի թվաքանակի կրճատման: Պահպանվում է «խոսրովի անտառ» արգելոցում:

44. Հանդարտ էյրենիս - Смирный эйренис - *Eirenis modestus* (Martin, 1838)

Տիպային տարածքը՝ Տրապիզոն (Թուրքիա)

- Coronella modesta* Martin 1838
- Contia collaris* Boulenger 1894
- Contia modesta*, Chernov 1939
- Eirenis modesta*, Stickle 195

L.485-590 սն, L/L.cd.3,0-3,5, Sq. 17, Ventr.առ.166-130, էգ.181-187, Socd. առ.64-77, էգ. 55-64 գույգ

Չևարանական հատկանիշները: Ունեն 1 կիսաբաժանված նախաաչքային, 2 հետաչքային և 1 փոքրիկ այտային վահանիկներ: Այտային վահանիկը տեղավորված է երկրորդ վերջրթնային վահանիկի վրա: Վերջրթնային վահանիկները 7-ն են: Նրանցից երրորդը և չորրորդը կաչում են աչքին: Երբեմն վերջրթնային վահանիկները լինում են 8 հատ: Այդ դեպքում աչքին կաչում են չորրորդը և հինգերորդը: Քունքային վահանիկներն առաջին շարքում 1, երկրորդում 2, երբեմն 1 կամ 3 հատ են: Հետին ստործնոտայինները սովորաբար բաժանված են իրարից 1-2 շարք թեփուկներով: Մարմնի թեփուկներն ունեն 1 ապիկալ փոսիկ:

Մարմնի վերին մասը մոխրագույն, դարչնամոխրագույն, գորշ մոխրագույն կամ կարմրավուն է: Մարմնի յուրաքանչյուր թեփուկ մեջտեղում ավելի բաց գույնի է: Պոչի գույնն ավելի բաց է մարմնի գույնից: Երիտասարդ և միջին հասակի արուները գլխի առջևի մասում ունեն M տառի նման սև նախշ, իսկ զագաթային վահանիկների վրա, այդպիսի ավելի խոշոր մի ուրիշ նախշ, որը հետևում նեղանում է: Սև գույնի աղեղնաձև շերտ կա նաև վզի վրա, որը եզրապատված է բաց դեղնավուն կամ մոխրագույն բծերով: Հաճախ պարանոցի և զագաթային վահանիկների նախշերը ծոծրակային մասում միանում են իրար: Հասուն առանձնյակների մոտ այդ նախշերը




պարզանուն և դառնուն են հազիվ նկատելի: Մարմնի ներքևի մասը դեղնավուն է, առանց շերտերի և չունի բծեր (նկ. 141):



Նկ. 141. Հանդարտ էյրենիս:

Տարածվածությունը: Տարածված է Միջերկրական ծովի կղզիներում, արեւելյան Թուրքիայում, Սիրիայում, Իրաքում, արևմտյան Իրանում, արևելյան Անդրկովկասում: Հայաստանում հանդիպում է Քուռ և Արաքս գետերի հովտում, որտեղից հասնում է Հանրապետության հարավային շրջանները (քարտեզ 50):



Քարտեզ 50. Հանդարտ էյրենիսի տարածվածությունը Հայաստանում:

Ապրելավայրերը: Ապրում են քսերոֆիտ բուսականությամբ պատված քարքարոտ լանջերում, փշոտ աստրագալների արանքում: Կիսաանապատներում չեն հանդիպում: Հյուսիսային Հայաստանում ապրում են քարքարոտ լեռնային տափաստաններում:

Կենսաբանական առանձնահատկությունները: Չմեռումից դուրս են գալիս ապրիլի սկզբին: Ակտիվ են մինչև հոկտեմբերի սկիզբը: Հիմնականում վարում են թաքնված կենսակերպ, թաքնվելով քարերի տակ: Սնվում են միջատներով, թրթուրներով, կարիճներով և այլն: Ըստ երևույթին, ծվադրումը տեղի է ունենում հուլիսի սկզբներին: Դնում են 3-6 ծու, 5-16 մմ երկարությամբ: Չազերը դուրս են գալիս հուլիսի վերջին, օգոստոսի սկզբին:

Կարգավիճակը: Տարածման որոշ շրջաններում առաջացնում է կայուն թվաքանակով պոպուլյացիաներ: Պահպանվում է միայն «Խոսրովի անտառ» արգելոցում:



45. Հայկական էյրենիս - Армянский эйренкс - *Eirenis punctatolineatus* (Boettger, 1892)

Տիպային տարածքը՝ Հայաստան

- Cyclophis modestus* var. *punctatolineata* Boettger 1892
- Contia collaris*, Boulenger 1894
- Contia collaris* var. *punctatolineata*, Boettger 1898
- Contia decemlineata*, Terentjev and Chernov 1949
- Contia punctatolineata*, Chernov 1939

L. 410-445 մմ, L/L.cd. ար. 2.8-3., էգ. 3.1-3.8, Sq. 17, Ventr.ար. 153-163, էգ. 164-175, Scd. ար. 69-78, էգ. 63-68 զույգ

Չևարանական հատկանիշները: Ունեն 1 նախաաչքային և 2 հետաչքային վահանիկներ, որոնք հաճախ առջևում կիսաբաժանված են: Վերշրթնային վահանիկները 7-ն են: Նրանցից երկրորդը և չորրորդը կաչում են աչքին: Այտային վահանիկը փոքր է և տեղավորված է երկրորդ վերշրթնային վահանիկի վրա: Քունքային վահանիկներն առաջին շարքում 1, երկրորդում 2 հատ են: Հետին ստործնոտային վահանիկները կարճ են առաջիններից և կաչում են իրար միայն առջևում: Հետանցքային վահանիկը բաժանված է:

Մարմնի վերին մասը մոխրագույն, բաց գորշագույն, բաց կարմրավուն կամ պղնձա-կարմիր է: Մարմնի առջևի մասում ունեն 8-10 երկայնական շարքերով մոխրագույն, գորշ կամ սև գույնի մանր բծեր և գծիկներ, որոնք մարմնի վերջում առաջացնում են ուղիղ երկայնական գծեր: Երբեմն հանդիպում են առանձնյակներ, որոնց մոտ այդ բծերն ու գծերն ընդհանրապես արտահայտված չեն: Երիտասարդների գլխի վրա հավասարաչափ դասավորված են երկարությամբ ձգված պարզագույն գորշ սևագույն շերտեր, որոնք մասամբ անհետանում են հասուն անհատների վրայից: Մարմնի փորային մասը սպիտակա-մոխրագույն կամ վարդագույն է (նկ. 142):



Նկ. 142. Հայկական էյրենիս:

Տարածվածությունը: Տարածված է արևելյան Թուրքիայում, արևմտյան Իրանում, հարավ-արևելյան Ադրբեջանում և Հայաստանի հարավում: Հանրապետությունում հանդիպում է միայն Արաքս գետի հովտում և նրան հարակից նախալեռնային շրջաններում (քարտեզ 51):

Ապրելավայրերը: Տիպիկ ապրելավայրերն են համարվում նոսր բուսականությամբ, չոր թփուտներով, քարքարոտ կիսաանապատային լանջերը: Ապրում են քարերի տակ, փշոտ աստրագալերի արանքում, կրծողների բներում:



Քարտեզ 51. Հայկական էյրենիսի տարածվածությունը Հայաստանում:

Կենսաբանական առանձնահատկությունները: Չմեռումից դուրս են գալիս մարտի վերջին և ակտիվ են մինչև սեպտեմբերի վերջը: Սնվում են միջատներով, թիթեռներով, սարդերով և այլն: Չվաղորում են հուլիսի վերջին: Չվերի քանակը 3-8 է: Չազերը դուրս են գալիս սեպտեմբերին:

Կարգավիճակը: Թեև որոշ պոպուլյացիաներում թվաքանակը կայուն է, սակայն վերջին տարիներին ապրելավայրերի օգտագործման հետևանքով, այս տեսակի թվաքանակը պակասել է: Պահպանվում է «խոսրովի անտառ» արգելոցում:

Ցեղ - Պսևդոցիկլոֆիս - Pseudocyclophis Boettger. 1888

Ցեղն ունի 1 տեսակ և 3 ենթատեսակներ, որոնք տարածված են հարավ-արևմտյան Թուրքիայից դեպի արևելք մինչև Աֆղանիստան, Պակիստան, Հնդկաստան: Հայաստանում տարածված է *P. p. persicus* ենթատեսակը, որը հանդիպում է Մեղրու շրջանի հարավում:

46. Պարսկական պսևդոցիկլոֆիս - Персидский псевдоциклофис - Pseudocyclophis-persicus, Anoderso, 1872

Տիպային տարածքը՝ Բուշեր (Իրան)

- Cyclophis persicus* Anderson, 1872
- Pseudocyclophis persicus*, Boettger 1888
- Pseudocyclophis Walteri* Boettger 1888
- Contia persica*, Boulenger 1894
- Contia walteri*, Boulenger 1894
- Pseudocyclophis persicus*, Dotsenko 1985
- Eirenis (Pseudocyclophis) persicus*, Nagy et al. 2004

Չևարանական հատկանիշները: Փոքրիկ օձեր են: Մարմնի երկարությունը 370 մմ, պոչի երկարությունը 4-5 անգամ կարճ է և նման է էյրենիսների ցեղի ներկայացուցիչներին, որոնց մեջ երկար ժամանակ սրանց դասակարգում էին: Մարմնի միջին մասի շուրջը դասավորված են 15 թեփուկներ, որոնք ունեն մեկ ապիկալ փոսիկ: Փորային թեփուկները 203-ից ավել են: Հետանցքային վահանիկը բաժանված է (նկ. 143):

Տարածվածությունը: Տարածված են հարավ-արևելյան Թուրքիայում, Հյուսիսային և արևմտյան Իրաքում, Իրանում, Աֆղանստանում, Պաղեստինում և հյուսիս-արևմտյան Հնդկաստանում: Արեալի հյուսիս-արևելյան սահմանն անցնում է Թուրքմենիայի հարավային մասով՝ արևմտյան Կոպետ-Ղաղից կենտրոնական մասով դեպի արևելք - մինչև Պակիստան: Հայաստանում տարածված է *P. p. persicus* ենթատեսակը,



որի միակ նմուշը հայտնաբերվել է 1985 թ. Ա.Աղասյանի կողմից Սեղրիի մարզի Իրանին սահմանակից Ազարակ գյուղի շրջակայքում (քարտեզ 52):



Նկ. 143. Պարսկական պսևդոցիկլոֆիս:



Քարտեզ 52. Պարսկական պսևդոցիկլոֆիսի տարածվածությունը Հայաստանում:

Ապրելավայրերը: Ազարակի առանձնյակը հայտնաբերվել է կիսաանապատային գոտու թեք քարքարոտ լանջում քարի տակ:

Կենսաբանության առանձնահատկությունները: Տվյալները բացակայում են: Ենթադրվում է, որ էյրենիս ցեղի ներկայացուցիչների նման վարում է թաքնված կենսակերպ: Անվում է տարբեր անողնաշար կենդանիներով, հիմնականում՝ մանր միջատներով:

Կարգավիճակը: Նեղ արեալ ունեցող սակավաթիվ ենթատեսակ է: Գրանցված է Հայաստանի Հանրապետության Կարմիր գրքում: Բնության Պահպանության Միջազգային Միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Կրիտիկական վիճակում գտնվող» CR B2ab (i, ii, iii) տեսակ: Պահպանվում է «Արևիկ» ազգային պարկում:



Ցեղ - Կատվածներ - *Telescopus* Wagler, 1830

Գլուխը պարզ սահմանազատված է պարանոցից: Սարմինը մի փոքր սեղմված է կողքերից: Բիբն ուղղահայաց է: Մարմնի միջին մասի շուրջն ունեն 19-23 հարթ թեփուկներ: Վերծնոտային ոսկրի վրա դասավորված են 8-12 դեպի հետ փոքրացող ատամներ, որոնցից հետևի 2-ը մեծ են ու ակոսավոր և անջատված են մյուսներից: Ունեն թունավոր գեղձ, որի ծորանը միացած է բերանի խորքում գտնվող 2 ակոսավոր ատամներին:

Ցեղն իր մեջ ընդգրկում է 11-12 տեսակներ: Անդրկովկասում հանդիպում է 1 տեսակ:

47. Կովկասյան կատված - Кавказская кошачья змея - *Telescopus fallax* (Fleischmann, 1831)

Տիպային տարածքը՝ Թբիլիսի

Tarbophis fallax Fleischmann 1831:18, pl. 1.

Trigonophis iberus Eichwald 1831:173.

Tarbophis fallax, Nikolsky 1916:181.

Tarbophis fallax iberus, Chernov 1939:166; Muskhelishvili 1970:181.

L.700-735 մմ, L/L.cd.5,1-6,6, Sq. 19 երբեմն 21, Ventr. 213-230 /186-222/, S.cd.54-69

Ձևաբանական հատկանիշները: Ճակատային վահանիկը 2 անգամ ավելի լայն է, քան վերաջթային վահանիկը: Այտային վահանիկը շատ երկար է և իր հետին մի փոքր նեղացած եզրով կաչում է աչքին: Ունեն 1 նախաաչթային և 2 հետաչթային վահանիկներ: Վերշրթնային վահանիկները 8 (երբեմն 7 կամ 9): Նրանցից երկրորդը, երրորդը և չորրորդը կաչում են աչքին: Քունքային վահանիկները գրեթե չեն արտահայտված և քունքային մասը պատված է թեփուկներով, որոնք նմանվում են մարմնի թեփուկներին (նկ. 112): Հետին ստործնոտային վահանիկները բացակայում են: Հետանցքային վահանիկը լրիվ է: Վերծնոտային ոսկրի վրա ունեն 10-12 ատամներ, որոնցից 2 հետևիկները մեծացած և ակոսավոր են:

Մարմնի վերին մասը մոխրագույն, մուգ մոխրագույն կամ վարդագույն է: Ողնաշարի երկարությամբ 1 շարքով թեթևությամբ դասավորված են սև կամ գորշ, մոխրագույն, հազվադեպ դեղնադարչնագույն շերտեր: Այդպիսի ոչ մեծ շերտեր դասավորված են նաև մարմնի կողքերին: Հանդիպում են նաև առանձնյակներ, որոնց մարմինը գրեթե գուրկ է շերտերից:

Գլխի վերին մասը միագույն է: Հաճախ գազաթային վահանիկների վրա կան մուգ շերտեր: Աչքի հետին եզրից մինչև բերանի անկյունը անցնում է ոչ պարզ, մուգ շերտ: Փորը բաց գույնի է և ունի մեծաքանակ մուգ շերտեր և գծիկներ: Գլխի ստորին մասը սպիտակ է (նկ. 144):




Նկ. 144. Կովկասյան կատված: (Նկ. Ա. Մալխասյանի)



Տարածվածությունը: Տարածված են Հյուսիսային Իրանում, Իրաքում, Փոքր Ասիայի արևելյան մասում, Հյուսիսային Սիրիայում, Ադրբեջանում, Դաղստանում, Վրաստանում: Տեսակի արեալը ներառում է նաև Բալկանյան թերակղզին, Էգեյան և Միջերկրական ծովի մի շարք կղզիները, Լիբանանը և Իսրայելը:

Հայաստանում հանդիպում է Արաքս և Քուռ գետերի հովտում, որտեղից բարձրանում է նախալեռները (քարտեզ 53):



Քարտեզ 53. Կովկասյան կատվածի տարածվածությունը Հայաստանում և Լեռնային Ղարաբաղում:

Ապրելավայրերը: Առավել հաճախ հանդիպում է լեռնաքերոֆիտային տափաստանների քարքարոտ տեղամասերում, թփուտներով և խոտածածկով պատված լեռների քարքարոտ լանջերին: Չի խուսափում նաև մարդու մոտիկությունից, հաճախ հանդիպում է տների տանիքներում, պատերի ու ցանկապատերի ճեղքերում, պտղատու այգիներում: Որպես թաքստոց օգտագործում է ժայռերի ճեղքերը, կրծողների բները: Բարձրանում է ծ.մ. 2000մ բարձրությունների վրա:

Կենսաբանության առանձնահատկությունները: Չմեռումից դուրս է գալիս մարտի սկզբին: Ակտիվ է մինչև սեպտեմբերի վերջը: Ժամանակի մեծ մասն անց է կացնում քարերի տակ:

Մնվում են մողեսներով և թռչուններով: Հայաստանում բազմացման մասին տվյալները բացակայում են: Ենթադրվում է, որ հունիսի վերջին դնում է 6-9 ծու: Չազերը դուրս են գալիս սեպտեմբերին: Մարդկանց կծելու դեպքում ուժեղ ցավ են պատճառում, բայց վտանգավոր չեն:

Կարգավիճակը: Գրանցված է Հայաստանի Հանրապետության Կարմիր գրքում: Տեսակն ընդգրկված է Բնության Պահպանության Միջազգային Կարմիր ցուցակում «Least Concern» կարգավիճակով, որպես «խոցելի» VU B1ab (iii) տեսակ: Պահպանվում է «Խոսրովի անտառ» արգելոցում և «Արևիկ» ազգային պարկում:

Ցեղ - Սողեսաձեղ - Malpolon Fitzinger, 1826

Խոշոր օձեր են: Մարմնի երկարությունը հասնում է 1800 մմ: Գլուխը թույլ է սահմանագատված պարանոցից: Դնչի վերին մակերեսը խիստ փոս է ընկած և նրա վերկողային եզրը սրված է: Ունեն ընդամենը 2 տեսակ, որոնցից 1 հանդիպում է Անդրկովկասում:




48. Սողեսաօժ - Ящерочная змея - *Malpolon monspessulanus* Hermann, 1804

Տիպային տարածքը՝ Հարավային Ֆրանսիա

- Coluber monspessulanus* Hermann 1804.
- Coluber insignitus* Geoffroy de Saint Hilaire, 1827 fig. 6.
- Rhabdodon fuscus* Fleischmann, 1831
- Coelopeltis monspessulana*, Boulenger 1896; Nikolsky 1913
- Malpolon monspessulanus*, Mertens and Muller 1928
- Malpolon monspessulanus insignitus*, Mertens and Muller 1928
- Malpolon insignitus*, Carranza et al. (2006)2.

L. 1430-1700 մմ, L/L.cd. 3,3-4,2, Sq. 17-19 երբեմն 21, Ventr. 160-189, Scd. 75-98

Ձևաբանական հատկանիշները: Միջքթային վահանիկների միջև եղած կարը 1.5-2.0 անգամ կարճ է նախաճակատային վահանիկների միջև եղած կարից: Ճակատային վահանիկը երկար է և նեղ: Աչքերի միջև ընկած մասում նրա լայնությունը 2 անգամ ավելի քիչ է վերնաաչքային վահանիկների լայնությունից: Դնչի վերին մակերեսը խիստ փոս է ընկած և նրա վերկողային եզրը սրված է (նկ. 113): Ունեն 2 այտային վահանիկներ, որոնցից յուրաքանչյուրը կաչուում է նախաճակատայիններին: Նախաաչքային վահանիկը մեկն է և շատ խոշոր է: Իր եզրով նա ծռվել է դեպի գլխի վերին մակերեսը և կաչուում է ճակատային վահանիկին: Վերջրթնային վահանիկները 8, երբեմն 9 հատ են: Նրանցից չորրորդը և հինգերորդը կաչուում են աչքին: Ունեն 2, երբեմն 3 հետաաչքային վահանիկներ: Քունքային վահանիկները առաջին և երկրորդ շարքերում 3 կամ 4 են (նկ. 145):



Նկ. 145. Սողեսաօժի գլուխը վերևից և կողքից:
 1-ճակատային, 2-կողքաճակատային, 3-գագաթային, 4-վերջրթնային, 5-այտային,
 6-նախաաչքային, 7-հետաաչքային, 9-քունքային:

Հետին ստործնոտային վահանիկները սովորաբար երկար են առաջնայիններից և որպես օրենք կաչուում են մինչյանց: Սարմնի թեփուկներն ունեն 1 ապիկալ փոսիկ: Հետանցքային վահանիկը բաժանված է: Գլուխը թույլ է սահմանագատված պարանոցից: Սարմնի թեփուկները հարթ են:

Ունի մոխրագույն գունավորում երկարությամբ ձգվող գծերով: Երիտասարդների մարմինը վերևից դարչնագույն կամ բաց դարչնագույն է և ունի մարմնի երկարությամբ դասավորված գորշ, մուգ դարչնագույն կամ գրեթե սև շերտեր: Գլխի վերին մասն ունի նախշ, որը կազմված է համաչափ դասավորված մուգ գծերից: Վերջրթնային վահանիկների վրա դասավորված են բաց, մուգ շերտով շրջապատված բծեր: Փորը դեղնավուն է և ունի նեղ դարչնագույն կամ մուգ գորշագույն շերտեր, որոնք դասավորված են փորային վահանիկների վրա շարքերով (նկ. 146):



Նկ. 146. Մողեսաօձ:

Վերծնոտային ոսկրի վրա դասավորված են 17-19 դեպի հետ փոքրացող ատամներ, որոնցից հետևի 2-ը անջատված են մյուսներից: Դրանք իրենց չափերով ավելի խոշոր ակոսավոր են ու տարբերվում են մնացած ատամներից: Այդ երկու ատամների ակոսները միացած են թունագեղձին: Այս օձին հաճախ անվանում են կեղծ թունավոր: Մարդու համար գործնականում վտանգավոր չէ, քանի որ թունավոր ատամները կարծ են և տեղավորված են բերանի խորքում: Օձի կծելուց այդ ատամները չեն հասնում մարդու մարմնին:

Տարածվածությունը: Տարածված է Հյուսիսային Աֆրիկայում, Բալկանյան և Պիրենեյան թերակղզու հարավում, Սիցիլիայում և արևմտյան Իտալիայում, հարավային Ֆրանսիայում, արևմտյան Հարավսլավիայում, Իրաքում, Իրանում, Թուրքիայում, Կովկասում, Կալմիկիայում: Հայաստանում հանդիպում է միայն Արաքսի հովտում (քարտեզ 54):



Քարտեզ 54. Մողեսաօձի տարածվածությունը Հայաստանում և Լեռնային Ղարաբաղում:

Ապրելավայրերը: Բնակվում է անհարթ ռելիեֆով չոր քարքարոտ տարածքներում: Ապրում են կիսատափաստաններում, այգիներում: Թաքստոց են հանդիսանում կրծողների բները, քարերի, պատերի ճեղքերը: Ամառվա շոգ օրերին վարում է գիշերային կենսակերպ: Դուրս է գալիս, երբ արևը մայր է մտնում: Քարնանը և աշնանը դուրս է գալիս նաև ցերեկը:

Կենսաբանության առանձնահատկությունները: Չմեռումից դուրս են գալիս մարտի սկզբներին և ակտիվ են մինչև հոկտեմբերի սկիզբը: Սնվում են կրծողներով, մողեսներով, մանր օձերով, թռչուններով: Չվաղորում են հուլիսի կեսերին: Չվերի քանակը 5-10: Մանր կենդանիներն արագ սատկում են սրանց թույնից: Մարդկանց կծելու դեպքում ուժեղ ցավ են պատճառում, բայց վտանգավոր չեն:



Կարգավիճակը: Սակավաթիվ տեսակ է, որի քանակությունը շատ է պակասել ապրելավայրերի օգտագործման հետևանքով: Պահպանվում է «խոսրովի անտառ» արգելոցում:

Ընտանիք - Իծեր - Gadyuki - Viperidae Laurenti, 1768

Մարմինը մեծ մասամբ հաստացած է: Պոչը կարճ է և ներքևից պատված է 2 շարք վահանիկներով: Գլուխը շատ պարզ սահմանազատվում է վզից և վերևից պատված է մանր թեփուկներով ու վահանիկներով: Շատ տեսակների մոտ լավ արտահայտված են ճակատային, գագաթային կամ միայն վերնաաչքային վահանիկները: Միջքթային և նախաճակատային վահանիկներ չունեն: Աչքերը բաժանված են վերջրթնային վահանիկներից մեկ շարք թեփուկներով: Բիբն ուղղահայաց է: Մարմնի թեփուկներն ունեն լավ երևացող կողիկներ:

Շարժուն վերծնոտային ոսկրը շատ կարճացել է և իր վրա կրում է խոշոր, խողովակաձև թունավոր ատամներ: Հետին վերջույթների և կոնքի մնացորդներ չունեն: Ընտանիքն իր մեջ ընդգրկում է 35-40 ցեղեր, մոտ 270 տեսակներով, որոնք տարածված են միայն Արևելյան կիսագնդում: Կովկասի ֆաունայում հանդիպում են այս ընտանիքի 5 ցեղեր: Հայաստանում հանդիպում են Pelias (Vipera) և Macrovipera ցեղին պատկանող 4 տեսակներ:

Իծերի ընտանիքի ցեղերը որոշելու աղյուսակ

1 (2) Գլխի վերին մասը կրում է գոնե 3 համաչափ դասավորված վահանիկներ, (բացառությամբ վերաչքային վահանիկների), որոնք տարբերվում են մարմինը պատող թեփուկներից: Ճակատային և միջծնոտային վահանիկների միջև ունեն մանր, անկանոն ձևի վահանիկներ (**Նկ. 147**):

Ցեղ - Վահանագլուխ իծեր – Pelias (ըջ 168)



Նկ. 147. Vipera և Macrovipera ցեղերի գլխի վերին մասում դասավորված թեփուկները: 1-Լեռնատափաստանային իծ, 2-փոքրասիական կամ Հայկական իծ, 3-անդրկովկասյան գյուղգա:

2 (1) Գլխի վերին մասը պատված է մանր թեփուկներով (բացառությամբ վերաչքային վահանիկների), որոնք փոքր են կամ հավասար մարմինը պատող թեփուկներին (**Նկ. 147**):

Ցեղ - Խոշոր իծեր - Macrovipera (ըջ 173)



Ցեղ - Վահանագլուխ իծեր – Pelias Merrem, 1820

Մանր կամ միջին չափի օձեր են: Խոշոր առանձնյակների երկարությունը պոչի հետ չի անցնում 90 սմ-ից: Գլխի վերին մակերեսին անկանոն դասավորված թեփուկներից բացի կրում են նաև համաչափ դասավորված խոշոր վահանիկներ, որոնցից առանձնապես արտահայտված են ճակատային, զագաթային և քթային վահանիկները: Մարմինը պատող թեփուկները կրում են լավ արտահայտված կողիկներ: Փորային վահանիկները 128-157 են:

Ցեղն ընդգրկում է 16 տեսակներ, որոնք տարածված են Եվրոպայում, Ասիայի միջերկրածովային շրջաններում:


Pelias - Vipera ցեղի տեսակները որոշելու աղյուսակ

1(2) Միջձնոտային վահանիկը սովորաբար կաչում է դնչի ծայրի 1 ապիկալ վահանիկի հետ (նկ. 147, 148): Փորի մակերեսը սպիտակ է:

Լեռնատափաստանային իծ - Vipera erivansis (էջ 169)

2(1) Միջձնոտային վահանիկը սովորաբար կաչում է դնչի ծայրի 2 ապիկալ վահանիկներին (նկ. 147, 148): Փորի մակերեսը սև է, բայց շատ դեպքերում, մարմնի թեփուկներին սահմանակցող կողքային եզրերում ունի բաց գույն:

Ղարևակու իծ - Vipera darevski (էջ 171)



Նկ. 148. Ղարևակու (ա) և լեռնատափաստանային (բ) իծերի դնչի վահանիկների դասավորությունը: 1-միջձնոտային վահանիկ, 2- դիմային ապիկալ վահանիկ:




49. Երևանյան լեռնատափաստանային իժ - Երևանская горно-степная гадюка - *Vipera (Pelias) eriwanensis* (Reuss, 1933)

Տիպային տարածքը Երևան (Հայաստան)

- Pelias renardi* (partim) Christoph 1861:599.
- Vipera berus* (partim), Strauch 1869:52, 136; 1873
- Vipera renardi*, Lyaister 1908
- Coluber renardi*, Nikolsky 1916
- A.[cridophaga] renardi eriwanensis*, Reuss 1933
- Vipera ursinii renardi*, (partim) Schwarz 1936:186; Terentjev and Chernov 1949:269–270; Kramer 1961
- Vipera ursinii ebneri*, (partim) Saint Girons 1978
- Vipera ursinii eriwanensis*, JΦger 1984
- Vipera eriwanensis*, HΦggren et al. 1993:17–18; Nilson and Andrmn 2001
- Vipera renardi eriwanensis*, Dely and Joger 2005
- Pelias eriewanensis*, Tuniyev, Orlov, Ananjeva, and Aghasyan 2009

L. 55-635, 0- մմ, L/L.cd. ար. 6.6-9,7, իգ. 7.5-11.5, Sq. 21 (երբեմն 19), Ventr. 130-152, Scd.ար. 30-38, իգ.23-30 զույգ

Ձևաբանական հատկանիշները: Լեռնատափաստանային իժը փոքր՝ մինչև 70 սմ երկարության թունավոր օձ է: Ունեն մինչև 4-5 սմ երկարության հասնող կարճ պոչ: Էգերը ավելի խոշոր են քան արուները: Գլուխը կտրուկ ձևով տարանջատվում է մարմնից և հիմնականում պատված է մանր կամ միջին չափի մարմնի թեփուկներից նմանվող թեփուկներով: Աչքերը խոշոր են, բիբը աղդահայաց է: Ունեն վերնաաչքային, ճակատային և զագաթային վահանիկներ, որոնք բավական խոշոր են գլխի վրայի մյուս վահանիկներից: ճակատային վահանիկից առաջ դասավորված են մանր, անկանոն ձևի վահանիկներ: Միջոնոտային վահանիկը սովորաբար կաչում է դնչի վրա գտնվող 1 ապիկալ վահանիկին: ճակատային և վերնաաչքային վահանիկների միջև ունեն 1 շարք մանր վահանիկներ: Քթամիջոնոտային վահանիկի վերին եզրը գրեթե ուղիղ է: Քթանցքերը սովորաբար բացվում են քթային վահանիկի ներքևի մասում: Վերջրթնային վահանիկները 9, հազվադեպ 8 կամ 10 հատ են: Հետին ստորոնոտային վահանիկները չեն արտահայտված (նկ. 148, 149): Վերոնոտային ոսկրերի առջևի մասում ունեն 2 խոշոր թունավոր ատամներ: Մարմնի թեփուկներն ունեն պարզ արտահայտված կողիկներ: Հետանցքային վահանիկը լրիվ է:



Նկ. 149. Լեռնատափաստանային իժի գլխի դիմային և վերին մասի վահանիկների դասավորությունը: 1-միջոնոտային, 2-քթածնոտային, 3-կենտրոնական ապիկալ, 4-քթային, 5-վերնաաչքային, 6-ճակատային, 7-զագաթնային, 8-կողքային ապիկալ վահանիկներ:




Մարմնի վերին մասը գորշավուն կամ մոխրագույն է: Մեջքի երկարությամբ անցնում է սև կամ մուգ գորշավուն զիզգագանման շերտ, որը մարմնի երկարությամբ տեղ-տեղ վեր է ածվում երկարությամբ ծգվող խալերի: Կողերը նույնպես ծածկված են լինում նույն գույնի, բայց ավելի մանր խալերով: Գլխի վերին մասում և ծոծրակի վրա սովորաբար լինում է նախշ, որը կազմված է իրարից հեռացող մուգ սև գույնի շերտերից (նկ. 150, 151):



Նկ. 150. Լեռնատափաստանային իծ:

Տարածվածությունը: Տարածված է արևելյան Անդրկովկասի և նրա հարակից Թուրքիայի և Իրանի լեռնատափաստանային շրջաններում:

Հանրապետության տարածքում հիմնականում հանդիպում է Կյուսիսային և կենտրոնական շրջանների, Սևանի ավազանի լեռնատափաստանային և լեռնային գոտիներում ծ.մ. 1200-2800 մ բարձրությունների վրա (քարտեզ 55):



Քարտեզ 55. Լեռնատափաստանային իծի տարածվածությունը Հայաստանումի Հանրապետությունում:

Ապրելավայրերը: Բնակվում են տարբեր տիպի լեռնային տափաստաններում, ալպիական մարգագետիններում, չորադիմացկուն բուսականությամբ ծածկված քարքարոտ լանջերում: Որպես թաքստոց օգտագործում է կրծողների բները, քարերի տակ գտնվող դատարկ տարածությունները: Հաճախ այդ իծերին կարելի է հանդիպել քարերի վրա արևի տակ տաքանալիս:

Կենսաբանության առանձնահատկությունները: Չմեռումից դուրս է գալիս ապրիլի սկզբին 6-8C° ջերմաստիճանի դեպքում: Ակտիվ են մինչև սեպտեմբերի վերջը: Ամռան ամիսներին ցածրադիր վայրերում հիմնականում հանդիպում է առավոտյան և երեկոյան ժամերին, իսկ բարձր լեռնային պայմաններում վարում է ցերեկային կենսակերպ: Սնվում է միջատներով, մորեխներով, երբեմն նաև մանր կրծողներով: Զուգավորումը տեղի է ունենում ձմեռումից դուրս գալուց հետո ապրիլ-մայիս



ամիսներին: Հղիությունը տևում է 100-130 օր: Չվակենդանածին է, այսինքն ձվերի ինկուբացիոն շրջանը անցնում է մոր օրգանիզմում: Օգոստոսի վերջին եզր ձվադրում է՝ դնելով բարակ թափանցիկ թաղանթով պատված ձվեր, որոնցից մի քանի ժամվա ընթացքում, պատռելով թաղանթը, դուրս են գալիս 14-15 սմ երկարությամբ 7-18 մատդաշ իծերը անցնելով ակտիվ կենսակերպի:



Նկ. 151. Լեռնատափաստանային իծ, արու և էգ:

Կարգավիճակը: Հայկական բարձրավանդակի էնդեմիկ տեսակ է: Տեսակն ընդգրկված է ԲՊՄՍ Կարմիր ցուցակում «Vulnerable B1ab(iii,v)» կարգավիճակով և գնահատվում է որպես «խոցելի»՝ VU B1ab(iii, v) վիճակում գտնվող տեսակ: Պահպանվում է «Խոտրովի անտառ» արգելոցի լեռնամարգագետնային գոտու փոքր հատվածներում:

50. Դարևակու իծ - Гадюка Даревского - *Vipera (Pelias) darevskii* Vedmederja, Orlov et Tuniyev, 1986

Տիպային տարածքը՝ Ղուկասյանի շրջան Լեզի լեռ

L.435, L./L.cd. 8,3-9,2, Sq.21, ԲպՊՄՍ 19, Ventr. 133-141, S.cd.26-28 (oo), 31-36 (oo), A 1, Lab.9,

Չևարանական հատկանիշները: Փոքր մինչև 50 սմ երկարություն ունեցող, կարճ 4-5 սմ պոչով, թունավոր օձ է: Գլուխը վերևից մի փոքր սեղմված է: Դնչի առջևի մասը քիչ կլորացած է: Միջձոնոտային վահանիկը նեղ է և զլխի վերին մասում շփվում է 2 կամ, շատ հազվադեպ՝ 1 ափիկալ վահանիկների: Քթային վահանիկի միջին մասում տեղադրված են քթանցքերը: Ճակատային վահանիկի երկարությունը մոտ 1,4 անգամ




գերազանցում է նրա լայնությանը: Վերաջբային վահանիկը անջատված է ճակատային վահանիկից 2-3 վահանիկներով: Աջքը հիմնականում շրջապատված է 7-12, հաճախ 9-10 վահանիկներով: Ստորշրթնային վահանիկներից 4, եզակի դեպքում 3 շփվում են ստործնոտային վահանիկների հետ:

Մարմինը վերևից գորշ, կեղտամոխրագույն կամ դեղնամոխրագույն է, զիգագանման սև գույնի կամ մուգ գորշագույն ընդլայնական շերտերով: Մարմնի կողքերով նույնպես անցնում են մուգ գույնի ոչ պարզ բծեր: Գլխի վերին մասում կրում է դ տառի նմանվող, պարզ արտահայտված նկար, կամ սև գույնի բազմաթիվ նախշեր (նկ. 152):



Նկ. 152. Դարևակու իծ: (Նկ. Լ. Աղասյանի)

Տարածվածությունը: Տարածված է միայն Զավախքի լեռնաշղթայի հարավարևմտյան մասում, մինչև Կրաստանի սահմանը (լ. Աջքասար): Հանդիպում է Շիրակի մարզում Ղազանչի գյուղից մինչև Բավրա գյուղը գտնվող մոտ 200 հա հատվածում, ծ.մ. 2350–3000 մ բարձրության վրա (քարտեզ 56):



Քարտեզ 56. Դարևակու իծի տարածվածությունը Հայաստանում:

Ապրելավայրերը: Տեսակի բնորոշ ապրելավայրերն են հանդիսանում ալպյան գոտում գտնվող քարքարոտ լեռնալանջերը և ժայռային ցցվածքները՝ ծածկված տափակ քարերի կույտերով: Կենդանին ամբողջ տարին անց է կացնում տափակ սալաքարերի տակ, որտեղ նաև մշտապես ծնեռում է: Այդ տեղամասերը զբաղեցնում են մոտ 20-40 հա տարածություններ: Արևոտ եղանակին իծերը դուրս են գալիս և տաքանում են սալաքարերի վրա:

Կենսաբանության առանձնահատկությունները: Չնեռումից դուրս են գալիս ապրիլի վերջին-մայիսի սկզբին: Բնակության որոշակի վայրերում այս տեսակն առաջացնում է թվաքանակով բավականին խիտ պոպուլյացիաներ՝ 1 հա մակերեսին



տարբեր տարիներին հաշվառվել են 10-12 առանձնյակներ: Չմեռնան է գնում սեպտեմբերի կեսերին: Սնվում է հիմնականում ուղղաթևավորներով, մողեսներով, մանր կրծողներով: Չուգավորումը սկսվում է հունիսի սկզբից սկսած: Չվակենդանածին տեսակ է: Սեպտեմբերի վերջին էզը ծնում է 5-8 ձագ: Ծնվելուց անմիջապես հետո նորածին օձերը փոխում են մաշկը: Բարձրադիր գոտիներում հաճախ ծնելու ժամկետներն ուշանում են, ինչը հիմք է տալիս ենթադրելու, որ բնության մեջ նորածիններն անմիջապես անցնում են ձմեռնան, իսկ սնվել սկսում են հաջորդ տարվա գարնանը:

Կարգավիճակը: Նեղ արեալային տեսակ է: Գրանցված է Հայաստանի Հանրապետության Կարմիր գրքում: Տեսակն ընդգրկված է նաև Բնության Պահպանության Միջազգային Միության Կարմիր ցուցակում «Critically Endangered B1ab (ii,iii)+2ab(ii,iii)» կարգավիճակով և այդ ցուցակի չափորոշիչներով գնահատվում է, որպես «Կրիտիկական վիճակում գտնվող»՝ CR B2ab (ii, iii) տեսակ: Պահպանվում է «Արփի լիճ» ազգային պարկում:


Ցեղ - խոշոր իժեր - *Macrovipera* Reuss, 1927

խոշոր օձեր են, որոնց երկարությունը հասնում է 2 մետրի: Գլուխը մեծ է և լավ սահմանազատվում է մարմնից: Գլուխը պատված է մանր թեփուկներով: Մարմինը հաստ է քիչ տափակացած: Պոչը կտրուկ կարճանում է: Մարմնի շուրջն ունեն 23-27 թեփուկներ: Փորային վահանիկները 123-187 են:

Macrovipera ցեղի տեսակները որոշելու աղյուսյակ

1 (2) Աչքի վրա դասավորված է 1 համեմատաբար խոշոր վերնաաչքային վահանիկ: Աչքերը բաժանված են վերջրթնային վահանիկներից 1 շարք մանր հատիկավոր վահանիկներով (ՈՎ. 153):

Հայկական իժ - *Vipera (Macrovipera) raddei*



ՈՎ. 153. *Macrovipera* ցեղի տեսակների վերնաաչքային վահանիկների դասավորությունը: ա-*Macrovipera lebetina*, բ-*Macrovipera raddei* 1-վերնաաչքային վահանիկ:

2 (1) Աչքի վրա չունեն խոշոր վերնաաչքային վահանիկ: վերնաաչքային մասի մի քանի խոշորացած թեփուկները կպչում են աչքին (ՈՎ. 153):

Կովկասյան գյուրգա - *Vipera (Macrovipera) lebetina*



51. Փոքրասիական կամ Հայկական իժ (Малоазиатская гадюка) Vipera (Montivipera) raddei (Boettger, 1890)

Տիպային տարածքը՝ Կարս

Vipera Raddei Boettger 1890
Vipera xanthina, Strauch 1869: 290; Alekperov 1978
Coluber raddei, Nikolsky 1916
Vipera lebetina raddei, Schwarz 1936

L.1050 մմ, L/L.cd. 11,5-16,02,, Sq. 23 երբեմն 21, Ventr. 169- 182, Scd.25-35 գույգ

Ձևաբանական հատկանիշները: Միջին չափի, մինչև 120 սմ հասնող թունավոր օձ է: Պոչը կարճ է, կազմում է մարմնի երկարության մոտ 1/16 մասը և ունի 5-6 սմ երկարություն: Դունչը կողքերից կլորացած է: Գլխի վերին մասը պատված է մանր կողիկներ ունեցող թեփուկներով: Դնչի վրայի թեփուկները կողիկներ չունեն: Միջ-ծնոտային վահանիկը գլխի վերին մակերեսում կաչում է 2, հազվադեպ 3 թեփուկների հետ: Աչքերի վրա ունեն մեկական լավ արտահայտված դեպի վեր ցցված խոշոր վերաչքային թեփուկներ, որոնք լավ զարգացած են և աչքից բաժանված են փոքր թեփուկների շարքով (նկ. 153):

Գլխի լայնությամբ վերնաչքայինների առջև սովորաբար դասավորված են 7-10 թեփուկներ: Աչքի և վերջրթնայինների վահանիկների միջև գտնվում են 2 շարք մանր թեփուկներ: Ունեն 9 վերջրթնային վահանիկներ: Գլուխը լավ տարանջատված է մարմնից: Մարմինը պատված է կողիկավոր փայլուն թեփուկներով (նկ. 154):



Նկ. 154.Մարմինը պատող թեփուկները:


Մարմնի վերին մասը մուգ մոխրագույն, դեղնամոխրագույն, մոխրագույն գորշ կամ գրեթե բոլորովին սև է: Ողնաշարի երկարությամբ դասավորված են դեղնավուն, բաց շագանակագույն կամ դեղնամարնջագույն խալեր, որոնք հաճախ ծուլվում են իրար և վերածվում զիգզագանման շերտի: Այդ շերտի արտաքին եզրը սովորաբար շրջապատված է լինում սև կամ մուգ դարչնագույն շերտով: Մարմնի կողքերին փորային վահանիկների սահմանի վրա ունեն մուգ բծեր, որոնք երբեմն հազիվ են երևում: Գլխի հետին մասը սովորաբար նախշված է սև խալերով, որոնք դեպի հետ լայնանալով՝ ծուլվում են իրար: Այդպիսի 2 փոքրիկ բծեր կան նաև գլխի առջևի մասում: Գլխի կողքերով հետևի եզրից մինչև բերանի անկյունը անցնում է համեմատաբար լայն սև կամ մուգ դարչնագույն շերտ: Փորը մոխրագույն է՝ ամբողջովին ծածկված մուգ գորշ գույնի մանր կետերով: Պոչի ծայրը ստորին մասում դեղին է կամ դեղնամարնջագույն (նկ. 155):



Եկ. 155. Հայկական իծ:

Տարածվածությունը: Տարածված է Արևելյան Անդրկովկասում, Թուրքիայի և Իրանի սահմանակից շրջաններում:

Հայաստանում հանդիպում են տարանջատված պոպուլյացիաներ, որոնք կենտրոնացած են Կոտայքի, Արագածի, Արարատի, Վայոց Ձորի, Սյունիքի մարզերում (քարտեզ 57):



Քարտեզ 57. Հայկական իծի տարածվածությունը Հայաստանի Հանրապետությունում:

Ապրելավայրերը: Բնակվում է լեռնաբերոֆիտային անտառներում, կաղնուտային և գիհու նոսր անտառներում, լեռնային տափաստաններում, ծառաթփային նոսր բուսականությամբ քարքարոտ լանջերին, ծ.մ. 1300–1800 մ բարձրության վրա, երբեմն բարձրանում է մինչև ծ.մ. 2500–2700 մ: Բաց տարածքներում թաքնվում է քարերի տակ: Տարածման որոշ վայրերում (Արայի լեռ, Սեղրու լեռնաշղթա) երբեմն համատեղ ապրում է լեռնատափաստանային իծի և անդրկովկասյան գյուրգայի հետ:

Կենսաբանության առանձնահատկությունները: Չմեռումից դուրս է գալիս ապրիլի կեսերին: Ակտիվ են մինչև հոկտեմբերի վերջը: Գարնանը, ծմեռումից դուրս գալուց հետո, ծմեռանոցների շրջակայքում այս իծերը մեծ կուտակումներ են առաջացնում: Այստեղ է տեղի ունենում նաև նրանց զուգավորման խաղերը: Սեռական ակտիվությունը սկսում է մայիսի կեսից և շարունակվում է մինչև հոկտիսի վերջը, որից հետո իծերը տարածվում են շրջակա տարածքներում: Գարնանը և աշնանը հիմնականում վարում են ցերեկային կենսակերպ: Ամռան ամիսներին ակտիվ են առավոտյան և երեկոյան ժամերին:



Հղիությունը տևում է 150–160 օր: Չվակենդանածին են: Էգերը սեպտեմբերի վերջերին ծնուն են մինչև 22 սմ երկարությամբ 3-14 ձագ: Սնվում են կրծողներով, մողեսներով, թռչուններով: Շատ թունավոր և մարդկանց կյանքի համար վտանգավոր օձ է:

Կարգավիճակը: Հայկական բարձրավանդակի ենդենիկ տեսակ է: Գրանցված է նախկին ԽՍՀՄ-ի և Հայաստանի Կարմիր գրքերում: Տեսակն ընդգրկված է Բնության Պահպանության Միջազգային Միության Կարմիր ցուցակում «Near Threatened» կարգավիճակով որպես «խոցելի» VU B1a+2b (ii, iii) վիճակում գտնվող տեսակ: Պահպանվում է «Խոսրովի անտառ», «Շիկահող» արգելոցներում և «Արևիկ» ազգային պարկում:

52. Կովկասյան գյուրզա - Кавказская гюрза - Vipera (Macrovipera) lebetina (Linnaeus, 1758)

Տիպային տարածքը՝ Ելիզավետպոլ (Գյանջյա) Աղրբեջան

Macrovipera lebetina obtusa (Dwigubsky 1832)

Coluber lebetinus Linnaeus 1758

Vipera obtusa Dwigubsky 1832

Vipera lebetina, Boettger 1899: 287; Alekperov 1978

Coluber lebetinus, Chernov 1912: 68; Nikolsky 1916

Vipera lebetina obtusa, Chernov 1939: 177; Muskhelishvili 1970

Daboia lebetina obtusa, Herrmann, Joger and Nilson 1989

L. 1600-1700 մմ, L/L.cd.6.0-8.2, Sq. 25 (երբեմն 27), Ventr. 165-181 հաճախ 170-175, Scd.40-41 զույգ

Ձևաբանական հատկանիշները: Գլուխը պարզ սահմանազատված է պարանոցից: Գլխի վերին մասը պատված է մանր թեփուկներով, որոնք ունեն կողիկներ: Կողիկներով թեփուկներ չկան դնչի ծայրին և աչքերի վրա: Միջոնտային վահանիկը գլխի վերին մակերեսում կաչում է 3, երբեմն 2 թեփուկների: Վերնաչքային վահանիկներ չունեն, բայց աչքի վրայի թեփուկները խոշորացած են: Աչքերի միջև ընկած տարածությունում դասավորված են 10-12 թեփուկ: Աչքի և վերջոթնային վահանիկների միջև ունեն 3 շարք թեփուկներ: Վերջոթնայինները 10 հատ են:

Մարմնի վերին մասը բաց կամ մուգ մոխրագույն է, որի ֆոնի վրա սովորաբար ողնաշարի երկարությամբ դասավորված են լինում ընդլայնակի ձգված մուգ բծեր: Նույն գույնի, բայց ավելի մանր բծեր կան նաև մարմնի կողքերին: Ավելի հազվադեպ են պատահում միատեսակ բաց մոխրագույն կամ գորշ գույնի գյուրզաներ: Փորի կողմը սովորաբար վարդագույն է կամ դեղնամոխրագույն՝ բազմաթիվ մուգ պտերով կամ բծիկներով (նկ. 156):

Տարածվածությունը: Տարածված է Հյուսիս-արևմտյան Աֆրիկայում, Փոքր Ասիայում, Իրանում, Իրաքում, Անդրկովկասում, Կենտրոնական և Հարավային Ասիայում, հարավային Ղաղստանում, Թուրքմենիայում, Ուզբեկստանում, Հյուսիս-արևմտյան Հնդկաստանում:

